ԷԴԻԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ, ԿԱՐԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ, ԱՄԱՏՈՒՆԻ ՎԻՐԱԲՅԱՆ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

9–ՐԴ

ԴԱՍԱՐԱՆ

Դասագիրք հանրակրթական
հիմնական դպրոցի համար

ԶԱՆԳԱԿ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

Հաստատված է ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից

Խմբագիրներ՝ **ԱՇՈՏ ՄԵԼՔՈՆՅԱՆ. ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ**
ԱՐԱՄ ՍԻՄՈՆՅԱՆ. ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ
ԱՐԱՄ ՆԱՋԱՐՅԱՆ. պատմագիտության թեկնածու

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սիրելի՛ սովորողներ

Հիմնական դպրոցի ավարտական դասարանում դուք ուսումնասիրելու եք Հայոց պատմության վերջին փուլը՝ Նորագույն շրջանը: Այն սկսվում է 1918 թ. Մայիսյան փառահեղ հաղթանակներից և հասնում մինչև մեզ օրերը:

1918 թ. մայիսի վերջին Արևելյան Հայաստանում թուրքական զորքերի դեմ հայ ժողովրդի տարած փառահեղ հաղթանակներով կյանքի է կոչվում հայկական անկախ պետականությունը: Հայոց պետականությունը ծնվում է ռազմաքաղաքական ու սոցիալ–տնտեսական ծանրագույն պայմաններում: Սակայն կարճ ժամանակում հաջողվում է կազմավորել իշխանության մարմիններ, սկսվում է բանակաշինության գործընթացը, մի շարք պետությունների հետ հաստատվում են դիվանագիտական հարաբերություններ, հետզհետե աշխուժանում է երկրի մշակութային կյանքը:

Աստիճանաբար ընդարձակվում է Հայաստանի Հանրապետության տարածքը: Պետականության կայացման գործընթացը տեղի է ունենում հայկական մի շարք տարածքների (Արցախ, Զանգեզուր, Նախիջևան, Ախալքալաք, Լոռի և այլն) նկատմամբ հարևան պետությունների մշտական ոտնձգությունների, հաճախ նաև նրանց հետ ռազմական բախումների պայմաններում:

1920 թ. օգոստոսի 10–ին Ֆրանսիայի Սևր քաղաքում դաշնագիր է կնքվում պատերազմում պարտված Օսմանյան կայսրության և հաղթանակած Անտանտի երկրների միջև: Այդ փաստաթղթով լուծում էր ստանալու Հայկական հարցը: Փաստորեն իրականություն էր դառնալու միացյալ Հայաստան ստեղծելու՝ հայ ժողովրդի դարավոր երազանքը: Սակայն քեմալաբոլշևիկյան գործակցության հետևանքով ոչ միայն չի իրագործվում այդ արդարացի պայմանագիրը, այլև 1920 թ. դեկտեմբերի 2–ին անկում է ապրում Հայաստանի Հանրապետությունը:

Հայաստանի առաջին հանրապետության հիմքի վրա ստեղծվում է Խորհրդային Հայաստանը: Խորհրդային իշխանության իրականացրած քաղաքական ու տնտեսական բռնությունների հետևանքով 1921 թ. փետրվար–ապրիլ ամիսների ընթացքում երկիրը հայտնվում է քաղաքացիական պատերազմի բովում: Նույն ժամանակ՝ մարտի 16–ին, Մոսկվայում կնքված խորհրդա–թուրքական պայմանագրով Հայաստանն ունենում է տարածքային խոշոր կորուստներ՝ զրկվելով ոչ միայն Արևմտյան Հայաստանից, այլև Արևելյան Հայաստանի մի շարք տարածքներից:

Գոյության առաջին տարիներին, հատկապես մինչև Անդրդաշնության և ԽՍՀՄ–ի կազմի մեջ մտնելը, ՀՍԽՀ–ն պահպանում է իր հարաբերական ինքնիշխանությունը, ազգային պետության որոշ հատկանիշներ: Որքան էլ քաղաքական համակարգով ՀՍԽՀ–ն տարբերվում էր Առաջին հանրապետությունից, այն պետականության որոշակի դրսևորում էր և երաշխիքներ էր ապահովում հայ ժողովրդի ազգային անվտանգության, տնտեսական ու մշակութային զարգացման համար:

Ինչպես ԽՍՀՄ–ում, այնպես էլ Խորհրդային Հայաստանում 1920–1930–ական թթ. հաստատվում է միակուսակցական, բռնատիրական վարչակարգ: Բազմաթիվ անմեղ հայեր զոհ են դառնում ստալինյան բռնություններին:

Այդուհանդերձ, Խորհրդային Միության կազմում Հայաստանն ունեցավ նաև լուրջ ձեռքբերումներ. երկրում կառուցվեցին տասնյակ արդյունաբերական ձեռնարկություններ, որոշակի զարգացում ապրեց մշակութային կյանքը, բազմահազար սփյուռքահայեր 1920–1930–ական թթ. հայրենադարձվեցին:

Հայ ժողովուրդն իր գործուն մասնակցությունն է ունենում Երկրորդ համաշխարհային պատերազմին: Ավելի քան կես միլիոն հայեր տարբեր ռազմաճակատներում մարտնչում են ֆաշիզմի դեմ, հարյուրից ավելի հայորդիներ արժանանում են Խորհրդային Միության հերոսի կոչման: Հայկական ազգային 6 զորամիավորումներից Թամանյան 89–րդ դիվիզիան, անց-

նելով մարտական փառահեղ ուղի, հասնում է Գերմանիայի մայրաքաղաք Բեռլին:

Պատերազմի ավարտից հետո բռնությունների ստալինյան քաղաքականության նոր ալիքը տարածվում է նաև Խորհրդային Հայաստանում: Բազմաթիվ հայ մտավորականներ հանիրավի ձերբակալվում են, աքսորվում կամ պաշտոնազրկվում:

ԽՍՀՄ–ի և Արևմուտքի երկրների միջև սկսված սառը պատերազմի պատճառով Հայկական հարցի լուծման, հայկական հողերը Խորհրդային Հայաստանին վերադարձնելու խնդրի ձախողումը խոր հիասթափություն է առաջացնում հայության բոլոր շրջաններում: 1949 թ. դադարեցվում է սփյուռքահայերի մեծ հայրենադարձությունը, հունիսին իրականացվում է տասնյակ հազարավոր «քաղաքականապես անհուսալի» հայ մարդկանց աքսորն Ալթայի երկրամաս և այլ շրջաններ:

Անհատի պաշտամունքի վերացումից հետո Հայաստանում ևս աշխուժանում է հասարակական–քաղաքական կյանքը: 1965 թ.՝ Հայոց մեծ եղեռնի 50–ամյա տարելիցի կապակցությամբ, Հայրենիքում և Սփյուռքում սկսվում է ազգային զարթոնքը, ավելի են սերտանում Հայաստան–Սփյուռք կապերը, աշխուժանում է հանրապետության տնտեսական ու մշակութային կյանքը: Սակայն այդ գործընթացը 1970–ական թվականներին ոչ միայն կանգ է առնում, այլև երկիրը թևակոխում է խոր լճացման ժամանակաշրջան: Հայաստանում ծավալվում է ազգային–այլախոհական շարժումը՝ նպատակաուղղված Հայկական հարցի, ցեղասպանության ճանաչման, մարդու իրավունքների պաշտպանության, Հայաստանի անկախության վերականգնման և այլ խնդիրների լուծման:

1988 թ. փետրվարին, օգտվելով վերակառուցման քաղաքականության ընձեռած հնարավորությունից, հայ ժողովուրդը դուրս է գալիս ազատագրական պայքարի՝ 1921 թ. ապօրինաբար Ադրբեջանին բռնակցված Արցախը Հայրենիքի հետ վերամիավորելու պահանջով: Արցախյան հուժկու շարժումը և անկախության համար ծավալված պայքարը տալիս են իրենց պտուղները. 1991 թ. սեպտեմբերի 2–ին հռչակվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը, իսկ սեպտեմբերի 21–ի համաժողովրդական հանրաքվեի արդյունքների հիման վրա Հայաստանի Հանրապետությունը դառնում է անկախ պետություն:

Հաղթանակ տանելով Արցախյան ազատագրական պատերազմում և հաղթահարելով բազմաթիվ դժվարություններ՝ հայկական երկու պետությունները թևակոխել են XXI դար՝ հետարդյունաբերական հասարակության արդի փուլում հասարակական կյանքի բոլոր ոլորտները զարգացնելու վճռականությամբ և լավատեսական ապագայի նկատմամբ հավատով:

Դասագրքի խմբագրական և հեղինակային կազմը վստահ է, որ ազգային պատմության հետաքրքիր և ուսանելի դասերը, հայկական քաղաքակրթության ստեղծած արժեքների հետ ծանոթացումը և դրանց սեփականատեր լինելու զգացումը կօգնի ձեզ գտնելու արժանի տեղ հասարակական կյանքում, արժանապատվորեն ծառայելու Հայաստանին ու հայ ժողովրդին և ազգային պատմության էջերը լրացնելու նոր սխրանքներով ու նվաճումներով:

ԲԱԺԻՆ
I

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

(1918 Թ. ՄԱՅԻՍԻ 28 – 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2)

ԳԼՈՒԽ I

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԿՅԱՆՔԸ

§ 1. ՀԱՅՈՑ ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՅԱՑՈՒՄԸ

Անկախության հռչակումը: Մայիսյան հերոսամարտերը հայկական անկախ պետականության վերականգնման համար իրական նախադրյալներ ստեղծեցին: 1918 թ. մայիսի 26–ին փլուզվեց Անդրկովկասի ժողովրդավարական Դաշնային Հանրապետությունը: Նույն օրը հռչակվեց Վրաստանի անկախությունը: Իսկ մայիսի 27–ին հայտարարվեց «Արևելակովկասյան մուսուլմանական հանրապետության» անկախության մասին: Ի դեպ՝ հենց այդ ժամանակ՝ առաջին անգամ, Իրանի հյուսիսարևելյան նահանգի՝ Ատրպատականի անունով այն պայմանականորեն կոչվեց «Ադրբեջան» (պարսկերեն՝ «ազեր» — *կրակ*, «բայջան» — *երկիր* բառերից):

Հայաստանի անկախության հարցը քննարկվեց Հայոց կենտրոնական ազգային խորհրդում մայիսի 28–ին (Թիֆլիս): Այդ օրը պատասխան էր տրվելու Բաթումում Օսմանյան Թուրքիայի կողմից Հայաստանին ներկայացված վերջնագրին: Լուրջ քննարկումներից հետո Հայոց ազգային խորհուրդը վճռեց հռչակել Հայաստանի անկախությունը: Արդեն որպես անկախ պետություն՝ Հայաստանը պատվիրակություն ուղարկեց Բաթում՝ թուրքերի հետ հաշտության պայմանագիր կնքելու համար:

Այսպիսով՝ Հայաստանի Հանրապետության հռչակման օրը՝ ***մայիսի 28–ը,*** մտավ ազգային տոնացույցի մեջ: Իսկ ամենակարևորը՝ վերականգնվեց վաղուց (1375 թ.) կորսված անկախ պետականությունը:

Բաթումի պայմանագիրը: 1918 թ. հունիսի 4–ին Բաթումում ստորագրվեց հայ–թուրքական հաշտության պայմանագիր: Դրանով Թուրքիան ճանաչեց Հայաստանի անկախությունը: Հաշտության պայմանները Հայաստանի համար խիստ ծանր էին:

Թուրքիային էին անցնում Արևելյան Հայաստանի շատ տարածքներ: ՀՀ–ին մնում էր ընդամենը մոտ 11 հազ. քառ. կմ տարածք, այն է՝ մայրաքաղաք Երևանը և Սևանա լիճն՝ իր շրջակայքով:

Հայաստանն ունենալու էր սահմանափակ թվով զորք, երկաթուղիների վերահսկողությունն անցնում էր Թուրքիային:

Պայմանագիրը գործեց մի քանի ամիս՝ մինչև Առաջին աշխարհամարտի ավարտը (1918 թ. նոյեմբեր):

Հայկական պետության կերտումը: Նորաստեղծ պետականության կերտումը, բնականաբար, սկսվեց օրենսդիր և գործադիր մարմինների ստեղծումից: Պետականաշինության գործն ստանձնեց Հայոց կենտրոնական ազգային խորհուրդը: Իսկ մինչև կառավարության ժամանումը Երևան, երկրում օրինականություն և կարգուկանոն հաստատելու ուղղությամբ մեծ աշխատանք էր կատարել Երևանի հայոց ազգային խորհուրդը՝ ***Արամ Մանուկյանի*** գլխավորությամբ:

Բարձրագույն օրենսդիր մարմինը Հայաստանի խորհուրդն էր (Խորհրդարան), որը ստեղծված դժվարին պայմանների պատճառով ոչ թե ընտրվեց, այլ ձևավորվեց Թիֆլիսի և Երևանի ազգային խորհուրդների հիմքի վրա:

Բարձրագույն գործադիր իշխանությունը՝ կառավարությունը, կոչվում էր Մինիստրների (հետագայում՝ Նախարարների) խորհուրդ: Հայոց ազգային խորհուրդը կառավարության նախագահ (վարչապետ) ընտրեց ***Հովհաննես Քաջազնունուն:*** 1918 թ. հուլիսի 17–ին ՀՀ կառավարությունը և Հայոց կենտրոնական ազգային խորհուրդը Թիֆլիսից ժամանեցին Երևան:

Օգոստոսի 1–ին Երևանում գումարվեց Հայաստանի խորհրդի առաջին նիստը, որտեղ հաստատվեցին կառավարության կազմը և ծրագիրը: Առաջնահերթը սահմանադիր ժողովի հրավիրումն էր՝ սահմանադրություն ընդունելու համար, գաղթականության, պարենավորման, ֆինանսների, ազգային բանակի ստեղծման, սահմանային վիճելի խնդիրների լուծումը:

Առաջին հանրապետության զինանշանը

Ավետիք Սահակյան

Մովսես Սիլիկյան

Քաղաքներում և գավառներում ստեղծվեցին համայնքային ինքնավարություններ: Կատարվեց վարչական նոր բաժանում: Երկիրը բաժանվեց չորս նահանգների: Ստեղծվեցին երդվյալ ատենակալների դատարաններ, որոնք դատավարությունը կատարում էին հայերենով:

1919 թ. ընդունվեց պետական լեզվի մասին օրենքը, որով հայերենը հռչակվեց պետական լեզու: Ընդունվեցին պետական խորհրդանիշները՝ դրոշը, զինանշանը և օրհներգը: Պետական դրոշը եռագույն էր՝ կարմիր, կապույտ, նարնջագույն: Զինանշանի հեղինակները Ալեքսանդր Թամանյանը և Հակոբ Կոջոյանն էին: Օրհներգը «Մեր հայրենիք» հայրենասիրական երգն էր:

1919 թ. հունիսին ընտրությունների միջոցով ձևավորվեց Հայաստանի Հանրապետության նոր խորհրդարանը, որի պատգամավորների ճնշող մեծամասնությունը Հայ հեղափոխական դաշնակցություն (ՀՅԴ) կուսակցության անդամներ էին: ՀՀ խորհրդարանի նախագահ ընտրվեց Ավետիք Սահակյանը:

Օրախնդիր էր նաև ազգային բանակի ստեղծումը, որն ապահովելու էր պետության անվտանգությունը: Թշնամական շրջապատման մեջ գտնվող երկիրը միայն սեփական ուժերին ապավինելու հնարավորություն ուներ:

1918 թ. սեպտեմբերին ստեղծվեց Հայկական դիվիզիան՝ գեներալ Մովսես Սիլիկյանի հրամանատարությամբ: Սահմանային վայրերում կազմավորվեցին միլիցիայի կարգի զինվորական ուժեր:

Ցրվեցին ֆիդայական (հայդուկային) խմբերը: Իր զինվորական ուժերը կազմացրեց նաև հայդուկապետ Անդրանիկը: 1919 թ. մայիսին նա Ամենայն Հայոց կաթողիկոսի միջոցով զենքերը հանձնեց Հայաստանի կառավարությանը և հեռացավ արտասահման:

1919 թ. Հայկական դիվիզիան վերակազմավորվեց բրիգադների ու գնդերի: Հայկական բանակում կար նաև եզդիների ստորաբաժանում: Առաջին համաշխարհային պատերազմի մասնակից գեներալ

Թովմաս Նազարբեկյանին հանձնվեց բանակի սպարապետությունը:

Թուրք–հայկական պատերազմի (1920 թ. աշուն) ժամանակ հայկական բանակը հասավ իր առավելագույն չափերին: Հայաստանն ուներ 10 գնդից բաղկացած շուրջ 40–հազարանոց բանակ, որի մարտական ուժը 25 հազար էր:

Թովմաս Նազարբեկյան

Հարցեր և առաջադրանքներ

1. Երբ և ո՞ւմ կողմից է հռչակվել Հայաստանի անկախությունը: Երբ է կնքվել Բաթումի պայմանագիրը. ի՞նչ պայմաններ էին առաջադրվել, և մինչև ե՞րբ գործեց այդ պայմանագիրը:
2. Որո՞նք էին ՀՀ–ի բարձրագույն օրենսդիր և գործադիր մարմինները: Երբ և որտե՞ղ է գումարվել Հայաստանի խորհրդի առաջին նիստը: Ո՞վ ընտրվեց ՀՀ առաջին վարչապետ: Երբ ՀՀ կառավարությունը և Հայոց կենտրոնական ազգային խորհուրդը Թիֆլիսից ժամանեցին Երևան:
3. Ի՞նչ գիտեք ՀՀ պետական խորհրդանիշների մասին: Պետության կայացման ուղղությամբ ուրի՞շ ի՞նչ քայլեր ձեռնարկվեցին ՀՀ–ում:

ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՆՈՒՆՆԵՐ, ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայաստանի խորհուրդ (Խորհրդարան), Մինիստրների (Նախարարների) խորհուրդ, կառավարության նախագահ (վարչապետ), համայնքային ինքնավարություններ, երդվյալ ատենակալների դատարան, Հայկական դիվիզիա, Ավետիք Սահակյան, Հովհաննես Քաջազնունի:

§ 2. ՆԵՐՔԻՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Սոցիալ–տնտեսական կացությունը: Առավել ծանր էր երկրի սոցիալ–տնտեսական դրությունը: Պատճառը համաշխարհային պատերազմը և թուրքական երկու արշավանքներն էին (1918 թ. և 1920 թ.): Քայքայվել էին արդյունաբերությունը, գյուղատնտեսությունը: Թուլացել էին երկրի ներքին և արտաքին տնտեսական կապերը:

Երկրում տարածված սովը, համաճարակները՝ տիֆը և խոլերան, մեծաքանակ մարդկային կյանքեր խլեցին: Բավական է ասել, որ 1918 թ. վերջերին օրական մահանում էր միջին հաշվով 2 հազար մարդ:

Կառավարությունը դիմեց արտակարգ միջոցների: Մտցվեց հացի և բամբակի պետական մենաշնորհ: Այդ ապրանքները պետությունը կենտրոնացրեց իր ձեռքում՝ արգելելով դրանց ազատ վաճառքը: Պետությունն ինքն էր բաշխում հացը, իսկ բամբակը վաճառում էր արտաքին շուկայում:

Օգնության նպատակով դիմեցին դաշնակից երկրներին: Եվրոպա և Ամերիկա մեկնեց վարչապետ Հովհաննես Քաջազնունու գլխավորած պատվիրակությունը: 1919 թ. մայիսին ԱՄՆ–ից ներմուծվեցին մեծ քանակությամբ ալյուր, ցորեն և այլ պարենամթերքներ:

Անհրաժեշտ էր լուծել գաղթականության և որբերի հարցը: Գաղթականության թիվը հասնում էր 300 հազարի: Միջոցներ ձեռնարկվեցին նրանց հողով, աշխատանքով, պետական նպաստով ապահովելու համար: ՀՀ–ում կային նաև 40 հազարից ավելի որբ և անապաստան երեխաներ, որոնց օգնության հարցում հայրենի կառավարության հետ մեծ դեր կատարեց Մերձավոր Արևելքի օգնության ամերիկյան կոմիտեն (Ամերկոմ):

Մեծ ուշադրություն դարձվեց հողային քաղաքականությանը: Այստեղ առկա էին լուրջ դժվարություններ: Պատմական որոշակի տարածքներ դեռևս ՀՀ–ի սահմաններից դուրս էին, և լուծված չէր Հայկական հարցը: Հայաստանում նաև տարածված չէր կալվածատիրական հողային սեփականությունը: Այդ պատճառով գյուղացու բաժինը շատ չմեծացավ: Հողի մասին օրենքն ընդունվեց 1920 թ. Մայիսյան (բոլշևիկյան) ապստամբության ճնշումից հետո, ըստ որի՝ անհատույց բռնագրավվում և ազգայնացվում էին կալվածատիրական հողերը և տրվում գյուղացիներին:

Գյուղացիներին բաժանվեց սերմացու:

Երկրի տնտեսության վերականգնմանը նպաստեցին նաև Հայաստանից դուրս ապրող հայ դրամատերերը (կապիտալիստները): Նրանցից շատերը մտադիր էին կամ սկսեցին Հայաստանում կառուցել էլեկտրակայաններ, անցկացնել երկաթուղիներ, յուրացնել խոպան հողեր, շահագործել հանքավայրեր:

Քայլ առ քայլ վերականգնվում էր երկրի տնտեսությունը:

Հասարակական–քաղաքական կյանքը: Հայաստանի Հանրապետությունում զարգանում էր նաև հասարակական–քաղաքական կյանքը: Լայն գործունեություն ծավալեցին քաղաքական կուսակցությունները և հասարակական կազմակերպությունները: Երկրում գործում էին 8 քաղաքական կուսակցություններ, որոնցից 3–ը հայ ազգային ավանդական կուսակցություններն էին՝ հնչակյան, դաշնակցական և արմենականների իրավահաջորդ՝ սահմանադրական ռամկավար կուսակցությունը: Անկախության հռչակումից հետո հայ ազգային կուսակցություններն ու կազմակերպությունները վերանայեցին իրենց ծրագրերն ու խնդիրները:

Առաջին հանրապետության գոյության ընթացքում (1918–1920 թթ.) ՀՅԴ–ն (դաշնակցությունը) եղել է հիմնական կառավարող կուսակցությունը: Երկու անգամ Հայ ժողովրդական կուսակցության (ՀԺԿ) և էսէռների (սոցիալիստ–հեղափոխականներ) հետ կազմել է կոալիցիոն կառավարություն:

1920 թ. ձևավորվեց Հայաստանի կոմունիստական (բոլշևիկյան) կուսակցությունը, որը Խորհրդային Ռուսաստանի կոմունիստական (բոլշևիկյան) կառավարության օգնությամբ ձգտում էր Հայաստանում զավթել իշխանությունը:

Բոլոր կուսակցությունները, բացի բոլշևիկներից, ազգի և պետության համար ճակատագրական պահերին պաշտպանում էին կառավարությանը:

Հասարակական կազմակերպություններից պետք է հիշատակել արհեստակցական միությունները (արհմիություններ), կանանց և գյուղացիական կազմակերպությունները, դաշնակցական երիտա-

սարդական միությունը, սկաուտների (ռազմամարզական), բոլշևիկյան «Սպարտակ» երիտասարդական կազմակերպությունը և այլն:

Այսպիսով՝ երկրի հասարակական–քաղաքական կյանքը իրականում աշխույժ էր, և ժողովուրդը մասնակցում էր պետականաշինությանը:

Հարցեր և առաջադրանքներ

1. Որո՞նք էին ՀՀ տնտեսական ծանր դրության պատճառները: ՀՀ կառավարությունն ի՞նչ արտակարգ միջոցառումներ իրականացրեց. ի՞նչ արդյունքներ դրանք ունեցան:
2. Քաղաքական ի՞նչ կուսակցություններ էին գործում ՀՀ–ում. վերհիշե՛ք, թե երբ, որտեղ և ովքեր էին դրանք հիմնադրել: Ե՞րբ է ձևավորվել Հայաստանի կոմունիստական (բոլշևիկյան) կուսակցությունը:
3. Հասարակական ի՞նչ կազմակերպություններ էին գործում ՀՀ–ում:

ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՆՈՒՆՆԵՐ, ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամերկում, կոալիցիոն կառավարություն, արհմիություններ, էսէռներ, սկաուտական միություն, «Սպարտակ» երիտասարդական կազմակերպություն:

§ 3. ՆԵՐՔԻՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆԸ ՍՊԱՌՆԱՑՈՂ ՎՏԱՆԳՆԵՐԸ

Թուրք–թաթարական խռովությունները: Անկախ պետականության ամրապնդմանը մեծապես խանգարում էին երկրի ներսում կազմակերպված թուրք–թաթարական խռովությունները: Թուրքիան և նորահռչակ Ադրբեջանը, ձգտելով տիրանալ ՀՀ մի շարք տարածքների (Կարս, Լեռնային Ղարաբաղ, Զանգեզուր, Նախիջևան և այլն), իրենց գործակալների և Երևանում Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցչության միջոցով երկրի կայունության դեմ ուղղված քայքայիչ գործողություններ էին կազմակերպում: Օգտվելով ՀՀ տարածքում բնակվող մուսուլմանական (մահմեդական) բնակչության առկայությունից՝ հեշտանում էր զանազան սադրանքների և լրտեսական գործողությունների իրականա-

ցումը: Մուսուլմանական կազմավորումները խափանում էին Հայաստանի հաղորդակցության ուղիների աշխատանքը: Նրանք ունեին զինված ուժեր՝ թնդանոթներով ու գնդացիրներով: Զենք, զինամթերք ու սպաներ էր մատակարարում Թուրքիան, իսկ փող՝ Ադրբեջանը: Իր հակահայկական ակտիվ գործունեությամբ հայտնի էր Երևանում Ադրբեջանի դիվանագիտական լիազոր ներկայացուցչության ղեկավար խան Թեքինսկին:

Թուրք–թաթարական խռովություններն ընդգրկել էին Օլթիից մինչև Օրդուբադ (Որդուստ, Նախիջևան) ընկած տարածքները: Մահմեդականների զինված ելույթն սկսվեց 1919 թ. հուլիսին Բեյուք–Վեդիից: Խռովություն բարձրացրին նաև Շարուրը, Նախիջևանը, Սուրմալուն, Զանգիբասարը, Կարսը: ՀՀ իշխանությունները փորձեցին խաղաղությամբ վերացնել այդ խռովությունները: Դիմադրության դեպքում հարկադրված օգտագործվում էր զենք, և 1919 թ. սեպտեմբերին հաջողվեց մարել խռովությունները: Սակայն դրանք շարունակվեցին նաև 1920 թ. ամռանը: Հունիսին ճնշվեցին Զանգիբասարի (ներկայիս Մասիս) շրջանի խռովությունը, հուլիսին՝ Բեյուք–Վեդիի և Շարուր–Նախիջևանի թուրք–թաթարական խռովությունները:

Այսպիսով՝ 1920 թ. ամռանը թուրք–թաթարական խռովությունները հիմնականում ճնշվել էին, և վերջ էր դրվել երկրի կայունությանը սպառնացող վտանգներին:

Մայիսյան ապստամբությունը: Հայաստանի Հանրապետության կայունությունը խախտվեց նաև 1920 թ. Մայիսյան ապստամբությամբ: Դա Հայաստանի բոլշևիկների զինված ելույթն էր երկրում խորհրդային կարգեր հաստատելու համար:

1920 թ. ապրիլի 28–ին Ադրբեջանի խորհրդայնացումը հայ բոլշևիկների համար իշխանությունը գրավելու հնարավորություն ընձեռեց: Իսկ ապստամբությունն սկսելու առիթը Աշխատավորների միջազգային օրը՝ մայիսի 1–ը, Ալեքսանդրապոլում (այժմ՝ Գյումրի) խաղաղ ցույցերը ապստամբության վերածելն էր: Հենց սկզբից ապստամբների կողմն անցան

«Վարդան Զորավար» զրահագնացքը՝ կապիտան Սարգիս Մուսայելյանի հրամանատարությամբ, և քաղաքի զինվորական կայազորի մեծ մասը:

Բոլշևիկների Ալեքսանդրապոլի կոմիտեն փորձեց Հայաստանի կոմիտեից՝ Արմենկոմից, զինված ապստամբություն սկսելու թույլտվություն ստանալ: Արմենկոմի համար նպատակահարմար էր ապստամբությունը սկսել Ղազախից, որպեսզի Խորհրդային Ադրբեջանում գտնվող ռուսական 11–րդ կարմիր բանակի զորմասերը հայ բոլշևիկներին զինված օգնություն ցուցաբերեին:

Ի վերջո, մայիսի 7–ին Ալեքսանդրապոլում բոլշևիկների ընդլայնված խորհրդակցությունը որոշեց ապստամբությունը միաժամանակ սկսել Ղազախից և Ալեքսանդրապոլից: Այնուհետև շարժվելու էին Երևան, որտեղ զինված ելույթ չէր նախատեսվում:

Հայ բոլշևիկները ստեղծեցին Հայաստանի ռազմահեղափոխական կոմիտե (ՌՀԿ): Զինված ուժերի հրամանատար նշանակվեց Սարգիս Մուսայելյանը:

ՀՀ իշխանություններն ամեն ինչ արեցին բոլշևիկյան ապստամբությունը ճնշելու համար: Հրաժարական տված վարչապետ Ալեքսանդր Խատիսյանի կառավարությանը փոխարինեց Համո Օհանջանյանի բյուրո–կառավարությունը: Սահմանվեցին խիստ պատիժներ՝ մահապատիժ, ցմահ տաժանակիր աշխատանք և այլն: Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Ե–ն ժողովրդին խոհեմության և միասնության կոչ արեց:

Ալեքսանդր Խատիսյան

Սակայն կառավարության ներկայացուցիչների և բոլշևիկների միջև բանակցություններն արդյունք չտվեցին: Ապստամբությունն սկսվեց Կարսում: Մայիսի 10–ին Ալեքսանդրապոլի ՌՀԿ–ն հայտարարեց իշխանությունն իր ձեռքը վերցնելու մասին: Դավադիր տրամադրություններ էին նաև Սարիղամիշում, Նոր Բայազետում (այժմ՝ Գավառ), Ղազախում, Դիլիջանում և այլուր:

Կառավարությունը մայիսի 13–ին Ալեքսանդրապոլի բոլշևիկներին վերջնագիր ներկայացրեց խաղաղությամբ անձնատուր լինելու մասին: Ուրիշ ելք չունենալով՝ ապստամբներն առանց դիմադրության քաղաքը հանձնեցին: Ապստամբության կենտրոնի

պարտությունը բոլշևիկներին ստիպեց այլ վայրերում ևս դադարեցնելու հակապետական ելույթները:

1920 թ. Մայիսյան ապստամբությունն ավարտվեց պարտությամբ: Բոլշևիկյան կազմակերպությունները հայտարարվեցին օրենքից դուրս: Գնդակահարվեցին ապստամբության մի շարք ղեկավարներ և մասնակիցներ, ներառյալ ապստամբների կողմն անցած սպաներ և այլ գործիչներ: Պարտությունն անխուսափելի էր, որովհետև նախ՝ Ռուսաստանը դեռևս Հայաստանի խորհրդայնացման նպատակ չուներ, ապա՝ Երևանում ևս ապստամբություն տեղի չունեցավ:

Այդուհանդերձ, բոլշևիկների ելույթը թուլացրեց երկրի ներքին դրությունը:

Գարեգին Հովսեփյան

Հարցեր և առաջադրանքներ

1. Պետության կայունությանը սպառնացող ինչ վտանգներ կային ՀՀ–ում: ՀՀ իշխանություններին երբ և ինչ միջոցներով հաջողվեց ճնշել հակապետական ապստամբությունները:
2. Որո՞նք էին 1920 թ. Մայիսյան ապստամբության պատճառները: Ովքե՞ր էին այն կազմակերպել: Ինչ ընթացք և ավարտ ունեցավ Մայիսյան ապստամբությունը:

ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՆՈՒՆՆԵՐ, ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Արմենկում, Հայաստանի ռազմահեղափոխական կոմիտե, «Վարդան Զորավար» գրահագնացք, Սարգիս Մուսայելյան, Հաւմո Օհանջանյան, բյուրո–կառավարություն:

§ 4. ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔԸ

Մշակութային կյանքը: Հայաստանի Հանրապետությունում մեծ դժվարությամբ որոշակի քայլեր կատարվեցին նաև մշակույթը զարգացնելու ուղղությամբ: Առաջին հերթին պետությունն իր ձեռքը վերցրեց կրթության կազմակերպման գործը: Նորոգվեցին դպրոցական շինությունները և փորձ կատարվեց ստեղծելու ազգային նոր դպրոց: Դպրոցական համակարգը երկաստիճան էր՝ տարրական և միջնակարգ: Այդուհանդերձ, ստեղծված քաղաքական աննպաստ պայմանները թույլ չէին տալիս ապահովել կրթության զարգացումը: Զգացվում էր

ուսուցչական կադրերի, դպրոցական դասագրքերի, նյութական միջոցների մեծ կարիք:

Հայաստանի մշակութային կյանքում նշանավոր իրադարձություն էր պետական համալսարանի հիմնումը, որի մասին որոշում ընդունվեց 1919 թ. մայիսի 16–ին: Համալսարանի հանդիսավոր բացումը կայացվեց 1920 թ. հունվարի 31–ին Ալեքսանդրապոլում, որտեղ էլ կայացան առաջին կիսամյակի պարապմունքները: 1920 թ. հունիսին համալսարանը փոխադրվեց Երևան: Համալսարանն ազգային կադրերի պատրաստման կենտրոնն էր, և հենց նրա հիմքի վրա էլ հետագայում կազմավորվեցին հանրապետության մյուս բուհերը:

Միջոցներ ձեռնարկվեցին թանգարանային և գրադարանային համակարգը կազմակերպելու, հնագիտական հուշարձանները պահպանելու, գրական կյանքը զարգացնելու ուղղությամբ: Այդ նպատակով գաղթօջախներից Հայաստան վերադարձան մշակույթի մի շարք գործիչներ: Թորոս Թորամանյանը վերսկսեց Անիի ավերակների ընդհատված պեղումները: Ճանաչված գեղանկարիչներ Գևորգ Բաշինջաղյանի, Մարտիրոս Սարյանի, Եղիշե Թադևոսյանի և ուրիշների մասնակցությամբ Երևանում բացվեց հայ արվեստագետների ցուցահանդեսը: Իսկ հայ գրողներից շատերը (Ավետիս Ահարոնյան, Նիկոլ Աղբալյան, Լևոն Շանթ, Ռուբեն Դարբինյան և ուրիշներ) առաջին հանրապետության պետական նշանավոր գործիչներից էին:

Հարցեր և առաջադրանքներ

1. Առաջին հանրապետությունն ինչ դժվարություններ ուներ կրթության և մշակույթի բնագավառներում:
2. Առաջին հանրապետությունը ինչ միջոցառումներ իրականացրեց կրթական գործը և մշակույթը զարգացնելու ուղղությամբ:

ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՆՈՒՆՆԵՐ, ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Պետական համալսարան, Թորոս Թորամանյան, Նիկոլ Աղբալյան, Լևոն Շանթ:

ԳԼՈՒԽ II

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ: ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

§ 1–2. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ: ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՐԵՎԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ

Արտաքին հարաբերությունները և դիվանագիտական կապերը: Բաթումում կնքված հայ–թուրքական հաշտության պայմանագրով նորանկախ հայկական պետությունը հայտնվել էր ծանր դրության մեջ: Հայաստանը իրավունք չուներ կապեր հաստատելու Օսմանյան կայսրության դեմ պատերազմող Անտանտի երկրների հետ: Պետության արտաքին հարաբերությունները սահմանափակվում էին միայն Քառյակ միության երկրների (Գերմանիա, Թուրքիա, Ավստրո–Հունգարիա, Բուլղարիա) և Հայաստանի անմիջական հարևանների շրջանակներով:

Ավետիս Ահարոնյան

Բաթումի հաշտության պայմանագրի՝ Հայաստանի համար ծանր պայմանները վերանայելու նպատակով Օսմանյան կայսրության մայրաքաղաք Կոստանդնուպոլսում (այժմ՝ Ստամբուլ) գործունեություն էր ծավալել Հայաստանի դիվանագիտական առաքելությունը՝ Ավետիս Ահարոնյանի գլխավորությամբ: Բեռլինում և Վիեննայում էր հայկական մեկ այլ պատվիրակություն՝ Համո Օհանջանյանի գլխավորությամբ: Նախապատրաստվում էր Օսմանյան կայսրության և այսրկովկասյան հանրապետությունների միջև սահմանների հարցի վերաքննարկում Կ. Պոլսում հրավիրվելիք նոր խորհրդաժողովում, որն այդպես էլ չկայացավ:

1918 թ. հոկտեմբերի 30–ին Մուդրոսում ստորագրված զինադադարը ազդարարեց Օսմանյան կայսրության պարտությունը Առաջին աշխարհամարտում: Ուժը կորցրին Բրեստ–Լիտովսկի և Բաթումի

Հաւմո Օհանջանյան

պայմանագրերը: Սկսվեց Հայաստանի Հանրապետության դիվանագիտական կապերի հաստատման գործընթացը: Դիվանագիտական ներկայացուցչություններ հիմնվեցին աշխարհի 40–ից ավելի պետությունների մայրաքաղաքներում՝ Փարիզում, Լոնդոնում, Հռոմում, Բեռլինում, Վաշինգտոնում, Տոկիոյում, Աթենքում, Կ. Պոլսում, Կահիրեում, Թեհրանում, Բաքվում, Թիֆլիսում և այլուր: Երևանում բացվեցին Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի, Իրանի, Ադրբեջանի, Վրաստանի և այլ երկրների դիվանագիտական ներկայացուցչություններ:

ՀՀ արտաքին քաղաքականության կարևոր խնդիրներից էր հարաբերությունների կարգավորումը անմիջական հարևանների հետ: Պատմականորեն ձևավորված և ցարական տիրապետության ժամանակներից մնացած ազգային, տարածքային–սահմանային և այլ վեճերի պատճառով փոխադարձ անվստահություն կար Ադրբեջանի և Վրաստանի, ինչպես նաև Օսմանյան կայսրության հետ հարաբերություններում:

Ի տարբերություն վերջինների՝ բարեկամական սերտ կապեր հաստատվեցին Հայաստանի ու Իրանի միջև:

Հայ–վրացական հարաբերությունները: Նորանկախ երկու պետությունների միջև բարեկամական հարաբերությունների հաստատմանը խոչընդոտում էին տարածքային վեճերը: Վրաստանը ձգտում էր տիրանալու Ախալքալաքի, Բորչալուի և Լոռու հայկական գավառներին: Դրանք Ռուսաստանյան կայսրության վարչատարածքային բաժանումների արդյունքով հայտնվել էին Թիֆլիսի նահանգի սահմաններում:

Հայաստանը թեև փորձում էր խնդիրը կարգավորել բանակցությունների միջոցով, սակայն վրացական կողմի անզիջում կեցվածքի պատճառով պատերազմից խուսափել չհաջողվեց: 1918 թ. հոկտեմբեր–նոյեմբեր ամիսներին վրացական կողմը դիմեց նախահարձակ գործողությունների Հարավային Լոռու, Ախալքալաքի և Ախալցխայի շրջաններում:

Հայկական տարածքները վրացական զինագրա-

վումից ազատագրելու համար Հայաստանը դեկտեմբերի սկզբից դիմեց վճռական քայլերի: 20–օրյա պատերազմը ավարտվեց Անտանտի զինվորական ներկայացուցիչների միջնորդությամբ: 1918 թ. դեկտեմբերի 31–ին կողմերի միջև կնքվեց զինադադար: Հաղթանակը թեև հայկական կողմինն էր, սակայն պատերազմը ծանր հետևանքներ ունեցավ Հայաստանի Հանրապետության համար: Հայաստանը զրկվել էր արտաքին աշխարհի հետ Վրաստանի տարածքով հաղորդակցվելու հնարավորությունից:

Տարածքային վեճերը կարգավորելու նպատակով 1919 թ. հունվարի 9–17–ին Թիֆլիսում գումարվեց հայ–վրացական հաշտության խորհրդաժողով: Լոռին հայտարարվեց «չեզոք գոտի», Ջավախքը՝ վիճելի տարածք: Վրաստանը վերաբացեց Հայաստան մտնող հաղորդակցության ուղիները: Կողմերի միջև վերականգնվեցին բարեկամական հարաբերությունները:

1920 թ. աշնանը թուրք–հայկական պատերազմի ժամանակ Վրաստանի առաջարկությամբ Թիֆլիսում ստորագրվեց հայ–վրացական համաձայնագիր Լոռու չեզոք գոտի ժամանակավորապես վրացական զորքեր մտցնելու մասին: Դրանով նախատեսվում էր կանխել թուրքական զորքերի մուտքը Լոռի: Սակայն խախտելով պայմանները՝ վրացական զորքերը ներխուժեցին նաև գոտու սահմաններից դուրս գտնվող հայկական այլ բնակավայրեր: Լոռիում հաստատվեց վրացական գեներալ–նահանգապետություն:

Հայ–ադրբեջանական հարաբերությունները: Լարված էին Հայաստանի հարաբերությունները Ադրբեջանի հետ: Վերջինս չհիմնավորված հավակնություններ ուներ Նախիջևանի, Շարուր–Դարալագյազի (Վայոց Ձոր), Ջանգեզուրի (Սյունիք), Ղարաբաղի (Արցախ) և հայկական այլ տարածքների նկատմամբ: Դրան նպաստում էր նաև թուրքական զորքերի ռազմարշավը դեպի Բաքու, որը սկսվեց 1918 թ. հունիսի կեսերին:

Բաքվի և Ելիզավետպոլի նահանգների հայու-

Հակոբ Բագրատունի

Զանգեզուրի լեռներ

թյան նոր տեղահանությունների ու կոտորածների սպառնացող վտանգի գիտակցումը ստիպեց Բաքվի Հայոց ազգային խորհրդին զբաղվել ինքնապաշտպանության կազմակերպմամբ: Գլխավոր դերերում էին ***Համազասպը, Գրիգոր Կորգանովը*** (Ղորղանյան), գեներալ ***Հակոբ Բագրատունին, Սեբաստացի Մուրադը, Մեպուհը*** և այլք: Հերոսական ինքնապաշտպանության շնորհիվ տասնյակ հազարավոր հայերի հաջողվեց խուսափել կոտորածներից: Այդուհանդերձ, քաղաք ներխուժած թուրքական զորքերը և թուրք–թաթարական ուժերը 1918 թ. աշնանը, Բաքվում մի քանի օր շարունակ կոտորեցին շուրջ 30 հազար հայերի:

Մուդրոսի զինադադարից հետո, երբ Թուրքիան հանեց զորքերը տարածաշրջանից, Բաքվում ամրապնդվեցին Մեծ Բրիտանիայի դիրքերը: Անմիջապես բացահայտվեց բրիտանական ադրբեջանամետ քաղաքականությունը՝ պայմանավորված Բաքվի նավթի գործոնով: Բրիտանացիների պահանջով նախ կասեցվեց Զանգեզուրից արցախահայությանն օգնության շտապող զորավար Անդրանիկի ջոկատի առաջխաղացումը դեպի Շուշի, իսկ 1919 թ. հունվարին Ադրբեջանի իշխանությունների կողմից Արցախի և Զանգեզուրի ժամանակավոր գեներալ–նահանգապետ նշանակվեց հայատյաց Խոսրով բեկ Սուլթանովը:

Հայկական մեկ այլ երկրամասի՝ Նախիջևանի կառավարումը, բրիտանացիների համաձայնութ-

յամբ, 1919 թ. գարնանից հանձնվեց Հայաստանին: Սկսվեց հայ գաղթականության վերադարձը հայրենի օջախներ: Սակայն հայկական իշխանությունների նկատմամբ թշնամաբար տրամադրված մուսուլմանական բնակչությունը Ադրբեջանի և Թուրքիայի հովանավորությամբ դիմեց զինված խռովության: 1919 թ. վերջին երկրամասը մեծ մասամբ հայաթափվեց:

1919 թ. վերջին — 1920 թ. սկզբին հայ–ադրբեջանական կռիվները նոր թափ ստացան: Նախիջևանի կողմից հարձակումների ենթարկվող՝ Զանգեզուրին սահմանակից հայաբնակ Գողթան գավառի, ինչպես նաև Ղափանի (Կապան) տարածաշրջանի ինքնապաշտպանությունն ամրապնդելու նպատակով դեռ 1919 թ. երկրորդ կեսին այստեղ էր ժամանել ռազմական և քաղաքական հմուտ գործիչ Գարեգին Նժդեհը (Գարեգին Եղիշեի Տեր–Հարությունյան): Նրան շուտով հաջողվեց բարձրացնել զանգեզուրցիների ոգին, իսկ երկրամասը՝ վերածել ամուր պաշտպանված ամրոցի:

Արցախում լարված իրավիճակը խորանում էր:

Գարեգին Նժդեհ
(1886–1955)

Գարեգին Նժդեհն իր զինակիցներով

1920 թ. մարտին ադրբեջանական բանակը դիմեց լայնածավալ հարձակման, որի ընթացքում տեղի ունեցան Շուշիի ու շրջակա հայկական գյուղերի բազմահազար անզեն բնակիչների ահավոր ջարդերը: Արցախին շուտով օգնության հասան զորավարներ Դրոյի և Նժդեհի հայկական ջոկատները: Արցախահայության 9–րդ համագումարը 1920 թ. ապրիլի 25–ին երկրամասը հռչակեց Հայաստանի Հանրապետության անբաժանելի մաս:

Իրադրությունը երկրամասում կտրուկ փոխվեց ապրիլի վերջին: Դա պայմանավորված էր տարածաշրջանում Խորհրդային Ռուսաստանի քաղաքականության աշխուժացմամբ և վերջինիս կողմից Ադրբեջանի խորհրդայնացմամբ: 1920 թ. ամռանը խորհրդային զորքերի կողմից Արցախի, Զանգեզուրի և Նախիջևանի ռազմակալմամբ հայկական երկրամասերի խնդիրը տեղափոխվեց հայ–ռուս–ադրբեջանական հարաբերությունների ոլորտ:

Հարցեր և առաջադրանքներ

1. Երբ է կնքվել Բաթումի պայմանագիրը: Դիվանագիտական ինչ քայլեր ձեռնարկեց Հայաստանի առաջին հանրապետությունը: Երբ է սկսվել ՀՀ–ի դիվանագիտական կապերի հաստատման գործընթացը: Ո՞ր երկրների մայրաքաղաքներում էր ՀՀ–ն հիմնել դիվանագիտական ներկայացուցչություններ: Ո՞ր պետությունները Երևանում բացեցին դիվանագիտական ներկայացուցչություններ: Քարտեզի վրա ցո՛ւյց տվեք այն պետությունները և դրանց մայրաքաղաքները, որտեղ ՀՀ–ն հիմնել էր դիվանագիտական ներկայացուցչություններ և այն երկրները, որոնք դիվանագիտական ներկայացուցիչներ ունեին Երևանում:
2. 1918 թ. վերջին ինչո՞ւ էին սրվել հայ–վրացական հարաբերությունները: Ինչ ընթացք և ավարտ ունեցավ այդ հակամարտությունը: Որո՞նք էին հայ–ադրբեջանական լարված հարաբերությունների պատճառները: Ինչ ընթացք ունեցավ Արցախի, Զանգեզուրի և Նախիջևանի համար պայքարը:

ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՆՈՒՆՆԵՐ, ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մուդրոսի զինադադար, հայ–վրացական 1918 թ. պատերազմ, «Լոռու չեզոք գոտի», գեներալ Հակոբ Բագրատունի, Նախիջևանի հայաթափում, Գարեգին Նժդեհ:

§ 3. ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ՓԱՐԻԶԻ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎՈՒՄ: ՍԵՎՐԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ

Հայկական պատվիրակությունները Փարիզի խորհրդաժողովում: Միացյալ Հայաստանի հռչակումը: Առաջին աշխարհամարտի արդյունքներն ամփոփելու, պարտված երկրների հետ հաշտության պայմանագրեր կնքելու նպատակով 1919 թ. հունվարի 18–ին Փարիզում սկսվեց Անտանտի տերությունների խաղաղության խորհրդաժողովը: Հայաստանի Հանրապետության կառավարությունը և արևմտահայերը առանձին պատվիրակություններ ուղարկեցին Փարիզ: Առաջինը գլխավորում էր Ավետիս Ահարոնյանը, իսկ արևմտահայերի Հայոց ազգային պատվիրակությունը՝ եգիպտահայ մեծահարուստ Պողոս Նուբար փաշան:

Փարիզի Հայոց ազգային համագումարի մասնակիցներ, 1919 թ.

Հայկական երկու պատվիրակությունները 1919 թ. փետրվարի 12–ին Փարիզում ստորագրեցին հայկական պահանջների համատեղ հուշագիր: Նրանով պահանջվում էր ճանաչել Միացյալ Հայկական անկախ պետությունը, որը ներառելու էր Արևմտյան Հայաստանի յոթ նահանգները (Վան, Բիթլիս, Դիարբեքիր, Խարբերդ, Սեբաստիա, Էրզրում (Կարին) և Տրապիզոն), Կիլիկիայի չորս սանջակները (գավառները), ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունը՝ ընդլայնված սահմաններով: Առաջարկվում էր առնվազն 20 տարով դաշնակից պետություններից մեկին տալ Հայաստանի հովանավորության մանդատ (հանձնագիր): Պահանջվում էր նաև պատժի ենթարկել հայկական ջարդերի կազմակերպիչներին, պարտավորեցնել Թուրքիային հատուցելու հայերի կրած վնասները:

Փարիզի խորհրդաժողովում և միջազգային ասպարեզում միասնաբար հանդես գալու անհրաժեշտությունը հրամայական էր դարձնում *Միացյալ Հայաստանի հռչակումը*: Դրան էին ձգտում թե՛ արևմտահայությունը, թե՛ արևելահայությունը:

1919 թ. փետրվարին Երևանում գումարված

Պողոս Նուբար

արևմտահայերի 2–րդ համագումարը բանաձև էր ընդունել Միացյալ և Ազատ Հայաստան հռչակելու մասին: «Ամբողջական Հայաստանի անկախության» մասին հայտարարություն ընդունվեց նաև Պողոս Նուբարի նախաձեռնությամբ 1919 թ. փետրվար–ապրիլին Փարիզում կայացած Հայոց ազգային համագումարում:

1919 թ. մայիսի 28–ին՝ Հայաստանի անկախության հռչակման առաջին տարեդարձի օրը, հանրապետության կառավարությունը հանդիսավոր պայմաններում ընդունեց «Միացյալ Հայաստանի անկախության հռչակագրի ակտը»: Պատմական այդ փաստաթղթում մասնավորապես նշվում էր. *«Հայաստանի կառավարությունը, համաձայն բովանդակ հայ ժողովրդի միահամուռ կամքի և ցանկության, հայտարարում է, որ այսօրվանից Հայաստանի բաժան–բաժան մասերը մշտնջենապես միացած են իբրև անկախ պետական միություն»*:

Հայկական հարցը Սան Ռեմոյի խորհրդաժողովում: Սևրի պայմանագիրը: Հայկական հարցի շուրջ միջազգային քննարկումները շարունակվեցին մեկ տարուց ավելի: Հայաստանի մանդատի հավանական թեկնածու էր համարվում ԱՄՆ–ը: 1919 թ. սեպտեմբերին տարածաշրջան գործուղվեց ամերիկացի գեներալ Ջեյմս Հարբորդի գլխավորած մի պատվիրակություն: Հարբորդի զեկուցագրով առաջարկվում էր Հայաստանի և Այսրկովկասի համար սահմանել մեկ ընդհանուր ամերիկյան մանդատ:

Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը՝ Ավետիս Ահարոնյանի գլխավորությամբ

1920 թ. հունվարի 19–ին Փարիզում տեղի ունեցած՝ ԱՄՆ–ի, Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի և Ճապոնիայի ղեկավարների նիստը դե ֆակտո (փաստացի) ճանաչեց Հայաստանի կառավարությունը: Այդ երկար սպասված իրադարձությունը Երևանում տոնվեց մեծ հանդիսավորությամբ:

Հայկական հարցը սերտորեն առնչվում էր պատերազմում պարտված Թուրքիայի հետ պայմանագրի մշակման խնդրին: 1920 թ. ապրիլի 19–26–ը Իտալիայի Սան Ռեմո քաղաքում կայացած խորհրդաժողովում վերջնականապես մշակվեց Թուրքի-

այի հետ հաշտության պայմանագրի նախագիծը: Այդ կապակցությամբ Սան Ռեմո էին հրավիրվել Ավ. Ահարոնյանը և Պ. Նուբարը: Դաշնակիցները թեև հավանություն տվեցին միացյալ հայկական պետության ստեղծմանը, սակայն հարցը շարունակում էին կապել ԱՄՆ–ի կողմից Հայաստանի մանդատը ստանձնելու խնդրին: Ուստի նման առաջարկով Սան Ռեմոյից դիմեցին ԱՄՆ–ի կառավարությանը և անձամբ ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնին: Վերջինիս, «որպես անկախ և անաչառ արբիտրի (իրավարարի)», առաջարկվում էր որոշել հայ–թուրքական սահմանի հարցը: 1920 թ. ապրիլի 23–ին ԱՄՆ–ի կառավարությունը փաստացի ճանաչեց Հայաստանի Հանրապետությունը, իսկ նախագահ Վիլսոնը համաձայնեց ստանձնելու սահմանների որոշման իրավարարի առաքելությունը: Սակայն հունիսի 1–ին ԱՄՆ–ի Սենատը մերժեց Հայաստանի մանդատը:

Հայկական երկու պատվիրակությունները

ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոն

Սան Ռեմոյի խորհրդաժողովի որոշումները դրվեցին 1920 թ. օգոստոսի 10–ին Փարիզի արվարձան Սևրում Թուրքիայի հետ ստորագրված խաղաղության պայմանագրի հիմքում: Գլխավոր դաշնակից տերությունների հետ միասին պայմանագիրը ստորագրեց նաև Հայաստանը: Սևրի պայմանագրով Թուրքիան Հայաստանը ճանաչում էր ազատ և անկախ պետություն: Սահմանի վերջնական որոշումը հանձնարարվում էր ԱՄՆ նախագահին, իսկ կողմերը պարտավորվում էին անվերապահորեն ընդունելու միջնորդական իրավարար վճիռը: Այսպիսով՝ կարծես իրականանում էր հայ ժողովրդի դարավոր երազանքը, իր արդարացի լուծումն էր ստանում Հայկական հարցը, ստեղծվում էր Միացյալ և Անկախ Հայաստան:

Սևրի պայմանագիրը, ցավոք, չվավերացվեց՝ մնալով որպես չիրագործված միջազգային փաստաթուղթ: Գլխավոր պատճառն այն էր, որ պայմանագիրը ստորագրած Թուրքիայի սուլթանական կառավարությունը երկրում այլևս չուներ փաստական իշխանություն. այն պատկանում էր Մուսթաֆա Քեմալի գլխավորած Անկարայի կառավարությանը: Վերջինս ոչ միայն չճանաչեց Սևրի պայմանագիրը, այլև դիմեց դիվանագիտական և ռազմական բոլոր միջոցներին այն տապալելու համար: Իսկ դաշնակից տերություններից ոչ մեկը ճնշում չգործադրեց քեմալականների վրա:

Այդուհանդերձ, 1920 թ. նոյեմբերի 22–ին ԱՄՆ նախագահ Վիլսոնը հրապարակեց իր իրավարար վճիռը հայ–թուրքական սահմանագծի վերաբերյալ: Ըստ դրա՝ Միացյալ Հայաստանը պետք է ստանար Վանի և Բիթլիսի նահանգների երկու երրորդը, գրեթե ամբողջ Էրզրումի (Կարին) նահանգը, Տրապիզոնի նահանգի մեծ մասը՝ ներառյալ նավահանգիստը: Ընդհանուր առմամբ այդ տարածքը կազմելու էր ավելի քան 90 հազար քառ. կմ: Միավորվելով գոյություն ունեցող Հայաստանի Հանրապետության հետ, որի տարածքը 1920 թ. կեսերին կազմում էր շուրջ 70 հազար քառ. կմ, հայ-

կական անկախ և միացյալ պետությունը ստեղծվելու էր ավելի քան 160 հազար քառ. կմ. ընդհանուր տարածքի վրա՝ միաժամանակ ելք ունենալով դեպի Սև ծով:

Ինչպես Սևրի պայմանագիրը, այնպես էլ նրանից բխող՝ հայ–թուրքական սահմանի վերաբերյալ Վիլսոնի իրավարար որոշումը չիրագործվեցին: Այդուհանդերձ, դրանք Արևմտյան Հայաստանի նկատմամբ հայ ժողովրդի իրավունքների միջազգային ճանաչումն էին:

Իրադրությունը Կիլիկիայում և կիլիկիահայությունը: Սևրի պայմանագրով նախատեսված չէր Կիլիկիան ներառել ստեղծվող հայկական պետության կազմում: Մուդրոսի զինադադարից հետո, երբ թուրքական զորքերը ստիպված էին հեռանալ Կիլիկիայից, վերջինս գրավեցին բրիտանական զորքերը, իսկ 1919 թ. նոյեմբերին նրանց փոխարինեցին ֆրանսիական զորամասերը: Ցեղասպանությունից մազապուրծ և տեղահանված կիլիկիահայերը խումբ–խումբ վերադարձան հայրենի օջախներ: Արդեն 1920 թ. սկզբներին ամբողջ Կիլիկիայում ապրում էր ավելի քան 150 000 հայ բնակչություն: Հնարավոր տարբերակ էր Ֆրանսիայի հովանավորությամբ ստեղծել Կիլիկիայի Ինքնավար Հանրապետություն, որի զինված ուժերի հիմքը կազմելու էր դեռևս 1916 թ. հոկտեմբերին հիմնված և հայ կամավորներից բաղկացած «Արևելյան լեգեոնը» («Հայկական լեգեոն»): 1918 թ. աշնանը նրա կազմում կար ավելի քան 5 000 զինվոր, որոնք իրենց փայլուն դրսևորեցին 1918 թ. սեպտեմբերի 19–ի Արարայի ճակատամարտում (Պաղեստինի տարածք) և մարտի ելքը վճռեցին հօգուտ ֆրանսիական զորքերի: Մուդրոսի զինադադարից հետո լեգեոնը տեղափոխվեց Կիլիկիա և զբաղեցրեց երկրամասի ռազմավարական կարևոր կետերը: Սակայն ֆրանսիական իշխանությունները հրաժարվեցին Կիլիկիային ինքնավարություն տալու մտադրությունից և 1920 թ. օգոստոսին լուծարեցին լեգեոնը:

1920 թ. օգոստոսի 4–ին Ադանայում հայ ազգային–քաղաքական ուժերը հռչակեցին Կիլիկիայի ինքնավարությունը, կազմավորվեց կառավարություն Միհրան Տամատյանի գլխավորությամբ, որը, սակայն, շուտով լուծարվեց:

Կիլիկիահայերի համար լուրջ սպառնալիք էր քեմալական շարժումը: Քեմալականները հայաբնակ ***Մարաշ*** ներխուժեցին 1920 թ. հունվարի կեսերին: Կոտրելով հայության հերոսական դիմադրությունը՝ թուրքերն այնտեղ սրի քաշեցին շուրջ 12 000 հայերի: Փրկվածները՝ մոտ 8 000 մարդ, ստիպված էին լքել հայրենի օջախները և տեղափոխվել Սիրիա:

Թուրքական կանոնավոր զորքերի դեմ կիլիկիահայության ինքնապաշտպանությունն առավել կազմակերպված բնույթ կրեց ***Հաճընում և Այնթապում***:

1921 թ. հոկտեմբերի 20–ին Անկարայում կնքված ֆրանս–թուրքական պայմանագրով՝ հայաթափված Կիլիկիան հանձնվեց Թուրքիային:

Այսպիսով՝ կիլիկիահայությունը թեև հայրենազրկվեց, սակայն հերոսական դիմադրության շնորհիվ մի մասին հաջողվեց խուսափել բնաջնջումից և սփռվել աշխարհով մեկ:

Հարցեր և առաջադրանքներ

1. Երբ և ինչո՞ւ գումարվեց Փարիզի հաշտության խորհրդաժողովը: Հայկական ի՞նչ պատվիրակություններ էին մասնակցում խորհրդաժողովին. ովքե՞ր էին գլխավորում այդ պատվիրակությունները և ի՞նչ պահանջներ նրանք ներկայացրին: Երբ է ընդունվել «Միացյալ Հայաստանի անկախության հռչակագրի ակտը». գնահատե՛ք այդ փաստաթուղթը:
2. Երբ է Սան Ռեմոյում մշակվել Թուրքիայի հետ հաշտության պայմանագրի նախագիծը: Երբ է ԱՄՆ–ի կառավարությունը փաստացի ճանաչել ՀՀ–ն. ի՞նչ առաքելություն համաձայնեց ստանձնել Վ. Վիլսոնը:
3. Երբ և ո՞ւմ միջև է ստորագրվել Սևրի պայմանագիրը: Ներկայացրե՛ք Սևրի պայմանագրի՝ Հայաստանին վերաբերող մասը և գնահատե՛ք պայմանագիրը:
4. Ի՞նչ տեղի ունեցավ Կիլիկիայում Մուդրոսի զինադադարից հետո: Ի՞նչ գիտեք «Արևելյան լեգեոնի» («Հայկական լեգեոն») մասին: Երբ և որտե՞ղ է հռչակվել

ՄԻԱՑՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԸ՝ ԸՍՏ ՍԵՎՐԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

Կիլիկիայի ինքնավարությունը: Ի՞նչ գիտեք կիլիկիահայության մղած ինքնապաշտպանական կռիվների մասին. ի՞նչ արդյունք ունեցան դրանք:

ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՆՈՒՆՆԵՐ, ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Միացյալ Հայաստանի անկախության հռչակագրի ակտ», Սան Ռեմո, Սևր, Վուդրո Վիլսոն, արբիտր (իրավարար), Հայաստանի հովանավորության մանդատ, «Արևելյան լեգեոն» («Հայկական լեգեոն»), Արարայի ճակատամարտ, ինքնավար Կիլիկիա:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆՅՈՒԹԵՐ

ՀՀ կառավարության «Միացյալ Հայաստանի անկախության հայտարարման ակտը»

«Հայաստանի ամբողջությունը վերականգնելու և ժողովրդի լիակատար ազատությունն ու բարգավաճումն ապահովելու համար Հայաստանի կառավարությունը, համաձայն բովանդակ հայ ժողովրդի միահամուռ կամքի և ցանկության, հայտարարում է, որ այսօրվանից Հայաստանի բաժան–բաժան մասերը մշտնջենապես միացած են իբրև անկախ պետական միություն:

Ուղիղ մեկ տարի առաջ ռուսահայերի համագումարից ընտրված Հայոց ազգային խորհուրդը հայտարարեց իրեն Անդրկովկասյան հայկական գավառների բարձրագույն իշխանություն: Ազգային խորհրդի կազմած կառավարությունն այդ քաղաքական ակտի մասին պաշտոնապես պետությունների ներկայացուցիչներին հայտնելուց հետո՝ այս մեկ տարում, փաստորեն հաստատել է իր իշխանությունն Անդրկովկասի հայկական գավառներում:

1919 թ. փետրվար ամսին Երևան քաղաքում կայացած Արևմտահայ երկրորդ համագումարը հանդիսավոր կերպով հայտարարեց, որ նա Հայաստանը Միացյալ և անկախ է ճանաչում:

Այժմ Անդրկովկասում և Օսմանյան կայսրության սահմաններում գտնված պապենական հայկական երկրների միացման և անկախության այս ակտը կատարելով՝ Հայաստանի կառավարությունը հայտարարում է, որ Միացյալ Հայաստանի պետական ձևն է Ռամկավար հանրապետությունը, և որ ինքը հանդիսանում է Միացյալ Հայաստանի Հանրապետության կառավարությունը…

28 մայիսի, 1919 թ., ք. Երևան»: (Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 198, ց. 1, գ. 4, թ. 1):

***

Սևրի 1920 թ. օգոստոսի 10–ի պայմանագրից

Հոդված 88. *Թուրքիան հայտարարում է, որ ճանաչում է Հայաստանը ազատ և անկախ պետություն, ինչպես դա արդեն արել են Դաշնակից տերությունները:*

Հոդված 89. *Թուրքիան և Հայաստանը, ինչպես և Բարձր պայմանավորվող կողմերը, համաձայնում են Էրզրումի, Տրապիզոնի, Վանի և Բիթլիսի վիլայեթներում Թուրքիայի և Հայաստանի միջև սահմանազատումը թողնելու Ամերիկայի Միացյալ Նահանգների որոշմանը և ընդունել ինչպես նրա որոշումը, նույնպեսև այն բոլոր միջոցառումները, որոնք նա կարող է առաջարկել Հայաստանին դեպի ծով ելք տալու և հիշյալ սահմանագծին հարող օսմանյան բոլոր տարածքներն ապառազմականացնելու վերաբերյալ:*

Հոդված 90. *Այն դեպքում, եթե 89–րդ հոդվածի համաձայն սահմանագիծը որոշելիս հիշյալ վիլայեթների ամբողջ տարածքը կամ նրա մի մասը հանձնվի Հայաստանին, Թուրքիան այսօր արդեն հայտարարում է, որ որոշման օրից սկսած, ինքը հրաժարվում է հանձնված տարածքի նկատմամբ բոլոր իրավունքներից և իրավահիմունքներից:*

(Ըստ «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828–1923)» գրքի, կազմողներ՝ Զ. Կիրակոսյան, Ռ. Սահակյան, Երևան, 1972, էջ 672–683):

***

Արաբայի ճակատամարտում Հայկական լեգեոնի մասնակցության մասին Մերձավոր Արևելքում Դաշնակից զորքերի գլխավոր հրամանատար մարշալ Ալենբիի հեռագրից՝ ուղղված Պողոս Նուբարին 1918 թ. հոկտեմբերի 2–ին

«Հպարտ եմ, որ հրամանատարությանս տակ ունեմ հայկական զորախումբ: Նա փայլուն կռվեց և մեծ բաժին ունեցավ հաղթանակում»:

(«Յուշամատեան մեծ եղեռնի (1918–1965) », Բեյրութ, 1965, էջ 897):

ԳԼՈՒԽ III

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԿՈՒՄԸ

§ 1. ՀԱՅԱՍՏԱՆԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԵՎ ՔԵՄԱԼԱԿԱՆ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ

Հայ–ռուսական հարաբերությունները: ՀՀ դիվանագիտական գործունեության կարևոր ուղղություններից էր Ռուսաստանը, որտեղ քաղաքացիական պատերազմ էր ընթանում խորհրդային իշխանության և նրա հակառակորդների միջև: Դրանք երկրի հարավում ու արևելքում ինքնահռչակված պետական կազմավորումներ էին, որոնց հետ Հայաստանը հաստատեց բարիդրացիական հարաբերություններ:

Խորհրդային Ռուսաստանի կառավարությունը չէր շտապում ճանաչել Հայաստանի անկախությունը՝ Հայաստանին համարելով Անտանտի դաշնակից: Ադրբեջանի խորհրդայնացումից (1920 թ. ապրիլի 28) անմիջապես հետո Ռուսաստանի 11–րդ կարմիր բանակի հրամանատարությունը վերջնագրեր ներկայացրեց Հայաստանի կառավարությանը՝ Ղարաբաղից և Զանգեզուրից հայկական զորքերը դուրս բերելու պահանջով: Հակառակ դեպքում սպառնում էր դրանք գրավել ուժով:

Հայ–ռուսական հարաբերությունները կարգավորելու նպատակով ***1920 թ. մայիսին*** Մոսկվա գործուղվեց Հայաստանի պատվիրակությունը՝ ***Լևոն Շանթի*** գլխավորությամբ: Բարեկամական հարաբերություններ հաստատելու դիմաց Խորհրդային Ռուսաստանը պայման էր դնում, որ Հայաստանը հրաժարվի արևմտյան կողմնորոշումից և Հայկական հարցի լուծումը փոխանցի խորհրդային կառավարությանը: Կողմերի հակադիր դիրքորոշումների պատճառով բանակցություններն ընդհատվեցին:

Այդուհանդերձ, ***1920 թ. օգոստոսի 10–ին*** Թիֆլիսում կողմերի միջև ստորագրված համաձայնագրով՝ Ռուսաստանը ճանաչում էր Հայաստանի Հան-

րապետության անկախությունը: ՀՀ–ն համաձայնեց, որ Ղարաբաղը, Զանգեզուրը և Նախիջևանը ժամանակավորապես ռազմակալվեն խորհրդային զորքերի կողմից:

Քեմալական շարժումը և Հայաստանը: Քեմալա–բոլշևիկյան համագործակցությունը: 1919 թ. կեսերից Թուրքիայի արևելյան շրջաններում ծավալվել էր մի շարժում, որը ղեկավարի՝ Մուսթաֆա Քեմալի անունով կոչվեց նաև քեմալական: Շարժման նպատակները ձևակերպում ստացան «Թուրքական ազգային ուխտ» կոչվող փաստաթղթում, որը թուրքական խորհրդարանը ընդունեց 1920 թ. հունվարի 28–ին: Ազգային ուխտը «բուն թուրքական տարածք» էր հռչակում Արևմտյան Հայաստանը և Կիլիկիան, ինչպես նաև Կարսը, Արդահանը և Բաթումը: Դրանում նշվում էր նաև, որ հայկական կազմակերպված համայնքի ստեղծման (Արևմտյան Հայաստանում) կանխումը պետք է լինի յուրաքանչյուր թուրքի սրբազան գործը, իսկ Հայաստանի ոչնչացումը՝ առաջնահերթ խնդիր: Այսպիսով՝ քեմալականները ոչ միայն չէին հրաժարվում սուլթանական և երիտթուրքական հայաջինջ քաղաքականությունից, այլև դարձան դրա անմիջական ժառանգորդները:

Քեմալը 1920 թ. ապրիլի 26–ին նամակով դիմեց ՌՍԴԽՀ ժողկոմխորհի նախագահ Վլադիմիր Լենինին (Ուլյանով)՝ առաջարկելով ռազմական դաշինք կնքել ընդդեմ «իմպերիալիստական Արևմուտքի»: Նշվում էր նաև, որ անհրաժեշտության դեպքում քեմալականները պատրաստ են ռազմական գործողություններ ծավալելու Հայաստանի դեմ:

1920 թ. ամռան կեսերից Մոսկվայում ընթացող խորհրդա–քեմալական բանակցությունները ավարտվեցին օգոստոսի 24–ին կողմերի միջև նախաստորագրված «Սրտագին և անկեղծ բարեկամության մասին» պայմանագրով: Ռուսաստանը ճանաչում էր թուրքական Ազգային ուխտը և պարտավորվում քեմալականներին մատակարարել զենք ու զինամթերք:

Քեմալա–բոլշևիկյան մերձեցումը ամրապնդվեց

Մոսկվայի պայմանագրի կնքումը

1920 թ. սեպտեմբերի սկզբին Բաքվում հրավիրված՝ Արևելքի ժողովուրդների առաջին համագումարում: Դրան մասնակցում էր նաև Հայոց ցեղասպանության գլխավոր կազմակերպիչներից և իրականացնողներից մեկը՝ Էնվեր փաշան:

Համագումարում Արևելքի ժողովուրդներին կոչ արվեց «սրբազան պատերազմ» ծավալելու «միջազգային իմպերիալիզմի», այդ թվում՝ «նրա դաշնակից» Հայաստանի Հանրապետության դեմ: Համագումարի ընդունած փաստաթղթերում առաջարկվում էր օգնել քեմալականներին և Հայաստանի վրա նրանց ռազմարշավի միջոցով նպաստել վերջինիս խորհրդայնացմանը:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչ իրավիճակ էր Ռուսաստանում. ներկայացրե՛ք ՀՀ–ի վերաբերմունքը: Ինչո՞ւ Խորհրդային Ռուսաստանը չէր շտապում ճանաչել ՀՀ–ի անկախությունը: Ե՞րբ և ինչո՞ւ Մոսկվա մեկնեց Շանթի գլխավորած պատվիրակությունը: Ինչ ավարտ ունեցան Մոսկվայի բանակցությունները: Ե՞րբ և որտե՞ղ է ստորագրվել հայ–ռուսական համաձայնագիրը. գնահատե՛ք այն:
2. Ո՞րն էր քեմալական շարժման նպատակը. գնահատե՛ք այդ շարժումը: Ինչ զարգացում ունեցան քեմալա–բոլշևիկյան հարաբերությունները:

ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՆՈՒՆՆԵՐ, ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայ–ռուսական բանակցություններ, Լ. Շանթի պատվիրակություն, Թիֆլիսի հայ–ռուսական համաձայնագիր, Քեմալական շարժում, Մուսթաֆա Քեմալ, Վլադիմիր Լենին, Արևելքի ժողովուրդների առաջին համագումար, «Թուրքական ազգային ուխտ», «Սուրագին և անկեղծ բարեկամության մասին» պայմանագիր:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆՅՈՒԹ

Արևելքի ժողովուրդների Առաջին համագումարի (1920 թ. սեպտեմբերի 1–8, Բաքու) կողմից կազմավորված՝ Արևելքի ժողովուրդների Քարոզչության և գործողության խորհրդի նախագահության սեպտեմբերի 17–ի «Եզրակացությունից».

«Ամեն գնով և հրատապ օգնել Թուրքիայում մարող ազգայնական շարժմանը,

...դրան հնարավոր է հասնել միայն թուրքական ազգայնական զորքերի հետ դաշինքում Հայաստանի վրա հարձակման միջոցով: ...Թուրքական զորքերը կսկսեն հարձակումը Հայաստանի վրա, իսկ մենք մեր ամբողջ մամուլով և հրապարակայնորեն Եվրոպայում ահավոր աղմուկ կբարձրացնենք հայ–թուրքական նոր կոտորածների և դրանք մեկընդմիշտ դադարեցնելու անհրաժեշտության մասին, իսկ այդ կոտորածներին վերջ տալու պատրվակով մեր զորքերը կմտնեն Հայաստան, ...որտեղ կհաստատվի խորհրդային իշխանություն: ...

Արևելքում հեղափոխությունը փրկելու համար անհրաժեշտ են խորհրդային զորքերի անհապաղ հարձակումը Հայաստանի վրա և Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումը»:

(Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 113, ց. 3, գ. 7, թթ. 1–2 և դարձերես – 3):

§ 2. 1920 Թ. ԹՈՒՐՔ–ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ: ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՅՆԱՑՈՒՄԸ

Թուրք–հայկական պատերազմը: 1920 թ. սեպտեմբերի 23–ին առանց պատերազմ հայտարարելու քեմալական Թուրքիան հարձակվեց Հայաստանի Հանրապետության վրա: Թուրքական զորքերի ընդհանուր թիվն անցնում էր 50 հազարից: Հայկական բանակը, որի հրամանատարն էր գեներալ, սպարապետ Թովմաս Նազարբեկյանը, թվապես զիջում էր թուրքերին: Նրանում հաշվվում էր շուրջ 40 հազար զինվոր, որից մարտական ուժը՝ 25 հազար:

Պատերազմի սկսվելուն պես Հայաստանում հայտարարվեց զինապարտների և պահեստազորայինների համընդհանուր զորակոչ: Օգնության կոչ ուղղվեց մեծ տերություններին, սակայն Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան, ինչպես նաև ԱՄՆ–ը որևէ գործնական քայլի չդիմեցին Հայաստանը պաշտպանելու համար:

Պատերազմի սկզբում հաջողությունը թուրքական կողմինն էր. սեպտեմբերի 29–ին թուրքերը զավթեցին Սարիղամիշն ու Կաղզվանը: Այնուհետև՝ ընդհուպ մինչև հոկտեմբերի վերջը, հայերին հաջողվեց համախմբվել և կասեցնել թուրքերի հետագա առաջխաղացումը:

Հոկտեմբերի 28–ին թուրքական զորքերը Կարսի ճակատում անցան հարձակման: Թեև հայերը

Կարս

անձնազոհ պաշտպանվում էին, սակայն թշնամուն հաջողվեց կոտրել դիմադրությունը: Հոկտեմբերի 31–ին Կարս քաղաքը՝ իր անառիկ թվացող ամրոցով, հանձնվեց թուրքերին: Հայկական զորքից շատերը գերի ընկան: Նրանց թվում էին բարձրաստիճան հայ սպաներ՝ գեներալներ Դանիել Բեկ–Փիրումյանը, Քրիստափոր Արարատյանը և այլք: Կարսի հանձնումը կանխորոշեց պատերազմում Հայաստանի պարտությունը:

Ալեքսանդրապոլի անկումից (նոյեմբերի 7) հետո Հայաստանի կառավարությունը շուտով ընդունեց զինադադարի թուրքական պահանջները. ռազմական գործողությունները դադարեցվեցին: Նոյեմբերի 25–ին Ալեքսանդրապոլում սկսվեցին թուրք–հայկական հաշտության երկկողմանի բանակցությունները:

Դանիել Բեկ–Փիրումյան

Թուրք–հայկական պատերազմում Հայաստանի պարտությանը նպաստեցին ինչպես արտաքին քաղաքական անբարենպաստ պայմանները, այնպես էլ երկրի ներքին անկայունությունը:

Հայաստանի խորհրդայնացումը: Հայաստանի այս անհաջողությունները հնարավորություն տվցին Խորհրդային Ռուսաստանին ավելի վճռականորեն իրականացնելու Հայաստանը խորհրդայնացնելու քաղաքականությունը: Հայկական իշխանությունների հետ բանակցություններ վարելու նպատակով

Երևան է ժամանում Ռուսաստանի լիազոր ներկայացուցիչ Բորիս Լեգրանի գլխավորած պատվիրակությունը: Երևանի հայ–ռուսական բանակցությունները ավարտվում են հոկտեմբերի 28–ին ստորագրված «Եզրափակիչ որոշման արձանագրությամբ»: Կողմերը պարտավորվում են ստորագրել «Արձանագրությանը» կից հաշտության պայմանագիրը, եթե կատարվեին հետևյալ պայմանները. Ռուսաստանն ու Ադրբեջանը պետք է ճանաչեին Հայաստանի իրավունքները Նախիջևանի և Զանգեզուրի նկատմամբ, իսկ Հայաստանի կառավարությունը պետք է հրաժարվեր Ղարաբաղի նկատմամբ պահանջներից և ընդուներ Ռուսաստանի օժանդակությունը՝ Թուրքիայի հետ տարածքային հարցերը լուծելու խնդրում: Սակայն պայմանագրի նախագիծը չարժանացավ խորհրդային ղեկավարության հավանությանը:

1920 թ. աշնան վերջին Հայաստանն այլևս ի զորու չէր դիմակայելու քեմալաբոլշևիկյան ճնշումներին: Ռուսաստանի կառավարությունը պահանջում էր «անմիջապես ընդունել խորհրդայնացումը»:

Երկրի համար ստեղծված ծանր իրավիճակը քաղաքական վերաձևումների անհրաժեշտություն առաջացրեց: Հայաստանի խորհրդարանի՝ նոյեմբերի 23–ի արտակարգ նիստում վարչապետ ընտրվեց Սիմոն Վրացյանը: Վերջինիս կառավարությունն աշխատեց ընդամենը մեկ տասնօրյակ՝ լինելով Հայաստանի առաջին Հանրապետության վերջին կառավարությունը:

Մինչ Հայաստանի նոր կառավարությունը փորձում էր ելքեր որոնել ստեղծված ծանր իրավիճակից, ՌԿ(բ)Կ Կովկասյան բյուրոյի կողմից Բաքվում կազմավորված Հայաստանի Ռազմահեղափոխական կոմիտեն՝ Սարգիս Կասյանի նախագահությամբ և 11–րդ կարմիր բանակի «զորամասերի ուղեկցությամբ նոյեմբերի 29–ին մտավ Քարվանսարա (այժմ՝ Իջևան) և հռչակեց «Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետություն»:

Դեկտեմբերի 1–ին հանրապետության խորհր-

Սիմոն Վրացյան

դարանի, կառավարության և ՀՅԴ բյուրոյի միացյալ նիստում խորհրդայնացման պահանջը «որոշ պայմաններով» ի վերջո ընդունվեց: Կառավարության անդամներ Դրաստամատ Կանայանին (Դրո) և Հ. Տերտերյանին հանձնարարվեց համապատասխան համաձայնագիր ստորագրել Բ. Լեգրանի հետ: 1920 թ. դեկտեմբերի 2–ին Երևանում ստորագրվում է հայ–ռուսական համաձայնագիր, որով Հայաստանը հայտարարվում է «անկախ Սոցիալիստական Խորհրդային Հանրապետություն»: Նախկին կառավարությունը թողնում է իշխանությունը: Վերջինս խաղաղ ճանապարհով անցնում է Հայաստանի Հեղկոմին:

Հայաստանի առաջին հանրապետությունն իր տեղը զիջեց երկրորդը համարվող՝ Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային (հետագայում՝ Հայկական Խորհրդային Սոցիալիստական) Հանրապետությանը:

Երևանի հայ–ռուսական համաձայնագրի ստորագրումից և Հայաստանի խորհրդայնացումից մի քանի ժամ անց՝ դեկտեմբերի 2–ի լույս 3–ի գիշերը, այլևս գոյություն չունեցող ՀՀ կառավարության պատվիրակությունը Ալեքսանդրապոլում ստորագրում է թուրք–հայկական հաշտության պայմանագիր, որը նվաստացուցիչ էր հայկական պետության և հայ ժողովրդի համար:

Սակայն Երևանի 1920 թ. դեկտեմբերի 2–ի հայ–ռուսական համաձայնագիրը Հայաստանի խորհրդային իշխանություններին իրավական հիմք տվեց չճանաչելու Ալեքսանդրապոլի պայմանագիրը, որը ստորագրման իսկ պահից օրինական չէր:

Հարցեր և առաջադրանքներ

1. Երբ է սկսվել թուրք–հայկական պատերազմը. ինչ ընթացք և ավարտ ունեցավ այն: Ձեր կարծիքով ինչո՞ւ Հայաստանը պատերազմում պարտվեց:
2. Ինչո՞ւ վերսկսվեցին հայ–ռուսական բանակցությունները: Հաշտության պայմանագիրը ստորագրելու համար ինչ պայմաններ էին առաջադրվել:
3. Երբ է Հայաստանի Ռազմահեղափոխական կոմիտեն մտել Հայաստան. ո՞վ էր

այն գլխավորում: Երբ է կազմվել Առաջին հանրապետության վերջին կառավարությունը. ո՞վ էր այն գլխավորում: Երբ է խորհրդայնացել Հայաստանը. ինչպե՞ս դա կատարվեց: Ներկայացրե՛ք և մեկնաբանե՛ք Երևանի համաձայնագիրը: Ինչո՞ւ է Ալեքսանդրապոլի պայմանագիրը անօրինական:

ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՆՈՒՆՆԵՐ, ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Քրիստափոր Արարատյան, «Եզրափակիչ որոշման արձանագրություն», Ռ-Կ(բ)Կ Կովկասյան բյուրո, Հայաստանի Ռազմահեղափոխական կոմիտե, Սարգիս Կասյան, «Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետություն», Բորիս Լեգրան, Երևանի հայ–ռուսական համաձայնագիր, Ալեքսանդրապոլի պայմանագիր:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆՅՈՒԹ

ՀՀ կառավարության 1920 թ. հոկտեմբերի 1–ի՝ Հայաստանի քաղաքացիներին ուղղված դիմումից՝ Հայրենիքը պաշտպանելու համար սրբազան կռվի ելնելու մասին

«Քաղաքացինե՛ր, օրերը պատմական են, հիշեցե՛ք 1918–ի օրերը, մի՛ր բերեք Սարդարապատն ու Ղարաքիլիսեն, նոր հերոսությունների իրավեր է կարդացվում: Ի զե՛ն, քաղաքացինե՛ր, ի զե՛ն, անվարան և առավել քան երբեք ինքնավստահ: ...

Ի զե՛ն, քաղաքացինե՛ր, դեպի՛ ռազմաճակատ, դեպի հաղթանակ»:

(Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 200, ց. 1, գ. 625, թ. 33):

***

1920 թ. դեկտեմբերի 2–ին Երևանում «ՌՍԴԽՀ լիազոր ներկայացուցչի և Հայաստանի կառավարության միջև» ստորագրված համաձայնագրից

Հոդված 1. *Հայաստանը հայտարարվում է անկախ Սոցիալիստական Խորհրդային Հանրապետություն:*

Հոդված 2. *Մինչև Հայաստանի խորհուրդների համագումարի հրավիրումը կազմավորվում է ժամանակավոր Ռազմահեղափոխական կոմիտե, որին անցնում է ամբողջ իշխանությունը Հայաստանում:*

Հոդված 4. *Հայկական բանակի հրամանատարական կազմը չի ենթարկվում որևէ պատասխանատվության այն գործողությունների համար, որոնք կատարել է բանակի կազմում մինչև Հայաստանում խորհրդային իշխանության հռչակումը:*

Հոդված 5. *Դաշնակցության և Հայաստանի մյուս սոցիալիստական կուսակցությունների անդամները չեն ենթարկվելու որևէ բռնության՝ կուսակցություններին պատկանելության համար:*

(«Сборник действующих договоров», Москва, 1922, № 79, стр. 14–15).

ԱՌԱՋԻՆ ԲԱԺՆԻ ԱՄՓՈՓՈՒՄ

1. Հայաստանի առաջին հանրապետության հռչակումը հայոց պատմության նորագույն ժամանակաշրջանի կարևորագույն իրադարձություններից է, որը հայ ժողովրդի մղած փառահեղ մարտերի արդյունքն էր: Վերականգնվեց վաղուց կորսված անկախ պետականությունը:

Երբ է հռչակվել Հայաստանի առաջին հանրապետությունը:

Ո՞վ էր ՀՀ–ի առաջին վարչապետը:

2. ՀՀ–ի հռչակումից հետո ստեղծվեցին իշխանության բարձրագույն մարմինները: Հետագայում ընդունվեցին ՀՀ–ի պետական խորհրդանիշները՝ դրոշը, օրհներգը և զինանշանը: Նորաստեղծ պետության առաջնահերթ խնդիրն էր մարտունակ բանակի ստեղծումը: Բանակի ստեղծմամբ ամբողջացավ հայկական նորաստեղծ պետականությունը:

Որո՞նք էին ՀՀ–ի իշխանության բարձրագույն մարմինները:

Ինչո՞ւ էր անհրաժեշտ մարտունակ բանակի գոյությունը:

Որո՞նք էին ՀՀ–ի պետական խորհրդանիշները:

3. Պատմական դժվարին ժամանակների ծնունդ լինելով՝ ՀՀ–ի սոցիալ–տնտեսական դրությունը խիստ ծանր էր: Դժվարին կացությունից դուրս գալու նպատակով ՀՀ կառավարությունը մի շարք արտակարգ միջոցառումներ ձեռնարկեց: Չնայած ներքին ու արտաքին անբարենպաստ պայմաններին՝ զարգանում էր դպրոցական գործը, կրթամշակութային կյանքը: ՀՀ–ն ժողովրդավարական պետություն էր, որտեղ ազատորեն գործում էին տարբեր կուսակցություններ և հասարակական կազմակերպություններ: Հայաստանի ներքին դրությունը ապակայունացնում էին դրսից հրահրվող թուրք–թաթարական խռովությունները և բոլշևիկյան ելույթները: Սակայն նույնիսկ այդ պայմաններում ՀՀ կառավարությունը միայն ծայրահեղ դեպքերում էր զենքի դիմում:

Ինչ միջոցառումներ ձեռնարկեց ՀՀ կառավարությունը երկրի սոցիալ–տնտեսական վիճակը բարելավելու ուղղությամբ:

Նշե՛ք փաստեր, որոնք վկայում են, որ ՀՀ–ն ժողովրդավարական պետություն էր:

4. Իր գոյության կարճ ժամանակաշրջանի ընթացքում ՀՀ–ն դիվանագիտական հարաբերություններ հաստատեց մի շարք երկրների հետ, որոնցից մի քանիսի հետ նրա հարաբերությունները լարված բնույթ էին կրում: Սևրի պայմանագրով Թուրքիան Հայաստանը ճանաչում էր անկախ և ազատ պետություն:

Ո՞ր երկրների հետ լարված հարաբերություններ ուներ ՀՀ–ն. ինչո՞ւ:

Երբ է կնքվել Սևրի պայմանագիրը. որքա՞ն էր կազմելու ՀՀ–ի տարածքն՝ ըստ այդ պայմանագրի:

5. Խորհրդային Ռուսաստանը չէր հաշտվում Անդրկովկասի կորստի հետ և միջոցներ էր փնտրում այն կրկին իր ազդեցության ոլորտում ներառելու համար: Քաղաքական անբարենպաստ իրադրությունը ՀՀ–ին ստիպում էր հարաբերությունները բարելավելու Խորհրդային Ռուսաստանի հետ: Միաժամանակ, օգտվելով ստեղծված նպաստավոր իրավիճակից, քեմալական Թուրքիան նոր պատերազմ սանձազերծեց ՀՀ–ի դեմ: Հայկական բանակն ի զորու չեղավ կասեցնել թշնամու առաջխաղացումը և ՀՀ–ն երկիրը վերջնական կործանումից փրկելու նպատակով, հարկադրված էր իշխանությունը հանձնել բոլշևիկներին և ծանր պայմաններով հաշտություն կնքել Թուրքիայի հետ:

Երբ և ո՞ր համաձայնագրով ՀՀ կառավարությունը վայր դրեց իր լիազորությունները և իշխանությունը հանձնեց բոլշևիկներին:

Արդյոք անխուսափելի՞ էր Հայաստանի խորհրդայնացումը. ինչո՞ւ:

ԲԱԺԻՆ
II

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔԸ 1920–1945 ԹԹ.

ԳԼՈՒԽ I
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ 1920–1922 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

§ 1. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՎԱՐՉԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ: ՓԵՏՐՎԱՐՅԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ

Իշխանության նոր մարմինների ստեղծումը: 1920 թ. դեկտեմբերի 6–ին Երևան ժամանեց ՀՍԽՀ Ռազմահեղափոխական կոմիտեն, որն ստանձնեց իշխանությունը:

Հանրապետությունում ձևավորվեցին գործադիր իշխանության նոր մարմիններ՝ ժողովրդական կոմիսարիատներ: Իշխանության տեղական գործադիր մարմիններն էին հեղափոխական կոմիտեները, որոնք նշանակվի էին և ժամանակավոր: Դրանք կազմակերպվեցին ըստ երկրի վարչական բաժանումների՝ գավառների, շրջանների (գավառակների) և գյուղերի: Պետության կառավարման համակարգում կարևոր դեր էր հատկացվում ներքին գործերի ժողկոմատին և Արտակարգ հանձնաժողովին (Չեկա՝ «Չրեզվիչայնայա կոմիսիա»): Երկրում խորհրդային վարչակարգը հաստատելու և ամրապնդելու գործընթացն ուղղորդում էր Հայաստանի կոմունիստական (բոլշևիկյան) կուսակցության կենտրոնական կոմիտեն՝ տեղերում կազմավորված կուսակցական կազմակերպությունների միջոցով:

Ռազմական կոմունիզմի քաղաքականություն: Ծանր էր երկրի սոցիալ–տնտեսական դրությունը: Նոր իշխանությունները երկրում կիրառեցին ***ռազմական կոմունիզմի*** քաղաքականություն: Սա տնտեսական միջոցառումների մի համակարգ էր, որում կենտրոնականը **պարենամասնատրումն** էր: Դրա էությունն էր բնակչության արտադրած կամ ունեցած՝ պետության կողմից «ավելցուկ» համարվող հացահատիկի և այլ մթերքների ու ապրանքների բռնագրավումը: Տեղական հեղկոմները դիմեցին բնակչության, առաջին հերթին՝ գյուղա-

ցիության, ունեցվածքի կամայական բռնագրավմանը, դրանք ուղեկցվում էին անհնազանդների ձերբակալություններով: Նոր իշխանությունները պետականացրին մասնավոր բանկերը, գործարանները, խանութները, հոգևոր հաստատություններին պատկանող կրթամշակութային օջախները, ինչպես նաև երկրի բնական հարստությունները:

Ռազմական կոմունիզմի քաղաքականության դրսևորումներ էին Հայաստանի նախորդ կառավարության, խորհրդարանի, ազգային կուսակցությունների անդամների և հայկական բանակի սպաների նկատմամբ գործադրված քաղաքական բնույթի հետապնդումները և բռնությունները: Բաքվում տեղակայված 11–րդ կարմիր բանակի Հատուկ բաժնի անմիջական ցուցումով 1920 թ. դեկտեմբեր և 1921 թ. հունվար ամիսներին հայկական բանակից հեռացվեցին և երկրից աքսորվեցին ավելի քան 1000 սպա և այլ զինծառայող: Աքսորվածների թվում էին գեներալներ Թ. Նազարբեկյանը, Մ. Սիլիկյանը, Ա. Բեյ–Մամիկոնյանը և ուրիշներ: ՀՍԽՀ կարմիր բանակի հրամանատարի պաշտոնից ազատվեց Դրոն: 1921 թ. հունվարին մի խումբ հայ սպաների հետ նա պարտադրված լքեց Հայաստանի սահմանները:

Բռնությունների իրականացման գործում աչքի էր ընկնում Համառուսաստանյան Չեկայի կողմից արտակարգ լիազորություններով Հայաստան գործուղված Գևորգ Աթարբեկյանը: Վերջինիս քաղաքական կոշտ գիծը պաշտպանում էին ՀԿ(բԿ կենտկոմի քարտուղար Գ. Ալիխանյանը, ՀՍԽՀ ռազմգործժողկոմ Ա. Նուրիջանյանը (Ավիս), ներգործժողկոմ Ի. Դովլաթյանը և այլք: Բռնություններին ծավալումը փորձում էին կանխել մեղմ քաղաքականության կողմնակիցներ Ս. Կասյանը, ՀԿ(բ)Կ կենտկոմի անդամներ Ա. Մռավյանը և Ա. Բեկզադյանը: Սակայն հայկական բանակի սպաների աքսորից հետո բռնություններն ավելի սանձարձակ դարձան: 1921 թ. հունվարի վերջին Հայկոմկուսի պլենումի որոշումով ձերբակալվեցին ՀՀ նախկին

Կուռո (Սուրեն) Թարխանյան

վարչապետներ Հովհաննես Քաջազնունին և Համո Օհանջանյանը, նախկին խորհրդարանի անդամներ Նիկոլ Աղբալյանը և Լևոն Շանթը, զորահրամանատարներ Համազասպ Սրվանձտյանը, Նիկոլայ Ղորղանյանը և այլք: Վերջին երկուսը, տասնյակ այլ քաղբանտարկյալների հետ միասին, գնդակահարվեցին բանտում:

Փետրվարյան ապստամբությունը: Հայաստանում իրականացվող բռնությունների դեմ ընդվզեցին ժողովրդական լայն զանգվածները: ***1921 թ. փետրվարի 16–ին*** սկսվեց ապստամբություն, որն արագ ընդգրկեց Հայաստանի կենտրոնական շրջանները՝ Բաշ–Գառնին (Գառնի), Կոտայքը, Թալինը, Դարալագյազը (Վայոց Ձոր), Բաշ–Ապարանը (Ապարան) և այլն: Ապստամբները՝ ընդհանուր հրամանատար գնդապետ Կուռո (Սուրեն) Թարխանյանի, խմբապետներ Մարտիրոսի, Խնկոյի, Սմբատի և այլոց գլխավորությամբ, փետրվարի 18–ին մտան մայրաքաղաք Երևան: ՀՍԽՀ պետական և կուսակցական մարմինները, իրենց հավատարիմ կարմիրբանակային փոքրաթիվ զորամասերի ուղեկցությամբ, «Ազատամարտ» ու «Վարդան Զորավար» զրահագնացքների պաշտպանության ներքո նախօրոք լքել էին քաղաքը և հեռացել դեպի Ղամարլու (Արտաշատ) — Վեդի–Բասար (Արարատ):

Հաղթանակած ապստամբության արդյունքում, որի ընդհանուր ղեկավարությունը ստանձնել էր Հայ հեղափոխական դաշնակցությունը, Երևանում ստեղծվեց իշխանության նոր մարմին՝ ***Հայրենիքի փրկության կոմիտե (ՀՓԿ)՝ Սիմոն Վրացյանի նախագահությամբ:*** Կոմիտեի առաջին իսկ հրամաններով ազդարարվեց Հայաստանում խորհրդային իշխանության տապալման և բոլոր բոլշևիկներին ձերբակալելու մասին: Միաժամանակ, Երևանի և այլ վայրերի բանտերից ազատվեցին բոլշևիկների կողմից կալանված և խոշտանգված հարյուրավոր մարդիկ:

Եթե ապստամբների և խորհրդային զորքերի միջև ռազմական գործողությունների առաջին

շրջանն ընթանում էր կողմերի փոփոխակի հաջողություններով, ապա փետրվարի վերջերին, Վրաստանի խորհրդայնացմանը հաջորդած՝ կարմիրբանակային հիմնական զորամասերի՝ Հայաստան վերադառնալուց հետո, ապստամբների պարտությունը կանխորոշված էր: Մինչ վճռական հարձակման անցնելը Կարմիր բանակի Ռազմհեղկոմի անդամ Գ. (Սերգո) Օրջոնիկիձեն մարտի 20–ին դիմադրությունը դադարեցնելու վերջնագիր ներկայացրեց ՀՓԿ–ին: Օրջոնիկիձեի միջնորդությամբ մարտի 21–ին դիվանագիտական առաքելությամբ Թիֆլիսից Երևան ժամանեց բանաստեղծ Հովհաննես Թումանյանը: Սակայն վերջնագիրը մնաց անպատասխան, իսկ Թումանյանին չհաջողվեց համոզել Վրացյանին դադարեցնել պայքարը:

1921 թ. մարտի 25–ից 11–րդ կարմիր բանակի զորամասերն անցան վճռական հարձակման: Կոտրելով ապստամբների դիմադրությունը՝ ապրիլի 2–ին նրանք մտան Երևան: Ավելորդ զոհեր չտալու նպատակով ապստամբները մայրաքաղաքում դիմադրություն ցույց չտվին և ՀՓԿ–ի գլխավորությամբ նահանջեցին դեպի Սյունիք: Նահանջի միջանցքի անվտանգությունն ապահովված էր Ինքնավար Սյունիքում ամրացած Գարեգին Նժդեհի զինված ուժերի կողմից:

Փետրվարյան ապստամբության պարտությունը և երկրում (բացի Սյունիքից) խորհրդային իշխանության վերահաստատումը անխուսափելի էին, քանի որ նրա թիկունքին կանգնած էր Խորհրդային Ռուսաստանը: Ապստամբությունը, սակայն, սթափեցնող ներգործություն ունեցավ խորհրդային իշխանությունների վրա, ստիպեց առավել զգուշորեն գործելու: Հայհեղկոմի 1921 թ. ապրիլի 24–ի հրամանով ապստամբության բոլոր մասնակիցներին՝ ներառյալ ղեկավարներին, շնորհվեց համաներում: Վճռական քայլեր ձեռնարկվեցին երկրի սոցիալ–տնտեսական դրությունը բարելավելու ուղղությամբ:

Ալեքսանդր Մյասնիկյան

Սարգիս Լուկաշին (Սրապիոնյան)

Խորհրդային իշխանությունն ամրապնդելու նպատակով 1921 թ. գարնանը ՌԿ(բ)Կ կենտկոմի որոշմամբ Հայաստան գործուղվեցին փորձառու և հեղինակավոր պետական–կուսակցական գործիչներ՝ ***Ալեքսանդր Մյասնիկյանի*** և ***Սարգիս Լուկաշինի (Սրապիոնյան)*** գլխավորությամբ: Մայիսի 21–ին Հայհեղկոմը վերակազմավորվեց ՀՍԽՀ ժողովրդական կոմիսարների խորհրդի: Ա. Մյասնիկյանը նշանակվեց ժողկոմխորհրի նախագահ և միաժամանակ ռազմական գործերի ժողկոմ: Ս. Լուկաշինը դարձավ ՀՍԽՀ ժողովրդական տնտեսության խորհրդի (ԺՏԽ) նախագահ և ընտրվեց ՀԿ(բ)Կ կենտկոմի քարտուղար: Հայաստանում կարճատև (շուրջ մեկ տարի) գործունեության ընթացքում Ա. Մյասնիկյանին ընդհանուր առմամբ հաջողվեց համախմբել հասարակությանը, նրան մղել խաղաղ աշխատանքի:

Հարցեր և առաջադրանքներ

1. ՀՍԽՀ Ռազմահեղափոխական կոմիտեն երբ ժամանեց Երևան և ստանձնեց իշխանությունը: Ներկայացրեք գործադիր իշխանության նոր համակարգը:
2. Ինչո՞ւ և երբ ՀՍԽՀ–ում կիրառվեց ռազմական կոմունիզմի քաղաքականությունը. ի՞նչ դրսևորումներ և հետևանքներ ունեցավ այդ քաղաքականությունը: Քաղաքական ի՞նչ բռնություններ և ո՞ւմ նկատմամբ գործադրվեցին: Ովքե՞ր էին քաղաքական այդ ուղղության կողմնակիցները: Գնահատեք քաղաքական բռնաճնշումների քաղաքականությունը:
3. Երբ և ինչո՞ւ բռնկվեց Փետրվարյան ապստամբությունը: Ովքե՞ր գլխավորեցին ապստամբությունը: Իշխանության ի՞նչ նոր մարմին ստեղծվեց: Ներկայացրեք ապստամբության ընթացքն ու ավարտը: Որո՞նք էին ապստամբության պարտության պատճառները: Ի՞նչ նշանակություն ունեցավ ապստամբությունը:
3. Ի՞նչ փոփոխություններ տեղի ունեցան ՀՍԽՀ ղեկավար մարմիններում 1921 թ. գարնանը:

ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՆՈՒՆՆԵՐ, ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Արտակարգ հանձնաժողով (Չեկա՝ «Չրեզվիչայնայա կոմիսիա»), ռազմական կոմունիզմ, պարենամասնաւորում, Հայրենիքի փրկության կոմիտե (ՀՓԿ), Ինքնավար Սյունիք, Ալեքսանդր Մյասնիկյան, Սարգիս Լուկաշին (Սրապիոնյան), ՀՍԽՀ ժողովրդական կոմիսարների խորհուրդ, ՀՍԽՀ ժողովրդական տնտեսության խորհուրդ (ԺՏԽ):

§ 2. ՀՍԽՀ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ: ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԱՆԴՐԴԱՇՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԽՍՀՄ–Ի ԿԱԶՄՈՒՄ

ՀՍԽՀ խորհուրդների առաջին համագումարը: Սահմանադրության ընդունումը: Խորհրդային իշխանության ամրապնդումից հետո հեղկոմներին փոխարինեցին ընտրովի մարմինները՝ խորհուրդները: ***ՀՍԽՀ խորհուրդների առաջին ընտրությունները տեղի ունեցան 1921 թ. դեկտեմբերին:*** Դրանց ընթացքում ընտրվեցին բանվորների, գյուղացիների և կարմիրբանակայինների պատգամավորների խորհուրդներ՝ որպես իշխանության տեղական մարմիններ:

ՀՍԽՀ խորհուրդների առաջին համագումարը տեղի ունեցավ ***1922 թ. հունվարի 30–ից փետրվարի 4–ը***: Համագումարը որոշումներ կայացրեց Անդրկովկասյան դաշնության (Անդրդաշնության) կազմավորման, սոցիալական, տնտեսական և այլ հրատապ խնդիրների մասին:

Համագումարի 1922 թ. փետրվարի 3–ի նիստում ընդունվեց ՀՍԽՀ առաջին Սահմանադրությունը՝ հիմնական օրենքը: Դա մշակված էր Խորհրդային Ռուսաստանի Սահմանադրության սկզբունքների համաձայն և կրկնում էր հիմնական դրույթները: Դրանում նշվում էր, որ հանրապետությունում ամբողջ իշխանությունը պատկանում է բանվորների, գյուղացիների և կարմիրբանակայինների պատգամավորական խորհուրդներին: Երաշխավորվում էին աշխատավորների հավասար իրավունքները՝ անկախ ազգությունից ու դավանանքից: Աշխատանքը պարտադիր պարտականություն էր համարվում բոլորի համար՝ «ով չի աշխատում, նա չի ուտում» սկզբունքով:

Սահմանադրությունը ամրագրում էր խոսքի, մամուլի, ցույցերի և այլ ազատություններ: Սակայն իրականում դա կրում էր ձևական բնույթ: Եկեղեցին անջատվում էր պետությունից, իսկ դպրոցը՝ եկեղեցուց, սահմանվում էր անվճար կրթություն ստանա-

ՀԽՍՀ դրոշն ու զինանշանը

լու իրավունք: Սահմանվում էր պարտադիր զինվորական ծառայություն:

Սահմանադրության առանձին հոդվածով հաստատվում էին հանրապետության պետական խորհրդանիշերը՝ զինանշանը (հեղինակ՝ Մարտիրոս Սարյան) և դրոշը: ՀՍԽՀ զինանշանի վրա պատկերված էին Մեծ և Փոքր Արարատները:

Հայաստանը Անդրդաշնության և ԽՍՀՄ կազմավորման գործընթացում: Անդրկովկասի խորհրդային հանրապետությունների՝ Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի փոխհարաբերությունները հստակեցնելու համար երկրամասի «կոմունիստ ընկերներին» ուղղված՝ 1921 թ. ապրիլի 14–ի նամակ–հրահանգով դիմեց Խորհրդային Ռուսաստանի ղեկավար (Ժողկոմխորհի նախագահ) Վ. Լենինը: Նամակում առաջ էր քաշվում խորհրդային հանրապետությունների միջև տնտեսական և ռազմաքաղաքական սերտ դաշինք հաստատելու գաղափարը: Միավորման ձև ընտրվեց խորհրդային դաշնությունը: Նրա կազմում հանրապետությունները պահպանելու էին իրենց ինքնիշխանությունը:

Գործընթացը, սակայն, հարթ չէր: Դիմադրություն էր ցուցաբերում Վրաստանի կոմկուսի ղեկավարության մի մասը: Վերջինս հանդես էր գալիս հանրապետությունների իրական անկախությունը պահպանելու, նրանց միջև երկկողմ պայմանագրային հարաբերություններ հաստատելու առաջարկությամբ: Վրացական կողմի այս դիրքորոշման դեմ անզիջում պայքար ծավալեց Ռուսաստանի կոմկուսի վերնախավը:

Հայաստանի իշխանությունները կողմ էին Անդրկովկասյան դաշնության (Անդրդաշնություն) ստեղծմանը և դրանում էին տեսնում երկիրն ու ժողովրդին արտաքին վտանգներից պաշտպանելու և սոցիալ–տնտեսական ծանր վիճակից դուրս բերելու հնարավորությունը:

1922 թ. մարտի 12–ին Թիֆլիսում հրավիրված՝ Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի կենտգործկոմների ներկայացուցիչների լիազոր խորհրդաժո-

ղովը (կոնֆերանսը) հաստատեց Անդրդաշնություն կազմելու մասին միութենական պայմանագիրը: Դրանով իրականություն էր դառնում Անդրկովկասի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Դաշնային Միությունը (ԱԽՍՀԴՄ): Վերջինիս կազմում հանրապետությունների ինքնիշխանությունը խիստ սահմանափակ էր:

1922 թ. դեկտեմբերի 10–13–ը Բաքվում հրավիրված՝ Անդրկովկասի խորհուրդների առաջին համագումարում ԱԽՍՀԴՄ–ն վերափոխվեց Անդրկովկասի Խորհրդային Դաշնային Սոցիալիստական Հանրապետության (ԱԽԴՍՀ): Խորհրդային Հայաստանը, Վրաստանը և Ադրբեջանը այսուհետ հանդես էին գալու որպես մեկ հանրապետություն:

1922 թ. երկրորդ կեսից ՌԿ(բ)Կ կենտկոմը վճռական քայլեր էր ձեռնարկել խորհրդային բոլոր հանրապետությունների հետ Ռուսաստանի միջպետական փոխհարաբերությունները կարգավորելու համար: Այդ նպատակով ստեղծվեց հանրապետությունների ներկայացուցիչների մասնակցությամբ հատուկ հանձնաժողով: Օգոստոսի վերջին հանձնաժողովի քննարկմանն է ներկայացվում հանձնաժողովի փաստացի ղեկավար Իոսիֆ Ստալինի մշակած «ՌՍԴԽՀ և անկախ հանրապետությունների փոխհարաբերությունների մասին բանաձևի նախագիծը»: Ըստ դրա՝ Հայաստանը, Ադրբեջանը, Վրաստանը, Բելոռուսը և Ուկրաինան մտնելու էին ՌՍԴԽՀ–ի կազմի մեջ՝ ինքնավար հանրապետության կարգավիճակով: Նախագիծը ստացավ «ստալինյան ինքնավարացման ծրագիր» անվանումը: Սակայն դրա դեմ վճռականորեն հանդես եկավ Վ. Լենինը: Նա առաջարկեց հանրապետությունների միավորումն անցկացնել այլ հիմքի վրա. բոլորին, այդ թվում՝ Ռուսաստանին, միավորել նոր պետության մեջ՝ պահպանելով հանրապետությունների ինքնիշխանությունը և միությունից դուրս գալու իրավունքը:

1922 թ. հոկտեմբերի 6–ին ընդունվեց նոր նախագիծ, որում հրամայական էր դիտվում Ուկրաինայի, Բելոռուսի, Անդրդաշնության և Ռուսաստանի միջև

«Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության» կազմում միավորվելու մասին պայմանագրի ստորագրումը:

ԽՍՀՄ կազմավորման հարցն իր վերջնական լուծումը ստացավ 1922 թ. դեկտեմբերի վերջին Մոսկվայում հրավիրված՝ խորհրդային չորս հանրապետությունների լիազոր պատվիրակությունների խորհրդաժողովում (կոնֆերանսում): Այստեղ հաստատվեցին և դեկտեմբերի 30–ին Խորհրդային Ռուսաստանի, Ուկրաինայի, Բելոռուսի և Անդրդաշնության ներկայացուցիչների կողմից ստորագրվեցին ԽՍՀՄ կազմավորման մասին Հռչակագիրը և Միութենական պայմանագիրը: Այնուհետև դրանք հաստատվեցին ԽՍՀՄ խորհուրդների՝ պետության բարձրագույն օրենսդիր մարմնի, առաջին համագումարում:

Խորհրդային Միությունը գոյատևեց շուրջ 70 տարի և լուծարվեց 1991 թ. դեկտեմբերին:

Հարցեր և առաջադրանքներ

1. Երբ կայացան ՀՍԽՀ խորհուրդների առաջին ընտրությունները և ինչ արդյունքներ ունեցան: Երբ է ընդունվել ՀՍԽՀ առաջին Սահմանադրությունը: Ներկայացրեք և գնահատեք ՀՍԽՀ սահմանադրությունը:
2. Երբ և ինչո՞ւ Վ. Լենինը նամակ–հրահանգով դիմեց Անդրկովկասի «կոմունիստ ընկերներին»: Ինչ դիրքորոշում ուներ Վրաստանի կոմկուսի ղեկավարությունը դաշնության կազմավորման վերաբերյալ:
3. Երբ և որտեղ հաստատվեց Անդրդաշնություն կազմելու մասին միութենական պայմանագիրը: Երբ է գումարվել Անդրկովկասի խորհուրդների առաջին համագումարը և ինչ որոշումներ է կայացրել:
4. Երբ և որտեղ են ստորագրվել ԽՍՀՄ կազմավորման մասին Հռչակագիրը և Միութենական պայմանագիրը:

ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՆՈՒՆՆԵՐ, ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Խորհուրդներ, Անդրկովկասյան դաշնություն (Անդրդաշնություն), Անդրկովկասի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Դաշնային Միություն (ԱԽՍՀԴՄ), Անդրկովկասի Խորհրդային Դաշնային Սոցիալիստական Հանրապետություն (ԱԽԴՍՀ), ԽՍՀՄ (Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միություն), ԽՍՀՄ խորհուրդների առաջին համագումար:

§ 3–4. ՀՍԽՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ

Լոռու չեզոք գոտու և Զավախքի հիմնախնդիրը: Հայաստանի առաջին Հանրապետությունից խորհրդային հանրապետությանը փոխանցվեց տարածքային–սահմանային չլուծված խնդիրների ծանր «ժառանգություն»: Հայաստանի խորհրդայնացմամբ նպաստավոր իրավիճակ ստեղծվեց հայ–վրացական տարածքային վեճերից մեկը՝ ***Լոռու չեզոք գոտու*** խնդիրը ՀՍԽՀ–ի օգտին լուծելու համար: Հարցը հայտնվել էր Խորհրդային Ռուսաստանի ուշադրության կենտրոնում: Վերջինիս համար հրատապ էր նաև Վրաստանի խորհրդայնացման իրականացումը: Այդ գործողության սկիզբ դարձավ ՌԿ(բ)Կ Կովկասյան բյուրոյի և ՀՍԽՀ իշխանությունների կողմից Լոռիում վրացական ռազմակալման դեմ կազմակերպված ապստամբությունը: Այն ղեկավարելու համար Ղարաքիլիսայում (Վանաձոր) ստեղծված սպայակույտի (շտաբ) պետ նշանակվեց ՀՍԽՀ ռազմգործժողկոմի տեղակալ ***Հովսեփ Լազյանը***:

Ապստամբությունն սկսվեց ***1921 թ. փետրվարի 11–ի լույս 12–ի գիշերը***: Ապստամբներին շուտով օգնության հասան Կարմիր բանակի հեծելազորային գումարտակները: Համառ մարտերի արդյունքում չեզոք գոտին ազատագրվեց: 1921 թ. փետրվարի 25–ին Կարմիր բանակի զորամասերը մտան Թիֆլիս, իսկ մարտին խորհրդային կարգեր հաստատվեցին ամբողջ Վրաստանում:

Հայ–վրացական մեկ այլ տարածքային վեճի առարկա էր հայկական ***Զավախքի*** խնդիրը: ՌԿ(բ)Կ կովկասյան բյուրոյի որոշմամբ՝ ***1921 թ. հունիսի 25–ից 27–ը*** Թիֆլիսում հրավիրված Անդրկովկասի հանրապետությունների ներքին սահմանների որոշման հանձնաժողովի նիստում Հայաստանի միակ ներկայացուցիչ Ա. Բեկզադյանն առաջարկեց, ի թիվս Լոռու և Լեռնային Ղարաբաղի, ՀՍԽՀ–ին միացնել նաև Ախալքալաքի գավառը: Առաջարկը, սակայն, կտրա-

Տաթևի վանքը

Գարեգին Նժդեհ

կանապես մերժվեց հանձնաժողովի ադրբեջանցի և վրացի ներկայացուցիչների, ինչպես նաև նախագահ, Ռուսաստանի ներկայացուցիչ Սերգեյ Կիրովի կողմից: Այդ իրավիճակում Բեկզադյանը պահանջեց վիճելի բոլոր հարցերը փոխանցել կովկասյան բյուրոյի պլենումի քննարկմանը:

Հայ–վրացական սահմանազատման մասին վերջնական համաձայնագիրը ստորագրվեց ***1921 թ. նոյեմբերի 6–ին Թիֆլիսում***՝ ՀՍԽՀ ժողկոմխորհի նախագահ Ա. Մյասնիկյանի և Վրաստանի հեղկոմի նախագահ Պ. Մդիվանու կողմից: Լոռին, բացառությամբ Հյուսիսային Լոռու հայկական մի խումբ գյուղերի, մնում էր Խորհրդային Հայաստանին: Ջավախքը անցնում էր Վրաստանին:

Զանգեզուրի, Լեռնային Ղարաբաղի և Նախիջևանի հիմնախնդիրը: Տարածքային սահմանազատման հարցերում առավել խոր հակասություններ գոյություն ունեին հայ–ադրբեջանական հարաբերություններում: Հայաստանի խորհրդայնացման կապակցությամբ Խորհրդային Ադրբեջանի հեղկոմը դեռևս 1920 թ. նոյեմբերի 30–ին հանդես էր եկել «Լեռնային Ղարաբաղը, Զանգեզուրը և Նախիջևանը Խորհրդային Հայաստանի հանրապետության մաս ճանաչելու» հայտարարությամբ: Սակայն Ադրբեջանը հետագայում ոչ միայն հրաժար-

վեց իր իսկ որոշումից, այլև գործի դրեց հնարավոր բոլոր միջոցները հայկական երկրամասերն Ադրբեջանին բռնակցելու համար:

Հայաստանի խորհրդայնացումից հետո ***Զանգեզուրը*** պահպանում էր իր ինքնուրույնությունը: ***1920 թ. դեկտեմբերի 25–ին Սյունիքի Տաթևի վանքում*** հրավիրված համազանգեզուրյան 1–ին համագումարը երկրամասը հռչակեց «Ինքնավար Սյունիք՝ հանրապետական իրավակարգով»: Սյունիքի սպարապետ նշանակվեց ինքնապաշտպանական ուժերի գլխավոր հրամանատար ***Գարեգին Նժդեհը***:

Փետրվարյան ապստամբությունը ճնշելուց հետո խորհրդային զորամասերը շարժվում են դեպի Սիսիան ու Գորիս:

Տաթևում հրավիրված համազանգեզուրյան 2–րդ համագումարը 1921 թ. ապրիլի 27–ին Ինքնավար Սյունիքը հռչակում է «***Լեռնահայաստան***», որը միավորում էր արդեն լիովին ազատագրված Սյունիքի և Վայոց Ձորի երկրամասերը: Շուտով՝ հունիսի 1–ին, Լեռնահայաստանը վերանվանվում է ***Հայաստան***. Ս. Վրացյանը դառնում է վարչապետ, իսկ Նժդեհը պահպանում է զինվորական նախարարի և սպարապետի պաշտոնները:

Անցնելով վճռական հարձակման՝ խորհրդային ուժերը հունիսի վերջին մտնում են Սիսիան: Նժդեհը որոշում է դադարեցնել պայքարը և Գորիսից նահանջում է Ղափան (այժմ՝ Կապան): Ձարգացնելով հարձակումը՝ Կարմիր բանակի զորամասերը հուլիսի 2–ին մտնում են Գորիս, մի քանի օր անց՝ Ղափան, ապա՝ Մեղրի: Այսպես Զանգեզուրը խորհրդայնացվեց:

Նժդեհը թողնում է Հայաստանի սահմանները և մի քանի հազար փախստականների հետ անցնում Արաքսի աջ ափը, հաստատվում Իրանում, ապա տեղափոխվում Բուլղարիա: Հայաստանում գտնվելու վերջին օրերին Հեղկոմին հղած հուզական նամակում Նժդեհը զգուշացնում է, որ ինքն ընդմիշտ չի հեռանում Լեռնահայաստանից, այլ կվերադառնա, եթե «Երևանի փոխարեն Բաքուն լինի Սյունիքի հո-

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍԽՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԸ 1921–1936 ԹԹ.

- Հայաստանի Հանրապետության սահմանները 1920 թ. մայիսին
- Հայաստանի ՍԽՀ սահմանները 1921 թ. երկրորդ կեսին
- Հայաստանի ՍԽՀ սահմանները 1936 թ.
- Միութենական այլ հանրապետությունների սահմանները 1936 թ.
- 1923 թ. կազմավորված ԼՂԻՄ–ի սահմանները
- Սուրմալուի գավառի սահմանը Կարսի մարզի հետ
- Մոսկվայի 16. 03. 1921 թ. պայմանագրով քեմալական Թուրքիային զիջված Կարսի մարզի և Սուրմալուի գավառի տարածքը
- Նույն պայմանագրով Հայաստանից ու Ադրբեջանի «խնամակալությանը» տրված Նախիջևանի, Շարուրի և Սադարակի տարածքը
- Նույն պայմանագրով Վրաստանի ՍԽՀ–ից քեմալական Թուրքիային զիջված տարածքը
- ՌԿ(բ)Կ Կավբյուրոյի պլենումի 5. 07. 1921 թ. որոշմամբ Հայաստանից խլված և Ադրբեջանին բռնակցված Լեռնային Ղարաբաղի (Արցախ) տարածքը
- Հայկական Գանձակի տարածքը՝ բռնազավթված մուսավաթականների կողմից և 1920 թ. բռնակցված Խորհրդային Ադրբեջանին
- ՌԿ(բ)Կ Կավբյուրոյի պլենումի 7. 07. 1921 թ. որոշմամբ Վրաստանին զիջված Ախալքալաքի (Ջավախք) և Խրամի (Ծալկա) գավառների տարածքը
- 6. 11. 1921 թ. միջպետական համաձայնագրով Վրաստանին զիջված Լոռու նախկին «չեզոք գոտու» հյուսիսարևելյան հատվածը
- 1922–1936 թթ. Անդրդաշնության Կենտգործկոմի տարբեր որոշումներով Ադրբեջանին զիջված տարածքներ
- Երևան — ՍԽՀ մայրաքաղաքներ
- Նախիջևան — Խորհրդային Սոցիալիստական Ինքնավար Հանրապետության մայրաքաղաք
- Ստեփանակերտ — ԼՂԻՄ–ի մարզկենտրոն
- Կարս — Այլ բնակավայրեր

ղի վրա ոտք դնողը»: Այսպիսով՝ Գարեգին Նժդեհի գլխավորած հերոսական պայքարի շնորհիվ երկրամասը մնում է ՀՍԽՀ անբաժան մասը:

Քանի դեռ Զանգեզուրն անկախ էր, ***Լեռնային Ղարաբաղի*** հարցը կարծես լուծվում էր Խորհրդային Հայաստանի օգտին: ՌԿ(բ)Կ կովկասյան բյուրոյի 1921 թ. հունիսի 3–ի որոշմամբ ՀՍԽՀ կառավարությունը հայտարարեց «Լեռնային Ղարաբաղի՝ Հայաստանին պատկանելության մասին»: ՀՍԽՀ Ժողկոմխորհի համապատասխան հայտարարությունը հրապարակվում է հունիսի 12–ին:

Լեռնային Ղարաբաղի խնդիրը քննարկվում է ՌԿ(բ)Կ կովկասյան բյուրոյի վերոհիշյալ հուլիսյան պլենումում: Հուլիսի 4–ի նիստում, որին մասնակցում էր նաև ՌԿ(բ)Կ կենտկոմի անդամ Ի. Ստալինը, քվեարկությամբ ընդունվում է արդարացի որոշում՝ Լեռնային Ղարաբաղը ՀՍԽՀ–ին միացնելու մասին: Որոշմանը, սակայն, դեմ է արտահայտվում Խորհրդային Ադրբեջանի Ժողկոմխորհի նախագահ Նարիման Նարիմանովը: Հաջորդ օրը՝ հուլիսի 5–ին, կովկասյան բյուրոյի պլենումի արտահերթ նիստը հօգուտ Ադրբեջանի վերանայում է Ղարաբաղի հարցի վերաբերյալ նախորդ օրը կայացրած որոշումը: Առանց հարցը քվեարկության դնելու՝ պլենումը որոշում է Լեռնային Ղարաբաղը թողնել Ադրբեջանի կազմում՝ նրան տալով մարզային ինքնավարություն՝ Շուշի կենտրոնով:

Այսպիսով՝ ՌԿ(բ)Կ կովկասյան բյուրոյի պլենումի հուլիսի 5–ի անօրինական որոշմամբ ոտնահարվեցին Լեռնային Ղարաբաղի շուրջ 95 տոկոսը կազմող հայ բնակչության իրավունքները, անտեսվեցին Խորհրդային Հայաստանի շահերը: Ահա թե ինչու ՀԿ(բ)Կ կենտկոմը 1921 թ. հուլիսի 16–ին միանգամայն սխալ և անբավարար համարեց ղարաբաղյան հարցի վերաբերյալ կովկասյան բյուրոյի պլենումի որոշումը և բողոքեց դրա դեմ:

Խորհրդային Հայաստանի ղեկավարության և արցախահայության հաստատակամ և հետևողական ջանքերի շնորհիվ միայն երկու տարի անց՝

1923 թ. հուլիսի 7–ին, Լեռնային Ղարաբաղին տրամադրվեց ինքնավար մարզի կարգավիճակ, այն էլ՝ ամբողջ Լեռնային Ղարաբաղի մի մասում: Արցախահայությունը խորհրդային տարիներին դիմակայեց Ադրբեջանի սադրանքներին և ազգային խտրականության քաղաքականությանը:

Ի տարբերություն Զանգեզուրի և Լեռնային Ղարաբաղի՝ Հայաստանի խորհրդայնացման պահին պատմական ***Նախիջևանի մարզում*** տիրող դրությունը նպաստավոր չէր հայկական կողմի համար: Մոսկվայի և Կարսի 1921 թ. խորհրդա–թուրքական պայմանագրերով Նախիջևանը դուրս մնաց ՀՍԽՀ սահմաններից:

Հայկական պարածքների հարցը Մոսկվայի և Կարսի 1921 թ. պայմանագրերում: Հայաստանի խորհրդայնացմամբ տարածաշրջանում ստեղծված նոր իրադրությունը հրատապ էր դարձրել խորհրդա–թուրքական նոր խորհրդաժողով (կոնֆերանս) հրավիրելու հարցը: ՌՍԴԽՀ կառավարությունը անհրաժեշտ էր համարում նախատեսվող խորհրդաժողովին Խորհրդային Հայաստանի (նաև Ադրբեջանի) ներկայացուցիչների մասնակցությունը: Հայկական պատվիրակությունը՝ ***Ալեքսանդր Բեկզադյանի*** գլխավորությամբ, 1921 թ. հունվարի երկրորդ կեսին ուղևորվեց Մոսկվա՝ իր հետ վերցնելով փաստագրական նյութերի մեծ փաթեթ: Դրանցով հիմնավորում էր հայկական կողմի այն մոտեցումը, որ ՀՍԽՀ կազմում պետք է լինեին 1920 թ. թուրք–հայկական պատերազմի նախօրեի դրությամբ Հայաստանի Հանրապետությանը պատկանող տարածքները: Սակայն թուրքական կողմի համառ ջանքերի պատճառով հայկական պատվիրակությանը չթույլատրվեց մասնակցել խորհրդաժողովին, վերջինս հայտարարվեց երկկողմ՝ ռուս–թուրքական:

Թուրքական պատվիրակությունը դեպի Մոսկվա ճանապարհին Բաքվում հանդիպումներ ունեցավ Խորհրդային Ադրբեջանի ղեկավարության հետ: Դրանց արդյունքով մշակվեցին թուրք–ադրբեջանական համատեղ գործողությունների ծրագրեր: Խորհր-

դաժողովի նախօրեին Ադրբեջանի Հեղկոմի նախագահ Ն. Նարիմանովը հակահայկական բովանդակությամբ բազմաթիվ նամակներ հղեց Վ. Լենինին՝ համոզելով նրան, որ «թուրքական պատվիրակության հետ բանակցություններում հայկական հարցը չպետք է դեր խաղա»:

Ռուս–թուրքական մոսկովյան բանակցությունների արդյունքում 1921 թ. մարտի 16–ին ստորագրվեց «Ռուս–թուրքական բարեկամության և եղբայրության» պայմանագիրը: Ըստ այդ պայմանագրի՝ թուրք–հայկական սահմանն անցնելու էր Ախուրյան և Արաքս գետերով՝ Թուրքիային թողնելով Կարսի մարզը, Սուրմալուի գավառը (հայոց խորհրդանիշ Արարատ լեռով), որը երբեք նրա կազմում չէր եղել: «Նախիջևանի մարզը» ինքնավար տարածքի կարգավիճակով փոխանցվեց Խորհրդային Ադրբեջանի խնամակալությանը՝ պայմանով, որ վերջինս դա չի զիջելու մի երրորդ պետության (այսինքն՝ Հայաստանին):

Մոսկվայի խորհրդաժողովում հայկական շահերի անտեսման կապակցությամբ հայկական պատվիրակությունն ապրիլի 15–ին բողոքի հուշագիր ներկայացրեց Մոսկվա, սակայն դա որևէ ազդեցություն չունեցավ:

Այսպիսով՝ քեմալա–բոլշևիկյան գործարքով Հայաստանից խլվեց և Թուրքիային ու Խորհրդային Ադրբեջանին նվիրաբերվեց նրա տարածքների զգալի մասը: Ո՛չ Խորհրդային Ռուսաստանը և ո՛չ էլ քեմալական Թուրքիան որևէ իրավասություն չունեին առանց հայկական կողմի մասնակցության տնօրինելու հայկական տարածքների ճակատագիրը: Հետևաբար, հայ–թուրքական տարածքային սահմանազատմանը վերաբերող՝ 1921 թ. մարտի 16–ի պայմանագրի դրույթները օրինական չէին:

Ըստ Մոսկվայի պայմանագրի՝ ՀՄԽՀ կազմում էր մնալու քեմալականների կողմից զինագրավված ***Ակեքսանդրապոլի գավառը***: Թուրքերը, սակայն, չէին շտապում հեռանալու գավառից. միայն խորհրդային կողմի սպառնալից հայտարարությունների շնորհիվ ***1921 թ.***

Ալեքսանդր Բեկզադյան

ապրիլի 22–ին նրանք վերջնականապես լքեցին երկրամասը: Թուրքական ռազմակալումը աղետալի հետևանքներ ունեցավ գավառի բնակչության համար:

Մոսկվայի պայմանագրի համաձայն՝ նախատեսվում էր թուրք–անդրկովկասյան սահմանազատման հարցը կարգավորել նոր խորհրդաժողովի միջոցով: Այդ խորհրդաժողովի համար Խորհրդային Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի միասնական դրույթները հաստատվեցին ՌԿ(բ)Կ կովկասյան բյուրոյի 1921 թ. սեպտեմբերի 3–ի «Կարսի խորհրդաժողովի մասին» որոշմամբ: Նրանում մասնավորապես նշվեց, որ անհրաժեշտ է խստորեն պահպանել Մոսկվայի պայմանագրի շրջանակները, «ոչ մի դեպքում թույլ չտալ Կովկասի հանրապետությունների մեկուսի ելույթները»:

Խորհրդաժողովին առնչվող իր խնդիրները ձևակերպեց նաև ՀՍԽՀ կառավարությունը: Հայկական կողմը առաջարկում էր Նախիջևանի մարզի խնամակալությունը հանձնել Խորհրդային Հայաստանին, իրեն տրամադրել Օլթիի և Կաղզվանի հանքավայրերի, Կողբի աղահանքերի շահագործման իրավունքը: Առաջ էին քաշվում նաև Թուրքիայի և Հայաստանի միջև ազատ առևտրի, արևմտահայ գաղթականների՝ հայրենի օջախները վերադառնալու, նրանց կրած վնասների հատուցման, Թուրքիայում հայ բնակչության հավասար իրավունքների և այլ հարցեր: Այսպիսով՝ Խորհրդային Հայաստանի իշխանությունները, ի հակադրություն Մոսկվայի պայմանագրի դրույթների, փորձում էին հանդես գալ ոչ միայն որպես հայկական տարածքների պահանջատեր, այլև արևմտահայերի իրավունքների պաշտպան:

Կարսի խորհրդաժողովը կայացավ 1921 թ. սեպտեմբերի 26–ից մինչև հոկտեմբերի 13–ը: Հայկական պատվիրակությունը, որի նախագահն էր ՀՍԽՀ արտգործժողկոմ ***Ասքանազ Մռավյանը***, թուրքերին առաջարկեց Խորհրդային Հայաստանին վերադարձնել միջնադարյան մայրաքաղաք Անիի ավերակները, Կողբի աղահանքերը և այլն: Սակայն թուրքական պատվիրակությունը որևէ զիջման չգնաց:

Մի կողմից՝ Հայաստանի, Ադրբեջանի ու Վրաստանի խորհրդային հանրապետությունների և մյուս կողմից՝ Թուրքիայի միջև ՌՍԴԽՀ ներկայացուցիչ Յ. Գանեցկու մասնակցությամբ ***1921 թ. հոկտեմբերի 13–ին Կարսում*** ստորագրվեց պայմանագիր: Դրանով վերահաստատվեց մարտի 16–ի մոսկովյան պայմանագրով որոշված հայ–թուրքական սահմանը:

Խորհրդային Հայաստանը թեև պարտադրված ստորագրեց Կարսի պայմանագիրը, սակայն նրա իշխանությունները առիթը բաց չէին թողնում իրենց դժգոհությունը հայտնելու համար: Փաստաթուղթը ստորագրած ***Ա. Մռավյանը*** նշել է. *«Մենք չենք կարող երբևիցե հրաժարվել հողային պահանջներից, որոնք մեզ համար անհրաժեշտություն են, մեր կենսունակության և ապրելու կարելիության առաջին պայմանը»:*

Այսպիսով՝ ՀՍԽՀ սահմանների որոշման հարցում Խորհրդային Ռուսաստանի ղեկավարությունն անտեսեց հայկական կողմի շահերը: Ոչ միայն Արևմտյան, այլև Արևելյան Հայաստանի տարածքների զգալի մասը դուրս մնաց հանրապետության սահմաններից:

Արտաքին կապերը: Խորհրդայնացումից հետո՝ մինչև Անդրդաշնության և ԽՍՀՄ կազմավորումը, Հայաստանն ուներ ինքնիշխան պետության կարգավիճակ: Նա միջպետական հարաբերություններ ու առևտրատնտեսական կապեր էր հաստատել ինչպես խորհրդային հանրապետությունների, այնպես էլ արտասահմանյան մի շարք երկրների և միջազգային կազմակերպությունների հետ:

Խորհրդային Հայաստանը առևտրական կապեր էր հաստատել իր անմիջական հարևաններ Թուրքիայի և Իրանի հետ:

ՀՍԽՀ բնակչությանը մեծ ծավալների մարդասիրական օգնություն էին տրամադրում հանրապետությունում իրենց գործունեությունը շարունակող՝ Մերձավոր Արևելքում ամերիկյան (Ամերկոմ) և անգլիական (Անգլկոմ) նպաստամատույց կոմիտեները:

Արտաքին օգնության կազմակերպման գործում նշանակալի դեր կատարեց ***1921 թ. սեպտեմբերին***

Սահակ Տեր–Գաբրիելյան

Ամերկոմը Հայաստանում պահում էր 69 որբանոց, մի քանի պատնյակ հանրակրթական և արհեստագործական դպրոցներ: ՀՍԽՀ իշխանությունները բարձր էին գնահատում այդ փաստը. պատահական չէ, որ Ժողկոմխորհի նախագահ Ա. Մյասնիկյանը 1922 թ. մայիսի 10–ին հայ ժողովրդի անունից շնորհակալական բաց նամակ ուղղեց ԱՄՆ նախագահ Ուորեն Հարդինգին:

Երևանում հիմնված՝ ***Հայաստանի օգնության կոմիտեն (ՀՕԿ):*** Դրա առաջին նախագահն էր Հովհաննես Թումանյանը:

ԽՍՀՄ–ի ստեղծումից հետո խորհրդային ազգային հանրապետությունների, այդ թվում՝ Հայաստանի, ինքնուրույն արտաքին գործունեությունը և կապերը առավելագույնս սահմանափակվեցին:

Հարցեր և առաջադրանքներ

1. Տարածքային–սահմանային ինչ չլուծված խնդիրներ էր ժառանգել Խորհրդային Հայաստանը: Հանգամանորեն ներկայացրե՛ք և մեկնաբանե՛ք Խորհրդային Հայաստանի՝ տարածքային–սահմանային խնդիրների լուծման ուղղությամբ իրականացրած քաղաքականությունը և արդյունքները: Ներկայացրե՛ք Զանգեզուրի ինքնապաշտպանության ընթացքը. ո՞րն էր այդ հերոսամարտի պատմական նշանակությունը: Ի՞նչ գիտեք Գ. Նժդեհի մասին:
2. Ներկայացրե՛ք և լուսաբանե՛ք Մոսկվայի և Կարսի պայմանագրերը: Կազմե՛ք և լրացրե՛ք այդ պայմանագրերի համեմատության աղյուսակ: Ձեր կարծիքով որո՞նք էին ՀՍԽՀ սահմանների որոշման հարցում Խորհրդային Ռուսաստանի ղեկավարության ոչ հայանպաստ դիրքորոշման պատճառները:
3. Ո՞ր երկրների հետ էր դիվանագիտական կամ առևտրային հարաբերություններ հաստատել ՀՍԽՀ–ն: Ե՞րբ է հիմնվել ՀՕԿ–ը, և ո՞վ էր նրա առաջին նախագահը:

ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՆՈՒՆՆԵՐ, ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Ինքնավար Սյունիք՝ հանրապետական իրավակարգով», «Լեռնահայաստան», «Ռուս–թուրքական բարեկամության և եղբայրության» պայմանագիր, «Կարսի խորհրդաժողովի մասին» որոշում, «Մենք չենք կարող երբևիցե հրաժարվել հողային պահանջներից, որոնք մեզ համար անհրաժեշտություն են, մեր կենսունակության և ապրելու կարելիության առաջին պայմանը», Հայաստանի օգնության կոմիտե (ՀՕԿ):

ԳԼՈՒԽ II
ՍՈՑԻԱԼ–ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ–ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1922–1941 ԹԹ.

§ 1. ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Նոր տնտեսական քաղաքականությունը: Հայաստանում բոլշևիկների կողմից կիրառված ռազմական կոմունիզմի քաղաքականությունը մեծ վնաս հասցրեց երկրի առանց այդ էլ քայքայված տնտեսությանը: Այն վերականգնելու գործում նշանակալի դեր էր խաղալու ***նոր տնտեսական քաղաքականությունը*** (ռուսերեն՝ ***նովայա էկոնոմիչեսկայա պոլիտիկա (նէպ)),*** որն առաջինը սկսեց կենսագործվել Ռուսաստանում 1921 թ. գարնանից: Նէպով նախատեսված տնտեսական բարեփոխումների առանցքն էր պարենմասնատրման վերացումը և դրա փոխարեն ***պարենային հարկի*** (պարենհարկ) կիրառումը: Վերջինս գանձվում էր բոլոր տեսակի գյուղմթերքներով և մի քանի անգամ պակաս էր պարենմասնատրումից: Վերականգնվեց ազատ առևտուրը: Գյուղացիական տնտեսությունները հնարավորություն ստացան պետությանը հարկ վճարելուց հետո բերքի ավելցուկը տնօրինել սեփական հայեցողությամբ՝ վաճառել, փոխանակել արդյունաբերական ապրանքների հետ և այլն: Այսպիսով՝ նէպ–ի նպատակն էր ազատ շուկայական հարաբերությունների հիման վրա զարգացնել երկրի տնտեսությունը, առաջին հերթին՝ գյուղատնտեսությունը:

Հայաստանում անցումը նէպին տեղի ունեցավ աստիճանաբար: 1921 թ. գարնանն ընդունված որոշումներով արգելվեցին բոլոր տեսակի բռնագրավումները, հունիսին ընդունվեց պարենհարկի մասին օրենքը:

Գյուղացիության վիճակը բարելավելու նպատա-

կով 1923 թ. ընդունված հողային օրենսգրքով պետականացվեցին բոլոր հողերը: Դրանք բաժանվեցին գյուղացիական տնտեսությունների միջև, որոնց թիվը հանրապետությունում 1920–ական թթ. վերջին հասնում էր 180 հազարի: Այդուհանդերձ, հողային նոր քաղաքականությունը շոշափելի արդյունք չապահովեց. գյուղացիներից շատերի հողաբաժիններըը գրեթե չավելացան, իսկ շուրջ 40 հազարը (1929 թ. դրությամբ) մնում էր հողազուրկ:

1922–1923 թթ. ընթացքում վերագործարկվեցին Երևանի գինու–կոնյակի «Արարատ» կոմբինատը, կաշվի արհեստանոցները, պղնձաձուլական և մի շարք այլ ձեռնարկություններ: Դրվեցին Երևանի ու Լենինականի հիդրոէլեկտրակայանների հիմքերը: Էջմիածնի, Երևանի, Շիրակի ջրանցքների անցկացման արդյունքում բարելավվեց ոռոգման համակարգը, ավելացան ցանքատարածությունները:

Նէպի կենսագործման արդյունքում արդեն 1928 թ. Հայաստանի տնտեսությունը հասավ նախապատերազմյան 1913 թ. մակարդակին: Չնայած արձանագրված տեսանելի հաջողություններին՝ 1920–ական թթ. կեսերից ԽՍՀՄ–ում աստիճանաբար տեղի էր ունենում նահանջ նէպի քաղաքականությունից: Պետությունը տարեցտարի սահմանափակում էր տնտեսավարողների ինքնուրույնությունը, վերահսկում գները, ավելացնում իր դերը տնտեսության կառավարման մեջ: Այսպիսով անցում էր կատարվում երկրի կառավարման վարչահրամայական եղանակին, որը բացառում էր նէպ–ով նախատեսված ազատությունները:

Արդյունաբերացումը: ԽՍՀՄ ղեկավարությունը 1925 թ. վերջին որդեգրեց երկրի արդյունաբերացման քաղաքականություն: Դրանով նախատեսվում էր վերացնել երկրի տեխնիկատնտեսական հետամնացությունը, ամրապնդել սոցիալիզմի նյութատեխնիկական հիմքերը:

1920–1930–ական թթ. կառուցվեցին և գործարկվեցին Երևանի ու Լենինականի, Ջորագետի և Քանաքեռի, Սևան–Հրազդան կասկադի հիդրոէլեկտրա-

կայանները, շահագործման հանձնվեցին նաև փոքր կայաններ Մեղրիում, Սիսիանում և այլն:

Էներգետիկայի զարգացումը նպաստավոր նախադրյալներ ստեղծեց հանրապետության տնտեսության համալիր զարգացման համար, այն խթանեց լեռնահանքային (պղնձի) (Ալավերդի և Կապան) և քիմիական արդյունաբերության զարգացումը: Վերջինիս նորակառույցներից էր Ղարաքիլիսայի (Կիրովական, այժմ՝ Վանաձոր) քիմիական գործարանը, որը շահագործման հանձնվեց 1933–1934 թթ.: 1933 թ. Երևանի մերձակայքում հիմնադրվեց արհեստական կաուչուկի նոր գործարան, որն առաջին արտադրանքը թողարկեց 1940 թ. մարտից: Կաուչուկի արտադրության կազմակերպումը սկզբունքային նշանակություն ուներ ԽՍՀՄ–ի համար, քանի որ արտադրության համար խիստ կարևոր այդ հումքը վերջինս ստիպված էր թանկ գնով ներմուծել արտասահմանից:

Հանրապետությունում զարգանում էր շինանյութերի արդյունաբերությունը, գործարկվեցին «Արթիկ տուֆի» հանքավայրերը, ցեմենտի խոշոր կոմբինատ կառուցվեց Դավալուում (Արարատ): ԽՍՀՄ–ի համար ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող հանքանյութի՝ մոլիբդենի, հարուստ հանքավայրերից էր Քաջարանը:

Զարգացման բարձր տեմպերով Հայաստանում աչքի ընկան մեքենաշինությունն ու մետաղամշակումը:

Արդյունաբերականացումը, սակայն, ունեցավ բնապահպանական բացասական հետևանքներ: Սևան–Հրազդան կասկադի կայանների աշխատանքը հանգեցրեց լճի մակարդակի իջեցմանը, իսկ քիմիական և լեռնահանքային կոմբինատների թունավոր արտանետումները՝ օդի աղտոտվածությանը:

Արդյունաբերացումն իրականացնելու նպատակով կիրառվեցին տնտեսության հնգամյա պլանավորման ծրագրեր: Առաջին հնգամյակում (1928–1932) Հայաստանում կառուցվեց ու շահագործման հանձնվեց արդյունաբերական 18 ձեռնարկություն, իսկ

երկրորդում (1933–1937)՝ 26: Երրորդ հնգամյա պլանի (1938–1942) իրագործումն ընդհատվեց Հայրենական պատերազմի պատճառով:

Հայաստանում ստեղծվեց բազմաճյուղ և զարգացած արդյունաբերություն, կտրուկ ավելացավ բանվորների և ճարտարագիտատեխնիկական աշխատողների թիվը, վերացավ գործազրկությունը:

Գյուղատնտեսության կոլեկտիվացումը: Երկրի արդյունաբերացմանը գրեթե զուգահեռ խորհրդային ղեկավարությունը որդեգրեց ***գյուղատնտեսության կոլեկտիվացման քաղաքականությունը***: Այն նախապատրաստելու մասին որոշումն ընդունվեց 1927 թվականին: Նախատեսվում էր մինչև 1–ին հնգամյակի ավարտը՝ 1932 թ., կոլեկտիվ տնտեսություններում ընդգրկել գյուղացիական անհատական տնտեսությունների փոքր հատվածը: Սակայն հացամթերումների բնագավառում 1927–1928 թթ. առաջացած դժվարությունները, երկրում հացի պաշարների նվազումը ստիպեցին իշխանություններին 1929 թ. արագացնել գործընթացը: Հայտարարվեց համատարած կոլեկտիվացման մասին: Հրաժարվելով կոլեկտիվացման կամավորության սկզբունքից՝ իշխանություններն անհնազանդ գյուղացիների նկատմամբ դիմեցին բռնության և հարկադրանքի միջոցների: Այսպիսով՝ մերժելով անհատական տնտեսությունների դերը, պետությունը որդեգրեց գյուղատնտեսության զարգացումը կոլեկտիվ տնտեսությունների (կոլխոզներ, սովխոզներ) միջոցով կազմակերպելու քաղաքականությունը:

Ծանր էր հատկապես գյուղացիության ունևոր հատվածի՝ կուլակության, դրությունը: Բռնագրավվեցին նրանց հացի պաշարները, նէպի տարիներին կուտակած ունեցվածքը, կուլակների ընտանիքներն արտաքսվեցին անապահով հեռավոր գյուղեր: Կուլակաթափության գործընթացը ԽՍՀՄ–ում եզրափակվելու էր կուլակության՝ որպես դասակարգի, վերացումով: 1930 թ. գարնան դրությամբ Հայաստանում «համատարած կոլեկտիվացում» անցկացվեց Երևանի ամբողջ գավառում, Լենինականի և

Լոռու գավառների մեծ մասում և այլ շրջաններում, ունեզրկվեց շուրջ 1100 կուլակային տնտեսություն:

Հարկադիր կոլեկտիվացման քաղաքականությունը չբարելավեց գյուղատնտեսության վիճակը, հակառակը՝ սրեց իրադրությունը գյուղում: Գյուղացիների դժգոհության արտահայտման խաղաղ ձևերից էր անասունների համատարած մորթը՝ կոլտնտեսությանը չհանձնելու համար: Հայաստանի առանձին շրջաններում դժգոհությունները վերաճեցին իշխանությունների դեմ ապստամբական զինված ելույթների (Դարալագյազ, Վեդի, Ղազախ, Իջևան–Շամշադին, Թալին և այլն): Դրանք իշխանությունների կողմից որակվեցին որպես «բանդիտական շարժում» և շուտով ճնշվեցին:

Համատարած դժգոհությունների ծավալումը և գյուղում իրադրության սրումը ստիպեց իշխանություններին հրաժարվել համատարած կոլեկտիվացման քաղաքականությունից: Արդեն 1930 թ. կեսերին բռնությամբ ստեղծված կոլտնտեսությունների մեծ մասը ցրվեց: Պետությունը, սակայն, շուտով գործադրեց գյուղացիության հարկադիր կոլեկտիվացման նոր մեթոդներ. սկսեց կիրառել հարկերի ավելացման քաղաքականությունը և այլն: Դրան գումարվեց 1932–1933 թթ. համատարած սովը, որն ընդգրկեց նաև Հայաստանի որոշ շրջանները, հատկապես Սևանա լճի ավազանը: Արդյունքում՝ արդեն 1935–1937 թթ. Հայաստանի գյուղացիության ճնշող մեծամասնությունը համալրեց կոլտնտեսականների շարքերը: 1940 թ. դրությամբ հանրապետությունում 180 հազար անհատական տնտեսությունների փոխարեն գործում էին շուրջ 1000 կոլտնտեսություններ:

Գյուղատնտեսության հարկադիր կոլեկտիվացման արդյունքները գոհացուցիչ չէին, գյուղի և գյուղացիների սոցիալ–տնտեսական դրությունը ոչ միայն չբարելավվեց, այլև անկում ապրեց:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչ էր նէպը, ո՞րն էր դրա իրականացման նպատակը, երբվանի՞ց է այն իրագործվել: Ինչ փոփոխություններ տեղի ունեցան: Գնահատե՛ք նէպը:
2. Ինչ է արդյունաբերացումը, ո՞րն էր դրա նպատակը: Ինչ ձեռքբերումներ արձանագրվեցին Հայաստանում արդյունաբերացման տարիներին:
3. Ինչ է կոլկտիվացումը, ե՞րբ որոշվեց իրականացնել այն: Ինչ հետևանքներ այն ունեցավ: Գնահատե՛ք կոլեկտիվացման քաղաքականությունը:
4. Համեմատե՛ք նէպը, ինդուստրացումը և կոլեկտիվացումը: Փաստերո՛վ հիմնավորեք դրանց անհրաժեշտությունը:

ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՆՈՒՆՆԵՐ, ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նէպ (նոր տնտեսական քաղաքականություն), արդյունաբերացում, կոլեկտիվացում, Սևան–Հրազդան կասկադ, Առաջին հնգամյակ:

§ 2. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀԱԼԱԾԱՆՔՆԵՐԸ: ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ՝ ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Կոմունիստական ամբողջատիրության հաստատումը: Հայաստանի խորհրդայնացումից հետո կոմունիստական կուսակցությունը ստանձնել էր երկրի պետական իշխանության ողջ ղեկավարումը: Ինչպես խորհրդային մյուս երկրներում, այնպես էլ Հայաստանում քաղաքական դաշտից հետևողականորեն դուրս մղվեցին ոչ կոմունիստական, այդ թվում՝ ազգային կուսակցությունները: Բացառությամբ ՀՅԴ–ի, ազգային մյուս կուսակցությունները (ՍԴՀԿ, ՀՍՌԿ) կա՛մ ողջունել էին Հայաստանի խորհրդայնացումը, կա՛մ էլ մնացել էին լոյալ: Ուստի անհաշտ պայքար ծավալվեց հատկապես դաշնակցության դեմ:

1923 թ. նոյեմբերին Երևանում գումարված ՀՅԴ համագումարում հայտարարվեց Խորհրդային Հայաստանում կուսակցության գործունեությունը դադարեցնելու մասին: «Ինքնավերացման» այդ համագումարը կուսակցության շարքերը լքելու կոչ ուղղեց նաև արտերկրի ընկերներին: Սփյուռքում կոչին, իհարկե, չհետևեցին, չդադարեց նաև Հայաստանում կուսակցական կառույցների ընդհատակյա գործունեությունը: 1924 թ. ձմռանը կազմակերպվեց նաև ՀՅԴ երիտասարդական միության «ինքնավերացման» համագումարը: 1924 թ. դադարեցվեց հնչակյան կուսակցության գործունեությունը, իսկ նրա որոշ անդամներ (մի շարք պայմաններ կատարելուց հետո միայն) համալրեցին կոմկուսի շարքերը:

Այսպես երկրում հաստատվեց կոմկուսի մենիշխանությունը պետության կառավարման ողջ համակարգում: Եվ սա այն դեպքում, երբ խորհրդային սահմանադրությամբ երկրի պետական կառավարումը պետք է իրականացնեին ընտրովի մարմինները՝ խորհուրդները: Վերջիններս փաստորեն դարձան կուսակցության կցորդն ու կամակատարը:

Հայաստանի կոմկուսը, որը Ռուսաստանի կոմ-

Աղասի Խանջյան

Ակսել Բակունց

կուսի բաղկացուցիչ մասերից մեկն էր, ինքնուրույն կազմակերպություն չէր և անշեղորեն ղեկավարվում էր մեկ քաղաքական կենտրոնից՝ ՌԿ(բ)Կ (1925 թ.՝ ՀամԿ(բ)Կ) կենտկոմից, նրա երկրային կոմիտեների միջոցով: Հասարակական–քաղաքական կյանքում մենիշխանություն հաստատած կոմկուսի աչալուրջ վերահսկողության տակ գործում էին հասարակական կազմակերպությունները՝ երիտասարդական, արհեստակցական և ստեղծագործական միությունները: Հայաստանի կոմունիստական երիտասարդական միությունը ստեղծվել էր 1921 թ.: Աճող սերնդին կոմունիստական գաղափարներով դաստիրակելու նպատակով ստեղծվեց անգամ մանկական կամ պիոներական կոմունիստական կազմակերպություն:

Խորհրդային պետության ղեկավար Վ. Լենինի մահից հետո ՌԿ(բ)Կ կենտկոմի գլխավոր քարտուղար Ի. Ստալինն իր զինակիցների հետ միասին անզիջում պայքար ծավալեց կոմկուսի ներսում այլակարծություն, երկրի քաղաքական ու տնտեսական զարգացման իրենց դիրքորոշումն արտահայտած կոմունիստների և խմբերի դեմ: Ներկուսակցական այդ պայքարում Ստալինին հաջողվեց 1920–ականների վերջին գաղափարապես և կազմակերպչորեն ջախջախել կուսակցական ընդդիմությանը:

ԽՍՀՄ–ում հետզհետե ձևավորվում էր Ստալինի անձի պաշտամունքը, որի առաջին արտահայտությունն էր նրա 50–ամյակի նշումը 1929 թ.: 1930–ական թթ. կեսերին անհատի պաշտամունքը հասավ իր գագաթնակետին: Վերջինս արտահայտվում էր Ստալինի՝ որպես խորհրդային ժողովրդի միակ առաջնորդի, դերի արհեստական գերագնահատմամբ, երբ Ստալինին վերագրվում էին երկրի բոլոր հաջողություններն ու հաղթանակները: Կոմկուսի մենիշխանության և անհատի պաշտամունքի պայմաններում ԽՍՀՄ–ում հաստատվեց ***ամբողջատիրական*** (տոտալիտար) համակարգ:

Քաղաքական բռնաճնշումների նոր փուլը: ԽՍՀՄ–ում բռնությունների ու հալածանքների քա-

ղաքականությունը սաստկացնելու համար հերթական պատճառ դարձավ 1934 թ. տեղի ունեցած ՀամԿ(բ)Կ 17–րդ համագումարը, որի պատվիրակների մի մասն ընդդիմացել էր Ստալինին: Իր նախկին զինակիցներից ազատվելու համար Ստալինն օգտագործեց նույն թվականի դեկտեմբերին Լենինգրադի կուսմարզկոմի քարտուղար Ս. Կիրովի սպանությունը:

Հայաստանում քաղաքական բռնությունները խորացնելու, նոր ձերբակալություններ իրականացնելու առիթ եղավ 1930 թ. ՀԿ(բ)Կ կենտկոմի առաջին քարտուղար ընտրված Աղասի Խանջյանի սպանությունը 1936 թ. հուլիսի 9–ին Թբիլիսիում: Մինչ այդ Խանջյանը մեղադրվում էր ազգայնամոլության համար և նրա դեմ կատաղի արշավ էր ծավալել Անդրկովկասի կուսակցական երկրային կոմիտեի առաջին քարտուղար Լ. Բերիան:

1937 թ. օգոստոսին հարցաքննության ժամանակ երրորդ հարկի պատուհանից ցած նետվեց ՀԽՍՀ ժողկոմխորհի նախկին նախագահ Սահակ Տեր–Գաբրիելյանը: Բռնաճնշումների գագաթնակետի ալիքին 1937 թ. Հայաստանում բռնադատվեցին պետական–կուսակցական, մշակութային հարյուրավոր գործիչներ, ուսուցիչներ, բանվորներ, գյուղացիներ, ծառայողներ, զինվորականներ: Անհիմն «հանցանքների» համար մեղադրվեցին և բռնաճնշումների զոհ դարձան Եղիշե Չարենցը, Ակսել Բակունցը, Հայկ Բժշկյանցը (Գայ) և ուրիշներ:

Մոտավոր հաշվարկներով՝ 1930–ական թթ. Հայաստանում բռնաճնշումների է ենթարկվել 15 հազար մարդ, որոնց մոտ մեկ երրորդը դատապարտվել է գնդակահարության: Միայն Ստալինի մահից (1953 թ.) հետո վերանայվեցին այս և հետագա տարիներին անհիմն բռնաճնշման ենթարկված մարդկանց գործերը, նրանց մեծագույն մասն արդարացվեց:

Հալածանքներից և բռնություններից չխուսափեց նաև Հայոց եկեղեցին և հոգևորականությունը: Խորհրդային իշխանությունը թեև չվերացրեց եկե-

Եղիշե Չարենց

Խորեն Ա Մուրադբեգյան

Գրիգոր Հարությունյան

ղեցին, սակայն անմիջապես սահմանազատվեց նրանից և ուժգին պայքար ծավալեց նրա դեմ: Ինչպես խորհրդային ողջ տարածքում, այնպես էլ Հայաստանում եկեղեցին զրկվեց անշարժ և շարժական գույքից, թալանվեցին նրան պատկանող եկեղեցական–մշակութային թանկարժեք գանձերը, պետականացվեցին եկեղեցապատկան հողերը, կրթամշակութային հիմնարկությունները (դպրոցներ, թանգարաններ, տպարաններ և այլն): 1926 թ. հատուկ որոշումով արգելվեց եկեղեցու կողմից Հայոց Մեծ եղեռնի օրվա՝ ապրիլի 24–ի նշումը:

1930 թ. մահացած Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Ե Սուրենյանցին, որը բազմիցս դատապարտել էր Էջմիածինը «քանդող» խորհրդային իշխանության քաղաքականությունը, փոխարինեց կաթողիկոսական տեղապահ Խորեն արքեպիսկոպոս Մուրադբեգյանը: Վերջինս նոր կաթողիկոս ընտրվեց միայն 1932 թ. և գործեց եկեղեցու ու հավատացյալների համար պատմական ծանր ժամանակաշրջանում: 1937 թ. վերջին Հայաստանում արդեն փակված էր շուրջ 800 եկեղեցի, բռնադատվել էին հարյուրից ավելի հոգևորականներ, որոնց մեծ մասը գնդակահարվեց:

1938 թ. ապրիլին Էջմիածնում մահացավ կաթողիկոս Խորեն Ա Մուրադբեգյանը: Նրա խորհրդավոր մահից (հիմնավոր կասկածներ առաջացան, որ կաթողիկոսը խեղդամահ է արվել) հետո տեղապահ նշանակվեց Գևորգ արքեպիսկոպոս Չորեքչյանը: Պահը նպաստավոր համարելով՝ ՀԿ(բ)Կ կենտկոմը 1938 թ. օգոստոսի 4–ին որոշում ընդունեց Էջմիածնի վանքը փակելու և կաթողիկոսությունը վերացնելու մասին: Մոսկվայի կենտրոնական իշխանությունները, բարեբախտաբար, որոշմանը հավանություն չտվեցին:

Հայաստանը՝ միութենական հանրապետություն: ՀԽՍՀ նոր Սահմանադրությունը: Խորհրդային Միության 1930–ական թթ. հասարակական–քաղաքական կյանքի կարևոր իրադարձություններից էր 1936 թ. դեկտեմբերի 5–ին ԽՍՀՄ նոր Սահ-

մանադրության ընդունումը: ԽՍՀՄ առաջին Սահմանադրությունն ընդունվել էր դեռևս 1924 թ., ուստի անհրաժեշտություն էր առաջացել հիմնական օրենքում արտացոլելու այն զգալի փոփոխություններն ու տեղաշարժերը, որոնք տեղի էին ունեցել ԽՍՀՄ կազմավորումից հետո: Ըստ սահմանադրության՝ իշխանության բարձրագույն օրենսդիր մարմինը ԽՍՀՄ Գերագույն խորհուրդն էր, որը կազմված էր երկու՝ Միության խորհրդի և Ազգությունների խորհրդի պալատներից: 1936 թ. Սահմանադրությունը ստացավ «Ստալինյան սահմանադրություն» անվանումը:

Նոր Սահմանադրությամբ ԽՍՀՄ պետական կառուցվածքում կատարված էական փոփոխություններից էր Անդրդաշնության լուծարումը: Անդրկովկասի երեք հանրապետությունները՝ Հայաստանը, Վրաստանը և Ադրբեջանը հռչակվեցին միութենական հանրապետություններ և ուղղակիորեն մտան ԽՍՀՄ կազմ: Դրանով ԽՍՀՄ ազգային հանրապետությունների թիվը հասավ 11–ի: ԽՍՀՄ Սահմանադրության հիմնական սկզբունքների հիման վրա հանրապետությունները մշակեցին և ընդունեցին սեփական սահմանադրությունները:

Խորհրդային Հայաստանի նոր Սահմանադրությունն ընդունվեց 1937 թ. մարտին: Հայաստանի պետականությունը վերանվանվեց Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն (ՀԽՍՀ):

1938 թ. հունիսին տեղի ունեցան ՀԽՍՀ Գերագույն խորհրդի ընտրությունները: Գերագույն խորհրդի նախագահության նախագահ ընտրվեց Մացակ Պապյանը, ժողկոմխորհի նախագահ՝ Արամ Փիրուզյանը: 1937 թ. ՀԿ(բ)Կ կենտկոմի առաջին քարտուղար էր ընտրվել Գրիգոր Հարությունյանը:

Հայաստանում խորհրդային կարգերի հաստատման 20–րդ տարեդարձին նվիրված միջոցառումների ընթացքում (1940 թ.) ամփոփվեցին հանրապետության նվաճումները տնտեսության, մշակույթի, գիտության և այլ ոլորտներում:

Հարցեր և առաջադրանքներ

1. Հայաստանի խորհրդայնացումից հետո ինչ փոփոխություններ տեղի ունեցան երկրի ներքաղաքական կյանքում:
2. Վ. Լենինի մահից հետո ինչ փոփոխություններ տեղի ունեցան ԽՍՀՄ–ի ներքաղաքական կյանքում: Ինչ է անհատի պաշտամունքը. երբ և ինչպես է այն ձևավորվել ԽՍՀՄ–ում:
3. Երբ և ինչու ԽՍՀՄ–ում սաստկացան քաղաքական բռնությունները: Ձեր կարծիքով որո՞նք էին դրա պատճառները: Ինչ ընթացք և հետևանքներ ունեցավ Հայաստանում քաղաքական բռնությունների քաղաքականությունը:
4. Երբ է ընդունվել ԽՍՀՄ–ի նոր Սահմանադրությունը. ինչու՞ էր այն ստացել «ստալինյան» անվանումը:
5. Երբ է ընդունվել Խորհրդային Հայաստանի նոր Սահմանադրությունը: Ինչ փոփոխություններ կատարվեցին Հայաստանում ԽՍՀՄ Գերագույն խորհրդի ընտրություններից հետո:

ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՆՈՒՆՆԵՐ, ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Ինքնավերացման» համագումար, ՀամԿ(բ)Կ կենտկոմ, Աղասի Խանջյան, ամբողջատիրական (տոտալիտար) համակարգ, միակուսակցական համակարգ, անձի պաշտամունք, Խորեն Ա Մուրադբեգյան, Գևորգ արքեպիսկոպոս Չորեքչյան, «Ստալինյան» սահմանադրություն, ՀԽՍՀ, Մացակ Պապյան, Արամ Փիրուզյան, Գրիգոր Հարությունյան:

ԳԼՈՒԽ III

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔԸ

§ 1. ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

Սփյուռքի առաջացումը: Առաջին աշխարհամարտը Օսմանյան կայսրությունն օգտագործեց վերջնականապես ճնշելու հայ ժողովրդի ազգային–ազատագրական պայքարը և վերջ տալու Հայկական հարցին:

Երիտթուրքերը 1914–1918 թթ. Արևմտյան Հայաստանում, Կիլիկիայում և երկրի այլ վայրերում հայերի նկատմամբ իրականացրին ցեղասպանության և բռնագաղթի քաղաքականություն, որն Օսմանյան Թուրքիայի և Արևելյան Հայաստանի տարածքում շարունակվել է ընդհուպ մինչև 1923 թ.:

Հայկական սփյուռքը հիմնականում ձևավորվել է Հայոց մեծ եղեռնից հետո: Թուրքական յաթաղանից մազապուրծ արևմտահայ գաղթականները սփռվեցին աշխարհով մեկ՝ ավելացնելով վաղուց ի վեր գոյություն ունեցող հայ գաղթօջախների և դրանց բնակչության թիվը: Հենց այնտեղ բնակվող հայությունն էլ առաջինը օգնության հասավ իր ազգակիցներին:

1920–ական թթ. սկզբին աշխարհի տարբեր երկրներում բնակվում էին շուրջ մեկ միլիոն հայեր: Մեծ թվով հայեր հաստատվեցին Սիրիայում, Լիբանանում՝ օգտվելով արաբ ժողովրդի բարյացակամ վերաբերմունքից: Հայկական հոծ գաղթօջախներ ձևավորվեցին ԱՄՆ–ում, Կանադայում, Բալկաններում (Հունաստան, Բուլղարիա, Ռումինիա), Ֆրանսիայում, Իրանում, Եգիպտոսում, Աֆրիկայի և Ասիայի այլ երկրներում:

Բնականաբար, տարբեր երկրներում բազում դժվարությունների և զրկանքների դիմակայելու գնով, սփյուռքահայությունը պետք է պահպաներ իր ազգային դիմագիծը: Այդ հարցում նրան օգնեցին Հայ առաքելական եկեղեցին, դպրոցը, հայրենակցական և բարեգործական միությունները:

Ֆրիտյոֆ Նանսենը հայ որբերի հետ

Հայկական հարցը Լոնդոնի և Լոզանի խորհրդաժողովներում: Անգամ տնտեսական և քաղաքական հարաբերական հանգստության պայմաններում սփյուռքահայության գլխավոր հույսը Հայկական հարցի լուծման մեջ էր: Այդ պատճառով էլ հայկական պատվիրակությունները (Ավետիս Ահարոնյանի և Պողոս Նուբար փաշայի գլխավորած) մասնակցեցին մեծ տերությունների ***Լոնդոնի*** խորհրդաժողովին (1921 թ. փետրվար–մարտ): Հայկական կողմը հույս ուներ իրագործելու Սևրի 1920 թ. պայմանագիրը և Կիլիկիայի համար ստանալու ինքնավարություն:

Մինչդեռ Թուրքիան և մեծ տերությունները հայկական միացյալ պետության ստեղծման փոխարեն որոշեցին հայերի համար ստեղծել «ազգային օջախ»:

Հայկական հարցը քննարկման նյութ դարձավ նաև ***Լոզանի*** (Շվեյցարիա) խորհրդաժողովում (1922 թ. նոյեմբեր — 1923 թ. հուլիս): Այստեղ մերժվեց նույնիսկ «ազգային օջախ» ստեղծելու գաղափարը, և դրվեց հայ գաղթականությանն օգնելու խնդիրը, որով պետք է զբաղվեր այն ժամանակվա գլխավոր միջազգային կազմակերպությունը՝ Ազգերի լիգան:

Այսպիսով՝ թաղվեց Հայկական հարցը, և սփյուռքահայությանը մեծ պայքար էր սպասվում միջազգային ասպարեզում այն վերարծարծելու համար:

Ազգերի լիգան և հայ գաղթականությունը: Ազգերի լիգան հայ գաղթականների վերաբնակեցման հարցը հանձնարարեց նորվեգացի նշանավոր բևեռախույզ և միջազգային գործիչ, Նոբելյան մրցանակի դափնեկիր ***Ֆրիդյոֆ Նանսենին:*** Վերջինս 1925 թ. այցելեց Խորհրդային Հայաստան, ծանոթացավ երկրի ու ժողովրդի վիճակին: Նրա գրչին է պատկանում «Խաբված ժողովուրդ» գիրքը, որը մեղադրանք է եվրոպական երկրների դիվանագիտական խարդավանքներին: Առ այսօր տպավորիչ են Ֆ. Նանսենի խոսքերը. *«Վայ՛ հայերին, որ երբևէ ներքաշվելու են եվրոպական քաղաքականության մեջ: Ավելի լավ կլիներ, եթե **Հայաստան** անունը երբեք արտրասանված չլիներ եվրոպական որևէ դիվանագետի կողմից»:*

Հայրենադարձությունը: Սփյուռքի ձևավորմանը զուգընթաց հայության շրջանում հայրենադարձության գաղափարն էր հասունանում: Դա հատկապես դրսևորվեց Հայաստանի խորհրդայնացումից հետո: Իսկ ԽՍՀՄ–ի կազմում գտնվելու ժամանակ շատ ու շատ սփյուռքահայեր որոշակի հույսեր կապեցին հայրենիքի հետ և իրենց ապագան պատկերացնում էին Մայր Հայաստանում:

Հայրենադարձության գործընթացը սկսվել էր դեռևս Հայաստանի առաջին հանրապետության օրոք (1918–1920 թթ.):

1921 թ. վերջերին Իրաքից Խորհրդային Հայաստան եկավ հայրենադարձների առաջին մեծ քարավանը՝ շուրջ 3000 մարդ: Հայրենադարձությունը շարունակվեց հետագա տարիներին: Մեծ թվով հայեր ներգաղթեցին Սիրիայից, Հունաստանից, Ֆրանսիայից, Թուրքիայից: Ընդհանուր առմամբ 1921–1936 թթ. հայրենիք վերադարձավ շուրջ 42 հազար մարդ:

Խորհրդային Հայաստանի կառավարությունը միջոցառումներ մշակեց և միջոցներ տրամադրեց ներգաղթողներին օգնելու համար: Հիմնվեցին շատ բնակավայրեր՝ Նոր Արաբկիր, Նոր Բութանիա, Նոր Սեբաստիա, Նոր Մարաշ և այլն, որոնք Արևմտյան Հայաստանի պատմական տեղանուններով էին կոչվում:

Դժբախտաբար, հայրենադարձության հետագա

կազմակերպման գործում նոր դժվարություններ ծագեցին: ԽՍՀՄ–ում սկսվել էին քաղաքական բռնաճնշումներ, ամրապնդվում էին Ստալինի անձի պաշտամունքը և կոմունիստական կուսակցության մենատիրությունը, ինչպես նաև ուրվագծվում էր Երկրորդ համաշխարհային պատերազմի սկիզբը:

Հարցեր և առաջադրանքներ

1. Վերհիշե՛ք, թե երբ և ինչ պայմաններում է առաջացել Հայկական սփյուռքը: Ո՞ր երկրներում ձևավորվեցին խոշոր հայկական համայնքներ: Քարտեզի վրա ցո՛ւյց տվեք այդ երկրները: Ո՞ր կառույցներն են նպաստում սփյուռքահայության ազգային դիմագծի պահպանմանը:
2. Հայաստանի խորհրդայնացումից հետո ովքե՞ր էին շարունակում Հայկական հարցի լուծման համար պայքարը: Ո՞ր խորհրդաժողովներում և ե՞րբ կրկին արծարծվեց Հայկական հարցը. ի՞նչ արդյունքներ տվեցին: Ի՞նչ գիտեք Ֆ. Նանսենի հայանպաստ գործունեության մասին: Որքա՞ն հայ ներգաղթեց Հայաստան 1921–1936 թթ.: Որո՞նք էին հայրենադարձության գործընթացի ընդհատման պատճառները:
3. Երևանի քարտեզի վրա ցո՛ւյց տվեք Արևմտյան Հայաստանի պատմական տեղանուններով անվանակոչված թաղամասերը, իսկ ՀՀ–ի քարտեզի վրա՝ Արևմտյան Հայաստանի պատմական տեղանուններով անվանակոչված բնակավայրերը: Ուսուցչի օգնությամբ աղյուսակում, ըստ մարզերի, լրացրե՛ք այդ բնակավայրերի անունները. ո՞ր մարզում են ամենամեծ թվով տեղանունները:

ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՆՈՒՆՆԵՐ, ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայկական սփյուռք, Լոնդոնի և Լոզանի խորհրդաժողովներ, «ազգային օջախ», Ֆ. Նանսեն, «Խաբված ժողովուրդ», հայրենադարձություն:

ԳԼՈՒԽ IV

ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

§ 1–2. ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ

Պատերազմի սկիզբը: Ֆաշիստական Գերմանիան 1939 թ. սեպտեմբերի 1–ին հրահրեց Երկրորդ համաշխարհային պատերազմը: Իսկ 1941 թ. հունիսի 22–ին խախտելով 1939 թ. օգոստոսի 23–ին ԽՍՀՄ–ի հետ կնքած՝ չհարձակման մասին պայմանագիրը, հարձակվեց Խորհրդային Միության վրա: Սկսվեց ԽՍՀՄ ժողովուրդների Հայրենական մեծ պատերազմը (1941–1945 թթ.):

Գերմանիան վաղօրոք մշակել էր հարձակման «Բարբարոսա» պլանը, որն այդպես էր կոչվում 12–րդ դարի գերմանական և Հռոմեական սրբազան կայսրության կայսր Ֆրիդրիխ I Բարբարոսայի (Շիկամորուս) անունով: Հիտլերի նպատակն էր կայծակնային պատերազմի միջոցով գրավել ԽՍՀՄ–ը և հասնել համաշխարհային տիրապետության:

Պատերազմի սկզբնական շրջանում խորհրդային զորքերը մեծ կորուստներով նահանջում էին՝ թշնամուն թողնելով ընդարձակ տարածքներ:

Սակայն Հիտլերի հաշվարկները ձախողվեցին. գերմանացիների դեմ պայքարում ԽՍՀՄ–ին միացան ԱՄՆ–ը, Մեծ Բրիտանիան և այլ երկրներ՝ ստեղծելով հակաֆաշիստական դաշինք:

«Ամեն ինչ պատերազմի համար, ամեն ինչ հաղթանակի համար» կարգախոսն առաջնային էր նաև հայ ժողովրդի համար: Բարեբախտաբար, Հայաստանում ռազմական գործողություններ տեղի չունեցան, սակայն հայ ժողովուրդը և՛ ռազմաճակատում, և՛ թիկունքում հերոսաբար կռվեց ֆաշիզմի դեմ: Տնտեսությունը վերակառուցվեց պատերազմի պահանջներին համապատասխան: Իրենց անձնուրաց աշխատանքով աչքի ընկան բանվորն ու գյուղացին,

Սիմոն Զաքյան

89–րդ Թամանյան դիվիզիա

մտավորականը՝ բժիշկն ու արվեստագետը, գրողն ու գիտնականը: Դրա վառ ապացույցը պատերազմի թեժ շրջանում՝ 1943 թ. նոյեմբերին, ՀԽՍՀ Գիտությունների ակադեմիայի հիմնադրումն էր:

Հայերի մասնակցությունը: Իսկ հայ ռազմիկները կռվեցին ամենուր՝ բոլոր ռազմաճակատներում և տարբեր զորատեսակներում: Ընդհանուր առմամբ, տարբեր երկրներից պատերազմին մասնակցեցին մոտ 600 հազար հայեր, որոնցից 200 հազարը զոհվեցին: Միայն ՀԽՍՀ–ից պատերազմում մարտնչել են մոտ 300 հազար հայեր, զոհվել են ավելի քան 100 հազարը: ԽՍՀՄ և Ադրբեջանական ԽՍՀ խտրական զորակոչային քաղաքականության «մեղքով» ավելի ծանր էին և նոր, քողարկված ցեղասպանություն էին հիշեցնում ԼՂԻՄ–ի և Հյուսիսային Արցախի հայորդիների կորուստները: Միայն ԼՂԻՄ–ի մոտ 133 հազար բնակիչներից ռազմադաշտ զորակոչվեցին հայազգի շուրջ 45 հազար տղամարդ (ավելի 3–ից 2–ը) և հազար կին, որոնցից զոհվեցին ավելի քան 22 հազարը: Այն դեպքում, երբ զորակոչվել է բուն ադրբեջանցի՝ 19–ից 1–ը:

Նվեր Սաֆարյան

Հայկական ազգային դիվիզիաները: Ավելի քան 60000 հայորդիներ պատերազմին մասնակցել են հայկական ազգային դիվիզիաների շարքերում: Առաջին ազգային զորամիավորումը 76–րդ լեռնահրաձգային դիվիզիան էր, որը կազմավորվել էր Հայաստանում դեռևս 1920–1922 թթ.: Նա աչքի ընկավ Ստալինգրադյան ճակատամարտում (1942–1943 թթ.) և վերակազմավորվեց 51–րդ գվարդիական հրաձգային զորամիավորման:

Հայկական զորամիավորումներից առաջինը ռազմաճակատ մեկնեց 390–րդ հրաձգային զորամիավորումը, որը մասնակցեց Կերչի համար մղվող մարտերին, իսկ նրա հրամանատար, գնդապետ Սիմոն Զաքյանը զոհվեց:

Ազգային զորամիավորումներից հիշատակության են արժանի 408–րդ, 409–րդ և հատկապես 89–րդ հրաձգային զորամիավորումները: Վերջինիս հետագայում շնորհվեց «89–րդ Թամանյան դիվի-

զիա» պատվանունը (ի նշանավորումն Թամանյան թերակղզու ազատագրման), որը իր հրամանատարի՝ գեներալ–մայոր Նվեր Սաֆարյանի գլխավորությամբ հասավ մինչև Բեռլին և այնտեղ թնդացրեց հայկական «Քոչարին»: Հայտնի են նաև 61–րդ, 136–րդ, 138–րդ, 406–րդ և այլ՝ մեծամասամբ հայերից կազմված զորամիավորումներ: Միայն 261–րդ հրաձգային զորամիավորումը (մինչև բեկումնային Ստալինգրադյան ճակատամարտը) չմասնակցեց պատերազմին. նրա հիմնական խնդիրն էր պաշտպանել Խորհրդային Հայաստանի՝ Թուրքիայի հետ ունեցած պետական սահմանը:

Թամանյան դիվիզիայի ժամանումը Լենինական

Հայ ռազմիկները կռվեցին պատերազմի առաջին իսկ օրվանից՝ Բրեստից մինչև Բեռլին: Ավելի վաղ՝ 1939–1940 թթ., հայերը մասնակցել են նաև խորհրդա–ֆիննական պատերազմին, որոնցից 4–ն արժանացել են ԽՄ հերոսի կոչման:

Սփյուռքահայերի մասնակցությունը ֆաշիզմի ջախջախմանը: Սփյուռքահայությունը նույնպես մեծ մասնակցություն ունեցավ ֆաշիզմի ջախջախման գործում: Նրանց նյութական օգնությամբ խորհրդային բանակի համար կազմվեցին «Սասունցի Դավիթ» և «գեներալ Բաղրամյան» տանկային շարասյուները:

Համազասպ Բաբաջանյան

Սփյուռքահայերը կռվում էին ԽՍՀՄ–ի դաշնակից տարբեր երկրների զորամիավորներում: Միայն ԱՄՆ–ի բանակում կային 20 հազար հայեր, որոնցից Էռնեստ Դերվիշյանն արժանացավ ԱՄՆ–ի բարձրագույն պետական պարգևին (միայնակ գերեվարել է տասնյակ ֆաշիստների, և այս սխրանքն ընկած է ամերիկյան հայտնի «Ռեմբո», «Ռոկի» գեղարվեստական ֆիլմաշարի հիմքում): Ավելի քան 30 հազար հայեր կռվում էին Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի բանակներում:

Մեծ թվով սփյուռքահայեր մասնակցեցին Գերմանիայի կողմից նվաճված երկրների դիմադրական և պարտիզանական շարժմանը: Առ այսօր Ֆրանսիայի պատմության մեջ իր արժանի տեղն ունի բանաստեղծ Միսաք Մանուշյանը, որը հետմահու

«Սասունցի Դավիթ» տանկային շարասյունը

Հովհաննես Բաղրամյան

արժանացավ Ֆրանսիայի դիմադրական շարժման հերոսի կոչման: Ֆրանսիայում հերոսի մահով ընկան Լուիզա (Լաս) և Արփիար Ասլանյանները: Այստեղ հակաֆաշիստական պայքարի առաջամարտիկներ են եղել նաև Հայաստանի ազգային հերոս, աշխարհահռչակ Շառլ Ազնավուրի ծնողները:

Ավելի քան 300 հայորդիներ զոհվեցին Հունաստանի պարտիզանական ջոկատներում: Իտալիայում հայի անունը փառքով պսակեցին Մկրտիչ Դաշտոյանն ու Գևորգ Քոլոզյանը: Բուլղարիայում աչքի ընկավ հերոսուհի պարտիզան Հերմինե Ռազգրադյանը (Սաշկան): Հունաստանի ազատագրական բանակի կազմում կռվում էր նաև հայկական «Ազատություն» պարտիզանական ջոկատը:

Լայն հակաֆաշիստական գործունեություն ծավալեցին նաև Ուրուգվայի, Սիրիայի, Լիբանանի, Եգիպտոսի, Իրանի և այլ սփյուռքահայ գաղթօջախներում գործող ազգային խորհուրդները:

Խորհրդային Միության հայ հերոսները և զորավարները: Պատերազմի ժամանակ գործած մարտական սխրանքների և անձնուրացության, զորքերի բարձրարդյունավետ կառավարման համար Խորհրդային Միության (ԽՄ) հերոսի կոչում է շնորհվել 108 հայի և Հայաստանում ծնված կամ ապրած 11 այլազգիների, ընդամենը՝ 119 հայաստանցու:

Հայրենական մեծ պատերազմում առաջին հայ հերոսը օդաչու Լազր Չափչախյանն էր, որին այդ կոչումը շնորհվել է 1942 թ. հուլիսին:

27 հայեր պարգևատրվել են Փառքի 3–րդ, 2–րդ և 1–ին աստիճանի շքանշաններով, դրանով իսկ դառնալով Փառքի շքանշանի լրիվ ասպետներ:

Պատերազմին մասնակցել են 1 մարշալ (օդուժի) և ավելի քան 60 գեներալ, ծովակալ, որոնցից 3–ը հետագայում դարձան մարշալներ և նավատորմի ծովակալ: Ռազմական արվեստի պատմության մեջ իրենց անունը ոսկե տառերով գրեցին ԽՄ (Խորհրդային Միության) մարշալ, երկու աշխարհամարտերի մասնակից, ԽՄ կրկնակի հերոս Հովհաննես Բաղրամյանը, ԽՄ նավատորմի ծովակալ, ԽՄ հե-

րոս Իվան (Հովհաննես) Իսակովը, ավիացիայի (օդային) մարշալ (1944 թ.) Արմենակ Խանփերյանցը (Սերգեյ Խուդյակով), զրահատանկային զորքերի գլխավոր մարշալ Համազասպ Բաբաջանյանը:

Առհավետ կհիշվեն պատերազմի հայ գեներալներ Նվեր Սաֆարյանի, Միքայել Պարսեղովի, Ասքանազ Կարապետյանի, Սարգիս և Հայկ Մարտիրոսյանների, Անդրանիկ Ղազարյանի, ինչպես նաև ԽՄ կրկնակի հերոս, օդաչու Նելսոն Ստեփանյանի, Հունան Ավետիսյանի, Սերգեյ Բուռնազյանի, Ջահան Կարախանյանի և բազմաթիվ այլ հայորդիների անունները:

Անվիճելի է, ԽՍՀՄ ժողովուրդների դերը ֆաշիզմի ջախջախման գործում: Պատերազմի հիմնական ծանրությունն ընկավ խորհրդային բանակի վրա: Հայրենական մեծ պատերազմը ԽՍՀՄ ժողովուրդներից խլեց շուրջ 27 մլն մարդկային կյանքեր և հսկայական նյութական կորուստներ:

1945 թ. մայիսի 9–ին Գերմանիան անձնատուր եղավ: Ավարտվեց Հայրենական մեծ պատերազմը: Իսկ 1945 թ. սեպտեմբերի 2–ին, Ճապոնիայի անձնատվությամբ (կապիտուլյացիա) ավարտվեց Երկրորդ համաշխարհային պատերազմը:

Հաղթանակների ձեռքբերման գործում իր անուրանալի ավանդն ունի հայ ժողովուրդը:

Հովհաննես Իսակով

Արմենակ Խանփերյանց

Հարցեր և առաջադրանքներ

1. Ե՞րբ են սկսվել Երկրորդ համաշխարհային և Հայրենական մեծ պատերազմները: Պատերազմի պահանջներին համապատասխան՝ ի՞նչ փոփոխություններ կատարվեցին Խորհրդային Հայաստանի տնտեսության մեջ:
2. Հայկական ո՞ր զորամիավորումներն են մասնակցել պատերազմական գործողություններին. ո՞րն էր նրանցից ամենանշանավորը: Ո՞ր մարտերում աչքի ընկան հայ ռազմիկները:
3. Աշխարհի տարբեր երկրներից և ՀԽՍՀ–ից որքա՞ն հայեր են մասնակցել պատերազմին: Հայերից կազմված է՞լ ինչ զորամիավորումներ գիտեք:
4. Հայրենական մեծ պատերազմում զոհվածների հիշատակին կառուցված ո՞ր հուշահամալիրում եք եղել. պատմե՛ք ձեր զգացողությունների մասին: Գրե՛ք զեկուցում Հայրենական մեծ պատերազմի հերոսներից մեկի մասին:

5. Սփյուռքահայ և հայաստանցի ինչ նշանավոր հայ հերոսներ և զորահրամանատարներ գիտեք. պատմե՛ք նրանց մասին:
6. Որքա՞ն հայ և հայաստանցի է արժանացել ԽՍՀՄ հերոսի կոչման: Ներկայացրե՛ք և գնահատե՛ք հայ ժողովրդի ներդրումը ֆաշիզմի դեմ տարած պատմական հաղթանակում:

ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՆՈՒՆՆԵՐ, ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Բարբարոսա», «Ամեն ինչ պատերազմի համար, ամեն ինչ հաղթանակի համար», հայկական ազգային դիվիզիաներ, Սիմոն Զաքյան, Նվեր Սաֆարյան, Խորհրդա–ֆինական պատերազմ, «Սասունցի Դավիթ» և «գեներալ Բաղրամյան» տանկային շարասյուներ, Էռնեստ Դերվիշյան, Միսաք Մանուշյան, Լուիզա (Լաս) և Արփիար Ասլանյաններ, Հերմինե Ռազգրադյան (Սաշկա), Լազր Չափչախյան, Հովհաննես Բաղրամյան, Իվան Իսակով, Արմենակ Խանփերյանց (Սերգեյ Խուդյակով), Համազասպ Բաբաջանյան, Նելսոն Ստեփանյան, Հունան Ավետիսյան, Միքայել Պարսեղով Ասքանազ Կարապետյան, Սարգիս և Հայկ Մարտիրոսյաններ, Անդրանիկ Ղազարյան, անձնագրվություն (կապիտուլյացիա):

ԳԼՈՒԽ V

ԽՈՐՀՐԴԱՀԱՅ ՄՇԱԿՈՒՅԹԸ 1920–1945 ԹԹ.

§ 1–2. ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ

Անգրագիտության վերացումը: Խորհրդայնացումից անմիջապես հետո Հայաստանում սկսվեց իրականացվել կրթական և մշակութային նոր քաղաքականություն: Դրա հիմնական խնդիրներն էին հանրապետությունում ընդհանուր պարտադիր ուսուցում մտցնելը և նոր սոցիալիստական մշակույթ զարգացնելը:

Խորհրդային իշխանությունը մշակույթը համարում էր ժողովրդի վրա ներազդելու լավագույն միջոց և ամեն ինչ անում էր այն ամբողջովին կոմունիստական գաղափարախոսությանը ենթարկելու համար:

Մշակույթի զարգացման հիմնական նախադրյալը անգրագիտության վերացումն էր: Այդ գործում իշխանություններին օգնում էր բնակչության գրագետ մասը: Կրթական գործի կազմակերպումը դժվար էր. անբավարար էին դպրոցական շենքերը, չկային դասագրքեր, զգացվում էր ուսուցիչների խիստ պակաս:

1921 թ. սեպտեմբերի 21–ին ՀԽՍՀ ժողկոմխորհը դեկրետ ընդունեց չափահաս բնակչության անգրագիտությունը վերացնելու մասին: Ստեղծվեցին անգրագիտության վերացման կայաններ: Մինչև 1940 թ. հանրապետությունում հիմնականում անգրագիտությունը վերացվեց: Գրագետ էր դարձել բնակչության ավելի քան 80 %–ը: Նույնը չէր կարելի ասել Հայաստանում բնակվող ազգային փոքրամասնությունների մասին. ադրբեջանցիների 94 %–ը անգրագետ էր: Քրդերն առհասարակ գիր չունեին:

Խորհրդային դպրոցի ձևավորումը: Օրախնդիր էր կրթական նոր համակարգի ստեղծումը: Հատուկ դեկրետներով դպրոցն անջատվեց եկեղեցուց, փակվեցին մասնավոր դպրոցները, կրթությունը

դարձավ անվճար: Հայաստանում հիմնվեց երկու տիպի դպրոց՝ տարրական և յոթնամյա: Ուսուցումը կատարվելու էր մայրենի լեզվով:

1926 թվականից քաղաքային բնակավայրերում որոշվեց ունենալ եռաստիճան դպրոց՝ տարրական, յոթնամյա, լրիվ միջնակարգ, իսկ գյուղական վայրերում հիմնականը տարրական դպրոցն էր:

1920–1930–ական թթ. հանրապետությունում կառուցվեցին նոր դպրոցական շենքեր, ավելացավ աշակերտների թիվը: Նախադրյալներ առաջացան Հայաստանում ընդհանուր պարտադիր ուսուցման անցնելու համար:

Հաջորդ կարևոր քայլը հին ուսուցչական կադրերի կողքին նորերի պատրաստումն էր: 1921 թ. հոկտեմբերին Երևանի պետական համալսարանում բացվեց մանկավարժական ֆակուլտետ: Իսկ 1922 թ. նոյեմբերին հիմնադրվեց մանկավարժական ինստիտուտը, որը հետագայում կրեց հայ մեծ լուսավորիչ Խ. Աբովյանի անունը, և մինչև այժմ մանկավարժական կադրերի պատրաստման հիմնական դարբնոցն է: Տարբեր ժամանակներում Երևանում, Լենինականում (Գյումրի), Ստեփանավանում, Գորիսում, Դիլիջանում, Նոր Բայազետում (Գավառ) բացվեցին մանկավարժական տեխնիկումներ:

Հայրենական մեծ պատերազմը դժվարություններ առաջացրեց նաև կրթության կազմակերպման համար: Անգամ դպրոցական շենքերի մի մասը հատկացվեց հոսպիտալներին: Կրճատվեց դպրոցական պիտույքների արտադրությունը և դասագրքերի հրատարակումը: Հազարավոր ուսուցիչներ զորակոչվեցին: Նրանց թիվը 1300–ով կրճատվեց: Ավելի քան 30 %–ով պակասեց նաև դպրոցականների թիվը: Նրանցից շատերը գնացին արտադրական հիմնարկներ՝ փոխարինելու ռազմաճակատ մեկնողներին:

Այդուհանդերձ, պատերազմի տարիներին Հայաստանում շահագործվեց 12 դպրոցական շենք, և ապահովվեց ընդհանուր պարտադիր ուսուցման իրականացումը:

Որոշակի աշխատանք կատարվեց նաև բարձրա-

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիան (նախագահության շենքը)

գույն կրթության կազմակերպման ուղղությամբ: Հաջողությամբ գործում էր Երևանի պետական համալսարանը: 1923 թ. հիմնվեց Երևանի կոնսերվատորիան, իսկ 1928 թ. բացվեց անասնաբուժական–անասնաբուծական ինստիտուտը: 1940 թ. հանրապետությունում գործում էր 9 բուհ՝ ավելի քան 11 հազար ուսանողներով:

1941–1945 թթ. բուհերը նույնպես լուրջ փոփոխությունների ենթարկվեցին: Ջորակոչվեց պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողության մեծամասնությունը: Դասախոսների թիվը կրճատվեց 40 %–ով:

Այնուամենայնիվ, բուհերը շարունակեցին իրենց գործունեությունը: Իսկ 1943–1945 թթ. հիմնադրվեցին ռուսական մանկավարժական, գեղարվեստաթատերական և ֆիզկուլտուրայի ինստիտուտները:

ԽՍՀՄ ԳԱ հայկական մասնաճյուղի հիմնադրումը և ՀԽՍՀ ԳԱ ստեղծումը: Գիտության զարգացման ուղղությամբ կատարված առաջին նշանակալի քայլը 1921 թ. Էջմիածնի մշակութային–պատմական ինստիտուտի ստեղծումն էր: 1925 թ. այն վերափոխվեց գիտության և արվեստի ինստիտուտի: Վեր-



Հովսեփ Օրբելի

ջինս գործում էր ակադեմիական սկզբունքներով, նրա մեջ մտնում էին երեք տարով ընտրված իսկական և թղթակից անդամներ: Ինստիտուտի խնդիրն էր հանրապետությունում զարգացնելու բնական, տեխնիկական և հումանիտար գիտությունները:

Ինստիտուտը գործեց մինչև 1930 թ. և հիմնականում զբաղվում էր հասարակական գիտությունների ուսումնասիրությամբ:

1933 թ. հանրապետությունում գործում էին նաև 33 ինքնուրույն գիտահետազոտական հիմնարկներ:

1928 թ. Երևանի պետական համալսարանին կից բացվեց ասպիրանտուրա:

Գիտության զարգացումը բնականաբար առաջադրեց միասնական գիտական կենտրոնի ստեղծման պահանջ: Այդ նպատակով 1935 թ. բացվեց ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի հայկական մասնաճյուղը՝ Արմֆանը: Դրա առաջին նախագահը նշանավոր երկրաբան Ֆրանց Լևինսոն–Լեսինգն էր: 1938 թ. Արմֆանի նախագահ նշանակվեց ականավոր հայ արևելագետ Հովսեփ Օրբելին:

1941 թ. Արմֆանի կազմում գործում էին 11 գիտահետազոտական հիմնարկներ՝ 180 գիտաշխատողներով:

Հայրենական մեծ պատերազմի տարիներին Խորհրդային Հայաստանի մշակութային կյանքի ամենամեծ իրադարձությունը հանրապետության գիտությունների ակադեմիայի ստեղծումն էր, որի համար նախապատրաստական աշխատանքներն սկսվել էին դեռևս պատերազմի նախօրեին:

1943 թ. նոյեմբերին ԽՍՀՄ կառավարությունը որոշում ընդունեց ԽՍՀՄ ԳԱ Հայկական մասնաճյուղի հիման վրա ՀԽՍՀ գիտությունների ակադեմիա ստեղծելու մասին: Այն հայ գիտնականների ձեռք բերած նվաճումների ու ծառայությունների ճանաչումն էր:

ԳԱ հիմնադիր–ակադեմիկոսներ դարձան հանրապետության 23 գիտնականներ՝ գիտության ճյուղերի ներկայացուցիչներ: Նրանցից էին ֆիզիկոսներ Աբրահամ և Արտեմ Ալիխանյան եղբայրները, աստղաֆիզիկոս Վիկտոր Համբարձումյանը, ֆիզի-

ոլոգ Լևոն Օրբելին, գրականագետ Մանուկ Աբեղյանը, լեզվաբան Հրաչյա Աճառյանը, պատմաբաններ Հակոբ Մանանդյանը, Հովսեփ Օրբելին, բանաստեղծ Ավետիք Իսահակյանը և ուրիշներ:

1943 թ. նոյեմբերի 29–ին տեղի ունեցավ ակադեմիայի առաջին ընդհանուր ժողովը: Ակադեմիայի նախագահ ընտրվեց Հովսեփ Օրբելին, որն այդ պաշտոնը վարեց մինչև 1947 թվականը: Պատերազմի տարիներին նա Էրմիտաժի տնօրենն էր և իբրև վկա՝ մասնակցել է Նյուրնբերգյան դատավարությանը:

Բնական գիտությունների և հայագիտության զարգացումը: 1920–ական թթ. վերջերին մեծ աշխատանք կատարվեց նաև տեխնիկական ու բնական գիտությունների բնագավառում: Առաջնահերթ նպատակը գիտական միտքը տնտեսությանը ծառայեցնելն էր: Քիմիական արտադրությունը զարգացնելու գործում մեծ դեր խաղացին նշանավոր քիմիկոսներ Ստեփան Ղամբարյանը և Լևոն Ռոտինյանը: Նրանց ջանքերով սկիզբ դրվեց սինթետիկ կաուչուկի արտադրությանը:

Հիդրոտեխնիկական շինարարության բնագավառում աչքի ընկավ նշանավոր էներգետիկ Հովսեփ Տեր–Աստվածատրյանը, որի նախագծով կառուցվեցին նաև մի շարք հէկեր: Հայրենական մեծ պատերազմի վերջին երկու տարում աշխատանք տարվեց Բյուրականի աստղադիտարանի նախագծման ուղղությամբ:

Երկրաբաններ Հովհաննես Կարապետյանի և Տիգրան Ջրբաշյանի գլխավորությամբ հսկայական աշխատանքներ կատարվեցին կիրառական երկրաբանության բնագավառում: 1940–ական թթ. հիդրոէներգետիկայի բնագավառում ղեկավարում էր ակադեմիկոս Դ. Եղիազարյանը:

1925 թ. հայ գիտնական Հովհաննես Ադամյանը աշխարհում առաջինը ստեղծեց և Երևանում ցուցադրեց եռագույն հեռուստատեսություն և լուսահեռագրության սարք:

Մեծ աշխատանք կատարվեց նաև հայագիտության զարգացման գործում: Հատկապես աչքի ըն-

Հրաչյա Աճառյան

կան Խորհրդային Հայաստան վերադարձած հայագետները: 1926 թվականից Երևանի պետական համալսարանը հրատարակեց Հրաչյա Աճառյանի բազմահատոր «Հայերեն արմատական բառարանը»: Մանուկ Աբեղյանը և Կարապետ Մելիք–Օհանջանյանը մշակեցին և հրատարակեցին «Սասունցի Դավիթ» էպոսի համահավաք տեքստը: Թորոս Թորամանյանի ջանքերով վերականգնվեց Զվարթնոց տաճարի հատակագիծը:

Պատերազմի դժնդակ տարիներին շարունակվեց հայագիտության զարգացումը: Այդ բնագավառում ծանրակշիռ ներդրում էին Հակոբ Մանանդյանի պատմական աշխատությունները: Ստեփան Մալխասյանցն ավարտեց քառահատոր «Հայերեն բացատրական բառարանը», որը նույնպես արժանացավ պետական մրցանակի:

Գիտության վերելքին, սակայն, մեծապես խանգարում էին անհատի պաշտամունքի դրսևորումները:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչո՞ւ էին խորհրդային իշխանությունները կարևորում կրթության և մշակույթի զարգացումը: Ե՞րբ սկսվեց անգրագիտության վերացման քաղաքականությունը ՀԽՍՀ–ում:
2. Ներկայացրե՛ք խորհրդային դպրոցի ձևավորման ընթացքը և կարևոր միջոցառումները: Նշանավոր ի՞նչ բուհեր էին գործում Խորհրդային Հայաստանում:
3. Գիտության զարգացման ի՞նչ նշանավոր կենտրոններ էին ստեղծվել Խորհրդային Հայաստանում. ե՞րբ են դրանք հիմնվել: Թվարկե՛ք ՀԽՍՀ ԳԱ հիմնադիր–ակադեմիկոսների. ի՞նչ գիտեք նրանց մասին:
4. Կիրառական և բնական գիտությունների զարգացման գործում ովքե՞ր աչքի ընկան: Թվարկե՛ք հայ գիտնականների նվաճումները և արժեքավոր աշխատանքները:

ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՆՈՒՆՆԵՐ, ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Անգրագիտության վերացման կայան, Էջմիածնի մշակութային–պատմական ինստիտուտ, Գիտության և արվեստի ինստիտուտ, Արմֆան:

§ 3. ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐՎԵՍՏԸ

Գրականությունը: Խորհրդայնացումից հետո համեմատաբար ծանր վիճակում էր հանրապետության գրական կյանքը: Գրական հին սերնդի (Հ. Թումանյան, Հ. Հովհաննիսյան, Ա. Իսահակյան, Ա. Շիրվանզադե և ուրիշներ) կողքին հանդես էին գալիս նորերը (Ե. Չարենց, Ա. Բակունց, Գ. Մահարի, Ա. Վշտունի և ուրիշներ):

1921 թ. հոկտեմբերի 4–ին Ա. Իսահակյանին հասցեագրած նամակում Հ. Թումանյանը գրում էր, որ «…գրականությունն ու գեղարվեստը երբեք էսքան ուշադրության առարկա եղած չեն մեր աշխարհում»:

1920–ական թթ. Հայաստանում ծավալվեց պրոլետարական գրական շարժումը (պրոլետկուլտը): Գործում էին գրական տարբեր խմբակներ ու միություններ, որոնք բանավեճեր էին կազմակերպում գրականության ու գրական ժառանգության հարցերի շուրջ: Անգամ առաջարկվում էր ամբողջովին մերժելու նախահեղափոխական գրական ժառանգությունը: Բարեբախտաբար, այս տեսակետը հետագայում վերանայվեց:

1932 թ. ստեղծվեց Հայաստանի գրողների միությունը: Նոր գրականության ստեղծման պահանջով հանդես եկավ ***Եղիշե Չարենցը:*** «Ամենապոեմ» ստեղծագործության մեջ նա արտահայտում է այն գաղափարը, որ բանաստեղծներից մեծագույնը ժողովուրդն է՝ նյութական և հոգևոր բոլոր արժեքների ստեղծողը, էպոսների հեղինակը:

Արձակի բնագավառում հանդես եկան Ա. Բակունցը, Մտ. Զորյանը, Վ. Թոթովենցը, Դ. Դեմիրճյանը, Մ. Արմենը և ուրիշներ:

Գրական կյանքը չխամրեց նաև Հայրենական մեծ պատերազմի տարիներին: Ճիշտ է, ռազմաճակատ մեկնեցին ավելի քան 40 գրողներ ու գրականագետներ, սակայն հայ գրողները շարունակում էին ստեղծագործել:

Պատերազմին նվիրված քնարերգության դասական օրինակ է Ավ. Իսահակյանի «Ռազմակոչը»:

Ղազարոս Աղայան
Հովհաննես Թումանյան

Ավետիք Իսահակյան

Դերենիկ Դեմիրճյան

Վահրամ Փափազյան

Վարդան Աճեմյան

Գեղամ Սարյանը հայ զինվորներին էր հասցնում հայրենիքի խոսքը:

1944 թ. Հովհ. Շիրազը հրատարակեց «Բիբլիական» պոեմը: Նույն՝ 1944 թ. Դ. Դեմիրճյանը տպագրեց «Վարդանանք», իսկ Ստ. Զորյանը «Պապ թագավոր» պատմավեպը, որոնք անցյալի օրինակներով արմատավորում էին վեհ հայրենասիրության գաղափարը: Նույն մղումներով Ն. Զարյանը գրեց «Արա Գեղեցիկ» դիցապատմական ողբերգությունը:

Այսպիսով՝ պատերազմական շրջանում ստեղծված գեղարվեստական շատ արժեքներ մտան հայ գրականության ոսկե ֆոնդը:

Թատրոնը և կինոարվեստը: Հայաստանի խորհրդայնացումից հետո թատրոնն արժանացավ պետական հոգածության: 1922 թ. Գ. Սունդուկյանի «Պեպո» պիեսի բեմադրությամբ սկսվեց Առաջին պետական դրամատիկական թատրոնի գործունեությունը: Այն հետագայում կրեց Գ. Սունդուկյանի անունը: Այդ թատրոնում են իրենց գործունեությունը ծավալել հայ բեմի նշանավոր վարպետներ Հասմիկը, Հովհաննես Աբելյանը, Արուս Ոսկանյանը, Վահրամ Փափազյանը, Հրաչյա Ներսիսյանը, Վաղարշ Վաղարշյանը և ուրիշներ:

1928 թ. Լենինականում (Գյումրի) ռեժիսոր Վարդան Աճեմյանի ղեկավարությամբ բացվեց պետական թատրոն: Պետական թատրոններ բացվեցին Կիրովականում (Վանաձոր), Կապանում, Ստեփանավանում, Արտաշատում և այլուր:

1929 թ. բացվեց Պատանի հանդիսատեսի թատրոնը: 1937 թ. հիմնադրվեց Ռուսական դրամատիկական թատրոնը:

Թատերական կյանքը շարունակվեց նաև պատերազմի շրջանում:

1942 թ. Գ. Սունդուկյանի անվան թատրոնը բեմադրեց Ա. Կորնեյչուկի «Ռազմաճակատ» պիեսը: Նույն՝ 1942 թ. հիմնադրվեց Երևանի Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի թատրոնը, իսկ 1944 թ–ին՝ Թատերական ինստիտուտը:

Շեքսպիրյան դերերով աչքի ընկան Վ. Վաղար-

շյանը, Հ. Ներսիսյանը, Գ. Ջանիբեկյանը, Ա. Ավետիսյանը, Յ. Ամերիկյանը և ուրիշներ: Փայլատակեց նաև ասմունքի նշանավոր վարպետ Սուրեն Քոչարյանի տաղանդը:

1920–ական թթ. հիմնադրվեց նաև ազգային կինեմատոգրաֆիան: 1925 թ. ցուցադրվեց հայկական կինեմատոգրաֆիայի առաջնեկը՝ «Նամուսը», իսկ 1935 թ.՝ «Պեպո» հայկական առաջին ինչյունային կինոնկարը, որը բեմադրեց կինոռեժիսոր Համո Բեկնազարյանը, որի անունով էլ կոչվեց Հայկինոն:

1944 թ. Հայկինոն նկարահանեց «Մի անգամ գիշերով» և «Դավիթ Բեկ» ֆիլմերը: Ի դեպ, վերջինիս ռեժիսորը ևս Համո Բեկնազարյանն էր: Կարևոր երևույթ էր նաև «Երկիր հայրենի» վավերագրական ֆիլմի նկարահանումը (1945 թ.):

Կերպարվեստը և երաժշտությունը: 1920–ական թթ. ստեղծագործում էին Մարտիրոս Սարյանը, Մեդրակ Առաքելյանը, Եղիշե Թադևոսյանը, Ստեփան Աղաջանյանը, Հակոբ Կոջոյանը, Փանոս Թերլեմեզյանը: 1922 թ. Երևանում հիմնադրվեց Գեղարվեստի դպրոցը: 1935 թ. կազմակերպվեց Հայաստանի կերպարվեստի թանգարանը (Հայաստանի ազգային պատկերասրահ): 1932 թ. ստեղծվեց Հայաստանի խորհրդային կերպարվեստագետների միությունը: Խորհրդահայ նկարչության զարգացման գործում առանձնապես մեծ է մեր ժամանակների մեծագույն նկարիչ Մարտիրոս Սարյանի դերը: Հայ քանդակագործներից աչքի ընկան Սերգեյ Մերկուրովը, Արա Սարգսյանը, Երվանդ Քոչարը:

Մեծ Հայրենականի տարիներին տարբեր քաղաքներից Երևան էին եկել նկարիչներ Դմիտրի Նալբանդյանը, Ասլամազյան քույրերը, քանդակագործներ Ն. Նիկողոսյանը, Ս. Ստեփանյանը և ուրիշներ: Արա Սարգսյանը կերտեց Մեսրոպ Մաշտոցի և Սահակ Պարթևի քանդակները:

Պատերազմի տարիներին կազմակերպվեցին 10 հանրապետական և 40 անհատական ցուցահանդեսներ:

1920–1930–ական թթ. վերելք ապրեց երաժշտա-

Հայաստանի պատմության պետական թանգարանը

Մեսրոպ Մաշտոց և Սահակ Պարթև (հեղինակ՝ Արա Սարգսյան)

Ալեքսանդր Սպենդիարյան

կան կյանքը: 1923 թ. բացվեց պետական կոնսերվատորիան:

Ղրիմից Հայաստան եկած նշանավոր կոմպոզիտոր Ալեքսանդր Սպենդիարյանը դրեց հայկական ազգային սիմֆոնիայի հիմքը:

1932 թ. կազմակերպվեց պետական ֆիլհարմոնիան: Իսկ 1938 թ. Ալ. Սպենդիարյանի «Ալմաստ» օպերայի ներկայացմամբ բացվեց նույն հեղինակի անունը կրող օպերայի և բալետի պետական թատրոնը:

Հայ երաժշտական արվեստի զարգացման գործում մեծ է Արամ Խաչատրյանի վաստակը: Համաշխարհային ճանաչում ունեն նրա «Սպարտակ», «Գայանե» բալետները: Ժամանակի նշանավոր երգիչներից էին Հայկանուշ Դանիելյանը, Շարա Տալյանը և ուրիշներ: Հ. Դանիելյանին առաջինը շնորհվեց ԽՍՀՄ ժողովրդական արտիստուհու կոչում:

1938 թ. Թաթուլ Ալթունյանի գլխավորությամբ ստեղծվեց հայկական ժողովրդական երգի–պարի պետական անսամբլը:

1941–1945 թթ. լայն տարածում ստացան արտիստների և ստեղծագործական կոլեկտիվների ելույթները ռազմաճակատում: Ռազմիկների սպասված հյուրերն էին Թ. Ալթունյանի ղեկավարած երգի–պարի անսամբլը, Արտեմի Այվազյանի ղեկավարած Հայաստանի պետական ջազային խումբը: Հաջողությամբ ելույթներ էր ունենում Հայաստանի սիմֆոնիկ նվագախումբը: Երևանը առաջին քաղաքներից էր, ուր հնչեց Դմիտրի Շոստակովիչի Յոթերորդ (Լենինգրադյան) սիմֆոնիան:

ՀԽՍՀ պետական օրհներգ ստեղծվելու նպատակով հայտարարված մրցանակաբաշխությունը շահեց Արամ Խաչատրյանը (խոսք՝ Սարմենի): ՀԽՍՀ պետական օրհներգը առաջին անգամ հանդիսավոր կերպով հնչեց 1944 թ. օգոստոսի 12–ին:

Քաղաքաշինությունը և ճարտարապետությունը: Խորհրդահայ ճարտարապետության ամենանշանավոր դեմքը թերևս ակադեմիկոս Ալեքսանդր Թամանյանն էր: 1924 թ. նա կազմեց Երևանի գլխավոր

հատակագիծը: Թամանյանի նախագծով կառուցվեցին Երևանի առաջին հէկը, օպերայի և բալետի թատրոնի, ՀԽՍՀ կառավարության տան, հանրային գրադարանի, մի շարք բուհերի շենքերը և այլն:

Նշանավոր ճարտարապետներ էին նաև Մարկ Գրիգորյանը, Կարո Հալաբյանը, Գևորգ Քոչարը, Նիկողայոս Բունիաթյանը, Միքայել Մազմանյանը և ուրիշներ: 1932 թ. ստեղծվեց Ճարտարապետների միությունը:

Հայրենական մեծ պատերազմի տարիներին ճարտարապետության բնագավառում հանդես եկան աղբյուր–հուշարձանները: Այդ շրջանի խոշոր կառույց է «Հաղթանակ» կամուրջը: Կարևոր գործեր էին Բարեկամություն փողոցի բացումը, Բյուրականի աստղադիտարանի նախագծումը և այլն:

Այսպիսով՝ 1920–1945 թթ. խորհրդահայ մշակույթը հասավ մեծ հաջողությունների: Դրա հետագա զարգացմանը մեծապես խանգարեցին երկրում մոլեգնող ստալինյան քաղաքական բռնաճնշումները, մշակույթի գործիչների աքսորն ու հաշվեհարդարը:

Օպերայի և բալետի պետական թատրոն

Հարցեր և առաջադրանքներ

1. Ովքե՞ր էին գրական հին և նոր սերնդի ներկայացուցիչները. թվարկե՛ք նրանց ստեղծագործություններից: Այդ ստեղծագործություններից որո՞նք եք կարդացել: Ե՞րբ է ստեղծվել Հայաստանի գրողների միությունը:
2. Թվարկե՛ք հայ թատրոնի և կինոարվեստի նշանավոր գործիչների. ի՞նչ գիտեք նրանց մասին: 1920–1930–ական թթ. ի՞նչ թատրոններ են հիմնադրվել Խորհրդային Հայաստանում:
3. Ովքե՞ր էին խորհրդահայ կերպարվեստի և երաժշտության ականավոր ներկայացուցիչները: Ի՞նչ կարևոր իրադարձություններով է նշանավորվել խորհրդահայ երաժշտական կյանքը: Ե՞րբ է ստեղծվել Հայաստանի խորհրդային կերպարվեստագետների միությունը: Ե՞րբ է կազմակերպվել Հայաստանի կերպարվեստի թանգարանը:
4. Ո՞վ էր Երևանի գլխավոր հատակագծի հեղինակը. ի՞նչ շինություններ են կառուցվել նրա նախագծով: Ե՞րբ է ստեղծվել ճարտարապետների միությունը: Ժամանակաշրջանի ի՞նչ նշանավոր հայ ճարտարապետներ գիտեք:
5. Կազմե՛ք 1920–1945 թթ. խորհրդահայ մշակութային կյանքում կատարված կարևոր իրադարձությունների ժամանակագրական աղյուսակ:

ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՆՈՒՆՆԵՐ, ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Պրոլետկուլտ, Հայաստանի ազգային պատկերասրահ, Հայաստանի գրողների միություն, Հայաստանի խորհրդային կերպարվեստագետների միություն, ճարտարապետների միություն, «Նաիրուս», «Պեպո», «Ալմաստ»:

ԵՐԿՐՈՐԴ ԲԱԺՆԻ ԱՄՓՈՓՈՒՄ

1. Հայաստանում իշխանության գլուխ անցնելուց հետո բոլշևիկները ստեղծեցին կառավարման նոր համակարգ: Սկսվեցին հետապնդումներ և բռնություններ, որոնք գործադրվում էին Արտակարգ հանձնաժողովի (Չեկա) կողմից: Դժգոհությունների մեծ ալիք բարձրացավ հատկապես ռազմական կոմունիզմի քաղաքականության իրագործման հետևանքով: Այդ ամենը հանգեցրեց քաղաքացիական պատերազմի: Ի վերջո Փետրվարյան զինված ապստամբությունը ճնշվեց: 1922 թ. հունվար–փետրվար ամիսներին կայացած Հայաստանի խորհուրդների առաջին համագումարն ընդունեց ՀՍԽՀ առաջին Սահմանադրությունը: 1922 թ. ստեղծված Անդրդաշնությունը գոյատևեց մինչև 1936 թ.: 1922 թ. դեկտեմբերի 30–ին խորհրդային չորս հանրապետություններ ԽՍՀՄ կազմավորման մասին հռչակագիր ընդունեցին:

Իշխանության ինչ մարմիններ ստեղծվեցին Խորհրդային Հայաստանում:

Ո՞վ էր գլխավորում Փետրվարյան համաժողովրդական ապստամբությունը. ինչո՞ւ այն պարտվեց:

Ինչ կարևոր իրավունքներ և ազատություններ էին ամրագրվել ՀՍԽՀ առաջին Սահմանադրության մեջ:

2. ՀՍԽՀ–ն դիվանագիտական հարաբերություններ էր հաստատել մի շարք պետությունների հետ: Խորհրդայնացումից հետո Ռուսաստանն իր վրա էր վերցրել Հայաստանի՝ Վրաստանի, Ադրբեջանի և Թուրքիայի հետ սահմանային վեճերը կարգավորելու նախաձեռնությունը:

Երբ են ստորագրվել Մոսկվայի և Կարսի պայմանագրերը. տարածքային ինչ կորուստներ ունեցավ Հայաստանը:

Ինչ կերպ կարգավորվեցին Խորհրդային Հայաստանի՝ հարևանների հետ ունեցած տարածքային խնդիրները:

3. Հայկական սփյուռքն առաջացավ երիտթուրքական և քեմալական կառավարությունների վարած հայաջինջ քաղաքականության հետևանքով: Կազմակերպված մի շարք համայնքներ էին առաջացել Մերձավոր Արևելքի և Եվրոպայի երկրներում: Սփյուռքահայությունը Հայաստանի խորհրդայնացումից հետո դարձավ Հայկական հարցի լուծման միակ պահանջատերը: Սփյուռքահայության համար գերխնդիր էր դարձել ազգային նկարագրի ու ինքնության պահպանումը: Այդ գործում մեծ էր Հայ առաքելական եկեղեցու, ազգային կուսակցությունների ու կազմակերպությունների դերը:

Ո՞ր երկրներում ձևավորվեցին խոշոր հայկական համայնքներ:

Ո՞ր կառույցներն են նպաստում սփյուռքահայության ազգային դիմագծի պահպանմանը:

Որքա՞ն հայ ներգաղթեց Հայաստան 1921–1936 թթ.:

4. ԽՍՀՄ–ի վրա ֆաշիստական Գերմանիայի հարձակմամբ սկսվեց Հայրենական մեծ պատերազմը: Խորհրդային Հայաստանի տնտեսությունը վերակազմակերպվեց պատերազմական իրադրությանը համապատասխան, և Հայաստանը ևս իր մարդկային ու նյութական ռեսուրսները նպատակաուղղեց զավթիչներին ջախջախելու գործին: Կազմավորվեցին հայկական զորամիավորումներ, մարտերում աչքի ընկան բազմաթիվ հայ զորահրամանատարներ և ռազմիկներ: Հայ ժողովուրդը զգալի ներդրում ունեցավ պատերազմում հակաֆաշիստական երկրների տարած հաղթանակում:

Երբ են սկսվել և ավարտվել Երկրորդ համաշխարհային և Հայրենական մեծ պատերազմները:

Բերե՛ք փաստեր, որոնք վկայում են Մեծ հաղթանակում հայ ժողովրդի ունեցած կարևոր ներդրման մասին:

Համաշխարհային պատերազմին մասնակցած ինչ հայ նշանավոր հերոսներ և զորահրամանատարներ գիտեք:

5. Կոմունիստական կուսակցությունը ձգտում էր մշակույթը պահել իր անմիջական ազդեցության տակ: 1920–1945 թթ. միջոցառումներ ձեռնարկվեցին բնակչության գրագիտության մակարդակի բարձրացման ուղղությամբ, ընդլայնվեց դպրոցների և բուհերի ցանցը, առաջացան մի շարք գիտահետազոտական ինստիտուտներ: Պատերազմական պայմաններում հիմնադրվեց ՀԽՍՀ գիտությունների ակադեմիան: Չնայած դժվարություններին՝ Հայաստանում զարգանում էին գիտությունը, արվեստը մշակույթի մի շարք բնագավառներ. ականառու էին ձեռքբերումները վերոհիշյալ բնագավառներում:

Երբ է հիմնադրվել ՀԽՍՀ գիտությունների ակադեմիան:

Ինչ միջոցառումներ իրականացվեցին կրթամշակութային և գիտական կյանքը զարգացնելու ուղղությամբ:

Նշե՛ք գիտության և մշակույթի տարբեր բնագավառներում արձանագրված կարևոր ձեռքբերումները:

ԲԱԺԻՆ
III

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔԸ 1945–1991 ԹԹ.

ԳԼՈՒԽ I

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔԸ ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

§ 1. ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅԵՐԻ ՊԱՅՔԱՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ

Հայկական հարցի վերաբացումը միջազգային նոր պայմաններում: ԽՍՀՄ կազմում Խորհրդային Հայաստանը զրկված էր ինքնուրույն արտաքին քաղաքականություն վարելու հնարավորությունից: Այդ պատճառով միջազգային ասպարեզում Հայկական հարցի և ցեղասպանության խնդիրների միակ արծարծողը մնում էր սփյուռքահայությունը: Հայկական հարցի արդարացի լուծման, Թուրքիայի կողմից բռնազավթված Կարսի մարզը, Սուրմալուի գավառը, Արևմտյան Հայաստանի որոշ մասեր Խորհրդային Հայաստանին միացնելու գործում հույսեր արթնացան Երկրորդ աշխարհամարտի ավարտական փուլում:

Սփյուռքահայությունը գործուն միջոցների դիմեց խնդիրը միջազգայնացնելու ուղղությամբ: Տարբեր երկրներում (Ֆրանսիա, Սիրիա, Լիբանան, Հունաստան, Ուրուգվայ և այլն) կազմակերպվեցին ազգային խորհուրդներ: Դրանց աշխատանքը համակարգում էր ***1944 թ. մարտին*** Նյու Յորքում ստեղծված ***Ամերիկահայ ազգային խորհուրդը:*** Սփյուռքահայության հույսերն ավելի ամրապնդվեցին, երբ խորհրդային կառավարությունը 1945 թ. մարտի 19–ին չեղյալ հայտարարեց (դենոնսացիայի ենթարկեց) 1925 թ. խորհրդա–թուրքական բարեկամության և չեզոքության պայմանագիրը: Հատկապես մեծ էին ակնկալիքները 1945 թ. ապրիլին Սան Ֆրանցիսկոյում գումարվող Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) հիմնադիր կոնֆերանսի հետ: Սփյուռքահայ ազգային կազմակերպությունները հայկական տարածքների վերադարձի խնդրանքով դիմումներ և հուշագրեր հղեցին ինչպես ԽՍՀՄ կա-

ռավարությանն ու անձամբ Ի. Ստալինին, այնպես էլ ՄԱԿ–ի համագումարի մասնակիցներին:

Միջազգային ասպարեզում սփյուռքահայության կողմից բարձրացված ալիքին մեծ ոգևորությամբ միացավ խորհրդահայությունը: Հանրապետության թերթերում տպագրվում են նամակներ՝ «Հասել է ժամանակը», «Մեկուկես միլիոն մարդկանց ձայնը» և այլ հուզիչ խորագրերով: ՀԽՍՀ ղեկավարության հիմնական դիրքորոշումը հետևյալն էր. բարձրացնել Թուրքիայի բռնազավթած հայկական տարածքները (Կարսի մարզն ու Սուրմալուի գավառը)՝ Խորհրդային Հայաստանին վերադարձնելու և սփյուռքահայերի հայրենադարձության խնդիրները: 1945 թ. ապրիլի 19–ին Ստալինն ընդունում է Ամենայն հայոց կաթողիկոսի տեղապահ Գևորգ արքեպիսկոպոս Չորեքչյանին: Նոր կաթողիկոս ընտրելու համար ազգային–եկեղեցական ժողով հրավիրելու թույլտվության խնդրանքից բացի՝ Չորեքչյանն արծարծեց նաև համահայկական նշանակություն ունեցող տարածքային և հայրենադարձության հարցերը:

Հայկական սփյուռքում և Խորհրդային Հայաստանում անհամբեր սպասում էին պատերազմում հաղթած դաշնակից տերությունների ղեկավարների Բեռլինի (Պոտսդամի) կոնֆերանսի գումարմանը: Հայկական տարածքների հարցը կոնֆերանսի օրակարգում ընդգրկելու խնդրանքով Ամերիկայի ազգային խորհուրդը հուլիսի 19–ին հեռագիր ուղարկեց երեք տերությունների ղեկավարներին:

Կոնֆերանսում, սակայն, հայկական տարածքների հարցը լուծում չգտավ՝ հանդիպելով անգլո–ամերիկյան կոշտ դիմադրությանը:

Սփյուռքահայությունը նույնպես չէր դադարեցրել պայքարը: 1946 թ. հունվարին Լոնդոնում կայացած ՄԱԿ–ի գլխավոր ասամբլեայի առաջին նստաշրջանին հանձնված ուղերձում ՀՅԴ–ն պնդում էր Սևրի պայմանագրի և Վիլսոնի իրավարար վճռի իրականացման անհրաժեշտության մասին: Սփյուռքի ձեռնարկած միջոցառումների շարքում կարևոր քայլ էր Ամերիկայի Հայկական ազգային խորհրդի նախա-

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ՊՈՏՍԴԱՄՈՒՄ

Մինչ կոնֆերանսի սկիզբը՝ 1945 թ. հունիսին, Մոսկվայում ԽՍՀՄ արտգործժողկոմ Վ. Մոլոտովը Թուրքիայի դեսպանին ներկայացրել էր խորհրդային տարածքային պահանջները, որոնք, սակայն, պաշտոնապես մերժվեցին: Թուրքիային օգնության շտապեցին Մեծ Բրիտանիան և ԱՄՆ–ը: Կոնֆերանսի բացումից մեկ օր առաջ՝ հուլիսի 16–ին, Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարար Իդենը տեղեկացրեց Մոլոտովին, որ Լոնդոն ժամանած թուրքերը տագնապ են հայտնել խորհրդային տարածքային պահանջների առիթով: Ի պատասխան՝ Մոլոտովը հայտարարում է, որ 1921 թ. խորհրդա–թուրքական սահմանն արդարացի չէ, ուստի Թուրքիան ԽՍՀՄ–ին պետք է վերադարձնի որոշ տարածքներ: Խորհրդային տարածքային պահանջների խնդիրն արծարծվեց կոնֆերանսի հուլիսի 22–ի և 23–ի նիստերում: Թուրքիայի տարածքային ամբողջականության պաշտպանության դիրքերից առաջինը հանդես եկավ Մեծ Բրիտանիայի պատվիրակության ղեկավար Ու. Չերչիլը: Նրան հակադարձեց Ի. Ստալինը՝ պնդելով խորհրդային պահանջների մասին, նա ասաց. «Մենք գտնում ենք, որ Կարսի և Արդահանի շրջանում սահմանը ճիշտ չէ»:

ձեռնությամբ ***1947 թ. ապրիլի 30–ից մայիսի 4–ը*** Նյու Յորքում կայացած ***Հայկական համաշխարհային կոնգրեսը:*** Կոնգրեսի առաջարկով կազմված պատվիրակությունը մայիսի 12–ին ԱՄՆ պետքարտուղարի տեղակալին ներկայացրեց հայկական հողային պահանջների վերաբերյալ հուշագիր:

Միջազգային իրավիճակի սրումը՝ պայմանավորված սառը պատերազմով, 1949 թ. Հյուսիսատլանտյան դաշինքի ստեղծումով և երեք տարի անց նրան Թուրքիայի անդամակցությամբ, ստիպեց Խորհրդային Միության ղեկավարությանը հետ կանգնել Թուրքիայի նկատմամբ իր պահանջներից: 1953 թ. մայիսի 30–ին խորհրդային կառավարությունը պաշտոնապես հայտարարեց, որ «Խորհրդային Միությունը Թուրքիայից ոչ մի տարածքային պահանջ չունի»: Այսպիսով՝ հայ ժողովրդի արդարացի պահանջները կրկին չիրականացան:

1946–1948 թթ. «Մեծ հայրենադարձությունը»: Խորհրդային Հայաստան սփյուռքահայերի հերթական զանգվածային ներգաղթի կազմակերպման խնդիրը սերտորեն առնչվում էր Երկրորդ աշխարհամարտում ԽՍՀՄ հաղթանակի, Թուրքիայից հայկական որոշ տարածքների ազատագրման իրական թվացող հեռանկարի հետ:

Հայրենադարձություն կազմակերպելու հիմնախնդիրը ՀԽՍՀ ղեկավարությունը կենտրոնական իշխանությունների առջև մի քանի անգամ բարձրացրեց 1945 թ. ապրիլ–հուլիս ամիսներին: ՀԽՍՀ ղեկավարության եռանդուն և հաստատակամ գործունեության արդյունքում՝ 1945 թ. նոյեմբերի 21–ին ԽՍՀՄ ժողկոմխորհը Ի. Ստալինի ստորագրությամբ ընդունում է որոշում՝ «Արտասահմանյան հայերի՝ Խորհրդային Հայաստան վերադառնալու կապակցությամբ ձեռնարկվող միջոցառումների մասին»:

Խորհրդային կառավարության այս քայլը խանդավառությամբ ընդունվեց համայն հայության կողմից:

Հայրենադարձությունն իրականացնելու համար ՀԽՍՀ կառավարությանն առընթեր կազմակերպվում է Արտասահմանից ներգաղթող հայերի ըն-

դունման կոմիտե: Եվ արդեն ***1946 թ. հունիսի 23–ին*** հայրենադարձների առաջին խումբը ***«Տրանսիլվանիա»*** շոգենավով Բեյրութից դուրս է գալիս դեպի Հայրենիք: Օրեր անց նրանք ժամանում են Բաթումի նավահանգիստ, այդտեղից գնացքներով՝ Հայաստան: Մինչև 1946 թ. հոկտեմբերի կեսերը Լիբանանից, Սիրիայից, Իրանից, Բուլղարիայից, Հունաստանից և այլ երկրներից Հայաստան ժամանեց մոտ 51 հազար մարդ: Ներգաղթը, նվազող չափերով, շարունակվեց նաև հաջորդ երկու տարիներին՝ 1947 թ. հայրենադարձվեց 25 հազար, իսկ 1948 թ.՝ ընդամենը 10 հազար մարդ:

ԽՍՀՄ կառավարությունը հայրենադարձների սոցիալական դրությունը բարելավելու համար մի շարք կարևոր որոշումներ ընդունեց, սակայն զգացնել էին տալիս հետպատերազմյան շրջանի սոցիալ–տնտեսական դժվարությունները: Սա, ինչպես նաև ԽՍՀՄ ամբողջատիրական համակարգի նոր բացասական դրսևորումները, վերսկսված բռնաճնշումները սփյուռքահայերի հայրենադարձության դադարեցման պատճառ դարձան: ԽՍՀՄ կառավարության 1948 թ. սեպտեմբերի 14–ի որոշումով հայրենադարձությունը կասեցվեց:

Այդուհանդերձ, 1946–1948 թթ. մոտ 90 հազար հայեր աշխարհի 12 երկրներից ներգաղթեցին Խորհրդային Հայաստան: Հաղթահարելով դժվարությունները, հայրենադարձները ներգրավվեցին հանրապետության տնտեսական և հասարակական–քաղաքական կյանքում՝ մեծ ներդրում ունենալով երկրի զարգացման գործում:

Հայրենադարձությունը հետագա տարիներին: Զանգվածային հայրենադարձությունը թեև կասեցվեց, սակայն Ստալինի մահից հետո 1950–ական թթ. անհատական կարգով Խորհրդային Հայաստան ներգաղթեց շուրջ 4 հազար սփյուռքահայ: Ներգաղթը փոքր ծավալներով շարունակվեց նաև 1960–70–ական թթ., երբ առանձին խմբերով Հայաստան ներգաղթեց մոտ 32 հազար մարդ աշխարհի շուրջ 30 երկրներից: Այդ տարիներին նկատվում էր նաև հակառակ գոր-

ծընթացը, երբ սոցիալ տնտեսական ու քաղաքական դրդապատճառներով Հայաստանից արտագաղթեցին հայրենադարձների ու նրանց հարազատների մի մասը: Արտագաղթը վտանգավոր չափեր ընդունեց հատկապես 1980–ական թթ. վերջերից:

Այդուհանդերձ, հայրենադարձությունը խոշոր նշանակություն ունեցավ հանրապետության ժողովրդագրական իրավիճակի բարելավման, տնտեսության, մշակույթի և գիտության զարգացման համար:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչո՞ւ հնարավոր դարձավ Հայկական հարցի բարձրացումը 1940–ական թթ. կեսերին:
2. Ի՞նչ կազմակերպություններ ստեղծեցին սփյուռքահայերը: Ներկայացրե՛ք և գնահատե՛ք սփյուռքահայերի պայքարը Հայկական հարցի լուծման համար:
3. Ե՞րբ և ինչպե՞ս է կազմակերպվել «Մեծ հայրենադարձությունը»: Ներկայացրե՛ք և գնահատե՛ք այդ իրադարձության ընթացքը և արդյունքները:
4. Ի՞նչ արդյունքներ ունեցավ հայրենադարձությունը հետագա տարիներին:

ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՆՈՒՆՆԵՐ, ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամերիկահայ ազգային խորհուրդ, դենոնսացիա, ՄԱԿ–ի հիմնադիր համագումար, Պոտսդամի կոնֆերանս, Ամերիկայի Հայկական ազգային խորհուրդ, Հայկական համաշխարհային կոնգրես, «Տրանսիլվանիա» շոգենավ, «Մեծ հայրենադարձություն»:

§ 2. ՀԱՅՐԵՆԻՔ–ՍՓՅՈՒՌՔ ԿԱՊԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄԸ ԵՎ ԱՄՐԱՊՆԴՈՒՄԸ

Սփյուռքահայերի հետագա պայքարը Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման համար: Հայկական հարցի արդարացի լուծման ձախողումը հետպատերազմյան առաջին տարիներին չընկճեց սփյուռքահայությանը: Համասփյուռքյան ազգային կազմակերպությունների և հայ ավանդական կուսակցությունների գործունեության առաջնային խնդիրն էր նպաստել Հայկական հարցի

լուծմանը և Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանը: Այդ գործում կարևոր ազդակ էին 1965 թ. իրադարձությունները, երբ ինչպես Խորհրդային Հայաստանում, այնպես էլ Սփյուռքի բոլոր համայնքներում հարյուրհազարավոր հայեր նորից բարձրացրին իրենց բողոքի և պահանջատիրության ձայնը:

Սփյուռքահայության համառ գործունեության և պայքարի արդյունքներն ուշացնել չտվեցին: Արդեն Հայոց Մեծ Եղեռնի 50–ամյակի նախօրեին՝ 1965 թ. ապրիլի 20–ին Ուրուգվայի Ազգային համագումարը (խորհրդարանը) դատապարտեց և ճանաչեց Հայոց ցեղասպանությունը՝ դրանով դառնալով ցեղասպանությունը ճանաչած աշխարհի առաջին երկիրը: Նույն օրերին ԱՄՆ–ի Կալիֆոռնիայի նահանգային խորհրդարանն իր հերթական նստաշրջանում ընդունեց «Հայերի զոհերի հիշատակի օրվա մասին» բանաձևը, որով Ապրիլի 24–ը նահանգում սահմանվեց հայ զոհերի հիշատակի օր: 1965 թ. հոկտեմբերին Կիպրոսի արտաքին գործերի նախարարը ՄԱԿ–ի բարձր ամբիոնից կոչ արեց քննարկել Հայկական հարցը:

Հետագա տարիներին հայերի ցեղասպանության մասին հիշատակվեց 1967 թ. ապրիլին Մոնտեվիդեոյում գումարված Լատինական Ամերիկայի երկրների միջխորհրդարանական համագումարում, որը որոշում ընդունեց օժանդակել ՄԱԿ–ում Հայկական հարցի քննարկմանը: Առավել ծանրակշիռ էր 1973 թ. ՄԱԿ–ի մարդու իրավունքների հանձնաժողովի ենթահանձնախմբի կողմից ներկայացված բանաձևը, որի ենթակետերից մեկում Օսմանյան կայսրությունում հայերի ջարդերը որակվեցին որպես XX դարի առաջին ցեղասպանություն:

Միջազգային ասպարեզում սփյուռքահայության խնդիրները միասնաբար ներկայացնելու գործում նշանակալից իրադարձություն արձանագրվեց ***1974 թ.,*** երբ հայ քաղաքական երեք կուսակցությունները, որոնք մինչ այդ գործում էին անջատ, առաջին անգամ կազմեցին համազգային կենտրոնական մարմին և մշակեցին ցեղասպանության ճանաչմանն

ուղղված գործողությունների միասնական ծրագիր: Համաշխարհային հանրությանը Թուրքիայի ցեղասպան հանցագործ քաղաքականությանը ծանոթացնելու, ցեղասպանության միջազգային ճանաչման ուղղությամբ մեծ ծավալի աշխատանք կատարեցին ՀՅԴ կողմից աշխարհի տարբեր երկրներում հիմնված Հայ դատի հանձնախմբերը, Ամերիկայի հայկական համագումարը, որը ստեղծվել է 1972 թ.:

Հայոց ցեղասպանության հիմնահարցը 1983 թ. սկսեց քննարկվել նաև Եվրախորհրդում: ***1987 թ. հունիսի 18–ին*** Եվրախորհրդարանը դատապարտեց 1915 թ. հայերի ցեղասպանությունը՝ կոչ անելով Թուրքիայի կառավարությանը ճանաչել ցեղասպանության փաստը:

Հայրենիք–Սփյուռք կապերի բարելավումը և ամրապնդումը: Ի. Ստալինի մահից (1953 թ.) հետո քաղաքական իրադրությունը ԽՍՀՄ–ում սկսեց մեղմանալ: Օգտվելով դրանից՝ Խորհրդային Հայաստանի ղեկավարությունն ակտիվացրեց իր քաղաքականությունը Սփյուռքի հետ հարաբերություններում, ինչը նշանավորվեց նախկին սահմանափակումների խիստ նվազմամբ: Խորհրդային Հայաստանում 1960–1970–ական թթ. սկզբի «ազգային ինքնագիտակցության զարթոնքի» շրջանը բացառիկ մեծ նշանակություն ունեցավ Հայրենիք–Սփյուռք կապերի ամրապնդման համար:

1961 թ. գարնանը Խորհրդային Հայաստանի 40–ամյակի տոնախմբություններին մասնակցելու համար հանրապետություն ժամանեցին Մերձավոր Արևելքի, Եվրոպայի, Հյուսիսային և Հարավային Ամերիկաների բազմաթիվ սփյուռքահայեր: Կազմակերպվեց նրանց հանդիսավոր հանդիպումը Հայաստան ժամանած ԽՄԿԿ կենտկոմի առաջին քարտուղար Նիկիտա Խրուշչովի հետ: Հարցեր հնչեցին Թուրքիայի կողմից բռնազավթված հայկական տարածքների, պատմական հայրենիք սփյուռքահայերի վերադարձի, նաև Արցախն ու Նախիջևանը ՀԽՍՀ–ին միացնելու մասին:

1964 թ. մայիսին Հայաստանում ստեղծվեց Սփյուռ-

քահայության հետ մշակութային կապերի կոմիտեն: Այն համակարգում էր Հայրենիք – Սփյուռք հարաբերությունները: Սկսեց հրատարակվել կոմիտեի «Հայրենիքի Ձայն» պաշտոնաթերթը: Սփյուռքահայությանն օգնելու համար Հայաստանում հրատարակվեցին դասագրքեր Սփյուռքի դպրոցների համար, կազմակերպվեցին ամենամյա վերապատրաստման դասընթացներ սփյուռքահայ ուսուցիչների համար: Սփյուռքահայ ուսանողները հնարավորություն ստացան ուսանելու Հայաստանի բուհերում: Հայաստանից պարբերաբար Սփյուռք գործուղվող գիտության և մշակույթի անհատ գործիչները, անվանի գեղարվեստական խմբերն ամենուրեք խանդավառ ընդունելության էին արժանանում: Այս ամենով փորձ էր կատարվում համախմբել Սփյուռքը և մղել դեպի հայրենիք:

ՀԽՍՀ իշխանությունների թույլտվությամբ աշխուժացավ Վազգեն Ա հայրապետի գլխավորությամբ Ս. Էջմիածնի գործունեությունը Սփյուռքի հետ կապերի ամրապնդման ուղղությամբ:

Նշանակալի իրադարձություն էր մայրաքաղաք Երևանում 1980 թ. նոյեմբերի 24–26–ը կազմակերպված «Հայրենիք – Սփյուռք» համահայկական առաջին համաժողովը: Դրան մասնակցեցին Սփյուռքի գրեթե բոլոր համայնքների մեծ թվով ներկայացուցիչներ, մշակվեցին համագործակցության հետագա ծրագրեր:

1988 թ. Սպիտակի աղետալի երկրաշարժի օրերին սփյուռքահայությունը նյութական և բարոյական մեծ օժանդակություն ցուցաբերեց Հայաստանին: Սփյուռքահայ շատ բժիշկներ, հոգեբաններ, ճարտարապետներ ու շինարարներ մնացին Հայաստանում և անմիջականորեն մասնակցեցին փրկարարական ու վերականգնողական աշխատանքներին: Ամենայն հայոց Վազգեն Ա կաթողիկոսը և Մեծի Տանն Կիլիկիո Գարեգին Բ կաթողիկոսը, միասին շրջելով հայկական գաղթօջախներում, հանգանակություն կազմակերպեցին, որն ուղղվեց աղետի գոտու վերականգնմանը և տուժած բնակչության օգնությանը: Անկախության առաջին տարիներից Հայրենիք–Սփյուռք կապերը թևակոխեցին զարգացման որակական նոր փուլ:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչ արդյունքներ արձանագրվեցին Հայկական հարցի լուծման և Հայոց ցեղասպանության ճանաչման ուղղությամբ 1960–1980 թթ.:
2. Ինչ քայլեր ձեռնարկվեցին Հայրենիք–Սփյուռք կապերի բարելավման և ամրապնդման ուղղությամբ: Ինչ արդյունքներ դրանք ունեցան:
3. Հիմնավորե՛ք Հայրենիք–Սփյուռք կապերի սերտացման անհրաժեշտությունը:

ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՆՈՒՆՆԵՐ, ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«XX դարի առաջին ցեղասպանություն», Եվրախորհրդարան, «ազգային ինքնագիտակցության զարթոնք», Սփյուռքահայության հետ մշակութային կապերի կոմիտե, Վազգեն Ա, «Հայրենիք–Սփյուռք» համահայկական առաջին համաժողով:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆՅՈՒԹԵՐ

Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Ջ Չորեքչյանի՝ 1945 թ. նոյեմբերի 29–ին Մայր աթոռ Ս. Էջմիածնում տեղի ունեցած մամուլի ասուլիսում ելույթից.

«Արտասահմանի հայության ճակատագրի մասին մեր հոգատարությունը և նրանցից ստացած բազմաթիվ նամակներն ու հեռագրերը մեզ մղեցին դիմելու երեք տերությունների ղեկավարներին՝ Ստալինին, Թրումանին և Էտլիին՝ խնդրելով վերացնել բազմաչարչար հայ ժողովրդի վերաբերմամբ թույլ տված պատմական մեծ անարդարությունը: Մեր դիմումով մենք խնդրում ենք Թուրքիայից վերցնել նրա կողմից բռնի կերպով զավթած և այժմ ամայի հողերը, վերադարձնել նրանց վաղեմի տերերին և այդ հողերը միացնել Սովետական Հայաստանին: Դա գաղթական հայերին հնարավորություն կտա մի ընտանիքի մեջ ապրելու իրենց արյունակից եղբայրների հետ, աշխատելու և զարգացնելու իրենց ազգային կուլտուրան»

(«Սովետական Հայաստան», 2 դեկտեմբերի, 1945 թ.):

***

Եվրախորհրդարանի կողմից 1987 թ. հունիսի 18–ին ընդունած «Հայկական հարցի քաղաքական լուծման մասին» բանաձևից. «Օսմանյան կայսրության տարածքում հայ բնակչության նկատմամբ տեղի ունեցած 1915–1917 թթ. ողբերգական իրադարձությունները համաձայն ՄԱԿ–ի գլխավոր ասամբլեայի կողմից 1948 թ. դեկտեմբերի 9–ին ընդունված «Ցեղասպանության հանցագործությունները կանխելու և դրա համար պատժի մասին» կոնվենցիայի, հանդիսանում է ցեղասպանություն»:

(Հայոց ցեղասպանություն: Աշխարհի պետությունները, ազգային խորհրդարանները և միջազգային կազմակերպությունները դատապարտում են և ճանաչում (նյութերի ժողովածու), Երևան, 2005 , էջ 222)

ԳԼՈՒԽ II

ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ–ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ

§ 1. ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ

Արդյունաբերության վերակառուցումը և զարգացումը: Պատերազմի հաղթական ավարտից հետո անհրաժեշտ էր վերակառուցել հանրապետության արդյունաբերությունը, հարմարեցնել խաղաղ պայմաններին: Թեպետ սկզբում առկա էին բազմաթիվ դժվարություններ, մասնավորապես փորձառու աշխատուժի և հումքի պակաս, սակայն արդեն 1947 թ. արդյունաբերության զարգացումը նոր թափ առավ, և հետագայում արագ տեմպերը պահպանվեցին: 1950–ական թվականների երկրորդ կեսին հանրապետությունում շարունակվեց ծանր արդյունաբերության, հատկապես՝ պղնձի, ալյումինի, մոլիբդենի արտադրության և քիմիական արդյունաբերության զարգացումը: Կառուցվեցին նոր գործարաններ, շինանյութերի ձեռնարկություններ, հիմքեր դրվեցին ճշգրիտ մեքենաների արտադրության կազմակերպման և ընդլայնման համար: Հայաստանը դարձավ ԽՍՀՄ զարգացած արդյունաբերական հանրապետություններից մեկը. նրա արդյունաբերական արտադրանքի բազմաթիվ տեսակներ արտահանվում էին սոցիալիստական և զարգացող երկրներ:

1960–1980–ական թթ. Խորհրդային Հայաստանի արդյունաբերության զարգացման ուղու ընտրության հիմքում շեշտը դրվեց դրա աշխարհագրության ընդլայնման և գիտաարտադրական միավորումների ստեղծման վրա: Եթե մինչ այդ արդյունաբերությունը հիմնականում կենտրոնացած էր Երևան, Լենինական, Կիրովական քաղաքներում, ապա 1970–ական թթ. արդյունաբերական ձեռնարկություններ հիմնվեցին բոլոր փոքր քաղաքներում, քաղաքատիպ ավաններում և խոշոր գյուղերում: Նոր արդյունաբերական համալիրներ ստեղծվեցին

Հրազդանում, Արթիկում, Չարենցավանում, Արաբատում, Դիլիջանում, Կամոյում և այլուր:

1970–1980–ական թթ. արդյունաբերական աճի տեմպերով Հայաստանը Խորհրդային Միության մեջ գրավում էր երկրորդ տեղը: Սակայն պետք է նշել, որ արդյունաբերական արտադրանքը որակական ցուցանիշներով զիջում էր միութենական մի շարք հանրապետություններին և զգալիորեն հետ էր մնում համաշխարհային մակարդակից: Դրա հիմնական պատճառն այն էր, որ Հայաստանում արդյունաբերական նոր ճյուղեր ստեղծելիս անտեսվեցին անհրաժեշտ հումքով, էներգիայով և նույնիսկ ջրի պաշարներով՝ հանրապետության ապահովվածության հարցերը: Շրջակա միջավայրի վրա հատկապես բացասական ազդեցություն ունեին գունավոր մետաղագործության ձեռնարկությունները՝ Քանաքեռի ալյումինի, Ալավերդու մետալուրգիական, Քաջարանի պղնձամոլիբդենային, Հրազդանի լեռնաքիմիական և այլ ձեռնարկություններ:

Սևան–Հրազդան հիդրոէլեկտրակայանների համակարգը (կասկադը) տալիս էր հանրապետության էլեկտրաէներգիայի շուրջ 95 %–ը, սակայն դա Սևանա լճի մակարդակի կտրուկ իջեցման պատճառ դարձավ, որը կարող էր Հայաստանը զրկել խմելու և ոռոգման ջրերի պաշարներից: 1961 թ., Հայաստանի կառավարության միջնորդությամբ, ԽՍՀՄ ղեկավարությունը որոշում կայացրեց Արփա գետի ջրերի հոսքի մի մասը Սևան փոխադրելու համար կառուցել մոտ 48 կմ երկարությամբ ջրատար թունել: Դա եզակի և բավական բարդ կառույց է, որի շինարարությունը տևեց շուրջ 20 տարի: 1981 թ. Արփա–Սևան թունելը շահագործման հանձնվեց, որի շնորհիվ կասեցվեց Սևանի մակարդակի իջեցումը, ապա սկսվեց նրա բարձրացումը:

Տարեցտարի աճող արդյունաբերության և ընդհանրապես հանրապետության էներգետիկ պահանջները լիովին բավարարելու նպատակով 1969 թ. սկսվեց Հայկական ատոմային էլեկտրակայանի շինարարությունը, որի առաջին էներգաբլոկը գործարկ-

վեց 1976 թվականին: Ատոմակայանի շահագործման շնորհիվ հանրապետությունում էլեկտրաէներգիայի արտադրությունը զգալիորեն գերազանցեց ժողովրդական տնտեսության պահանջները:

Գյուղատնտեսության հիմնախնդիրները: Պատերազմից հետո հանրապետության գյուղատնտեսությունը վատ վիճակում էր: 1946 թ. հավաքվեց ավելի քիչ հացահատիկ, քան՝ նախորդ տարում: Հացը, որը բնակչության հիմնական սննդամթերքն էր, չէր բավարարում: Շատ ցածր էր հացահատիկի բերքատվությունը Հայաստանում. այն դա 2–3 անգամ պակաս էր եվրոպական երկրների և ԱՄՆ–ի ցուցանիշներից:

Պետությունը ձգտում էր կատարել անհրաժեշտ բարեփոխումներ գյուղատնտեսության բնագավառում: Այդ նպատակով ավելացվում էր դաշտերում աշխատող մեքենաների թիվը, ցանքատարածությունների ոռոգման համար կառուցվում էին ջրամբարներ և ջրանցքներ: Սակայն այդ միջոցառումների արդյունավետությունը ցածր էր, որովհետև գյուղացիությունը չէր խրախուսվում իր կատարած աշխատանքի համար: Գյուղացին շահագրգռված չէր լավ աշխատելու: Հաճախ պետությունը վերցնում էր կոլտնտեսությունների բերքի մեծ մասը, երբեմն էլ՝ ամբողջը՝ դրա փոխարեն վճարելով չնչին գումար:

Ստալինի մահից հետո ԽՍՀՄ նոր ղեկավարությունը որոշեց բարձրացնել կոլտնտեսություններից գնվող մթերքների գները: Ձեռնարկված միջոցառումների շնորհիվ գյուղատնտեսության տևական անկմանը հաջորդեց որոշ վերելք կոլտնտեսականների եկամուտները սկսեցին աճել: Սակայն շուտով գյուղատնտեսությունում աճի տեմպերը նվազեցին: Առաջին անգամ Խորհրդային Միության ողջ պատմության ընթացքում պետությունը 1963 թ. ստիպված էր սկսելու հաց գնել արտասահմանից, որի համար ծախսեց շուրջ մեկ միլիարդ ԱՄՆ դոլար:

1960–ական թթ. կեսերին ԽՍՀՄ–ում փորձեցին նախորդ տասնամյակներում գյուղատնտեսության բնագավառում թույլ տրված ծայրահեղություննե-

րը վերացնել: Սակայն շարունակում էր ցածր մնալ գյուղատնտեսական արտադրության արդյունավետությունը: Գյուղացու հիմնական եկամտի աղբյուրը շարունակում էին մնալ նրա տնամերձ փոքր հողակտորը և տնային թռչուններն ու անասունները:

Բնակչության սոցիալական վիճակը: 1947 թ. առատ բերքի, ռազմական ծախսերի որոշ կրճատման և ստեղծված պետական պահուստների շնորհիվ վերացվեց ապրանքների բաշխման քարտային համակարգը, որ մտցվել էր պատերազմի սկզբին: Սակայն բնակչության կենսամակարդակը դեռևս շատ ցածր էր: 1950–ական թվականների կեսերից ԽՍՀՄ–ում իրականացվեց լայնամասշտաբ սոցիալական քաղաքականություն: Ընդունվեց օրենք թոշակների մասին, բարձրացվեցին ցածր վարձատրվող աշխատողների աշխատավարձերը, գյուղացուն հանձնվեց անձնագիր, մեծ թափով ստացավ բնակարանային շինարարությունը: Իսկ 1964 թ–ից կոլտնտեսականների համար ևս սահմանվեց կենսաթոշակ:

Հայկական ԽՍՀ բնակչության թիվը հետպատերազմյան տարիներին կտրուկ աճեց: 1945–1965 թթ., այսինքն՝ 20 տարվա ընթացքում, հանրապետության բնակչության թիվը աճեց մոտավորապես 2 անգամ՝ հասնելով 2 միլիոն 134 հազարի: ԽՍՀՄ կազմում Հայաստանն այն եզակի հանրապետություններից էր, որը խորհրդային տարիներին պահպանում էր իր գրեթե միատարր ազգային կազմը: Սակայն թափ հավաքող ***քաղաքակենտրոնացումը*** (ուրբանիզացիա) տանում էր հանրապետական և շրջանային ենթակայության քաղաքների թվի ավելացմանը և քաղաքատիպ ավանների բնակչության շատացմանը: Քաղաքային բնակչության ավելացումը առավել սրում էր բնակարանային հիմնախնդիրը:

Խորհրդային պետության ողջ պատմության ընթացքում մշտապես առկա էր սպառողական ապրանքների պակասը: Որպեսզի սպառողը ձեռք բերեր կահույք, լվացքի մեքենա, սառնարան, առավել ևս՝ ավտոմեքենա, պետք է հերթագրվեր խանութում,

ավելի հաճախ՝ աշխատավայրում, և սպասեր ամիսներով, հաճախ՝ տարիներով: Ճիշտ է՝ բնակչության կենսամակարդակը երկրում բարձրացավ, սակայն նրա աճի արագությունը անընդհատ հետ էր մնում հասարակական սպասելիքից և պահանջից, որը մարդկանց շրջանում առաջ բերեց դժգոհություն և անտարբերություն:

Հարցեր և առաջադրանքներ

1. Նշե՛ք փաստեր, որոնք վկայում են, որ Հայաստանը դարձել էր ԽՍՀՄ–ի՝ զարգացած արդյունաբերական հանրապետություններից մեկը:
2. Մինչև 1970–ական թվականները հիմնականում ո՞ր քաղաքներում էր կենտրոնացած արդյունաբերությունը: 1970–ական թվականներից սկսած՝ Հայաստանի ո՞ր քաղաքներում ստեղծվեցին արդյունաբերական համալիրներ:
3. Քարտեզի վրա ցո՛ւյց տվեք Հայաստանի արդյունաբերական խոշոր և գունավոր մետաղագործության նշանավոր կենտրոնները. ներկայումս ՀՀ–ի ո՞ր մարզերի տարածքում են այդ քաղաքները:
4. Ե՞րբ է կառուցվել և շահագործման հանձնվել Արփա–Սևան ջրատար թունելը: Ի՞նչ նպատակով էր այն կառուցվել: Հանրապետության էներգետիկ պահանջները բավարարելու համար ե՞րբ և ի՞նչ կառուցվեց Հայաստանում:
5. Գյուղատնտեսությունը զարգացնելու նպատակով ի՞նչ միջոցառումներ ձեռնարկվեցին Հայաստանում: Ի՞նչն էր խոչընդոտում Հայաստանում գյուղատնտեսության զարգացմանը հետպատերազմյան առաջին տարիներին:
6. 1950–ական թվականների կեսերից ԽՍՀՄ–ի սոցիալական քաղաքականության մեջ ի՞նչ կարևոր քայլեր ձեռնարկվեցին: Ա՞ճի ի՞նչ ցուցանիշներ ուներ ՀԽՍՀ–ի բնակչությունը հետպատերազմյան տարիներին:

ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՆՈՒՆՆԵՐ, ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Արփա–Սևան ջրատար, Հայկական ատոմային էլեկտրակայան, քաղաքակենտրոնացում (ուրբանիզացիա):

§ 2. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ–ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ

Քաղաքական բռնաճնշումների նոր փուլը: 1949 թ. զանգվածային աքսորը: Թեպետ 1937–1938 թթ. զանգվածային բռնաճնշումներից հետո դրանց քանակը նվազել էր, սակայն իսպառ չէր դադարել: 1945–1952 թթ. հանրապետությունում քաղաքական մեղադրանքով բռնադատվել է մոտ 3000 մարդ: Լրտեսություն, դավաճանություն, պետական սահմանի ապօրինի անցում, հակահեղափոխական, հակախորհրդային ու դաշնակցական գործունեություն,— ահա նրանց վերագրված հիմնական մեղադրանքները:

1949 թ. հունիսի 14–ին, ԽՍՀՄ իշխանությունների որոշմամբ, Հայաստանից և Անդրկովկասի մյուս հանրապետություններից հայ բնակչության մի հոծ զանգված՝ թվով 3620 ընտանիք, «դաշնակցականներ» պիտակով, արտաքսվեց երկրի հեռավոր շրջաններ մշտական բնակության: Հայաստանից աքսորվեց 2935 ընտանիք: 1946–1948 թթ. Հայաստան ներգաղթած սփյուռքահայերի շրջանում ևս խորհրդային պետական անվտանգության ծառայությունները «դաշնակցականներ» գտան և արտաքսման ենթարկեցին մյուսների հետ: Հայաստանից, Վրաստանից, Ադրբեջանից և Սև ծովի առափնյա շրջաններից 1949 թ. արտաքսումների արդյունքում երկրի հեռավոր շրջաններում, հիմնականում Ալթայի երկրամասում հայտնվեց 15486 հայ մարդ: Եթե հաշվի առնենք, որ Հայաստանից արտաքսվածների թիվը կազմում է մոտ 13300, ապա Վրաստանից և Ադրբեջանից արտաքսված հայ բնակչության թիվը կկազմի մոտ 2200 մարդ: Քաղաքական բռնադատումներին վերջ տվեց Ստալինի մահը:

Հայաստանը խրուշչովյան «ձնհալի» տարիներին: 1953 թ. Ստալինի մահը և նրա կամակատար Բերիայի կալանավորումը խորհրդային հասարակության կյանքում լուրջ փոփոխությունների սկիզբ դրեցին: Երկրում իշխանությունը անցավ Նիկիտա Խրուշչովի (1953–1964 թթ.) ձեռքը:

1954–1955 թթ. ընթացքում ձեռնարկվեցին միջոց-

ներ հանրապետության ներքին գործերի և պետական անվտանգության մարմինները վարկաբեկված աշխատողներից մաքրելու, 1937–1938 թթ. անհիմն դատապարտվածներին ազատելու, 1949 թ. արտաքսվածներին իրենց հայրենի վայրեր վերադարձնելու ուղղությամբ:

1956 թ. ինչպես ամբողջ երկրում, այնպես էլ Հայաստանում քննարկվեցին ԽՄԿԿ 20–րդ համագումարի որոշումները, որի ընթացքում ընթերցվում էր համագումարում Խրուշչովի հնչեցրած, այսպես կոչված, «փակ զեկուցումը»: Ելույթ ունեցողները առաջ քաշեցին այնպիսի հարցեր, որոնք նախկինում կարող էին բնութագրվել որպես հակախորհրդային ելույթներ: Դրանք վերաբերում էին կոլտնտեսային շինարարության բացթողումներին, ընտրական և դատական համակարգի անկատարությանը, ազատ մամուլի բացակայությանը, ազգային սխալ քաղաքականությանը և այլ հարցերի:

Ազգային զարթոնքը: 1960 թ. վերջերին գաղափարական աշխատանքը վատ կազմակերպելու պատրվակով Ս. Թովմասյանն ազատվեց հանրապետության ղեկավարի պաշտոնից և նրա փոխարեն ընտրվեց Յակով Զարոբյանը: Վերջինիս ղեկավարման շրջանում հանրապետությունում տեղի ունեցան զգալի դրական փոփոխություններ:

1965–ին լրանալու էր Հայոց մեծ եղեռնի 50–րդ տարելիցը: Յ. Զարոբյանը 1964 թ. հանձնարարեց մշակել այս տարելիցը նշելու միջոցառումների ծրագիր: Ստացված առաջարկությունների հիման վրա Հայաստանի ղեկավարությունը Մոսկվա է ուղարկում 50–ամյակը նշելու միջոցառումների մասին ծավալուն գրություն՝ թույլտվություն խնդրելով իրականացնել դրանք: Այդտեղ մասնավորապես ասված էր, որ 1915 թվականին՝ Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ, Օսմանյան Թուրքիայի 3 միլիոն հայ բնակչությունը տեղահանվել, հետապնդվել ու ոչնչացվել է: Գրությունում նշված բոլոր առաջարկությունները ժամանակի ընթացքում կյանքի կոչվեցին:

Յակով (Հակոբ) Զարոբյան

1960–ական թվականների սկիզբին Խորհրդային Միությունում կտրուկ սրվեց պայքարը իշխանության համար, Ն. Խրուշչովի հեղինակությունը ընկավ: 1964 թ. հոկտեմբերին նա հեռացվեց կուսակցական և պետական ղեկավարությունից:

Խորհրդային Հայաստանը «լճացման տարիներին»: Երկրի նոր ղեկավար դարձավ Լեոնիդ Բրեժնևը: Նրա կառավարման շրջանը (1964–1982) ԽՍՀՄ պատմության մեջ մտավ «լճացման տարիներ» անունով:

Այս տարիներին երկու անգամ փոխվեց Հայաստանի բարձրագույն ղեկավարությունը: 1966 թ. Յ. Զարոբյանին փոխարինած Անտոն Քոչինյանը հանրապետությունը ղեկավարեց մինչև 1974 թ.: Իսկ նրան փոխարինեց 42–ամյա Կարեն Դեմիրճյանը, որն այդ պաշտոնի համար համարվում էր շատ երիտասարդ:

1977 թ. ընդունվեց ԽՍՀՄ նոր Սահմանադրություն, իսկ մեկ տարի անց՝ ՀԽՍՀ նոր Սահմանադրությունը: Սահմանադրությամբ հռչակված և երաշխավորված խոսքի, մամուլի, ժողովների ազատությունը, ազգերի ինքնորոշումն իրականացնելը գործնականում անհնար էր:

1960–ական թթ. Խորհրդային Միությունում ի հայտ եկան անձնավորություններ, որոնք չէին ցանկանում հաշտվել խորհրդային մարդու համար սահմանված վարքագծի կանոններին: Նրանց անվանեցին **այլախոհ** (դիսիդենտ), իսկ մարդու իրավունքների համար պայքարողներին՝ **իրավապաշտպան**:

Հայաստանում այլախոհությունը հիմնականում կրում էր ազգային բնույթ և ձևավորվել էր 1960–ական թվականների սկզբին: Ազգային զարթոնքի և կորցրած պատմական հայրենիքի՝ Արևմտյան Հայաստանի չմարող գաղափարի հողի վրա ստեղծվեցին առաջին այլախոհական կազմակերպությունները, որոնք առաջ քաշեցին նաև ազատության և անկախության կարգախոսներ:

1960–1970–ական թթ. Հայաստանում ստեղծվում ու գործում են մի շարք գաղտնի (ընդհատակյա)

կազմակերպություններ, որոնք միտված էին արծարծելու հայկական տարածքների՝ Լեռնային Ղարաբաղի և Նախիջևանի՝ Հայաստանին վերամիավորման հարցը, պայքարելու ազգային լեզվի և մշակույթի անաղարտության համար, կերտելու «անկախ Հայաստան»: Դրանց հիմնադիրներից և ակտիվ գործիչներից էին ԽՍՀՄ տարածքում առաջին ընդհատակյա կուսակցության՝ Ազգային միացյալ կուսակցության հիմնադիր Հայկազ Խաչատրյանը, Ստեփան Զատիկյանը, Պարույր Հայրիկյանը, Աշոտ Նավասարդյանը և ուրիշներ: Նրանք, սակայն, արագորեն բացահայտվում էին խորհրդային պետանվտանգության մարմինների կողմից:

1960–1980–ական թթ. շարունակում էին պահպանվել խորհրդային հասարակության բազմաթիվ ձևախեղումներ: Խորհրդային պետությունը, որի մի մասն էր Հայաստանը, կարիք ուներ կյանքի բոլոր ոլորտների որակական փոփոխությունների:

Հարցեր և առաջադրանքներ

1. Վերհիշե՛ք, թե երբ էին Հայաստանում կիրառվել զանգվածային բռնաճնշումներ: Ե՞րբ է տեղի ունեցել Անդրկովկասի հանրապետություններից հայ բնակչության զանգվածային աքսորը: Որքա՞ն հայ արտաքսվեց և ո՞րն էր նրանց հիմնական աքսորավայրը: Ձեր կարծիքով ինչո՞ւ ԽՍՀՄ–ի իշխանությունները գործադրեցին բռնաճնշումներ:
2. ԽՍՀՄ–ի պատմության ո՞ր ժամանակահատվածն է հայտնի «ձնհալի տարիներ» անվամբ. ինչո՞ւ: Ներկայացրե՛ք Հայաստանի ներքաղաքական կյանքում «ձնհալի» տարիներին տեղի ունեցած իրադարձությունները: Ձեր կարծիքով դրանցից ո՞րն էր կարևոր. ինչո՞ւ:
3. Ո՞վ էր Յ. Զարոբյանը. ի՞նչ գիտեք նրա մասին: Գնահատե՛ք նրա գործունեությունը:
4. Ո՞վ փոխարինեց Ն. Խրուշչովին և ի՞նչ անունով է հայտնի նրա կառավարման ժամանակաշրջանը:
5. Ե՞րբ և ովքե՞ր ստանձնեցին Հայաստանի բարձրագույն ղեկավարությունը Յա. Զարոբյանից հետո: Ե՞րբ ընդունվեց ՀԽՍՀ նոր Սահմանադրությունը:
6. Ո՞րն էր ԽՍՀՄ տարածքում ստեղծված առաջին ընդհատակյա կուսակցությունը: Ի՞նչ նպատակներ էին հետապնդում Հայաստանում ստեղծված ընդհատակյա կազմակերպությունները: Ձեր կարծիքով այդ նպատակներից ո՞րն էր առաջնահերթ. ինչո՞ւ:

ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՆՈՒՆՆԵՐ, ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Զանգվածային աքսոր, «Ձնհալ», «լճացման տարիներ», Յակով Զարոբյան, Հայկազ Խաչատրյան, Անդրոն Քոչինյան, Կարեն Դեմիրճյան, այլախոհ, իրավապաշտպան, Ազգային միացյալ կուսակցություն:

ԳԼՈՒԽ III

ԱՐՑԱԽՅԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

§ 1. ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄՆ ՈՒ ԱՐՑԱԽՅԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՍԿԻԶԲԸ

Վերակառուցման նպատակները: 1980–ական թվականների սկզբին խորհրդային համակարգը սպառեց զարգացման հնարավորությունները: Խորհրդային Միությունն իր հումքային հսկայական պաշարներով, աշխատասեր և ինքնազոհ բնակչությամբ սկսում էր մեծ չափերով հետ մնալ Արևմուտքից: Օրեցօր ակնհայտ էր դառնում, որ բարեփոխումների համար անհրաժեշտ է թարմացնել երկրի ղեկավարությունը:

Վերակառուցումը հռչակվեց ԽՄԿԿ կենտկոմի նորընտիր գլխավոր քարտուղար Միխայիլ Գորբաչովի կողմից, որը երկրի ղեկավարը դարձավ 1985 թ. մարտին: Գորբաչովը և իր համախոհները հասկանում էին, որ երկիրը մտել է փակուղի: Բայց ինչպես դրանից դուրս գալ, պարզ չէր: Ընտրվեց սոցիալիզմը կատարելագործելու ճանապարհը: «Վերակառուցում», «նոր մտածողություն» և «արագացում» բառերը դարձան Գորբաչովի ընտրած բարեփոխումների ռազմավարության հիմքը:

Առաջադրվեց նոր հայեցակարգ՝ ստեղծել սոցիալիզմի ժողովրդավարական տարաձև, այսպես կոչված՝ «սոցիալիզմ՝ մարդկային դեմքով»: 1988 թ. հռչակվեց իրավական պետության ստեղծման գործընթացը: Թեպետ պետությունը պետք է մնար «սոցիալիստական», սակայն հիմնվելու էր օրենքի և համամարդկային իրավունքի վրա:

Արցախյան շարժման սկզբնավորումը: Գորբաչովյան վերակառուցման քաղաքականության շնորհիվ արցախցիները ավելի համարձակ սկսեցին զբաղվել իրենց երկրամասի՝ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի ճակատագրով: 1988 թ. փետր-

վարի 20–ին հրավիրվեց ԼՂԻՄ մարզխորհրդի արտահերթ նստաշրջան: Կայացվեց պատմական որոշում. «Ընդառաջելով ԼՂԻՄ–ի աշխատավորների ցանկություններին՝ խնդրել Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհրդին՝ խոր ըմբռնման զգացում դրսևորել Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության իղձերին և ԼՂԻՄ–ը Ադրբեջանական ԽՍՀ–ի կազմից Հայկական ԽՍՀ–ի կազմ հանձնելու հարցի դրական լուծմանը»:

Մարզխորհրդի շենքը շրջապատած հազարավոր արցախցիներ ցնծությամբ ընդունեցին այդ որոշումը: Սկսվում է Արցախի հայ բնակչության ծանր ու երկարատև պայքարը ազատության համար:

ՀԽՍՀ և ԽՍՀՄ ղեկավարության դիրքորոշումը: Սումգաիթյան ողբերգությունը: 1988 թ. փետրվարի կեսերից Երևանում ամեն օր հանրահավաքներ էին տեղի ունենում: Փետրվարի 20–ին Թատերական (այժմ՝ Ազատության) հրապարակում հավաքված հազարավոր ցուցարարներ հռչակեցին «Ղարաբաղ. այսօր կամ երբեք» կարգախոսը: Փետրվարի 22–ին Ղարաբաղյան շարժումը ղեկավարելու, անհրաժեշտ հունի մեջ դնելու համար ստեղծվում է «Ղարաբաղ» կոմիտե: Փետրվարի 25–26–ին Երևանում ցուցարարների թիվը հասնում է մի քանի հարյուր հազարի: Այդպիսի բան չէր եղել ԽՍՀՄ պատմության ողջ ընթացքում:

Լեռնային Ղարաբաղում և Հայաստանում սկսված զանգվածային ելույթները անհանգստացրին ինչպես կենտրոնական, այնպես էլ հանրապետության կոմունիստական ղեկավարությանը: Խորհրդային Միության ղեկավար Մ. Գորբաչովը փետրվարի 26–ին ուղերձ է հղում «Ադրբեջանի և Հայաստանի աշխատավորներին, ժողովուրդներին», որով կոչ է անում «ժողովուրդների իսկական եղբայրության և միասնության», իսկ հարցի լուծումը տեսնում է Ադրբեջանում ու Հայաստանում կուտակված տնտեսական, սոցիալական, բնապահպանական և այլ հիմնահարցերի լուծման մեջ:

Այդ ծանր և անկանխատեսելի օրերին Սումգաիթ

1988 թ. փետրվարյան ցույց Երևանում

քաղաքում 1988 թ. փետրվարի 27–29–ին միլիցիայի և տեղական իշխանությունների լրիվ անգործության պայմաններում տեղի ունեցան հայ բնակչության կոտորածներ (ջարդեր)՝ թուրքական վայրագության զազրելի կանոններով.... Պաշտոնական տվյալներով զոհվել է 27 հայ: Հազարավոր մարդիկ դարձան փախստականներ: Այդ ջարդերը կազմակերպվել էին Արցախի հիմնախնդրի լուծումը կանխելու նպատակով: Հայերը երեք օր թողնվել էին լրիվ անպաշտպան: Սումգայիթի բռնարարքը գնահատվում է որպես ցեղասպանություն:

1988 թ. դեկտեմբերի 7–ի երկրաշարժը: 1988 թ. դեկտեմբերի 7–ին Հայաստանի հյուսիսային շրջաններում տեղի ունեցավ ահեղ երկրաշարժ. մի քանի ակնթարթում տարերքը խեղեց հարյուր հազար ճակատագրերը: Պատմության մեջ դա մտավ «Սպիտակի երկրաշարժ» անունով:

Երկրի երեսից գրեթե լրիվ ջնջվեց Սպիտակ քաղաքը: Կործանվեց հանրապետության երկրորդ քաղաքի՝ Լենինականի (Գյումրի) մեծ մասը, ավերվեց Կիրովականի (Վանաձոր) շինությունների համարյա կեսը: Տուժեցին հարյուրավոր գյուղեր: Մարդկային կորուստները կազմեցին ավելի քան 25 հազար մարդ:

Հայաստանի ահավոր դժբախտության մասին արագ տեղեկացավ ամբողջ աշխարհը: Փրկարարական աշխատանքները իրականացնելու համար ստեղծվեց պետական հանձնաժողով՝ Խորհրդային Միության Նախարարների խորհրդի նախագահ (վարչապետ) Նիկոլայ Ռիժկովի գլխավորությամբ: Մեծ աշխատանք կատարվեց աղետի գոտուց մարդկանց տարհանելու ուղղությամբ:

Աղետից հետո Հայաստանը ամիսներով հումանիտար ուղիղ օգնություն էր ստանում Շվեյցարիայից, Մեծ Բրիտանիայից, Ֆրանսիայից, Իսրայելից, գերմանական երկու պետություններից, ԱՄՆ–ից և այլ երկրներից: Աշխարհը դարձավ մարդկային հիանալի համերաշխության ու վեհանձնության վկան:

Այդ դառնագին օրերին Հայաստանում առանձ-

նակի ուժով զգացին աշխարհի բոլոր անկյուններում ապրող իրենց հայրենակիցների աջակցությունը: Ողբերգությունը համախմբեց ամբողջ աշխարհի հայությանը: Հայտնի երգիչ Շառլ Ազնավուրը ժամանելով Հայաստան և լինելով աղետի գոտում, ձգտում էր իր ներկայությամբ, նաև իր համահեղինակած ու բազմաթիվ լեզուներով հեռաստվճված՝ աշխարհահռչակ «Քեզ համար, Հայաստան» խմբերգով թեթևացնել ժողովրդի ցավը:

Միութենական կառավարության հատուկ որոշմամբ՝ երկրաշարժից տուժած շրջանների տնտեսության վերականգնման համար նախատեսվել էր երկու տարի:

Հարցեր և առաջադրանքներ

1. Հիմնավորե՛ք վերակառուցման քաղաքականության անհրաժեշտությունը: Ինչ նպատակներ էր հետապնդում վերակառուցումը: Ո՞վ և ե՞րբ ձեռնամուխ եղավ վերակառուցման իրականացմանը:
2. Ինչը նպաստեց Արցախյան շարժման սկզբնավորմանը: Հիմնական գծերով ներկայացրե՛ք Արցախյան շարժման էությունը և ընթացքը: Ինչ գիտեք Սումգաիթյան ողբերգության և Սպիտակի երկրաշարժի մասին. ինչ հետևանքներ դրանք ունեցան:
3. Քարտեզի վրա ցո՛ւյց տվեք աղետալի երկրաշարժից տուժած խոշոր բնակավայրերը և Հայաստանին մեծ օգնություն ցուցաբերած երկրները: Ինչ գիտեք Շ. Ազնավուրի մասին:

ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՆՈՒՆՆԵՐ, ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Վերակառուցում», «նոր մտածողություն», «արագացում», «սոցիալիզմ՝ մարդկային դեմքով», «Ղարաբաղ. այսօր կամ երբեք», «Ղարաբաղ» կոմիտե, Սումգաիթյան ողբերգություն, «Սպիտակի երկրաշարժ»:

§ 2. ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՇԱՐԺՄԱՆ ՎԵՐԵԼՔՆ ՈՒ ՋԻՆՎԱԾ ՊԱՅՔԱՐԻ ՍԿԻԶԲԸ

Համազգային շարժման ծավալումը: Հայաստանում արցախյան շարժումը օրեցօր իր հորձանուտն էր ներառում ժողովրդական ամենալայն զանգվածներ: Խորհրդային Հայաստանի բնակչությունը հանրապետության կոմունիստական ղեկավարությունից պահանջում էր կանգնել ազգային շահերի պաշտպանության դիրքերում:

Շարժման վերելքի փուլում՝ 1988 թ. մայիսին, Կրեմլի միջնորդությամբ փոխվեցին Հայկական ԽՍՀ–ի և Ադրբեջանական ԽՍՀ–ի ղեկավարները: Խորհրդային Հայաստանում Կարեն Դեմիրճյանին փոխարինեց Սուրեն Հարությունյանը:

1988 թ. հունիսի 15–ին ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նստաշրջանը քննարկելով ԼՂԻՄ–ի մարզխորհրդի որոշումը, համաձայնություն տվեց ԼՂԻՄ–ը Հայկական ԽՍՀ–ի կազմի մեջ մտցնելուն: Տրամագծորեն հակադիր որոշում կայացրեց Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհուրդը:

1988 թ. հուլիսի 18–ին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության նիստը քննարկեց Լեռնային Ղարաբաղի խնդիրը: Եղան բազմաթիվ ելույթներ: Հատկապես վճռական էր **Հենրիխ Պողոսյանի** ելույթը: Նա հայտարարեց, որ **«Լեռնային Ղարաբաղի ճակատագիրը կարող են լուծել միայն Լեռնային Ղարաբաղի բնակիչները»:** Արցախի ներկայացուցիչը անվարան պնդեց, որ «ստեղծված իրավիճակի միակ ճշմարիտ լուծումը կարող է լինել Լեռնային Ղարաբաղի դուրսբերումը Ադրբեջանի կազմից»: ԽՍՀՄ ԳԽ նախագահությունը, սակայն, անհնարին համարեց Հայկական և Ադրբեջանական ԽՍՀ–ների սահմանների փոփոխումը:

Այդ օրերին Հայաստանում ծավալված համաժողովրդական շարժման ալիքի վրա ստեղծվեց **«Հայոց համազգային շարժում»** կազմակերպությունը: Այն իր հիմնական նպատակը համարեց Լեռնային Ղարաբաղի միացումը Հայաստանին: ՀԽՍՀ–ում և ԼՂԻՄ–ում

սկսեցին ծավալվել ողջ ԽՍՀՄ–ի համար աննախադեպ գործադուլներ՝ Մայր հայրենիքի հետ Արցախի վերամիավորման ազգային–քաղաքական պահանջով: Փորձելով ճնշել օրեցօր թափ առնող շարժումը՝ խորհրդային ղեկավարությունը 1988 թ. նոյեմբերի 24–ին՝ գիշերվա կեսին, Երևանում հայտարարեց պարետային ժամ, խորհրդային զորքը մտավ Երևան: Հանրապետության 16 շրջաններում հատուկ դրություն մտցվեց դեկտեմբերի 5–ից: Հանրապետության բնակչությունը խիստ դժգոհ ու վրդովված էր այդ որոշումներից և պահանջում էր պարետային ժամը վերացնել թե՛ Հայաստանում, թե՛ Արցախում: Սակայն իրադրությունը փոխվեց 1988 թ. դեկտեմբերի 7–ին տեղի ունեցած Սպիտակի երկրաշարժի հետևանքով:

Երկրաշարժի կապակցությամբ դեկտեմբերի 9–ին Երևան ժամանեց Մ. Գորբաչովը: Հաջորդ օրը ձերբակալվեցին «Ղարաբաղ» կոմիտեի մի շարք անդամներ, որոշ ժամանակ անց՝ մնացածները: 1989 թ. հունվարի 9–ին Լևոն Տեր–Պետրոսյանը, Վազգեն Մանուկյանը, Ռաֆայել Ղազարյանը, Վանո Սիրադեղյանը, Աշոտ Մանուչարյանը և մյուսները տեղափոխվեցին Մոսկվայի բանտեր:

1989 թ. հունվարի 11–ին ԽՍՀՄ ԳԽ նախագահությունը Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում կառավարման հատուկ ձև սահմանեց: Ստեղծվեց հատուկ կառավարման կոմիտե (նախագահ՝ Արկադի Վոլսկի), որին վերապահվում էր տեղական պետական մարմինների ղեկավարումը: Սակայն Արցախի հայ բնակչությունը խիստ դժգոհ էր հատուկ կառավարման կոմիտեից:

1989 թ. մայիսի 25–ին Մոսկվայում իր աշխատանքները սկսեց ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների առաջին համագումարը: Հայաստանի բնակչության զանգվածային բողոքները ստիպեցին իշխանություններին թույլատրել ազատ հանրահավաքներն ու ցույցերը: Նոր թափով վերսկսված ժողովրդական շարժման պահանջով մայիսի վերջերին բանտերից ազատվեցին «Ղարաբաղ» կոմիտեի անդամները:

Այդ օրերին չէր դադարում պայքարը նաև Արցա-

խում. երկու ամսից ավելի գործադուլի մեջ էր մարզի ողջ աշխատավոր բնակչությունը, իսկ չարտոնված հանրահավաքները տեղի էին ունենում ամեն օր: Շրջափակման և գործադուլի մեջ մաքառող Արցախը հայտնվել էր ճգնաժամի շեմին: Այդ պայմաններում նպատակահարմար ստեղծել Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհուրդ, որը գլխավորեց արցախցիների ազատագրական պայքարը:

1989 թ. դեկտեմբերի 1–ին Երևանում տեղի ունեցած՝ Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդի և Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհրդի համատեղ նիստը պատմական որոշում կայացրեց Հայկական ԽՍՀ–ի և Լեռնային Ղարաբաղի վերամիավորման մասին: Այդ որոշումը չճանաչվեց և սվիններով ընդունվեց ինչպես Ադրբեջանական ԽՍՀ, այնպես էլ ԽՍՀՄ կենտրոնական իշխանությունների կողմից:

Գնալով ավելի էին սրվում հայ–ադրբեջանական հարաբերությունները, և դրան նպաստում էր Մոսկվայի ոչ սկզբունքային, ենթակայական (սուբյեկտիվ) դիրքորոշումը: Ադրբեջանում 1990 թվականը սկսվեց նոր վայրագություններով: Հունվարի 13–20–ը Բաքվում իրականացվեցին հայ բնակչության կոտորած և տեղահանություն, որի ընթացքում Ադրբեջանի «ժողովրդական ճակատը» և իշխանության մարմինները գործում էին համատեղ: Կողոպտված և ծեծ ու ջարդի ենթարկված հազարավոր հայեր լաստանավերով փոխադրվում էին Կրասնովոդսկ (Թուրքմենական ԽՍՀ):

Ինքնապաշտպանական ջոկատների ստեղծումը և Հայաստանի սահմանների պաշտպանությունը: 1990 թ. սկզբին լարված էր վիճակը նաև Հայաստանում: Թատերական հրապարակը դարձել էր կամավորական զինյալ ուժերի կազակերպման, Գերագույն խորհրդի մայիսյան ընտրությունների քարոզչության և Արցախին նյութական, ռազմական օգնության ցուցաբերման կիզակենտրոն: Հունվարի 13–ին տեղի ունեցած հանրահավաքում հայտարարվեց, որ ինքնապաշտպանական ուժերը թե՛ շրջաններում և թե՛ Երևանում բերվել են մարտա-

կան պատրաստության վիճակի: Ինքնապաշտպանական ջոկատները Երասխավանում և սահմանամերձ մյուս հատվածներում Ադրբեջանի հրահրած ընդհարումների ժամանակ արժանի հակահարված հասցրին հակառակորդին:

1990 թ. սեպտեմբեր–հոկտեմբեր ամիսներին Արցախում վիճակը հետզհետե ծանրանում էր: Հայության բողոքի նոր արտահայտություն դարձավ Մոսկվայում սեպտեմբերի 9–ին Զորի Բալայանի հացադուլ սկսելը, որին միացան ՀԽՍՀ գիտությունների ակադեմիայի նախագահ Վիկտոր Համբարձումյանը, ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Սոս Սարգսյանը և Արցախից մի քանի պատգամավորներ: Օրեցօր հացադուլավորների առողջական վիճակը ծանրանում էր, ուստիև սեպտեմբերի 29–ին, Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա–ի խնդրանքով բողոքի այս ծայրահեղ ձևը դադարեցվեց:

Ազատագրական պայքարի զինված փուլը: 1991 թ. արցախահայության համար ավելի ծանր տարի էր: Շրջափակման պատճառով հիմնովին խաթարվել էր մարզի տնտեսական գործունեությունը: Օգտվելով այս վիճակից՝ Մոսկվան և Բաքուն ավելի էին ուժեղացնում ճնշումներն ու բռնարարքները:

Հայաստանում և Արցախում խիստ մտահոգված էին Հյուսիսային Արցախի ճակատագրով: Դատարկվել էին Ադրբեջանական ԽՍՀ Գետաբեկի, Թովուզի, Շամխորի և Դաշքեսանի շրջանների հայկական գյուղերը: Հերթը հասել էր Շահումյանի և Խանլարի շրջաններին: Հյուսիսային և Հարավային Արցախի հայաթափության համար 1991թ. Մոսկվայում մշակվեց «Կոլցո» («Օղակ») ռազմական գործողության ծրագիրը, որը սկսեց իրականացվել ապրիլին: Ադրբեջանի հատուկ ջոկատայիններըը (օմօնականները) 1991 թ. մարտի 25–ից սկսած անընդհատ գնդակոծում էին Գետաշենը: Այստեղ վիճակն ավելի ծանրացավ, երբ ապրիլի կեսերին «Օղակ» գործողության իրականացմանը միացան խորհրդային զորամասերը, որոնք ապրիլի 18–22–ին զենքի տարբեր տեսակներից սկսեցին գնդակոծել

Գետաշենը, Մարտունաշենը և Շահումյանի շրջանի մի շարք գյուղեր: Բազմաթիվ զրահամեքենաներ շրջապատել և անընդմեջ հրետակոծում էին Գետաշեն գյուղը: Գյուղ ներխուժած զինվորականներին ուղեկցում էին ադրբեջանցի օմօնականներ, որոնք դաժան հաշվեհարդար էին տեսնում գյուղի հայ բնակչության հետ: Նրանց դեմ գետաշենցիների հերոսական պայքարը գլխավորում էր Թաթուլ Կրպեյանը: Դրությունն արդեն օրհասական էր դառնում, անհավասար մարտերում զոհվել էին Թաթուլ Կրպեյանը (հետմահու՝ Հայաստանի ազգային հերոս), Արթուր Կարապետյանը, Մարտունաշենի պաշտպանության ղեկավար Սիմոն Աչիքգյոզյանը և ուրիշներ:

1991 թ. մայիսի 7–ին Գետաշենի շուրջ երեք հազար կին, երեխա, ծեր ռազմական ուղղաթիռներով տեղափոխվում են Ստեփանակերտ, այնտեղից էլ՝ Հայաստան, իսկ 700 տղամարդկանց ավտոբուսով տանում են Իջևանի մատույցներ: Գյուղի գրեթե բոլոր ինքնապաշտպանները տեղափոխվում են Շահումյանի շրջան: Ընդհանուր առմամբ, բռնի տեղահանվել են միայն վերոնշյալ բոլոր շրջանների 24 գյուղերի բազմահազար հայ բնակիչներ:

Փաստորեն, մայիսյան օրերին Ադրբեջանի կողմից Արցախի հայ բնակչությանը պարտադրվեց պատերազմ: 1991 թ. հուլիսին Ստեփանակերտում ստեղծվեցին ինքնապաշտպանության ընդհատակյա կոմիտե և ինքնապաշտպանության ուժերի շտաբ: Մարզի բոլոր շրջաններում կազմակերպվեցին զինված ջոկատներ:

1991 թ. օգոստոսի 30–ին Ադրբեջանի Գերագույն խորհուրդը հռչակագիր ընդունեց «անկախության վերականգման մասին», երկիրը հռչակեց 1918–1920 թթ. Ադրբեջանական Ժողովրդավարական Հանրապետության իրավահաջորդ՝ վերջինիս սահմաններում: Դա նշանակում էր, որ նա դուրս է գալիս ԽՍՀՄ կազմից, և որ նրա կազմում չէր կարող լինել Լեռնային Ղարաբաղը: Օգտագործելով հարմար պահը՝ ժողովրդական պատգամավորների Լեռնային Ղարաբաղի մարզային և Շահումյանի շրջանային խոր-

հուրդների համատեղ նստաշրջանը **1991 թ. սեպտեմբերի 2–ին** Ստեփանակերտում կայացրեց «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակման և նրա պետական իշխանության ու կառավարման ժամանակավոր մարմինների ձևավորման վերաբերյալ հռչակագիր ընդունելու մասին» պատմական որոշումը: Դրանով իսկ հիմնվեց անկախ հայկական պետություն՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ներկայացրե՛ք և մեկնաբանե՛ք Հայաստանում ծավալված համաժողովրդական շարժման կարևոր իրադարձությունները և դրանց հետևանքները:
2. Կազմե՛ք Հայաստանում ծավալված համաժողովրդական շարժման և ազատագրական պայքարի զինված փուլի կարևոր իրադարձությունների ժամանակագրական աղյուսակ:

ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՆՈՒՆՆԵՐ, ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Հայոց համազգային շարժում», Հատուկ կառավարման կոմիտե, Լեռնային Ղարաբաղի ազգային խորհուրդ, հացադուլ, «Կոլցո» («Օղակ») ծրագիր, հատուկ ջոկատայիններ (օմոնականներ), «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակման և նրա պետական իշխանության ու կառավարման ժամանակավոր մարմինների ձևավորման վերաբերյալ հռչակագիր ընդունելու մասին» որոշում:

§ 3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

ՀԽՍՀ Գերագույն խորհրդի այլընտրանքային ընտրությունները: 1990 թ. գարնանը ՀԽՍՀ Գերագույն խորհրդի պատգամավորների նախընտրական լայն արշավ էր ընթանում: Հայկոմկուսը, ՀՀՇ–ն և այլ քաղաքական ուժեր 260 ընտրատարածքներում առաջադրել էին իրենց թեկնածուներին, ըստ որում՝ ՀԽՍՀ Գերագույն խորհրդի ընտրությունների ընտրատարածքներ էին ստեղծվել նաև ԼՂԻՄ–ի տարածքում: ՀՀՇ–ականները ընտրել էին սահմանադրական ճանապարհով իշխանության հասնելու մար-

տավարություն: Սակայն իրադրությունը հանրապետությունում մնում էր լարված: Կոմկուսը կորցրել էր ժողովրդի վստահությունը, իսկ ՀՀՇ–ին հեղինակություն էին բերում Արցախի ազատագրության և հանրապետության անկախության գաղափարները:

1990 թ. ապրիլի 6–ին տեղի ունեցավ Հայաստանի ղեկավարության հերթական փոփոխություն. Ս. Հարությունյանին փոխարինեց Վլադիմիր Մովսիսյանը:

Մայիսի 20–ին կայացան ՀԽՍՀ Գերագույն խորհրդի ընտրությունները, որը Խորհրդային Հայաստանի պատմության մեջ առաջին ժողովրդավարական և այլընտրանքային ընտրություններն էին: Ընտրողների ձայները համարյա հավասարապես բաժանվեցին Հայկոմկուսի և ՀՀՇ–ի թեկնածուների միջև:

Հայաստանի նորընտիր Գերագույն խորհրդի նստաշրջանը սկսվեց 1990 թ. հուլիսի 20–ին: Օգոստոսի 4–ին ՀՀՇ վարչության նախագահ Լևոն Տեր–Պետրոսյանն ընտրվեց Հայաստանի Գերագույն խորհրդի նախագահ, մի քանի օր անց Նախարարների խորհրդի նախագահ ընտրվեց Վազգեն Մանուկյանը: Փաստորեն դրանով վերջ դրվեց կոմունիստական կուսակցության մենիշխանության յոթանասունամյա շրջանին:

Հայաստանի անկախության մասին հռչակագիրը: Օգոստոսի 23–ին ԳԽ–ն երկարատև ու հանգամանալից քննարկումից հետո ընդունեց «Հռչակագիր Հայաստանի անկախության մասին» պատմական փաստաթուղթը: Հռչակվում էր անկախ պետականության հաստատման գործընթացի սկիզբը, Հայաստանի կարգավիճակը Խորհրդային Միությունում՝ մինչև լիակատար անկախության ձեռքբերումը: Հռչակագիրը կարևոր իրավական փաստաթուղթ էր դեպի անկախություն տանող ճանապարհին: Այն նախանշում էր Հայաստանի քաղաքական, տնտեսական, մշակութային զարգացման ուղիները և բաղկացած էր 12 հոդվածից:

Հռչակագրի քաղաքական բաժնում նշվում էր, որ ՀԽՍՀ–ն վերանվանվում է Հայաստանի Հանրապետություն: Այսպիսով՝ Հայաստանի պատմության

մեջ սկսվում էր, այսպես կոչված, երրորդ հանրապետության շրջանը:

Հռչակագրում հատուկ հոդվածով ընդունվում էր հանրապետության օրենքների գերակայությունը ԽՍՀՄ օրենքների նկատմամբ: Եթե ԽՍՀՄ օրենքը հաստատված չէր ՀՀ Գերագույն խորհրդի կողմից, ապա հանրապետությունում չէր կարող գործել:

Կարևոր էր նաև, որ հռչակագիրը հաստատում էր ՀՀ վճռականությունը Արցախն իր տարածքի անբաժանելի մասը ճանաչելու վերաբերյալ:

ԽՍՀՄ–ի փլուզումը, ԱՊՀ–ի ստեղծումը: 1991թ. գարնանը ԽՍՀՄ–ը հասել էր փլուզման եզրին: Երկրի ղեկավարությունը բոլոր ջանքերը գործադրում էր Միությունը փրկելու համար: Այդ նպատակով որոշվեց մարտի 17–ին անցկացնել հանրաքվե բարեփոխված ԽՍՀՄ–ի պահպանման համար՝ քաղաքացիների կամքի ազատ արտահայտության հիման վրա: Հանրաքվեն անտեսվեց Մերձբալթյան հանրապետությունների՝ Լիտվայի, Լատվիայի և Էստոնիայի, ինչպես նաև Վրաստանի, Մոլդովայի և Հայաստանի կողմից: Թեև մնացած 9 հանրապետություններում բնակչության մեծամասնությունը կողմ քվեարկեց ԽՍՀՄ–ի պահպանմանը, սակայն երկիրը հաստատուն քայլերով գնում էր դեպի փլուզում:

Հենվելով հանրաքվեի արդյունքների վրա՝ ԽՍՀՄ նախագահ ընտրված Մ. Գորբաչովը 1991թ. ապրիլին սկսեց բանակցային գործընթաց դաշնային նոր պայմանագիր մշակելու նպատակով: Պայմանագրի նախագծում հանրապետությունները անվանվում էին ինքնիշխան պետություններ, իսկ Միությունը՝ Ինքնիշխան Պետությունների Միություն: Պայմանագրի հանդիսավոր ստորագրումը նշանակվեց **օգոստոսի 20–ին,** երբ Գորբաչովը վերադառնալու էր արձակուրդից: Նրա՝ արձակուրդ մեկնելուց հետո երկրի մի խումբ պահպանողական ղեկավարներ ձեռնամուխ եղան հեղաշրջման նախապատրաստմանը: Նպատակն էր՝ կասեցնել բարեփոխումները, պահպանել կենտրոնի և ԽՄԿԿ–ի իշխանությունը:

1991 թ. օգոստոսի 19–ին առավոտյան հայտարարվեց, որ Մ. Գորբաչովը առողջության պատճառով չի կարող կատարել երկրի նախագահի պարտականությունները: Երկրի կառավարման համար հիմնվեց ***Արտակարգ դրության պետական կոմիտե*** (ԱԴՊԿ): Գորբաչովին մեկուսացրին Ղրիմի հանգստավայրում: Օգոստոսի 19–ի առավոտյան զորքը մտավ Մոսկվա:

Հեղաշրջման կազմակերպիչները չհամարձակվեցին ձերբակալել նախկին ՌԽԴՍՀ–ի հիման վրա ստեղծված ***Ռուսաստանի Դաշնության*** նորընտիր նախագահ ***Բ. Ելցինին:*** Նա ԱԴՊԿ ելույթը համարեց «հակասահմանադրական հեղաշրջում» և Ռուսաստանի տարածքում անօրինական հայտարարեց նրա բոլոր որոշումները և կարգադրությունները:

ԱԴՊԿ և Ռուսաստանի իշխանությունների դիմակայությունը լուծվեց հօգուտ ժողովրդավարական ուժերի: Օգոստոսի 21–ին խռովարարները արդեն ձերբակալվել էին և իշխանությունը փաստորեն անցավ Ելցինին: Ապստամբությունը արագացրեց ԽՍՀՄ–ի փլուզումը: Իրենց անկախության մասին հայտարարեցին այն հանրապետությունները, որոնք դեռ չէին հասցրել դա անել:

Դեկտեմբերի 8–ին Բորիս Ելցինը, Ուկրաինայի նախագահ Լեոնիդ Կրավչուկը և Բելոռուսի Գերագույն խորհրդի նախագահ Ստանիսլավ Շուշկևիչը, տեղյակ չպահելով Մ. Գորբաչովին, հավաքվեցին Բելոռուսի Բելովեժյան արգելոցում: Նրանք հայտարարեցին ԽՍՀՄ–ի լուծարման ու ***Անկախ Պետությունների Համագործակցության (ԱՊՀ)*** ստեղծման մասին:

1991 թ. դեկտեմբերի 21–ին Ղազախստանի մայրաքաղաք Ալմա –Աթայում հավաքված նախկին 11 խորհրդային հանրապետությունները հայտարարեցին ԱՊՀ կազմելու մասին:

Այսպիսով՝ խաղաղ ճանապարհով անհետացավ բոլշևիկների ստեղծած «կոմունիստական» տերությունը՝ ԽՍՀՄ–ը: Միխայիլ Գորբաչովը դեկտեմբերի 25–ին կամավոր վայր դրեց այլևս գոյություն չունեցող ԽՍՀՄ–ի նախագահի լիազորությունները:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ո՞վ փոխարինեց Ս. Հարությունյանին: Երբ կայացան ՀԽՍՀ գերագույն խորհրդի ընտրությունները: Ինչ ավարտ ունեցան և ինչով նշանավորվեցին այդ ընտրությունները: Երբ բացվեց Հայաստանի նորընտիր Գերագույն խորհրդի նստաշրջանը և ով ընտրվեց ԳԽ–ի նախագահ:
2. Երբ և ում կողմից է ընդունվել «Հռչակագիր Հայաստանի անկախության մասին» փաստաթուղթը: Ներկայացրեք այդ փաստաթղթի հիմնական բովանդակությունը: Ցույց տվեք Հռչակագրի պատմական նշանակությունը:
3. Ինչ քայլեր ձեռնարկեց ԽՍՀՄ ղեկավարությունը երկիրը փրկելու նպատակով: Ներկայացրեք օգոստոսյան խռովության հետևանքները: Ձեր կարծիքով ինչու՞ պարտվեցին պահպանողական ուժերը: Վերհանեք ԽՍՀՄ–ի փլուզման գլխավոր պատճառները: Երբ և ինչու՞ ստեղծվեց ԱՊՀ–ն:

ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՆՈՒՆՆԵՐ, ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Հռչակագիր Հայաստանի անկախության մասին», Արտակարգ դրության պետական կոմիտե, հանրաքվե, Բ. Ելցին, ԱՊՀ:

ԳԼՈՒԽ IV

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔԻ ՄՇԱԿՈՒՅԹԸ 1945–1991 ԹԹ.

§ 1. ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ

Կրթական համակարգը: Հետպատերազմյան տարիներին Հայաստանում արագ զարգանում էր դպրոցական ցանցը: Կտրուկ աճում էր նաև աշակերտների թվաքանակը, որը կրճատվել էր պատերազմի տարիներին: Հաջողությամբ շարունակվեց անցումը համընդհանուր պարտադիր յոթնամյա կրթության, որը վերջնականապես իրագործվեց 1948–49 ուսումնական տարում: 1966–1967 ուստարում սկսվեց անցումը ընդհանուր միջնակարգ կրթության՝ 10–ամյա ուսուցմամբ: 1985–1986 ուստարում հանրապետությունում գործում էին 1479 հանրակրթական դպրոց՝ ավելի քան 600 հազար աշակերտներով:

Սկսեց ընդլայնվել պրոֆտեխնիկական ուսումնարանների և միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունների ցանցը:

Ընդլայնվեց բարձրագույն կրթության համակարգը: Հանրապետության բուհերի ուսանողների թիվը սկսեց անշեղորեն աճել: 1985–1986 ուստարում կար մոտ 55 հազար ուսանող:

Հետպատերազմյան տարիներին հայկական սփյուռքում գործում էին 2 տիպի դպրոցներ՝ ամենօրյա և մեկօրյա: Մեկօրյա դպրոցների լայն ցանց գոյություն ունի ԱՄՆ–ում, Ֆրանսիայում, Մեծ Բրիտանիայում և Ավստրալիայում:

Թուրքիայում, Իրանում և Սիրիայում հազարավոր հայ երեխաներ ընդգրկված են հայկական ամենօրյա դպրոցներում: Սփյուռքահայ կրթական կյանքի կենտրոնը Լիբանանն է: Այդ տարիներին մեծ համբավ ուներ Կիպրոսի Մելգոնյան (Մելքոնյան) կրթական հաստատությունը, որը, միջնակարգի ծրագրից բացի, երկամյա դասընթացով պատրաստում էր ուսուցիչներ, լրագրողներ ու այլ մասնա-

գետներ: Հայապահպանության լավագույն կենտրոններ էին Եգիպտոսի Նուպարյան և Պողոսյան վարժարանները, Երուսաղեմի Սրբոց թարգմանչաց վարժարանը: Բուենոս Այրեսում (Արգենտինա) հայ պատանիներն ու աղջիկները կրթություն են ստանում մի քանի միջնակարգ դպրոցներում և նախակրթարաններում:

ԱՄՆ–ում հայկական դպրոցաշինությունը ընդամենը 50–ամյա պատմություն ունի: 1982 թ. Լոս Անջելեսում գործել է 8 ամենօրյա դպրոց: Դեթրոյթի Ալեք Մանուկյան վարժարանն արդեն հասել է միջնակարգի աստիճանի: Մոնրեալում և Տորոնտոյում (Կանադա) գործում են 4–ական ամենօրյա հայկական վարժարաններ:

Գիտության վերելքը: 1943 թ. հիմնադրված Հայկական ԽՍՀ գիտությունների ակադեմիան հետպատերազմյան տարիներին դարձավ երկրի գիտական առաջատար կենտրոններից մեկը: 1947 թվականին Հայաստանի գիտությունների ակադեմիայի նախագահ (պրեզիդենտ) ընտրվեց ականավոր գիտնական, աստղաֆիզիկոս, ակադեմիկոս ***Վիկտոր Համբարձումյանը:***

Ընդլայնվեց գիտահետազոտական ինստիտուտների (հիմնարկների) ցանցը: 1967 թվականին գործում էր 112 գիտահետազոտական հիմնարկ:

Համաշխարհային ճանաչում են գտել աստղաֆիզիկայի բնագավառում Հայաստանում կատարված ուսումնասիրությունները: ***Բյուրականի աստղադիտարանը*** դարձել է աստղաֆիզիկայի գիտահետազոտական խոշոր կենտրոններից մեկը աշխարհում:

Հայաստանում կարևոր հաջողություններ են ձեռք բերվել ֆիզիկայի, ռադիոֆիզիկայի, էլեկտրոնիկայի, նուրբ օրգանական քիմիայի, մաթեմատիկայի բնագավառներում: Ֆիզիկայի ինստիտուտում 1958 թ. սկսվեց կառուցվել և 1967 թ. գործարկվեց ԽՍՀՄ խոշորագույն էլեկտրոնային արագացուցիչը:

Համաշխարհային ճանաչում էին ձեռք բերել տաղանդավոր գիտնականներ Արտեմ Ալիխանյանի, Արմենակ Մնջոյանի, Արտաշես Շահինյանի, Մխի-

Վիկտոր Համբարձումյանի արձանը Երևանում (քանդակագործ՝ Տարիել Հակոբյան)

թար Զրբաշյանի և Սերգեյ Մերգելյանի անունները:

Հետպատերազմյան տարիներին անհատի պաշտամունքի հետևանքով հայագիտության զարգացումն ընթանում էր ծանր պայմաններում: Պատմական հետազոտությունների հեղինակները, մասնավորապես՝ նորագույն շրջանի պատմաբանները, ստիպված էին պատմական դեպքերն ու իրադարձությունները հարմարեցնել այն ժամանակ տիրապետող գաղափարախոսական կարծրատիպերին, անտեսել մի ամբողջ շարք հայանվեր գործիչների դերը՝ ստեղծելով ըստ էության անդեմ պատմություն:

Այդուհանդերձ՝ 1950–1960–ական թվականներին խորհրդահայ պատմաբանները և հնագետները ձեռք բերեցին նշանակալից հաջողություններ: Պատմագիտության զարգացման գործում մեծ դեր խաղացին ակադեմիկոսներ Աշոտ Հովհաննիսյանը, Աբգար Հովհաննիսյանը, Սուրեն Երեմյանը: Խորհրդահայ պատմաբանները ստեղծեցին «Հայ ժողովրդի պատմության» բազմահատորյակը և այլ աշխատություններ: Նշված շրջանում հատկապես արդյունավետ էին համաշխարհային ճանաչում ստացած Մեծամորի, Շենգավիթի, ուրարտական շրջանի հուշարձանների (Թեյշեբաինի, Էրեբունի), ինչպես նաև հելլենականության շրջանի հուշարձանների (Գառնի) պեղումները:

Նշանակալից հաջողությունների հասան հայ գրականագիտությունը և լեզվաբանությունը, ստեղծվեցին մի շարք ընդհանրացնող աշխատություններ հայ գրականության պատմության գծով: Հայաստանում լեզվաբանության զարգացման գործում մեծ վաստակ ունեն ակադեմիկոսներ Հրաչյա Աճառյանը, Գևորգ Ջահուկյանը, Արարատ Ղարիբյանը, Գուրգեն Սևակը, Էդուարդ Աղայանը և ուրիշներ:

Հարցեր և առաջադրանքներ

1. Հետպատերազմյան շրջանում որակական ինչ փոփոխություններ կատարվեցին ՀԽՍՀ կրթական համակարգում: Ինչ կարևոր միջոցառումներ ձեռնարկվեցին Հայաստանի և Սփյուռքի կրթական կյանքում: Սփյուռքահայ ինչ նշանավոր կրթական հաստատություններ գիտեք:

2. Վերհիշե՛ք՝ երբ է հիմնադրվել ՀԽՍՀ գիտությունների ակադեմիան: Գիտության ո՛ր բնագավառները զարգացան: Թվարկե՛ք խորհրդահայ գիտության կարևոր ձեռքբերումները: Խորհրդահայ գիտության ինչ նշանավոր ներկայացուցիչներ գիտեք: Գիտության ո՛ր բնագավառներում նրանք աչքի ընկան, ինչ գիտեք նրանց մասին:

ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՆՈՒՆՆԵՐ, ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Պրոֆրեհնիկական ուսումնարան, Մելգոնյան վարժարան, Նուպարյան վարժարան, Սրբոց թարգմանչաց վարժարան, Բյուրականի աստղադիտարան, էլեկտրոնային արագացուցիչ, Արտեմ Ալիխանյան, Սերգեյ Մերգելյան, Արմենակ Մնջոյան, Գևորգ Զահուկյան:

§ 2–3. ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐՎԵՍՏԸ

Գրականությունը: Հետպատերազմյան տարիներին գրական ասպարեզ իջավ երիտասարդ գրողների մի նոր սերունդ՝ Պարույր Սևակ, Համո Սահյան, Սիլվա Կապուտիկյան, Գևորգ Էմին, Վահագն Դավթյան, Սերո Խանզադյան և ուրիշներ: Գրական նորահաս երիտասարդության հետ իրենց ստեղծագործական ուղին էին շարունակում Ավետիք Իսահակյանը, Դերենիկ Դեմիրճյանը, Ստեփան Զորյանը, դեռ 1930–ական թթ. աչքի ընկած Հովհաննես Շիրազը:

Ստալինի մահից հետո խորհրդահայ գրականությունն ընթացավ զարգացման նոր հունով: Գրականության մեջ վերականգնվեցին պատմականության սկզբունքը, ավանդույթների կենսական հիմքը, խոսքի զարգացումը ապահովող ազատ նորարարությունը: Վերստին երևան եկավ մարդ–անհատն՝ իր անձնական կյանքով, նրբին խոհերով ու ապրումներով: 1960–1970–ական թվականներին գրականություն մուտք գործեցին Հրանտ Մաթևոսյանը, Ռազմիկ Դավոյանը, Վարդգես Պետրոսյանը:

Սփյուռքահայ գրականությունն ունեցել է զարգացման մի քանի փուլ: Առաջին փուլի համար բնորոշ է կորցրած հայրենի երկրի կարոտի գրականությունը, որն ուներ ընդգծված գյուղագրական

Պարույր Սևակ

միտում: Հայկական սփյուռքի ինքնակազմակերպման և ինքնագիտակցության ձևավորման որոշակի մակարդակում սկսում է տիրել սփյուռքահայության ձուլման վտանգը հաղթահարելու մտահոգությունը (երկրորդ փուլ):

Գրական կյանքը անհամեմատ աշխույժ է եղել ԱՄՆ–ում, Ֆրանսիայում, Լիբանանում: Արևմտահայ գրականության հին սերնդի ներկայացուցիչների կողքին իրենց բեղմնավոր գրական գործունեությունն էին ծավալել Հրաչ Զարդարյանը և Զարեհ Որբունին:

Լիբանանում գրական իրենց ուրույն ուղին էին շարունակում Վահե Վահյանը և Անդրանիկ Ծառուկյանը: Սփյուռքահայ գրական կյանքի կարևոր դեմքերից է բանաստեղծ, դրամատուրգ ***Մուշեղ Իշխանը:*** Նրա ստեղծագործության ներքին ազդակը տարագիր հայի պայքարն է ուծացման վտանգի դեմ՝ հանուն սեփական դիմագծի պահպանման, ազգային և համամարդկային գաղափարների կենսագործման:

Հայազգի գրողներից ոմանք ստեղծագործում էին օտար լեզուներով: Նրանցից ամենանշանավորը ***Վիլյամ Սարոյանն*** էր (ԱՄՆ), որն արժանացել էր համաշխարհային ճանաչման: Նա դարձել էր աշխարհի ամենաճանաչված գրողներից մեկը: Հոգով մնացել էր հայ. ինչի մասին էլ որ գրել է, զգացնել է տվել իր ազգային պատկանելությունը, ընտրել է հայ հերոսներ, հաճախ՝ հայկական միջավայր:

Ֆրանսիայի մեծագույն արձակագիրներից է հայազգի ***Ամրի Թրուայան*** (Լևոն Թորոսյան)՝ իր աշխարհահռչակ վեպերով և նշանավոր անհատների պատմակենսագրական ուսումնասիրություններով: Նա այլազգի գրողներից առաջինը դասվեց Ֆրանսիայի գեղարվեստի ակադեմիայի «40 անմահների» ընտրաբույլը:

Կերպարվեստը: Հետպատերազմյան տարինեը կերպարվեստին վերադարձրին ստեղծագործության ժանրերի բազմազանությունն ու ստեղծագործողների անհատական դրսևորումները: Մ. Սարյանի ստեղծագործության մեջ նոր ուժով, կարծես նշա-

նավորելով վերադարձը խաղաղ կյանքին՝ հառնում են բնության ընդհանրացված պատկերները, աշխատանքի դրվագներ, լիառատ նատյուրմորտներ:

Թեմատիկ պատկերարվեստի զարգացման գործում վճռական էր ***Հովհաննես Զարդարյանի*** ստեղծագործությունը, իսկ հայրենադարձ նկարիչներ ***Հակոբ Կալենցի և Հակոբ Հակոբյանի*** նուրբ գունաներդաշնակմամբ օժտված կտավները մեծ ազդեցություն ունեցան գեղանկարչական նոր մտածողության ձևավորման վրա:

1960–ական թթ. սկզբին ***Սարգիս Մուրադյանի և Գրիգոր Խանջյանի*** ստեղծագործական պաթոսի հիմքում XX դարի սկզբի ողբերգական անցքերն էին: Ս. Մուրադյանի «Կոմիտասի վերջին գիշերը», Գ. Խանջյանի «Իմ ժողովրդի պատմության տարեթվերից» լինոփորագրությունների նկարաշարերը և «Անլռելի զանգակատուն» (Պ. Սևակ) պոեմի պատկերազարդումը, արթնացնելով ժողովրդի հիշողությունը, ուշադրության են կոչել ստվերում գտնված ազգային–հայրենասիրական թեմաները:

Քանդակագործությունը: «Հրապարակ–մոնումենտ» դասական գծակարգը առավել ազատ մեկնություն է ստանում Երվանդ Քոչարի «Սասունցի Դավիթ», Արտաշես Հովսեփյանի «Ալեքսանդր Թամանյան», Նիկողայոս Նիկողոսյանի «Միքայել Նալբանդյան» հուշարձաններում: Երվանդ Քոչարն ընդհանրապես կարկառուն մեծություն է համաշխարհային կերպարվեստում, «տարածական նկարչության» հիմնադիրը:

Գեղանկարչության մեջ բացառիկ տեղ էր գրավում ***Մինաս Ավետիսյանը,*** որը նորովի է մեկնաբանել ու զարգացրել սարյանական մեթոդի հնարավորությունները: Նրա կտավները («Ջաջուռ», «Ծնողներս», «Սպասում») կյանքը բացահայտում են հավերժական արժեքներով, խոսում են ամեն մի անհատական ճակատագրի դրամատիկ բարդությունների, հազվագյուտ տոկունության և գեղեցկության մասին:

Սփյուռքահայ կերպարվեստին ու քանդակա-

գործությանը բնորոշ էր ազգային ավանդույթների հենքի վրա սեփական դիմագծի կերտումը՝ հաշվի առնելով համաշխարհային առաջադիմական միտումները: Սփյուռքահայ կերպարվեստը հատկապես զարգացում ապրեց Ֆրանսիայում և ԱՄՆ–ում: Ֆրանսիական արդի գեղարվեստի խոշոր դեմքերից է ***Գառզուն*** (Գառնիկ Ջուլումյան): Նա միջազգային համբավ է ձեռք բերել 1953 թվականից, երբ Փարիզում բացվել է նրա վենետիկյան բնանկարների ցուցահանդեսը: Ֆրանսիական արդի արվեստի ականավոր ներկայացուցիչներից է նաև ***Ժանսեմը*** (Հովհաննես Սեմերջյան):

XX դարի ամերիկյան արվեստում բացառիկ տեղ է գրավում ***Արշիլ Գորկին*** (Ոստանիկ Ադոյան): Մայր ժողովրդի մեծ ողբերգությունը, որին ականատես է եղել պատանի հասակում, խոր անդրադարձ է գտել նրա կյանքի ու ստեղծագործության մեջ: «Ինչպես մորս ասեղնագործ գոգնոցը բացվում է իմ կյանքում» (1944), «Արորը և երգը» (1947) ու այլ կտավներ նկարչի ողբերգական մահից հետո համաշխարհային հռչակ են բերել նրան՝ դարձնելով ***գերիրապաշտական արտահայտչականություն*** (սյուրռեալիստական էքսպրեսիոնիզմ) ուղղության սկզբնավորողը:

Երաժշտությունը: Հակառակ գաղափարական մամլիչի ճնշմանը՝ հետպատերազմյան տարիներին մեծ տեղաշարժեր են եղել երաժշտական արվեստում: Խորհրդային երաժշտության մեջ խոշորագույն ներդրում էին Արամ Խաչատրյանի «Սպարտակ» բալետը, որում խորապես մարմնավորվել է ազատության համար հերոսական պայքարի թեման, Առնո Բաբաջանյանի, Էդվարդ Միրզոյանի, Ավետ Տերտերյանի, Տիգրան Մանսուրյանի և այլոց ստեղծագործությունները:

Սփյուռքահայ կոմպոզիտորական դպրոցի առավել վառ անհատականություններից են Ալան Հովհաննեսը (ԱՄՆ), Միշել Լեգրանը (Ֆրանսիա), Լորիս Ճգնավորյանը (Իրան, Ավստրիա): Շառլ Ազնավուրն իրավամբ հռչակվեց «XX դարի ֆրանսիական շանսոնի արքա»:

Թատրոնը: Հայ թատրոնի հետպատերազմյան առաջին տասնամյակի բեմարվեստի աչքի ընկնող երևույթն էր Նաիրի Զարյանի «Արա Գեղեցիկ» ողբերգության ներկայացումը: Հայրենական մեծ պատերազմին նվիրված պիեսներից լավագույնը Գուրգեն Բորյանի «Բարձունքում» դրաման էր, որ ներկայացվել է հայկական գրեթե բոլոր թատրոններում:

Համամիութենական և միջազգային ճանաչման արժանացան բեմադրիչներ Վարդան Աճեմյանը, Հրաչյա Ղափլանյանը: Ճանաչված դերասաններից շատերը՝ Վահրամ Փափազյանը, Հրաչյա Ներսիսյանը, Գուրգեն Ջանիբեկյանը, Ավետ Ավետիսյանը, Դավիթ Մալյանը, Բաբկեն Ներսիսյանը, Արուս Ասրյանը այս փուլում ստեղծել են իրենց արտիստական կենսագրության թերևս ամենավառ կերպարները:

Բեմարվեստում գնալով ավելի հաստատուն տեղ են նվաճել Մետաքսյա Սիմոնյանը, Խորեն Աբրահամյանը, Միեր Մկրտչյանը, Սոս Սարգսյանը, Վարդուհի Վարդերեսյանը և ուրիշներ: Այս անունների հետ են կապվում և՛ նոր սերնդի որոնումները, և՛ դասական կերպարների նորովի անձնավորումները:

Սփյուռքահայ թատրոնի ասպարեզում զգալի ավանդ ունեն սփյուռքահայ բազմաթիվ արվեստագետներ, դերասաններ, հայրենիքում և այլ երկրներում սովորած մասնագետ բեմադրիչներ: Կանոնավոր թատերախմբեր են գործել Լիբանանում, Թուրքիայում, Ֆրանսիայում, ԱՄՆ–ում, Եգիպտոսում և այլ երկրներում:

Կինոարվեստը: Հայրենական մեծ պատերազմն ընդհատեց Հայաստանի, ինչպես նաև խորհրդային մյուս հանրապետությունների կինեմատոգրաֆիաների զարգացումը: Հայկական կինոարվեստի զարգացման նոր, ժամանակակից փուլը փաստորեն սկսվեց 1954–ից, երբ նոր հունի մեջ դրվեց գեղարվեստական ֆիլմերի թողարկումը: Համո Բեկնազարյանի անվան «Հայֆիլմ» կինոստուդիայում նկարահանվեցին «Պատվի համար» (բեմադրիչ՝ Արտաշես Հայ–Արտյան), «Նվագախմբի տղաները»

Միհր Մկրտչյան

(բեմադրիչներ՝ Հենրիկ Մալյան, Հենրիկ Մարգարյան) գեղարվեստական ֆիլմերը, որոնք մեծ հաջողություն ունեցան:

1960–1970–ական թվականները ինչպես ողջ խորհրդային, այնպես էլ խորհրդահայ կինոարվեստի փայլուն էջերից են: Ստեղծվեցին կինոնկարներ, որոնք երբեք չեն կորցնի իրենց գեղարվեստական արժեքը: Դրանց թվում են «Բարև, ես եմ», «Եռանկյունի», «Մենք ենք, մեր սարերը», «Սարոյան եղբայրներ», «Նռան գույնը» և այլ ֆիլմեր, որոնք արդարև ներկայացնում են հայկական կինոյի «նոր ալիքը»:

Այդ ժամանակաշրջանում նկատելի տեղաշարժ կար արդի կինոկատակերգության ժանրում: Առավել ճանաչվածներից են Հենրիկ Մալյանի «Հայրիկ», Ներսես Հովհաննիսյանի «Հարսնացու հյուսիսից» կինոնկարները: Հաջորդ տասնամյակը (1976–85) առանձնանում է կինոարտադրանքի ընդհանուր որակական մարկարդակի վերելքով և կինոարտադրության ընդլայնումով: Այդ շրջանի առավել նշանավոր ձեռքբերումներից են Ֆրունզե Դովլաթյանի «Երկունք», Հենրիկ Մալյանի «Նահապետը» կինոնկարները: Առաջինը պատմահեղափոխական ֆիլմի ժանրը հարստացնում է հերոսական շնչով, երկրորդը՝ զգացմունքային մեծ ուժով հաստատում մարդասիրության և պատմական արդարության գաղափարները:

Ճարտարապետությունը: Հետպատերազմյան շրջանում սկսեցին կառուցվել հասարակական շենքերի համալիրներ, որոնք արժեքավոր ներդրում են խորհրդահայ ճարտարապետության մեջ: Լավագույնը դեռ նախապատերազմյան տարիներին ձեռնարկված և 1958 թ. ավարտված Երևանի Հանրապետության հրապարակի ճարտարապետական համալիրն է: Այստեղ հայկական ճարտարապետության նվաճումները մարմնացած են մեծակերտ շենքերի կերպարվեստում:

Հետպատերազմյան շրջանի ճարտարապետության նվաճումները դրսևորվել են նաև մայրաքաղաքի մի շարք այլ հասարակական շենքերում. ՀԽՍՀ կոմկուսի կենտկոմի (այժմ՝ ՀՀ Ազգային ժողովի)

շենքը (ճարտ.՝ Մարկ Գրիգորյան), Գիտությունների (ազգային) ակադեմիայի նախագահության շենքը (ճարտ.՝ Սամվել Սաֆարյան), Մատենադարանը (ճարտ.՝ Մարկ Գրիգորյան): Այս ստեղծագործությունները բնորոշում են խորհրդահայ ճարտարապետության 1940–1950–ական թթ. ոճական ուղղությունը, որ հենվում էր ազգային ժառանգության քննադատական յուրացման վրա:

Երկաթբետոնի արտահայտչական հնարավորությունների օգտագործման, նոր խնդիրների լուծման և ճարտարապետության ազգային ինքնատիպության նորովի ընկալման օրինակներ են 1960–1980–ական թթ. նախագծված մի շարք կառույցներ Երևանում՝ «Հրազդան» մարզադաշտը, «Ռոսիա» կինոթատրոնը, Մարզահամերգային համալիրը, ինչպես նաև «Զվարթնոց» օդանավակայանի շենքը: Այս տարիներին կառուցվեց նաև պատմության նշանավոր դեպքերն ու դեմքերը հավերժացնող հուշարձաններ: Դրանցից են Հայրենական մեծ պատերազմի զոհերին նվիրված հուշարձանները հանրապետության գրեթե բոլոր բնակավայրերում, Մեծ եղեռնի զոհերի հուշահամալիրը Ծիծեռնակաբերդում, Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիրը, «Մայր Հայաստան» հուշարձանը Երևանում և Լենինականում (այժմ՝ Գյումրի) և այլն:

Մեծ եղեռնի հուշահամալիրը Ծիծեռնակաբերդում.

Հարցեր և առաջադրանքներ

1. Թվարկե՛ք խորհրդահայ և սփյուռքահայ գրականության ականավոր ներկայացուցիչների. նրանց ո՞ր ստեղծագործություններն եք կարդացել: Ո՞ր ստեղծագործությունը կամ գրական հերոսին եք նախընտրում. ինչո՞ւ:
2. Թվարկե՛ք նշանավոր կերպարվեստագետների, կոմպոզիտորների, թատերական և կինոգործիչների. ի՞նչ գիտեք նրանց մասին, նշե՛ք նրանց գործերը: Հայ կոմպոզիտորների ո՞ր ստեղծագործություններն եք ունկնդրել:
3. Հայ նշանավոր ի՞նչ դերասաններ գիտեք. նրանց մասնակցությամբ ի՞նչ ֆիլմեր կամ ներկայացումներ եք դիտել: Որո՞նք են ձեր ամենասիրելի ֆիլմերը. ինչո՞ւ:
4. Թվարկե՛ք խորհրդահայ ճարտարապետության նշանակալից կառույցները. ո՞ւմ նախագծով են դրանք կառուցվել:
5. Գնահատե՛ք հայ մշակույթի ձեռքբերումները:

ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՆՈՒՆՆԵՐ, ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կարուրի գրականություն, լինոփորագրություն, «գերիրապաշտական արտահայտչականություն» (սյուրռեալիստական էքսպրեսիոնիզմ):

ԵՐՐՈՐԴ ԲԱԺՆԻ ԱՄՓՈՓՈՒՄ

1. Պատերազմի ավարտից հետո Հայաստանի տնտեսությունը վերափոխվեց խաղաղ ժամանակաշրջանի պահանջներին համապատասխան: Դրական տեղաշարժեր կատարվեցին արդյունաբերության ոլորտում: Կառուցվեցին բազմաթիվ նոր ձեռնարկություններ, միջոցառումներ ձեռնարկվեցին հանրապետության էներգետիկ պահանջները բավարարելու ուղղությամբ: Բարելավվեց բնակչության սոցիալական վիճակը: Սակայն արդյունաբերացման ընթացքում անտեսվեցին մի շարք գոյապահպանական և կենսական խնդիրներ: ԽՍՀՄ–ում վարչահրամայական համակարգի ամրապնդման հետ նոր թափով շարունակվեցին քաղաքական բռնությունները: Միայն Ի. Ստալինի մահից հետո վերջ դրվեցին բռնությունների համատարած դեպքերին, և արդարացվեցին նախկինում դատապարտված հազարավոր քաղաքացիներ:

Նշե՛ք փաստեր, որոնք վկայում են, որ Հայաստանը դարձել էր ԽՍՀՄ–ի՝ զարգացած արդյունաբերական հանրապետություններից մեկը:

Ձեր կարծիքով՝ինչո՞ւ ԽՍՀՄ–ի իշխանությունները գործադրեցին բռնաճնշումներ պատերազմից հետո:

2. Վերակառուցման քաղաքականությունը նպատակ ուներ փրկելքշու կործանվող խորհրդային պետությունը: Հավատալով վերակառուցման հռչակած սկզբունքներին՝ Լեռնային Ղարաբաղի հայությունը վերստին հանդես եկավ մայր հայրենիքին վերամիավորվելու պահանջով: Ադրբեջանական իշխանությունները, օգտվելով կենտրոնական իշխանությունների թողտվությունից և ցանկանալով կասեցնել հայ ժողովրդի ազատագրական շարժումը, կազմակերպեցին Սումգաիթի հայերի ցեղասպանությունը: Սակայն ո՛չ Սպիտակի երկրաշարժը, ո՛չ էլ սումգաիթյան ցեղասպանությունը չկասեցրին ծավալվող համաժողովրդական շարժումը:

Ո՞րն է Արցախյան շարժման էությունը:

Ինչ արդյունք տվեց համաժողովրդական շարժման ծավալումը:

3. 1990 թ. մայիսի 20–ին Հայաստանում տեղի ունեցած ժողովրդավարական ընտրությունների արդյունքում ձևավորված խորհրդարանն ընդունեց «Հռչակագիր Հայաստանի անկախության մասին» փաստաթուղթը: 1991 թ. հոկտեմբերի 16–ին Հայաստանում անցկացված նախագահական ընտրությունների արդյունքում նախագահ ընտրվեց Լ. Տեր–Պետրոսյանը: 1991 թ. դեկտեմբերի 8–ին ԽՍՀՄ–ի սլավոնական երեք հանրապետությունները համաձայնագիր ստորագրեցին ԽՍՀՄ–ի փլուզման և ԱՊՀ–ի կազմավորման մասին: Նույն թվականի դեկտեմբերի 21–ին ինքնիշխան 11 պետություններ, այդ թվում՝ Հայաստանը, համաձայնագիր ստորագրեցին ԱՊՀ–ի ստեղծման վերաբերյալ:

Երբ և ո՞ւմ կողմից է ընդունվել «Հռչակագիր Հայաստանի անկախության մասին»

փաստաթուղթը:

Ներկայացրե՛ք այդ փաստաթղթի հիմնական բովանդակությունը:

Ցո՛ւյց տվեք Հռչակագրի պատմական նշանակությունը:

Ինչ հեռանկար ունի ԱՊՀ–ն:

4. 1945–1991 թթ. նշանավորվեցին հայկական մշակույթի և գիտության զարգացմամբ ու զգալի վերելքով: Բուռն վերելք ապրեցին հասարակագիտական, ֆիզիկամաթեմատիկական և տեխնիկական գիտությունները: Ժողովրդական կրթության մեջ շրջադարձային էր անցումը լրիվ միջնակարգ կրթությանը: Նշված ժամանակաշրջանում նոր հաջողություններ և որակական փոփոխություններ գրանցվեցին երաժշտության, թատերական արվեստի, կինոյի, կերպարվեստի, գրականության, ճարտարապետության բնագավառներում:

Թվարկե՛ք հայ մշակույթի նշանավոր գործիչների. ի՞նչ գիտեք նրանց մասին:

Հայ մշակույթի և գիտության ի՞նչ հայտնի հաստատություններ գիտեք:

ԲԱԺԻՆ
IV

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ, ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔԸ 1991 ԹՎԱԿԱՆԻՑ ՄԻՆՉԵՎ ՄԵՐ ՕՐԵՐԸ

ԳԼՈՒԽ I

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

§ 1. ՀՀ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Հայաստանի Հանրապետության անկախության հռչակումը: ԽՍՀՄ–ում պետական հեղաշրջման ձախողումից հետո թուլացավ նաև Կենտրոնի (Մոսկվայի) իշխանությունը: Մի շարք միութենական հանրապետություններ շտապեցին ազդարարել ԽՍՀՄ կազմից դուրս գալու մասին: Հայաստանը Լիտվայի, Լատվիայի, Էստոնիայի, Մոլդովայի և Վրաստանի հետ միասին չմասնակցեց Կենտրոնի նախաձեռնությամբ ԽՍՀՄ պահպանման վերաբերյալ 1991 թ. մարտի 17–ին անցկացված միութենական հանրաքվեին: Համարելով հանրաքվեն ազգերի ազատ ինքնորոշման իրավունքին հակասող՝ 1991 թ. մարտի 1–ին Հայաստանի Գերագույն խորհուրդը որոշեց նույն թվականի սեպտեմբերի 21–ին հանրապետությունում անցկացնել հանրաքվե՝ ԽՍՀՄ–ի կազմից դուրս գալու հարցով: Հարցադրումը հետևյալն էր. «Համաձա՞յն եք, որ Հայաստանի Հանրապետությունը լինի անկախ ժողովրդավարական պետություն՝ ԽՍՀՄ–ի կազմից դուրս»: Հավատարիմ մնալով այդ որոշմանը՝ Հայաստանի Հանրապետությունը մինչև սեպտեմբերի 21–ը չմասնակցեց միութենական նոր պայմանագրի մշակմանը, որը և առիթ տվեց բռնի ուժ գործադրել Ղարաբաղում:

ԽՍՀՄ–ի փաստացի փլուզման պահին Հայաստանում անցկացվեց հանրաքվե՝ անկախության հարցով: ***1991 թ. սեպտեմբերի 21–ի*** հանրաքվեին մասնակցեց քվեարկելու իրավունք ունեցողների 95,05 %–ը: Հայաստանի անկախության օգտին քվեարկեցին 2 միլիոն 43 հազար մարդ (քվեարկության իրավունք ունեցողների 94,39 %–ը): Հանրաքվեի ընթացքին հետևում էին աշխարհի 25 երկրներից (Մեծ Բրիտանիա, Շվեյցարիա, Բելգիա և այլն) ժամանած 117 դիտորդներ:

Կատարվեց հայ ժողովրդի վաղեմի երազանքը: 1991 թ. սեպտեմբերի 23–ին Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդը, հիմնվելով համաժողովրդական հանրաքվեի արդյունքների վրա, ընդունեց Հայաստանը անկախ պետություն հռչակելու մասին պատմական որոշումը:

Այսպիսով՝ Հայաստանը առաջինը և միակ նախկին խորհրդային հանրապետությունն էր, որը անկախացման հանրաքվեն անցկացրեց Խորհրդային Միության սահմանադրությանը և «ԽՍՀՄ–ի կազմից միութենական հանրապետության դուրս գալու հետ կապված հարցերի լուծման կարգի մասին» օրենքին լիակատար համապատասխանությամբ: Սեպտեմբերի 21–ը հայտարարվել է տոնական օր և մեծ շուքով նշվում է ամեն տարի:

Իշխանության մարմինների ձևավորումը: Անկախության հռչակումից հետո օրակարգայինը իշխանության նոր մարմինների ձևավորումն էր:

Պետական կարգն ամրապնդելու համար անչափ կարևոր էր օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների տարանջատումը:

1991 թ. օգոստոսի 1–ին ընդունվեց «ՀՀ նախագահի մասին» օրենքը: Նույն թվականի ***հոկտեմբերի 16–ին*** Հայաստանում առաջին անգամ անցկացվեցին նախագահի համաժողովրդական ուղղակի ընտրություններ: Հայաստանի Հանրապետության նախագահ ընտրվեց Գերագույն խորհրդի նախագահ ***Լևոն Տեր–Պետրոսյանը:*** Հետագայում համապետական ընտրություններում (նախագահական և խորհրդարանական) խախտման բազմաթիվ դեպքեր գրանցվեցին:

1996 թ. սեպտեմբերի 22–ին տեղի ունեցան նախագահական երկրորդ ընտրությունները, որոնք միջազգային դիտորդների կողմից բացասական գնահատականի արժանացան: Ճիշտ է, ՀՀ նախագահ վերընտրվեց Լ. Տեր–Պետրոսյանը, սակայն հանրապետությունում քաղաքական ճգնաժամը խորացավ: Դա էլ ի վերջո հանգեցրեց 1998 թ. փետրվարի 3–ին Լ. Տեր–Պետրոսյանի հրաժարականին:

1998–2008 թթ. երկու ժամկետով ՀՀ նախագահ ընտրվեց Ռոբերտ Քոչարյանը, իսկ 2008–ից առ այսօր հանրապետության նախագահն է երկրորդ անգամ նախագահական ընտրություններում հաղթեց 2013 թ. փետրվարին Սերժ Սարգսյանը:

Բարձրագույն օրենսդիր մարմինը սկզբում կոչվում էր Գերագույն խորհուրդ (1991–1995 թթ.), իսկ Սահմանադրության ընդունումից հետո՝ Ազգային ժողով: Ազգային ժողովի ընտրություններ են տեղի ունեցել 1995, 1999, 2003, 2008, 2013 թվականներին:

ՀՀ գործադիր իշխանությունն իրականացվում է ՀՀ կառավարության կողմից, որը կազմված է վարչապետից և նախարարներից: Ժամանակի ընթացքում կառավարությունը կառուցվածքային բազմաթիվ փոփոխությունների է ենթարկվել:

Սկսեցին ձևավորվել պետական նոր կառույցներ:

Բանակը: Անկախության հռչակումից հետո հայոց պետականության պահպանման երաշխավորը կարող էր լինել միայն ազգային մարտունակ բանակը: Ինչպես Հայաստանի առաջին հանրապետության (1918–1920 թթ.), այնպես էլ երրորդ հանրապետության բանակը ծնվեց պատերազմի դաշտում և անցավ բանակաշինության բոլոր փորձություններ: ՀՀ–ն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հետ, լինելով չհայտարարված, իրականում փաստացի պատերազմի մեջ, ձեռնամուխ եղավ ազգային բանակի ստեղծմանը: Սկզբում բանակ էին համարվում իրարից անկախ գործող շուրջ 80 կամավորական ջոկատները («Վրիժառուներ», «Սասունցի Դավիթ», «Սասնա ծռեր», «Մուշ» և այլն): 1989 թ. ապրիլի 24–ին Ռազմիկ Վասիլյանի նախաձեռնությամբ կամավորներից ստեղծվեց ***Հայոց ազգային բանակ*** (ՀԱԲ) ռազմական կազմակերպությունը, որը տարբեր վայրերում հիմնեց իր կառույցները:

1990 թ. օգոստոսի 29–ին ՀՀ Գերագույն խորհրդի որոշմամբ ՀԱԲ–ը լուծարվեց: Անկախության հռչակագիրը (օգոստոսի 23) իրավական և գործնական ուղիներ էր մատնանշում ազգային բանակի ստեղծման համար:

ՀՀ կառավարության որոշմամբ ստեղծվեց նախարարների խորհրդին առընթեր Պաշտպանության պետական կոմիտե: Դրա հիմքի վրա քիչ ավելի ուշ ստեղծվեց Պաշտպանության նախարարությունը, որն էլ իր վրա վերցրեց բանակաշինության դժվարին գործը:

1991 թ. դեկտեմբերի 5–ի ՀՀ նախագահի հրամանագրով պաշտպանության առաջին նախարար նշանակվեց Վազգեն Սարգսյանը, որը հսկայական դեր խաղաց մարտունակ և կարգապահ բանակ ստեղծելու գործում:

1992 թ. հունվարի 28–ին կառավարությունն ընդունեց «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության մասին» պատմական որոշումը, որով հռչակվեց հայոց բանակի ստեղծումը:

Բանակաշինության գործում անուրանալի վաստակ ունեն Վազգեն Մանուկյանը, Սերժ Սարգսյանը, Գուրգեն Դալիբալթայանը, Միքայել Հարությունյանը, Քրիստափոր Իվանյանը, Արկադի Տեր–Թադևոսյանը և շատ ու շատ ուրիշները:

Այսպիսով՝ Հայոց բանակը ձևավորվեց անկախ պետականության վերականգնման գործընթացում և դարձավ անկախության գլխավոր ձեռքբերումն ու երաշխավորը: Այն այսօր տարածաշրջանի ամենամարտունակ և կարգապահ բանակն է:

Հանրապետության խորհրդանիշները: «Հայաստանի Հանրապետության պետական դրոշի մասին» օրենքը Գերագույն խորհրդի կողմից ընդունվեց 1990 թ. օգոստոսի 24–ին: Պետական դրոշը եռագույն է, վերևից ներքև՝ կարմիր, կապույտ, նարնջագույն հորիզոնական հավասար շերտերով:

Հայաստանի Հանրապետության անկախության հռչակումով պետական զինանշան դարձավ 1918–1920 թթ. Հայաստանի առաջին հանրապետության զինանշանը՝ մասնակի փոփոխված տարբերակով:

Գերագույն խորհուրդը զինանշանի մասին օրենքն ընդունել է 1992 թ. ապրիլի 19–ին: ՀՀ զինանշանում օգտագործված են պատմականորեն ձևավորված հայկական պատմական զինանշանային խորհրդա-

նիշեր՝ արծվի և առյուծի պատկերներ: Վերջին երկուսը պահում են վահանը, որի կենտրոնում Արարատ լեռան և Նոյյան տապանի պատկերներն են: Իսկ մեծ վահանի չորս վահանակներին պատկերված են հայկական չորս արքայատոհմերի՝ Արտաշեսյանների, Արշակունիների, Բագրատունիների և Ռուբինյաններիի զինանշանները: Վահանից ներքև պատկերված են սուր, ճյուղ, հասկերի խուրձ, շղթա և ժապավեն:

ՀՀ Սահմանադրությունը: Հանրապետության պետական և քաղաքական կյանքում նշանակալի երևույթ էր պետության հիմնական օրենքի՝ սահմանադրության ընդունումը: Այդ նպատակով ստեղծվել էր ՀՀ Գերագույն խորհրդի սահմանադրական հանձնաժողով:

1993 թ. սկսվեցին սահմանադրության առաջին նախագծի քննարկումները, որտեղ մասնակցում էին նաև գործող քաղաքական կուսակցությունները: Պաշտոնական լրատվամիջոցներով լուսաբանվում էին փաստաթղթի սկզբունքային և բովանդակային առանձնահատկությունները:

ՀՀ Գերագույն խորհրդի հավանությանն արժանանալուց հետո սահմանադրության նախագիծը դրվեց հանրաքվեի: ***1995 թ. հուլիսի 5–ին*** խորհրդարանական ընտրությունների ժամանակ հիմնական օրենքի օգտին քվեարկեց ընտրողների 68,4 %–ը:

Այսպիսով՝ ՀՀ Սահմանադրությունն ընդունվեց 1995 թ. հուլիսի 5–ին: Այն, իր թերություններով հանդերձ, կարևոր երևույթ էր: Հիմքեր էին ստեղծվում իրավական, ժողովրդավարական պետություն ստեղծելու համար:

Հետագայում՝ 2005 թ. նոյեմբերին, հանրաքվեով հաստատվեցին սահմանադրական փոփոխությունները, որոնց գլխավոր նպատակը ՀՀ նախագահի իրավունքների սահմանափակումն էր և դրանց փոխանցումը խորհրդարանին:

Ստեղծվել են լուրջ նախադրյալներ Հայաստանի Հանրապետությունը իրավական և ժողովրդավարական երկիր դարձնելու համար:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ե՞րբ է անցկացվել ՀՀ անկախության հանրաքվեն. ի՞նչ արդյունք այն ունեցավ: Հիմնավորե՛ք, որ ՀՀ–ն իր անկախությունը ձեռք է բերել օրինական ճանապարհով:
2. Ե՞րբ է ընդունվել «ՀՀ նախագահի մասին» օրենքը: ՀՀ նախագահը ինչպիսի՞ ընտրությունների արդյունքում ընտրվեց: Ընտրության ուրիշ ի՞նչ տեսակ կա: Համեմատե՛ք դրանք. ո՞րն է դրանցից ավելի ժողովրդավարական: Ո՞վ է ընտրվել ՀՀ առաջին նախագահ:
3. 1995–2013 թթ. ՀՀ–ում համապետական ի՞նչ ընտրություններ են տեղի ունեցել. ներկայացրե՛ք և մեկնաբանե՛ք դրանց արդյունքներն ու հետևանքները:
4. Հիմնավորե՛ք ՀՀ բանակի գոյության անհրաժեշտությունը: Ներկայացրե՛ք ազգային բանակի ստեղծման գործընթացը: Ովքե՞ր են նպաստել ազգային բանակի կայացմանը. ի՞նչ գիտեք նրանց մասին:
5. Ե՞րբ է ընդունվել ՀՀ սահմանադրությունը: Անհրաժե՞շտ է արդյոք սահմանադրությունը. ինչո՞ւ:

ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՆՈՒՆՆԵՐ, ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«ՀՀ նախագահի մասին» օրենք, համաժողովրդական ուղղակի ընտրություններ, համապետական ընտրություններ, Գերագույն խորհուրդ, Ազգային ժողով, ՀԱՔ, Պաշտպանության պետական կոմիտե, ՀՀ Գերագույն խորհրդի սահմանադրական հանձնաժողով, ՀՀ սահմանադրություն, Ռազմիկ Վասիլյան, Վազգեն Սարգսյան, Գուրգեն Դալիբալթայան, Քրիստափոր Իվանյան, Արկադի Տեր–Թադևոսյան:

§ 2. ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ–ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ

Տնտեսական դրությունը: Անկախության հռչակումից հետո հանրապետության տնտեսական կյանքը կազմալուծվել էր: Ավերիչ երկրաշարժի հետևանքները, արցախյան պատերազմը, շրջափակումը, էներգետիկ ճգնաժամը, ԽՍՀՄ–ի փլուզումը երկիրը դրել էին ծանր վիճակի մեջ: Խզվել էին միջհանրապետական տնտեսական կապերը, դադարել էր հումքի մատակարարումը:

Հայաստանը բառացիորեն մեկուսացած էր արտաքին աշխարհից: Հարավում միայն Իրանն էր, որի հետ ուներ առևտրատնտեսական կապեր, իսկ հյուսիսում՝ Վրաստանը, որը քաղաքացիական պատերազմների մեջ էր և տրանսպորտի նորմալ գործունեության համար պայմաններ չուներ:

1990–1991 թթ. Հայաստանի Գերագույն խորհուրդն ընդունեց որոշումներ, որոնք նպատակ ունեին կարգավորելու տնտեսական հարաբերությունները, հանրապետությունը դուրս բերել ճգնաժամից, ստեղծել սեփական շուկայական տնտեսական համակարգ: ՀՀ Գերագույն խորհուրդը 1990 թ. սեպտեմբերի 10–ին ընդունեց «Հայաստանի Հանրապետության պետական սեփականության մասին» օրենք: Համաձայն դրա՝ ՀՀ տարածքում գտնվող բոլոր պետական ձեռնարկությունների, հիմնարկների և կազմակերպությունների ունեցվածքը հայտարարվեց հանրապետության սեփականություն:

Շուկայական տնտեսությանն անցնելու ճանապարհին ազատականացվեցին ապրանքների գները, որը վատթարացրեց ժողովրդի սոցիալական դրությունը:

1991 թ. հունվարի 29–ին ընդունվեց հողի մասնավոր սեփականության մասին օրենքը: Հողի սեփականաշնորհումն սկսվեց 1991 թ. գարնանը և ծավալվեց զանգվածաբար: Գյուղացիները ստացան հողային սեփականություն: Չնայած օրենքը հապշտապ կենսագործվեց, սակայն տվյալ փուլում որոշակի առաջադիմական նշանակություն ունեցավ: Տնտեսական ճգնաժամի ծանր պայմաններում գյուղացին ապահովվեց աշխատանքով և կարողացավ պահել իր գոյությունը:

Մինչև 1994 թ. Հայաստանում տնտեսական բարեփոխումներն ընթանում էին տնտեսության անկման պայմաններում: Հետագայում քայլեր ձեռնարկվեցին երկրի տնտեսական անկումը կասեցնելու և կայունություն ապահովելու համար: Կառավարությունն սկսեց մասնավորեցնել գյուղատնտեսական հողերը, պետական (հանրային) բնակարանային

ֆոնդը, պետական ձեռնարկություններն ու անավարտ շինարարական օբյեկտները:

Կարևոր նշանակություն ունեցավ 1996 թ. Հայկական ատոմային էլեկտրակայանի (ԱԷԿ) վերագործարկումը, որը վերացրեց էներգետիկ սովը և արդյունաբերությունն աշխատեցնելու հնարավորություն տվեց:

1990–ական թթ. վերջերից սկսած՝ հանրապետության տնտեսական կյանքում որոշակի դրական փոփոխություններ նկատվեցին: Մեծ ուշադրություն դարձվեց ճանապարհային հաղորդակցության ուղիների կառուցմանն ու բարելավմանը, կապին ու տրանսպորտին, ընդհանրապես շինարարության և սպասարկման ոլորտներին: Շահագործման հանձնվեցին դպրոցական, մշակութային հանրային նոր շենքեր: Թե՛ հայրենական և թե՛ օտարերկրյա գործարարների ներդրումներով հիմնվեցին բազմաթիվ նոր աշխատատեղեր:

Այդուհանդերձ, հանրապետության տնտեսական կյանքը դեռևս ցանկալի հունով չի ընթանում: Առկա են տնտեսական, սոցիալական բազում դժվարություններ և չլուծված խնդիրներ, որոնցի հետևանքը տարիներ շարունակվող նկատելի արտագաղթն է:

Բազմակուսակցական համակարգի ձևավորումը: Հասարակական և բարեգործական կազմակերպությունները: Անկախությունը պահանջում էր նաև երկրի քաղաքական համակարգի վերափոխում և հասարակական–քաղաքական կարգի ժողովրդավարացում:

Ելնելով անկախության հռչակագրի դրույթներից՝ 1990 թ. նոյեմբերի 5–ին Հայաստանի Գերագույն խորհուրդն ընդունեց «Հայաստանի Հանրապետության պետական մարմինները և պետական ձեռնարկությունները, հիմնարկները, կազմակերպությունները և ուսումնական հաստատությունները, զինվորական ստորաբաժանումները ապաքաղաքականացնելու մասին» որոշումը: Դրանով փաստորեն բացառվեց հասարակության մեջ ցանկացած գաղափարական պարտադրանք:

Իսկ 1991 թ. փետրվարի 26–ին ՀՀ ԳԽ–ն ընդունեց «Հասարակական–քաղաքական կազմակերպությունների մասին» օրենքը, որով վերացվեց կոմունիստական կուսակցության շուրջ 70–ամյա մենիշխանությունը: Իրավաբանորեն ամրագրվեց բազմակուսակցականության սկզբունքը: Հանրապետության քաղաքացիները կամավորության սկզբունքով ազատորեն կարող էին հիմնել հասարակական կազմակերպություններ:

Մինչ այդ օրենքի հրապարակումը հայրենիքում իրենց գործունեությունն էին վերահաստատել խորհրդայնացումից հետո սփյուռքում գործող հայ ավանդական կուսակցությունները՝ Հայ հեղափոխական դաշնակցությունը (ՀՅԴ), Սոցիալ–դեմոկրատական հնչակյան և Ռամկավար ազատական:

Ստեղծվեցին նոր կուսակցություններ՝ Ազգային ինքնորոշում միավորում (ԱԻՄ), Հայաստանի հանրապետական կուսակցություն (ՀՀԿ), Ազգային ժողովրդավարական միություն (ԱԺՄ), «Սահմնադրական իրավունք» միություն (ՍԻՄ), իսկ քիչ ավելի ուշ՝ Հայաստանի ժողովրդական (ՀԺԿ), Օրինաց երկիր (ՕԵԿ), Ժառանգություն, Բարգավաճ Հայաստան (ԲՀԿ) կուսակցությունները: Հետագայում նրանց թիվը աճեց:

Այսպես՝ 2001 թ. տվյալներով Հայաստանում գրանցված էր շուրջ 100 կուսակցություն ու քաղաքական միավորում: Ստեղծվել էին նաև փախստականների, զանգվածային լրատվության, մարդասիրական օգնության, գիտության և կրթության, մարդու իրավունքների, մշակույթի և սպորտի ու այլ բնագավառների 2579 հասարակական կազմակերպություն:

Դժբախտաբար, կուսակցությունների մեծ մասը արհեստականորեն համալրելով իրենց շարքերը, դադարել էր գաղափարների շուրջը համախմբված կոլեկտիվ լինելուց և հիմնականում դարձել էին ընտրություններ ապահովող կառույցներ: Հետևաբար՝ որոշ կուսակցություններ և քաղաքական միավորումներ, ոչ թե գաղափարական, այլ իրավիճակային շահերից ելնելով, ձևավորում են քաղաքական դաշինքներ:

Հարցեր և առաջադրանքներ

1. Որո՞նք էին ՀՀ տնտեսական կյանքի կազմալուծման պատճառները: Ի՞նչ միջոցառումներ ձեռնարկվեցին տնտեսական կյանքը վերականգնելու ուղղությամբ. ի՞նչ արդյունքներ արձանագրվեցին:
2. Քաղաքական համակարգի վերափոխման և հասարակական–քաղաքական կարգի ժողովրդավարացման ուղղությամբ ի՞նչ քայլեր ձեռնարկվեցին. ի՞նչ փոփոխություններ արձանագրվեցին դրանց արդյունքում:
3. Քաղաքական և հասարակական ի՞նչ կազմակերպություններ էին գործում ՀՀ–ում: Ե՞րբ է ՀՀ օրենսդրությամբ ամրագրվել բազմակուսակցականության սկզբունքը: Գնահատե՛ք ՀՀ–ում գործող կուսակցությունները և հասարակական կազմակերպությունները:

ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՆՈՒՆՆԵՐ, ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«ՀՀ պետական սեփականության մասին» օրենք, ՌԱԿ, ԱԻՄ, ՀՀԿ, ԱԺՄ, ՄԻՄ, ՀԺԿ, ՕԵԿ, Ժառանգություն, ԻՀԿ:

§ 3. ՀՀ ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ: ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔԸ

Ներքաղաքական զարգացումները 1991–1998 թթ.: Հանրապետությունում ներքաղաքական կյանքի զարգացումները հիմնականում բացահայտվում էին խորհրդարանական և նախագահական ընտրություններով:

1990–1994 թթ. ընթացքում պետությունը թե՛ իշխանական և թե՛ ընդդիմադիր կուսակցությունների և հասարակական կազմակերպությունների կայացումն ու զարգացումը չէր կասեցնում: Ընդհակառակը, նրանցից շատերը գործունեության համար գրասենյակներ և այլ պայմաններ ստացան:

Հայաստանի Գերագույն խորհրդում նույնպես իրենց կշռին համապատասխան քաղաքական ուժերի ներկայացվածություն կար:

Ներքաղաքական վիճակը փոխվեց 1994 թ. դեկտեմբերի վերջին, երբ կասեցվեց դաշնակցության գործունեությունը Հայաստանում: ՀՀՇ–ն ՀՅԴ–ին մե-

կուսացրեց 1995 թ. հուլիսի 5–ի խորհրդարանական ընտրություններից՝ ապահովելով իր բացարձակ մեծամասնությունը նոր խորհրդարանում: Դա արդեն ժողովրդավարության կոպիտ խախտում էր: Այդ խախտումները կրկնվեցին նաև 1996 թ. սեպտեմբերի 22–ի նախագահական ընտրություններում: Ընտրակեղծիքները հանգեցրին դժգոհությունների և հանրահավաքների, որոնց մասնակիցները ներխուժեցին անգամ խորհրդարանի շենք, որտեղ տեղակայված էր Կենտրոնական ընտրական հանձնաժողովը (ԿԸՀ):

Սկսվեցին ընդդիմության առաջնորդների և շարժման ակտիվիստների ձերբակալությունները, արգելվեցին հանրահավաքներն ու ցույցերը:

Ներքաղաքական կյանքում ճգնաժամի խորացմանը նպաստում էին նաև արցախյան հիմնահարցի չլուծված մնալը և դրա վերաբերյալ իրարամերժ տեսակետների առկայությունը:

Դա ի վերջո հանգեցրեց 1998 թ. փետրվարին ՀՀ նախագահ Լևոն Տեր–Պետրոսյանի հրաժարականին:

1998 թ. մարտին արտահերթ նախագահական ընտրությունների ժամանակ հանրապետության նախագահ ընտրվեց Ռոբերտ Քոչարյանը: Ներքաղաքական կյանքում լարվածությունը թուլացնելու համար վերականգնվեց ՀՅԴ կուսակցության օրինական կարգավիճակը և ազատ արձակվեցին քաղբանտարկյալները: Այս միջոցառումները հասարակության դրական արձագանքին արժանացան:

Սակայն շուտով երկրի կայունությունը խախտվեց. 1999 թ. հոկտեմբերի 27–ին զինված 5 ահաբեկիչներ ներխուժեցին խորհրդարան: Ահաբեկության հետևանքով զոհվեցին պետական 8 գործիչներ, այդ թվում՝ ԱԺ–ի նախագահ Կարեն Դեմիրճյանը, վարչապետ Վազգեն Սարգսյանը:

Ահաբեկությունը մեծագույն վնաս հասցրեց երկրի ներքին և արտաքին դրությանը: Այդուհանդերձ, երկրի ղեկավարությանը հաջողվեց խուսափել անցանկալի զարգացումներից և կայունացնել ներքաղաքական վիճակը:

Ներքաղաքական կյանքը XXI դ. սկզբներին:

2003 թ. փետրվարի 19–ին և մարտի 5–ին երկու փուլով անցկացված նախագահական ընտրություններում ՀՀ նախագահ վերընտրվեց Ռոբերտ Քոչարյանը:

Իսկ 2003 թ. մայիսի 25–ի խորհրդարանական ընտրություններից հետո՝ անկախության հռչակումից հետո, առաջին անգամ առավել շատ ձայներ ստացած երեք կուսակցությունները՝ ՀՀԿ, ՕԵԿ, ՀՅԴ, կազմեցին քաղաքական կոալիցիոն կառավարություն: Այս պրակտիկան գործեց նաև 2007 թ. մայիսի 12–ի խորհրդարանական ընտրություններից հետո: Այս անգամ կոալիցիոն կուսակցության մաս կազմեցին ՀՀԿ, ԲՀԿ և ՀՅԴ կուսակցությունները: Քիչ ավելի ուշ՝ 2008 թ. մարտ–ապրիլ ամիսներին, կոալիցիայի կազմում տեղի ունեցան փոփոխություններ: Նախ ՕԵԿ–ը մաս կազմեց կոալիցիայում, իսկ հետո ՀՅԴ–ն դուրս եկավ կոալիցիայից:

Բնականաբար, այս գործընթացները որոշակիորեն ազդում էին երկրի ներքաղաքական զարգացումների վրա: Վիճակն ավելի բարդացավ 2008 թ. փետրվարի 18–ի նախագահական ընտրություններին:

Հիմնական պայքարն ընթանում էր հանրապետության առաջին նախագահ Լ. Տեր–Պետրոսյանի և վարչապետ Սերժ Սարգսյանի միջև: ՀՀ նախագահ ընտրվեց Սերժ Սարգսյանը: Ընդդիմությունը վիճարկեց ընտրության արդյունքները և անցկացրեց հանրահավաքներ: Իշխանության առաջարկած համագործակցությունն ու երկխոսությունը չկայացան: Ընդհակառակը, ավելի ապակայունացավ ներքաղաքական իրավիճակը:

Մարտի 1–ին մայրաքաղաքում անցանկալի զինված բախում տեղի ունեցավ ոստիկանների և ցուցարարների միջև, որի արդյունքում զոհվեց 10 մարդ:

Նման զարգացումները անհարիր են ժողովրդավարության ուղին բռնած իրավական պետությանը. և ամեն ինչ պետք է անել՝ հետագայում բացառելու նման դեպքերը:

Մշակութային կյանքը: Անկախության հռչակումով հնարավորություններ ստեղծվեցին ազգային մշակույթի զարգացման համար:

Այդուհանդերձ, անցման շրջանում առկա տնտեսական, քաղաքական դժվարությունները թույլ չէին տալիս մշակույթի զարգացումը:

Մշակութային բազմաթիվ օջախներ դադարեցին գործելուց: Շատերը սեփականաշնորհվեցին: Պետական անհրաժեշտ հոգածության բացակայության պատճառով արվեստի բազմաթիվ կոթողներ, ճարտարապետական հուշարձաններ, թատրոններ, կինոյի շենքեր անմխիթար վիճակում էին:

Գիտության, մշակույթի որոշ գործիչներ հարկադրված լքում էին հայրենիքը կամ զբաղվում այլ աշխատանքներով: Ասվածը բնորոշ է հատկապես 1991–1995 թթ. համար:

Էներգետիկ ճգնաժամի հաղթահարումը պայմանավորեց մշակութային կյանքի աշխուժացումը: Ասվածն առաջին հերթին վերաբերում է մամուլին. լրատվամիջոցներն ազատորեն արտահայտում են իրենց կարծիքները:

Զարգացավ կրթությունը և այդ բնագավառում կատարվեցին արմատական բարեփոխումներ: Հանրակրթությունը (միջնակարգ) դարձավ 12–ամյա, որից պարտադիր է 9–ամյա հիմնական կրթությունը: Աշակերտներն ապահովվեցին դպրոցական նոր դասագրքերով:

Մեծ ուշադրություն դարձվեց բուհական և հետբուհական կրթությանը:

Գիտությունը զարգացնելու նպատակով ընդունվեցին մի շարք որոշումներ: Հաջողություններ արձանագրվեցին հայագիտության ասպարեզում: 2012 թ. ՀՀ կառավարությունն ընդունեց «Հայագիտության զարգացման հայեցակարգը»:

Կազմակերպվում էին բազմաթիվ երաժշտական, թատերական, կինոարվեստի փառատոներ, ցուցահանդեսներ, աշխարհահռչակ մշակութային գործիչների հյուրախաղեր և այլն:

Համընդհանուր ընդունելության արժանացավ «Ոսկե ծիրան» կինոփառատոնը: ՅՈՒՆԵՍԿՕ–ի կողմից Երևանը հայտարարվեց 2012 թ. գրքի համաշխարհային մայրաքաղաք:

Մշակույթը հզոր զենք է աշխարհին ներկայացնելու հայ ժողովրդի մտավոր, հոգևոր և նյութական արժեքները:

Հարցեր և առաջադրանքներ

1. ՀՀ ներքաղաքական կյանքում ինչ զարգացումներ տեղի ունեցան 1991–1998 թթ.: Գնահատեք այդ ժամանակաշրջանում անցկացված համապետական ընտրությունները:
2. Երբ կասեցվեց դաշնակցության գործունեությունը. գնահատեք ՀՀԾ–ի այդ քայլը: Երբ է վերականգնվել ՀՅԴ–ի օրինական կարգավիճակը:
3. Գնահատեք 1999 թ. հոկտեմբերի 27–ի դեպքերը. ինչ հետևանքներ ունեցան:
4. Մշակութային կյանքի անկումն ու աշխուժացումը ինչ գործոններով էին պայմանավորված: ՀՀ–ն ինչ քայլեր ձեռնարկեց կրթական, գիտական և մշակութային կյանքը զարգացնելու ուղղությամբ:

ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՆՈՒՆՆԵՐ, ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԿԸՀ, կոալիցիոն կառավարություն, մարտի 1, «Հայագիտության զարգացման հայեցակարգ», «Ոսկե ծիրան», գրքի համաշխարհային մայրաքաղաք

§ 4. ՀՀ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ միջազգային ճանաչումը: Իրական անկախության կարևորագույն չափանիշներից մեկն էլ ՀՀ միջազգային ճանաչումը և նրա հետ դիվանագիտական կապերի հաստատումն է: ՀՀ–ն հենց սկզբից արտաքին–քաղաքական գերակայություններից մեկը հռչակեց աշխարհի հետ ուղղակի արտաքին կապերի հաստատումը:

Դեռևս ԽՍՀՄ կազմալուծման նախօրեին Հայաստանը նախկին միութենական հանրապետությունների հետ, տնտեսական և մշակութային կապերից զատ, աստիճանաբար հաստատում էր քաղաքական հարաբերություններ:

Փաստական առումով 1991 թ. նոյեմբերի 21–ին ՀՀ անկախությունը առաջինը ճանաչել և նրա հետ դիվանագիտական կապեր էր հաստատել նորանկախ Լիտվայի Հանրապետությունը:

ՀՀ–ի համար անչափ կարևոր էր Ռուսաստանյան Դաշնության կողմից 1991 թ. դեկտեմբերի 17–ին ՀՀ անկախության ճանաչումը: Հաջորդ օրը իր հերթին Հայաստանը ճանաչեց Ռուսաստանի անկախությունը: Ռուսաստանի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատվեցին 1992 թ. ապրիլին:

1991 թ. դեկտեմբերի 25–ին ԱՄՆ նախագահ Ջորջ Բուշը հայտարարեց, որ իր երկիրը պաշտոնապես Հայաստանը ճանաչում էր ինքնիշխան պետություն: 1992 թ. հունվարի 7–ից ՀՀ–ի և ԱՄՆ–ի միջև հաստատվեցին դիվանագիտական հարաբերություններ:

1991 թ. դեկտեմբերին Հայաստանի անկախությունը ճանաչել էր նաև Թուրքիան: Սակայն պաշտոնական ուղերձում Թուրքիայի նախագահը մտահոգություն էր արտահայտում Հայաստանի հնարավոր տարածքային պահանջատիրության վերաբերյալ: Փաստորեն Թուրքիան սկզբից ևեթ նախապայմաններ էր ներկայացնում:

ՀՀ անկախությունը ճանաչեցին Չինաստանը, Իրանը, Հնդկաստանը, Գերմանիան, Մեծ Բրիտանիան, Ճապոնիան, Եգիպտոսը և շատ ուրիշներ: Հանրապետության միջազգային ճանաչումը և նրա հետ դիվանագիտական կապերի հաստատումն առ այսօր շարունակվում են:

1992 թ. մարտի 2–ին Հայաստանը դարձավ Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) լիիրավ անդամ: ՄԱԿ–ին անդամակցելուց հետո ՀՀ–ն հնարավորություն ուներ միջազգային այդ բարձր ամբիոնից բարձրացնելու Արցախի հիմնահարցը, դատապարտելու հայ խաղաղ ազգաբնակչության նկատմամբ Ադրբեջանի վարած հայահալած քաղաքականությունը և այլն:

Արտաքին քաղաքականությունը: ՀՀ–ն որոշակի առաջնություն էր տալիս ԱՊՀ երկրների հետ հարաբերություններ հաստատելուն: ԱՊՀ երկրների հետ Հայաստանի հարաբերությունները կրում էին կրկնակի բնույթ՝ մասնակցությունը ԱՊՀ համակարգող մարմինների աշխատանքներին և երկկողմ հա-

րաբերությունների զարգացումը համագործակցության անդամ երկրի հետ:

Անչափ կարևոր է նաև այն, որ պայմանագրերից մեկի համաձայն՝ ԱՊՀ երկրներից որևէ մեկի զինված ուժերը չեն կարող օգտագործվել մյուսների դեմ:

Հայաստանի համար կարևոր նշանակություն ունի նաև 1997 թ. օգոստոսի 29–ին Ռուսաստանյան Դաշնության հետ բարեկամության, համագործակցության և օգնության մասին կնքված պայմանագիրը, ինչպես նաև «Ռուս–հայկական համատեղ հռչակագիրը»: ՀՀ–ում գործում է ռուսական կապիտալի մասնաբաժնով 1200 ընկերություն: Հայաստանի տնտեսության մեջ ՌԴ–ի ներդրումները մինչև 2011 թ. կազմել են 2,5 մլրդ դոլար:

Չափազանց կարևոր էին Հայաստանի հարաբերությունները հարևան Վրաստանի հետ: Վրաստանի տարածքով անցնող տրանսպորտային հաղորդակցությունը ՀՀ հիմնական ելքն է դեպի արտաքին աշխարհ: 1992 թ. հունիսին երկու երկրների միջև հաստատվեցին դիվանագիտական հարաբերություններ, իսկ 2001 թ. կնքվեց «Բարեկամության, համագործակցության և փոխադարձ անվտանգության մասին» հայ–վրացական պայմանագիրը:

Հայ–վրացական կայուն հարաբերությունները խիստ անհրաժեշտ են նաև Վրաստանում բնակվող մեծաքանակ վիրահայության, հայկական պատմական Ջավախք աշխարհի, հայկական մշակույթի բազմաթիվ հուշարձանների անվտանգության պահպանման համար:

Աշխույժ տնտեսական, քաղաքական հարաբերություններ են հաստատվել Իրանի հետ: Սկզբնական շրջանում Իրանը արտաքին աշխարհի հետ կապվելու, տնտեսական գործունեություն ծավալելու Հայաստանի միակ հուսալի կամուրջներից էր: Իրանը Հայաստանի կարևոր առևտրային գործընկերներից է:

Հայ–ամերիկյան հարաբերությունները ՀՀ անկախությանը հաջորդած առաջին տասնամյակում դինամիկ զարգացում էին ապրում: Հայաստանի նկատմամբ ԱՄՆ–ի քաղաքականությունը առավելապես

պայմանավորված էր Անդրկովկասում նրա ունեցած ռազմավարական հետաքրքրությամբ, ինչպես նաև այդ երկրում ազդեցիկ հայ համայնքի առկայությամբ:

Հայաստանում գործում են ԱՄՆ սեփականություն հանդիսացող մի շարք ընկերություններ: ԱՄՆ–ը Հայաստանի երկրորդ առևտրային գործընկերն է. Ռուսաստանից հետո նրա հետ առևտուրը կազմում է Հայաստանի առևտրի ընդհանուր ծավալի 11 %–ը: Հատկապես առանձնանում էր ԱՄՆ Լինսի հիմնադրամը (ստեղծվել է ամերիկահայ մեծահարուստ Քըրք Քըրքորյանի նախաձեռնությամբ):

Հայաստանի Հանրապետությունը Եվրոպայի խորհրդի (ԵԽ) լիիրավ անդամ է դարձել 2001 թ. հունվարի 25–ին: Դրանով Հայաստանը հավաստեց քաղաքական, իրավական, մարդու իրավունքների պաշտպանության և այլ բնագավառներում եվրոպական չափանիշներին հետևելու իր վճռականությունը:

1996 թ–ից սկսեցին զարգանալ ՀՀ — Եվրամիություն (ԵՄ) փոխհարաբերությունները ամենատարբեր ոլորտներում:

«Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրի շրջանակներում ՀՀ–ի կողմից 1996 թ. ապրիլին ՆԱՏՕ–ի ղեկավարությունը ներկայացված փաստաթղթով փաստացի սկիզբ դրվեց Հյուսիսատլանտյան դաշինքի հետ ՀՀ անհատական գործընկերությանը: Խիստ կարևորվում է ՆԱՏՕ–ի հետ համագործակցությունը ռազմաքաղաքական, գիտական, արտակարգ իրավիճակների, քաղաքացիական պաշտպանության, խաղաղապահ գործողությունների իրականացման, քաղաքացիական–զինվորական հարաբերությունների ոլորտներում և այլն:

Այսօր ՀՀ–ն աշխարհի 150–ից ավելի երկրների հետ ունի դիվանագիտական հարաբերություններ, 30–ից ավելի երկրներում գործում են ՀՀ դեսպանություններ, ներկայացուցչություններ ու հյուպատոսություններ:

ՀՀ արտաքին քաղաքականությունն ուղղված է երկրի անվտանգության ամրապնդմանը, տնտեսական զարգացմանը և տարածաշրջանում իր դերի բարձրացմանը:

Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացը: Նորանկախ Հայաստանի Հանրապետության համար կենսական նշանակություն ուներ նաև Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումը: 1991 թ. դեկտեմբերի 10–ին ՀՀ–ն միացավ «Ցեղասպանության հանցագործությունների կանխման և դրա համար պատժի մասին» ՄԱԿ–ի 1948 թ. կոնվեցիային: Դրանով ՀՀ–ն վերահաստատեց, որ ոճիրը ոչ միայն հայ ժողովրդի ողբերգությունն է, այլև մարդկության դեմ կատարված ծանրագույն հանցանք:

Հայոց ցեղասպանությունը ճանաչել և դատապարտել են շուրջ 25 երկրներ (Ուրուգվայ, Ռուսաստան, Կանադա, Կիպրոս, Հունաստան, Լիբանան, Արգենտինա և ուրիշներ):

Բելգիան օրենք է ընդունել հայոց ցեղասպանությունը մերժող անձանց դատապարտելու մասին: 2007 թ. նման օրենք ընդունել է նաև Արգենտինան: 2012 թ. Ֆրանսիայի Սենատը նույնպես ընդունեց հայոց ցեղասպանության ժխտման քրեականացնող օրենք, սակայն այն Սահմանադրական խորհրդի կողմից մերժվեց:

Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումը մշտապես հանդիպում է Թուրքիայի դիմադրությանն ու դժգոհությանը: Այնուամենայնիվ, այդ հարցը աստիճանաբար քննարկվում է նաև Թուրքիայում: Վառ ապացույցը 2007 թ. հունվարի 19–ին Ստամբուլում «Ակոս» թերթի խմբագիր Հրանտ Դինքի սպանությունից հետո ծավալված շարժումն էր: Դինքի թաղման արարողությունը վերածվեց բազմահազարանոց բողոքի ցույցի: Թուրքիայի առաջադեմ հանրությունն առաջնորդվում էր «Բոլորս հայ ենք, բոլորս Հրանտ Դինք ենք» կարգախոսներով:

Արդյունք չտվեց նաև ՀՀ նախագահի ձեռնարկած «ֆուտբոլային դիվանագիտությունը». Թուրքիան առ այսօր շարունակում է ժխտել Հայոց ցեղասպանությունը:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ներկայացրե՛ք ՀՀ միջազգային ճանաչման գործընթացը: Քարտեզի վրա ցո՛ւյց տվեք այն երկրները, որոնց հետ ՀՀ–ն հաստատել էր դիվանագիտական հարաբերություններ: Սխեմայի ձևով ներկայացրե՛ք ՀՀ դիվանագիտական կապերը:
2. Ե՞րբ է ՀՀ–ն դարձել ՄԱԿ–ի լիիրավ անդամ: Վերհիշե՛ք, թե երբ է ստեղծվել ՄԱԿ–ը և ինչպիսի կառույց է:
3. Ներկայացրե՛ք և մեկնաբանե՛ք ՀՀ միջպետական հարաբերությունները ՌԴ–ի, ԱՄՆ–ի, հարևան երկրների և միջազգային կառույցների հետ:
4. Ներկայացրե՛ք և մեկնաբանե՛ք Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացը. ձեր կարծիքով՝ ինչո՞ւ է այն կարևոր: Ո՞րն է Թուրքիայի ժխտողական քաղաքականության պատճառը: Ձեր կարծիքով ինչպե՞ս կարելի է հասնել պատմական արդարության վերականգնմանը և Հայկական հարցի լուծմանը:

ՆՈՐ ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՆՈՒՆՆԵՐ, ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ջորջ Բուշ, ՄԱԿ–ի լիիրավ անդամ, ԱՊՀ, «Ռուս–հայկական համատեղ հռչակագիր», «Գազպրոմ», «Բարեկամության, համագործակցության և փոխադարձ անվտանգության մասին» պայմանագիր, «Հայաստանի Հանրապետության և Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարությունների միջև կապիտալ ներդրումների խրախուսման և փոխադարձ պաշտպանության մասին» պայմանագիր, Լինսի հիմնադրամ, Քրրք Քըրքորյան, ԵԽ, Սևծովյան տնտեսական համագործակցության կազմակերպություն, ԵՄ, «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագիր, ՆԱՏՕ, «Ակոս», Հրանտ Դինք:

§ 5. ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

1991 թ. դեկտեմբերի 10–ի անկախության հանրաքվեն: Արցախում զանգվածային բռնություններն իրենց գագաթնակետին հասան 1991 թ. ապրիլ–մայիս ամիսներին: Հայերին տեղահանելու նպատակով ադրբեջանական հատուկ նշանակության զինված ջոկատները խորհրդային զորքերի հետ միասին փաստացի բացահայտ պատերազմ սկսեցին Գետաշենի և Շահումյանի հայ բնակչության դեմ: Մինչև ատամները զինված ջոկատները ԽՍՀՄ ներքին զորքերի օգնությամբ այդ բնակավայրերում ձեռնարկեցին «Օղակ»

օպերացիան: Խանլարի շրջանի Գետաշեն և Մարտունաշեն գյուղերի ինքնապաշտպանական մարտերում հերոսաբար զոհվեցին ազատամարտիկներ Թաթուլ Կրպեյանը, Սիմոն Աչիքգյոզյանը, Մարտիրոս Շահնազարյանը, Արթուր Կարապետյանը, Վալերի Նազարյանը: Անհավասար կռվում բռնազավթիչները հիմնովին ավերեցին ու հրկիզեցին Գետաշենն ու Մարտունաշենը: Տեղի հայ բնակչությունը հարկադրված լքեց պապենական հողը:

Այսպես՝ 1991 թ. մայիսից ԼՂԻՄ–ում հայ–ադրբեջանական ազգամիջյան իսկական պատերազմ սկսվեց:

Հայրենի եզերքը պաշտպանելուն զուգընթաց, միջազգային հանրությանը արցախյան արդարացի հիմնահարցը ներկայացնելու, նրա աջակցությունը ստանալու ակնկալիքով արցախահայությունը ԼՂՀ–ի հռչակումից (1991 թ. սեպտեմբերի 2) հետո՝ ***1991 թ. դեկտեմբերի 10–ին,*** անցկացրեց անկախության հանրաքվե: Անգամ պատերազմը և Ադրբեջանի բարձրացրած աղմուկ–աղաղակը չկարողացան ազդել հանրաքվեի վրա: ԼՂՀ–ի բնակչության քվեարկության իրավունք ունեցողների 80%–ը մասնակցեց այդ հանրաքվեին, իսկ քվեարկողների 99%–ից ավելին ձայն տվեց անկախության օգտին:

Հանրաքվեն անցկացվեց միջազգային դիտորդների ներկայությամբ և միջազգային իրավունքի ու ժողովրդավարության սկզբունքների լիակատար պահպանմամբ:

ԼՂՀ իշխանության մարմինների ստեղծումը: ԼՂՀ խորհրդանիշները: Անկախության հռչակումից հետո սկսվեց իշխանության մարմինների կազմավորումը:

Բարձրագույն օրենսդիր մարմինը ԼՂՀ Գերագույն խորհուրդն էր (հետո՝ Ազգային ժողով): 1992 թ. հունվարի 8–ին անկախ Ղարաբաղի Գերագույն խորհրդի առաջին նախագահ ընտրվեց ***Արթուր Մկրտչյանը:***

Հետագայում ԼՂՀ Ազգային ժողովի բոլոր ընտրությունները տեղի են ունեցել իրավական և ժողովրդավար պետությանը հարիր ընթացակարգով:

Բարձրագույն գործադիր մարմինը ԼՂՀ նախարարների խորհուրդն էր (հետագայում՝ կառավարություն): ԼՂՀ առաջին վարչապետ նշանակվեց Օլեգ Եսայանը: ՀՀ օրինակով ձևավորվեց նաև ԼՂՀ դատական համակարգը:

Ինքնապաշտպանական մարտերում սկսվեց կազմավորվել նաև ԼՂՀ հաղթական բանակը:

Հետագայում ԼՂՀ–ում մտցվեց նախագահական կառավարում և 1994 թ. դեկտեմբերին ԼՂՀ Գերագույն խորհրդի կողմից Ռ. Քոչարյանը ընտրվեց հանրապետության նախագահ: Իսկ 1996 թ. նոյեմբերից նա պաշտոնը վարեց համաժողովրդական ընտրությամբ:

1992 թ. ընդունվեցին ԼՂՀ պետական զինանշանն ու դրոշը: Դրոշն ուղղանկյունաձև է՝ հորիզոնական կարմիր, կապույտ, նարնջագույն շերտերով: Դրոշի աջ կողմի երկու ծայրերից սկսվում են սպիտակ հնգատամ սանդղանման գորգանախշեր, որոնք միանում են դրոշի մեկ երրորդ հատվածում:

ԼՂՀ պետական զինանշանում օգտագործված է գլխավերևում արևի ճառագայթներով՝ Արտաշեսյանների հարստության թագով պսակված՝ թևատարած արծվի խորհրդանիշը: Կենտրոնում՝ ԼՂՀ պետական դրոշի և Քիրս լեռան պատկերի ֆոնին «Մենք ենք, մեր սարերը» հուշարձանի պատկերն է: Ներքևում՝ արծվի ճանկերի մեջ, խաղողի վազերի, թթենու պտուղների, ցորենի հասկերի պատկերներն են: Վերևի կիսաշրջանում կա հայերեն մակագրություն. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն – Արցախ»:

ԼՂՀ հռչակումը, պետական իշխանության ձևավորումը նպաստավոր պայմաններ ստեղծեցին արցախյան շարժման հետագա հաջողությունների, ինչպես նաև պատերազմական գործողություններին վերջ տալու համար:

Արցախյան պատերազմը: Գնալով ավելի էր ուժգնանում ԼՂՀ–ի դեմ Ադրբեջանի ագրեսիան: Անընդհատ ռմբակոծության թիրախ դարձան մայրաքաղաք Ստեփանակերտը և շրջակա հայկական

բնակավայրերը: ԼՂՀ ինքնապաշտպանական ուժերը ձեռնամուխ եղան հակառակորդի կրակակետերի ոչնչացմանը: Այդ առումով կարևոր նշանակություն ունեցավ 1992 թ. հունվարին Կրկժանի ազատագրումը, որը ադրբեջանցի գրոհայինների ռազմական հենակետերից մեկն էր:

Վերացվեց նաև ***Խոջալուի*** ռազմական խմբավորումը: Վերականգնվեց Ստեփանակերտ – Ասկերան մայրուղու բնականոն գործունեությունը: Աշոտ Ղուլյանի (Բեկոր) գլխավորությամբ հայ ազատամարտիկները մոտեցան օդանավակայանին:

Վիճակը շտկելու համար Ադրբեջանի Ազգային ճակատը կազմակերպեց Խոջալուի խաղաղ բնակչության (հիմնականում ադրբեջանցիներ) կոտորածը (1400–2000 զոհ)՝ փորձելով դա վերագրել հայկական կողմին: Խոջալուն ադրբեջանցիների առաջին խոշոր պարտությունն էր:

Հայ ազատագրական պայքարի պատմության փառավոր էջերից է Շուշիի ազատագրումը: Ստեփանակերտի խաղաղ բնակչության ռմբակոծումը երկու տարի շարունակ կատարում էին Շուշի քաղաքից: Մայրաքաղաքը կաթվածահար վիճակում էր: Բնակչությունը հիմնականում գտնվում էր ապաստարաններում:

Մշակվեց Շուշիի ազատագրման խիստ գաղտնի ծրագիրը, որը կոչվեց ***«Հարսանիք լեռներում»:***

1992 թ. մայիսի 9–ին Արցախի ազատամարտիկները, զորահրամանատար Արկադի Տեր–Թադևոսյանի (Կոմանդոս) հրամանատարությամբ, ազատագրեցին հայոց պատմական ***Շուշի*** քաղաքը:

Շուշիի ազատագրումը հայ ազատամարտիկների հավաքական ուժերի (շուրջ 60 ջոկատ) անձնուրաց գործողությունների արդյունք էր: Մասնակիցների անունները ոսկե տառերով գրվեցին հայոց ազատամարտի տարեգրության մեջ:

Շարունակելով առաջխաղացումը՝ ԼՂՀ ինքնապաշտպանական ուժերը **մայիսի 18–ին** գրավեցին **Լաչինը**: Դրանով վերջ տրվեց Արցախի հինգ տարի տևող շրջափակմանը: Լաչինը դարձավ մարդա-

սիրական միջանցք ՀՀ–ի և ԼՂՀ–ի միջև, որտեղով սնունդ, վառելանյութ, դեղորայք և առաջին անհրաժեշտության այլ ապրանքներ էին առաքվում արցախահայությանը:

Ագրեսորը՝ Ադրբեջանը, չհաշտվեց պարտության հետ և 1992 թ. ամռանը օտարերկրյա վարձկանների օգնությամբ հարձակվեց ԼՂՀ հյուսիսային շրջանների վրա: Թշնամին գրավեց ու ավերեց Շահումյանի շրջանը, Մարտակերտի շրջանի մի մասը: ԼՂՀ–ում ստեղծվեց Պաշտպանության պետական կոմիտե (ՊՊԿ)՝ Ռոբերտ Քոչարյանի գլխավորությամբ: ՊՊԿ–ն հսկայական աշխատանք կատարեց: Նա ոչ միայն կազմակերպեց արցախահայության ինքնապաշտպանությունը, այլև իր ձեռքում կենտրոնացրեց ԼՂՀ գործադիր իշխանությունը: Հենց ՊՊԿ–ի ջանքերով կազմավորվեց ԼՂՀ մարտունակ բանակը:

1993 թ. գարնանը Արցախի ինքնապաշտպանական ուժերն սկսեցին ազատագրել ազերիների կողմից բռնազավթված հայկական տարածքները: Ազատագրվեց Մարտակերտի շրջանի զգալի մասը: Պաշտպանական նպատակ էր հետապնդում նաև ԼՂՀ ինքնապաշտպանական ուժերի կողմից Քելբաջարի, Ֆիզուլու. Ջեբրայիլի, Աղդամի շրջանների գրավումը:

Արցախյան ազատամարտում հերոսաբար զոհվեցին ***Մոնթե Մելքոնյանը (Ավո), Աշոտ Ղուլյանը (Բեկոր), Շահեն Մեղրյանը, Լեռնիդ Ազգալդյանը, Սամվել Շահմուրադյանը*** և շատ ուրիշներ:

ԼՂՀ ռազմական հաջողությունները կարևոր նշանակություն ունեցան: Համոզվելով, որ զինված ճանապարհով չի կարող ընկճել արցախահայությանը, Ադրբեջանը հարկադրված 1994 թ. մայիսի 12–ին ՌԴ և Մինսկի խմբի ակտիվ ջանքերով կնքեց զինադադար: Այն առ այսօր պահպանվում է:

Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի միջազգային կարգավորման գործընթացը: Արցախյան շարժումը հենց սկզբից գրավեց նաև միջազգային հանրության և պետությունների ուշադրությունը: ԽՍՀՄ–ի գոյության շրջանում Արցախյան շարժմա-

նը տրված սուբյեկտիվ գնահատականները երբեմն իրենց ազդեցությունն էին թողնում նաև միջազգային առանձին կառույցների վրա: Աստիճանաբար Արցախյան հիմնահարցը միջազգայնացվում էր:

Միայն 1993 թ. ընթացքում Լեռնային Ղարաբաղի կապակցությամբ ՄԱԿ–ում ընդունվել էր երեք բանաձև: Հիմնահարցի խաղաղ լուծման ուղղությամբ իր գործունեությունը ՄԱԿ–ը շարունակեց է նաև հետագայում:

1992 թ. հունվարին ՀՀ–ն անդամակցեց Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպությանը (ԵԱՀԿ): Բնականաբար, Հայաստանի անդամակցության հենց սկզբից ԵԱՀԿ–ն բավականաչափ ակտիվ գործունեություն ծավալեց ղարաբաղյան առճակատման խաղաղեցման և հարցը բանակցային ճանապարհով լուծելու ուղղությամբ:

ԵԱՀԿ–ն կոչ էր անում միջազգային հեղինակավոր կառույցներին շտապ միջոցներ ձեռնարկելու Ադրբեջանի վայրագությունները դադարեցնելու, Լեռնային Ղարաբաղի տանջահար ժողովրդին առարկայական օգնություն ցուցաբերելու նպատակով: Փաստորեն իր գոյության ողջ ընթացքում ԵԱՀԿ–ն առաջին անգամ դարձավ միջազգային առճակատման լուծման միջնորդ: Հենց ԵԱՀԿ ձևաչափով 1994 թ. մարտի 24–ին ստեղծվեց Արցախյան հիմնահարցի լուծման հիմնական կառույցը՝ ԵԱՀԿ Մինսկի խումբը՝ Ռուսաստանի, ԱՄՆ–ի և Ֆրանսիայի համանախագահությամբ:

Երկու տասնամյակ շարունակ Մինսկի խմբի անդամները ամենատարբեր պատվիրակությունների հետ միասին եղել են տարածաշրջանում, կազմակերպել են բազմապիսի հանդիպումներ և քննարկումներ:

Թե՛ ՀՀ–ն և թե՛ ԼՂՀ–ն կողմ են հիմնահարցի խաղաղ կարգավորմանը, միջազգային իրավունքի նորմերի պահպանմանը և պատմական արդարության վերականգնմանը, ինչը չի կարելի ասել Ադրբեջանի վերաբերյալ: Առայսօր ուղիներ են որոնվում Արցախյան հիմնահարցի լուծման ուղղությամբ:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչ գիտեք «Օղակ» օպերացիայի մասին: Երբ է ԼՂԻՄ–ում սկսվել հայ–ադրբեջանական պատերազմը: Երբ է հռչակվել ԼՂՀ–ն: Երբ է անցկացվել ԼՂՀ–ի անկախության հանրաքվեն:
2. Ներկայացրեք և մեկնաբանեք ԼՂՀ իշխանության մարմինների ստեղծման և ԼՂՀ–ի խորհրդանիշների ընդունման գործընթացը: Համեմատեք ՀՀ–ում և ԼՂՀ–ում տեղի ունեցած այդ գործընթացները:
3. Ներկայացրեք և մեկնաբանեք Արցախյան ազատագրական պայքարի կարևոր իրադարձությունները: Արցախյան ազատամարտի ինչ հերոսների գիտեք: Կազմեք Արցախյան ազատագրական պատերազմի ժամանակագրություն: Ձեր համայնքում կա՞ն արդյոք Արցախյան պատերազմի հերոսներ. պատմեք նրանց մասին:
4. Երբ է սկսվել ԼՂ հիմնախնդրի կարգավորման միջազգային գործընթացը: Ձեր կարծիքով ինչ լուծում կստանա այն:

ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՆՈՒՆՆԵՐ, ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Օղակ» օպերացիա, Թաթուլ Կրպեյան, Սիմոն Աչիքգյոզյան, Արթուր Մկրտչյան, Աշոտ Ղուլյան (Բեկոր), «Հարսանիք լեռներում», ՊՊԿ, Շահեն Մեղրյան, Լեոնիդ Ազգալդյան, Սամվել Շահումուրադյան, ԵԱՀԿ, ԵԱՀԿ Մինսկի խումբ:

ԳԼՈՒԽ II

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔԸ 1991 ԹՎԱԿԱՆԻՑ ՄԻՆՉԵՎ ՄԵՐ ՕՐԵՐԸ

§ 1. ՍՓՅՈՒՌՔԻ ՎԻՃԱԿԸ ԱՐԴԻ ՓՈՒԼՈՒՄ

Զանգվածային արտագաղթը և Սփյուռքի ստվարացումը: Հայկական Սփյուռքի կենսունակության գրավականը նրա մշտական և բազմակողմանի աշխույժ հարաբերություններն են Մայր հայրենիքի հետ:

Հայաստանի անկախության վերականգնումով լայն հնարավորություններ բացվեցին հայրենիքի և Սփյուռքի մեկուսի գոյությանը վերջ դնելու համար:

Արցախում սկսված ազգային–ազատագրական պայքարը, Հայաստանի շրջափակումը Ադրբեջանի և Թուրքիայի կողմից, տասնյակ հազարավոր ադրբեջանահայ փախստականների առկայությունը նորանկախ երկիրը կանգնեցրին սոցիալ–տնտեսական դժվարին կացության առջև:

Միևնույն ժամանակ, Հայաստանից ծայր առավ զանգվածային արտագաղթ, որն ուղղված էր ինչպես Սփյուռքի ավանդական բնակության երկրներ՝ համալրելով տեղի գաղթօջախները, այնպես էլ ոչ մեծաթիվ հայ բնակչություն ունեցող երկրներ ու տարածաշրջաններ: Արտագաղթը և աշխատանքային միգրացիան հիմնականում ուղղված էր հետխորհրդային տարածաշրջանի երկրներ (ՌԴ, Ուկրաինա, Բելառուս), Եվրոպա և ԱՄՆ: Դրա հետևանքով ՀՀ–ում նկատելի փոփոխություններ է կրել բնակչության սեռատարիքային կազմը:

Արտագաղթի արդյունքում սփյուռքի տարբեր գաղթօջախներ համալրվեցին, ստեղծվեցին նորերը: Ավանդական գաղթօջախներում հայ բնակչության նոր ալիքը որոշակի թարմություն, աշխուժություն է հաղորդել ինչպես կազմակերպական բարձր որակներ ունեցող, այնպես էլ նորաստեղծ համայնքներին, օտար միջավայրում զարկ է տվել ազգային մշակույթի վերելքին և նպաստել ազգային ինքնության պահպանմանը:

Սփյուռքի հիմնական կենտրոնները: Աշխարհասփյուռ հայության համախումբ բնակության հիմնական կենտրոններն են հետխորհրդային տարածքի երկրները, մասնավորապես ՌԴ–ն, Ուկրաինան, Վրաստանը, Եվրոպայի երկրները՝ Ֆրանսիան, Լեհաստանը, Հունաստանը, Կիպրոսը, Բուլղարիան, Բելգիան, ամերիկյան աշխարհամասում՝ ԱՄՆ–ը, Կանադան, Արգենտինան, Ուրուգվայը և Բրազիլիան:

Սփյուռքի հայահոծ կենտրոններից են Մերձավոր և Միջին Արևելքի երկրները. հայկական ստվար գաղթօջախներ կան Լիբանանում, Սիրիայում, Եգիպտոսում, Թուրքիայում, Իրանում:

Հետաքրքրական է, որ սփյուռքի ներսում ևս տեղի են ունենում միգրացիոն գործընթացներ ու արտագաղթ: Այսպես, տասնամյակներ առաջ սկսված և մինչև օրս պայթյունավտանգ համարվող մերձավորարևելյան տարածաշրջանից այսօր նույնպես շարունակվում է հայ բնակչության արտագաղթը դեպի ԱՄՆ, Եվրոպա, Ավստրալիա և այլուր:

Ընդ որում, Ավստրալիայի հայ համայնքը սկսել է ստվարանալ վերջին շրջանում և այսօր հանդիսանում է բավականին ազդեցիկ գաղութահայ կենտրոններից մեկը:

Սփյուռքի ամենաբազմամարդ հայկական գաղթօջախը ՌԴ–ն է, այստեղ ոչ պաշտոնական տվյալներով բնակվում է շուրջ 3 մլն, ԱՄՆ–ում՝ մոտ 1,5 մլն, Ֆրանսիայում, Ուկրաինայում և Վրաստանում՝ 400–500 հազ. հայ և այլն:

Հայրենիք — Սփյուռք հարաբերությունները: Հայաստանի անկախացումից հետո Հայրենիք — Սփյուռք հարաբերությունները փոխադրվեցին նոր հարթություն: Խորհրդային տարիներին այդ հարաբերությունները համակարգող Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեն, ազատվելով անցյալի գաղափարախոսական կապանքներից, ազատ գործունեության հնարավորություն ստացավ:

1991 թ. կոմիտեի ընդհանուր ժողովն ընդունել է նոր կանոնադրություն, որով մերժվում էր խտրական մոտեցումը Սփյուռքի տարբեր քաղաքական

հոսանքների նկատմամբ ու համագործակցություն էր առաջարկվում սփյուռքյան բոլոր հասարակական–քաղաքական կազմակերպությունների և կառույցների հետ:

Հայաստան–Սփյուռք կապերի աշխուժացումը հնարավորություն է բացել փոխշահավետ գործակցության համար, ինչի արդյունքում Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեն աստիճանաբար կորցրել է այդ հարաբերությունները տնօրինող մարմնի մենաշնորհային դերը: 1992 թվականից պետական ֆինանսավորման դադարեցումից հետո կոմիտեն ի զորու չեղավ իր առանցքային մասնակցությունը բերել Սփյուռքի հետ հարաբերություններում և 1998 թ. դադարեց գործելուց:

Հայաստան–Սփյուռք հարաբերությունները զարգացան մի կողմից՝ հայաստանյան կառույցների ու կազմակերպությունների, մյուս կողմից՝ սփյուռքյան համապատասխան հաստատությունների միջև: Հայաստանում վերահաստատվեցին ավանդական կուսակցությունները, նրանց մշակութային մասնաճյուղերը, միությունները, կառույցները:

Անկախության պայմաններում Սփյուռքի կողմից Հայաստանին ցուցաբերվող օգնությունը կազմակերպում և համակարգում էր 1992 թ. ստեղծված **«Հայաստան»** համահայկական հիմնադրամը:

Հայաստան–Սփյուռք հարաբերություններում նկատելի լարվածություն առաջացրեց քաղաքական տարաձայնությունների արդյունքում ՀՅԴ գործունեության կասեցումը 1994 թ. դեկտեմբերին: ՀՅԴ գործունեության վերականգնումը (1998 թ.) և ՀՀ իշխանությունների նոր մոտեցումները Սփյուռքի հետ հարաբերություններում հետագա համագործակցությունը խորացնելու հնարավորություններ ընձեռեցին:

Սփյուռքի հետ հարաբերությունները խորացնելու և ընդլայնելու ուղղությամբ կարևոր քայլ էին ՀՀ իշխանությունների նախաձեռնած «Հայաստան–Սփյուռք» համահայկական խորհրդաժողովները (1999, 2002, 2006, 2011):

Այդ առումով կարևոր էր նաև դեռևս 1997 թ. ապ-

րիլի 30–ին Սփյուռքի հայկական ավանդական միությունների, ինչպես նաև հայ մշակութային «Արարատ» (Իրան) կազմակերպության աջակցությամբ Երևանում կայացած հիմնադիր ժողովը և Համահայկական խաղերի համաշխարհային կոմիտեի (ՀԽՀԿ) ստեղծումը:

Համահայկական մարզական խաղերին մասնակցում են հայկական սփյուռքի տարբեր համայնքների տասնյակ պատվիրակություններ:

Հայաստան–Սփյուռք գործակցության խորացման առումով նշանակալի էր Երևանում անցկացված ՀՀ–Սփյուռք առաջին տնտեսական համաժողովը 2003 թ. սեպտեմբերին, որում նախանշվեցին գործարար կապերի ամրապնդման ծրագրերը:

2008 թ. ՀՀ կառավարության կառուցվածքում Սփյուռքի նախարարության ստեղծումով լայն հնարավորություններ բացվեցին Սփյուռքի հետ հարաբերությունները նոր հարթության վրա դնելու և համահայկական ծրագրերն առավել արդյունավետ իրականացնելու համար:

Այսպես՝ 2009 թ. ապրիլի 21–24–ը ՀՀ Սփյուռքի նախարարության նախաձեռնությամբ կազմակերպվեց և անցկացվեց ճարտարապետների համահայկական համաժողով, որը կրում էր «Հայկական ճարտարապետությունը և XXI դարը» խորագիրը, 2009 թ. սեպտեմբերի 18–21–ը՝ Իրավաբանների համահայկական առաջին համաժողովը, որին մասնակցեցին 70–ից ավելի սփյուռքահայ իրավաբաններ աշխարհի 17 երկրներից և այլն:

2010 թ. սեպտեմբերին Սփյուռքի նախարարությունը կազմակերպել է Կերպարվեստի գործիչների համահայկական համաժողով, որին մասնակցել են աշխարհի 15 երկրներից Հայաստան ժամանած շուրջ 60 արվեստագետներ:

Երևանում կազմակերպվել են նաև «Հայոց ցեղասպանության 100–րդ տարելիցին ընդառաջ» խորագիրը կրող լրագրողների (2012) և իրավաբանների (2013) համահայկական համաժողովներ: Տեղի են ունեցել նաև սփյուռքում հայապահպանությանը և ազգային

մշակույթի զարգացմանը, հայոց լեզվին ու կրթության խնդիրներին վերաբերող գիտաժողովներ:

Հայաստան–Սփյուռք հարաբերություններում նկատվող զգալի առաջընթացը կարևոր նախապայման է՝ ուղղված ինչպես Հայաստանի, այնպես էլ Սփյուռքի հետագա զարգացմանն ու հզորացմանը:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչո՞վ էին պայմանավորված սփյուռքահայ կենտրոններում տեղի ունեցած փոփոխությունները 1990–ական թթ.: Ի՞նչ հետևանքներ դրանք ունեցան: Սփյուռքահայ գաղթօջախներով նշանավոր ի՞նչ երկրներ գիտեք: Ցո՛ւյց տվեք դրանք քարտեզի վրա:
2. Ի՞նչ գիտեք Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի գործունեության մասին: Ինչո՞վ են պայմանավորված Հայաստան — Սփյուռք կապերի սերտացումը. ի՞նչ նշանակություն և հետևանքներ դա կարող է ունենալ:
3. Ձեր կարծիքով ինչո՞ւ է անհրաժեշտ Հայաստան — Սփյուռք կապերի սերտացումը: Սփյուռքի հետ հարաբերությունները սերտացնելու ուղղությամբ ի՞նչ միջոցառումներ է ձեռնարկել ՀՀ–ն. արդյո՞ք դրանք բավարար են: Ի՞նչ միջոցառումներ կձեռնարկեիք դուք:

ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՆՈՒՆՆԵՐ, ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Զանգվածային արտագաղթ, միգրացիոն գործընթացներ, «Հայաստան» համահայկական հիմնադրամ, «Հայաստան — Սփյուռք» համահայկական խորհրդաժողով, ՀԽՀԿ, ՀՀ — Սփյուռք առաջին փնտրեսական համաժողով, Սփյուռքի նախարարություն, Կերպարվեստի գործիչների համահայկական համաժողով:

ԲԱԺԻՆ 4. ԱՄՓՈՓՈՒՄ

1. Հայաստանում 1991 թ. սեպտեմբերի 21–ին անցկացվեց հանրաքվե՝ ԽՍՀՄ–ի կազմից դուրս անկախ պետություն դառնալու հարցով: Երկու օր անց, հենվելով ժողովրդի միահամուռ կամարտահայտման վրա, ՀՀ Գերագույն խորհուրդը հռչակեց Հայաստանի Հանրապետության անկախությունը: Սկսվեց նորանկախ պետության կայացման և ամրապնդման գործընթացը:

Երբ էր սկսվել Հայաստանի անկախացման գործընթացը: Ինչ փոփոխություններ կատարվեցին ՀՀ իշխանության երեք ճյուղերում:

Ազգային բանակը ինչ նշանակություն ունի Հայաստանի երրորդ հանրապետության համար:

Ձեր կարծիքով ինչո՞ւ նորանկախ հայկական պետության խորհրդանիշներ հաստատվեցին Առաջին հանրապետության խորհրդանիշները:

Ներկայացրե՛ք ՀՀ Սահմանադրության ընդունման գործընթացը, ինչ նշանակություն ունեցավ սահմանադրության ընդունումը:

2. Անկախության հռչակումից հետո ՀՀ–ի առջև ծառացան մի շարք հիմնախնդիրներ՝ տնտեսական, քաղաքական, սոցիալական և մշակութային: Ընդունվեցին բազմաթիվ օրենքներ և որոշումներ, որոնցով պետք է բնականոն հունի մեջ դրվեր երկրի ներքին և արտաքին կյանքը:

Որո՞նք էին ՀՀ տնտեսական ճգնաժամի գլխավոր պատճառները 1990–ական թթ. սկզբներին: Գնահատե՛ք այդ տարիներին իրականացված տնտեսական քաղաքականությունը:

Ինչ է նշանակում բազմակուսակցական համակարգ: ՀՀ – ում ե՞րբ է այն ձևավորվել: Թվարկե՛ք ձեզ հայտնի ՀՀ – ում գործող կուսակցություններ և հասարակական կազմակերպություններ:

Ներկայացրե՛ք ՀՀ ներքաղաքական կյանքի զարգացման առանձնահատկությունները 1991 թ. մինչև օրս:

Ինչ դժվարություններ էին առաջացել գիտության և մշակույթի բնագավառում անկախացումից հետո:

3. Հայաստանի նորահռչակ պետության համար մեծ նշանակություն ուներ միջազգային ճանաչման հասնելը և դիվանագիտական հարաբերությունների հաստատումը աշխարհի տարբեր պետությունների հետ, ինչի հնարավորությունը Հայաստանը չուներ ԽՍՀՄ–ի կազմում: Անհրաժեշտ էր նաև հստակեցնել ՀՀ արտաքին — քաղաքական հիմնական խնդիրներն ու նպատակները:

Ո՞ր երկրների հետ 1991–1992 թթ. ՀՀ–ն հաստատեց դիվանագիտական հարաբերություններ: Միջազգային ինչ կառույցների անդամ է ՀՀ–ն:

Թվարկե՛ք ՀՀ արտաքին քաղաքականության գլխավոր նպատակները:

Ներկայացրե՛ք Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման արդի փուլի արդյունքները և գլխավոր խոչընդոտները: Ձեր կարծիքով ե՞րբ կիրականանա մեր կորուստների արդարացի հատուցումը:

4. Արցախյան շարժումը և հայ ժողովրդի ազատագրական պայքարը Լեռնային Ղարաբաղի հարցի կարգավորման համար 1991 թ. թևակոխեց որակապես նոր իրավիճակ: ԽՍՀՄ ղեկավարությունը ճիգեր էր գործադրում միությունը կործանումից փրկելու նպատակով: Ազգային շատ հարցեր փորձեցին լուծել զորքի օգնությամբ, ինչը Ադրբեջանի իշխանությունների հետ համատեղ բացահայտ կիրառվեց հայերի նկատմամբ: Պայքարի արդյունքում ոչ միայն Արցախը դիմակայեց, այլ հայ ժողովրդի միացյալ և հերոսական ջանքերով ԼՂ – ում հռչակվեց հայկական երկրորդ պետությունը:

Ինչո՞ւ հայ ժողովուրդը կարողացավ դիմակայել խորհրդային զորքի և ադրբեջանական հատուկ ջոկատների ճնշմանը 1991 թվականին:

Ինչպե՞ս ստեղծվեց ԼՂՀ –ն: Ներկայացրե՛ք նրա խորհրդանիշները:

Ե՞րբ է սկվել հայ–ադրբեջանական պատերազմը: Համառոտ ներկայացրե՛ք պատերազմի ընթացքը և գլխավոր արդյունքները:

Ինչպիսի՞ վիճակում է ԼՂՀ հիմնախնդրի կարգավորման գործընթացը: Ձեր կարծիքով ո՞րն է հարցի արդարացի լուծումը:

5. Հայաստանի երրորդ հանրապետության ստեղծումով էականորեն փոխվեցին Հայրենիք — Սփյուռք հարաբերությունները: Հայ ժողովրդի ազատագրական պայքարը, ՀՀ միջազգային ճանաչումը, երկրի ներքին կյանքի դժվարությունները, հետարդյունաբերական հասարակության առաջադրած մարտահրավերները և տարածաշրջանային աշխարհաքաղաքական կտրուկ զարգացումները վերջին տարիներին պայմանավորել են այդ հարաբերությունների բովանդակությունը և խնդիրները:

Որո՞նք են Հայրենիքից զանգվածային արտագաղթի պատճառները, ներկայացրե՛ք դրա հետևանքները:

Թվարկե՛ք Սփյուռքի հիմնական կենտրոնները:

Ինչո՞ւ է անհրաժեշտ Հայրենիք – Սփյուռք կապերի ամրապնդումը: Ներկայացրե՛ք այդ ուղղությամբ արվող քայլերը և դրանց նշանակությունը:

Խորհուրդ է տրվում օգտվել հետևյալ կայքէջերից.

armhistory.ru/
www.findarmenia.com/arm/history/
hy.wikipedia.org/wiki/
freebooks.do.am
armenianhouse.org/armenian-history-am.html
genocide.am
www.encyclopedia.am
www.genocide-museum.am/arm/armenian_genocide.php
www.e-armenians.com
dasatu.ru
giteliq.am

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1918 թ. մայիսի 28 — Հայաստանի Հանրապետության հռչակումը. հայկական անկախ պետականության վերականգնումը

1918 թ. հունիսի 4 — Առաջին աշխարհամարտի Կովկասյան ճակատում թուրք–հայկական պատերազմի ավարտը. Բաթումի հաշտության պայմանագրի ստորագրումը

1918 թ. հունիս–սեպտեմբեր — Բաքվի հայության հերոսական ինքնապաշտպանությունը

1918 թ. հունիսի 7 — Հ. Քաջազնունու ընտրվելը կառավարության նախագահ (վարչապետ)

1918 թ. հուլիսի 17 — ՀՀ կառավարության և Հայոց կենտրոնական ազգային խորհրդի ժամանումը Երևան

1918 թ. օգոստոսի 1 — Հայաստանի խորհրդի առաջին նիստը

1918 թ. սեպտեմբերի 19 — Արարայի ճակատամարտը

1918 թ. դեկտեմբեր — Վրաց–հայկական 20–օրյա պատերազմը

1919 թ. հունվարի 9–17 — Հայ–վրացական հաշտության կոնֆերանսը Թիֆլիսում

1919 թ. փետրվար — Արևմտահայերի երկրորդ համագումարը Երևանում

1919 թ. փետրվարի 12 — Հայկական երկու պատվիրակությունների համատեղ հուշագրի ստորագրումը Փարիզում

1919 թ. մայիսի 16 — ՀՀ–ում համալսարան հիմնելու վերաբերյալ որոշման ընդունումը

1919 թ. մայիսի 28 — «Միացյալ Հայաստանի անկախության հռչակագրի ակտի» ստորագրումը և հրապարակումը

1919 թ. հունիս — ՀՀ խորհրդարանի առաջին ընտրությունները

1919 թ. սեպտեմբեր–նոյեմբեր — ՀՅԴ 9–րդ ընդհանուր ժողովի գումարումը

1919 թ. դեկտեմբերի 26 — Պետական լեզվի մասին ՀՀ օրենքի ընդունումը

1920 թ. հունվարի 19 — Հայաստանի կառավարության դե ֆակտո ճանաչումը ԱՄՆ–ի, Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի և Ճապոնիայի ղեկավարների Փարիզյան վեհաժողովի նիստում

1920 թ. հունվարի 31 — Համալսարանի հանդիսավոր բացումը Ալեքսանդրապոլում

1920 թ. ապրիլի 19–26 — Սան Ռեմոյի խորհրդաժողովը

1920 թ. ապրիլի 23 — ՀՀ–ի դե ֆակտո ճանաչումը ԱՄՆ–ի կառավարության կողմից

1920 թ. ապրիլի 25 — Լեռնային Ղարաբաղի հռչակումը ՀՀ անբաժանելի մաս

1920 թ. մայիսի 10 — Հայ բոլշևիկների Մայիսյան ապստամբության սկիզբը

1920 թ. հուլիսի 23 — Զինանշանի մասին ՀՀ օրենքի հաստատումը

1920 թ. օգոստոսի 4 — Ինքնավար Կիլիկիայի հռչակումը Ադանայում

1920 թ. օգոստոսի 10 — Սևրի պայմանագրի ստորագրումը

1920 թ. օգոստոսի 10 — ՌՍԴԽՀ–ի և ՀՀ–ի միջև համաձայնագրի ստորագրումը Թիֆլիսում

1920 թ. սեպտեմբերի 1–8 — Արևելքի ժողովուրդների առաջին համագումարը Բաքվում

1920 թ. սեպտեմբերի 23 — նոյեմբերի 18 — Թուրք–հայկական պատերազմը

1920 թ. հոկտեմբերի 31 — Կարսի գրավումը թուրքերի կողմից

1920 թ. նոյեմբերի 22 — ԱՄՆ–ի նախագահ Վիլսոնի իրավարար որոշումը հայ-թուրքական սահմանագծի վերաբերյալ

1920 թ. նոյեմբերի 29 — Հայաստանի ռազմհեղկոմի մուտքը Քարվանսարա (Իջևան) և խորհրդայնացման մասին հայտարարությունը

1920 թ. դեկտեմբերի 2 — Երևանի համաձայնագրի ստորագրումը և Հայաստանի խորհրդայնացումը

1920 թ. դեկտեմբեր – 1921 թ. փետրվար — Ռազմական կոմունիզմի քաղաքակա-նության իրականացումը Հայաստանում

1920 թ. դեկտեմբերի 25 — Համազանգեզուրյան առաջին համագումարը Տաթևի վանքում. «Ինքնավար Սյունիքի» հռչակումը

1921 թ. փետրվարի 16–ապրիլի 2 — Փետրվարյան համաժողովրդական ապստամ-բությունը

1921 թ. փետրվարի 21–մարտի 14 — Մեծ տերությունների Լոնդոնի կոնֆերանսը

1921 թ. փետրվարի 26 – մարտի 16 — Մոսկվայի ռուս–թուրքական կոնֆերանսը. «Բարեկամության և եղբայրության մասին» պայմանագրի կնքումը Մոսկվայում

1921 թ. ապրիլի 27 — Համազանգեզուրյան երկրորդ համագումարը Տաթևի վան-քում. «Լեռնահայաստանի» հռչակումը

1921 թ. մայիսի 21 — ՀՍԽՀ ժողկոմխորհի կազմավորումը. Ա. Մյասնիկյանի նշա-նակվելը ժողկոմխորհի նախագահ

1921 թ. հունիսի 3 — Լեռնային Ղարաբաղը ՀՍԽՀ–ի անբաժան մաս հռչակելու մա-սին դեկրետի ընդունումը

1921 թ. հուլիսի 4 — ՌԿ(բ)Կ Կովկասյան բյուրոյի որոշումը Լեռնային Ղարաբաղը ՀՍԽՀ–ին միացնելու մասին. հուլիսի 5–ին որոշումը փոխվեց հօգուտ Ադրբեջանի

1921 թ. սեպտեմբեր — Հայաստանի օգնության կոմիտեի (ՀՕԿ) հիմնումը (վերաց-վեց 1937 թ.)

1921 թ. սեպտեմբերի 26 – հոկտեմբերի 13 — Կարսի կոնֆերանսը. Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի և Թուրքիայի միջև պայմանագրի ստորագրումը

1921 թ. նոյեմբերի 6 — Հայ–վրացական սահմանազատման մասին համաձայնագ-րի ստորագրումը Թիֆլիսում

1921 թ. դեկտեմբեր — ՀՍԽՀ խորհուրդների առաջին ընտրությունները

1922 թ. հունվար — Խորհրդային Հայաստանի առաջին պետական դրամատիկա-կան թատրոնի բացումը

1922 թ. փետրվարի 3 — ՀՍԽՀ առաջին Սահմանադրության ընդունումը

1922 թ. մարտի 12 — Անդրդաշնություն կազմելու մասին պայմանագրի հաստատումը Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի կենտգործկոմների ներկայացուցիչների լիազոր կոնֆերանսում

1922 թ. նոյեմբերի 20 — 1923 թ. հուլիսի 24 — Լոզանի կոնֆերանսը

1922 թ. դեկտեմբերի 10–13 — Անդրկովկասի խորհուրդների առաջին համագումարը. Անդրկովկասի Խորհրդային Դաշնային Սոցիալիստական Հանրապետության (ԱԽԴՍՀ) ստեղծումը

1922 թ. դեկտեմբերի 30 — ԽՍՀՄ–ի կազմավորման մասին հռչակագրի և միութենական պայմանագրերի ստորագրումը

1923 թ. — Պետական կոնսերվատորիայի հիմնումը

1923 թ. հուլիսի 7 — Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի (ԼՂԻՄ) ստեղծումը

1925 թ. — Հ. Ադամյանի ստեղծած եռագույն հեռուստատեսության և լուսահեռագրության սարքի ցուցադրումը Երևանում

1925 թ. — Հայկական առաջին գեղարվեստական կինոնկարի՝ «Նամուսի» ցուցադրությունը

1930–1936 թթ. — ՀԿ(բ)Կ Կենտկոմի առաջին քարտուղար Ա. Խանջյանի պաշտոնավարությունը

1932–1938 թ. ապրիլ — Ամենայն հայոց կաթողիկոս Խորեն Ա Մուրադբեգյանի գահակալությունը

1932 թ. — Հայաստանի գրողների միության ստեղծումը

1933–1940 թթ. — Երևանի արհեստական կաուչուկի գործարանի կառուցումը

1935 թ. — ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի հայկական մասնաճյուղի (Արմֆան) հիմնումը

1935 թ. — Հայկական առաջին հնչյունային կինոնկարի՝ <<Պեպոյի>> ցուցադրությունը

1936 թ. դեկտեմբերի 5 — ԽՍՀՄ–ի նոր Սահմանադրության ընդունումը

1937 թ. մարտ — Խորհրդային Հայաստանի նոր Սահմանադրության ընդունումը

1938 թ. — Երևանի Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական թատրոնի բացումը

1938 թ. — Թ. Ալթունյանի ղեկավարությամբ հայկական ժողովրդական երգի–պարի պետական անսամբլի ստեղծումը

1938 թ. օգոստոսի 4 — ՀԿ(բ)Կ Կենտկոմի որոշումը Էջմիածնի վանքը փակելու և կաթողիկոսությունը վերացնելու մասին

1939 թ. օգոստոսի 23 — Խորհրդա–գերմանական պայմանագրի կնքումը

1939 թ. սեպտեմբերի 1 – 1945 թ. սեպտեմբերի 2 — Երկրորդ աշխարհամարտը

1941 թ. հունիսի 22 – 1945 թ. մայիսի 9 — ԽՍՀՄ ժողովուրդների Հայրենական մեծ պատերազմը

1942 թ. հուլիսի 21 — Լ. Չափչախյանի արժանանալը ԽՍՀՄ հերոսի կոչման. Հայ-

րենական մեծ պատերազմի առաջին հայ հերոսը

1943 թ. նոյեմբերի 29 — ՀԽՍՀ Գիտությունների ակադեմիայի հիմնադրումը

1945 թ. մարտի 19 — ԽՍՀՄ կառավարության՝ 1925 թ. խորհրդա–թուրքական բարեկամության և չեզոքության պայմանագրի չեղյալ հայտարարումը

1945 թ. ապրիլի 19 — ԽՍՀՄ կառավարության ղեկավար Ի. Ստալինի և կաթողիկոսական տեղապահ Գևորգ Չորեքչյանի հանդիպումը Մոսկվայում

1945 թ. հուլիսի 22–23 —Հայկական տարածքների հարցի քննարկումը Պոտսդամի կոնֆերանսում

1945 թ. նոյեմբերի 21 — Սփյուռքահայության ներգաղթը ՀԽՍՀ իրականացնելու մասին ԽՍՀՄ կառավարության որոշման ընդունումը

1946–1948 թթ. — Ջանգվածային հայրենադարձությունը. աշխարհի 12 երկրներից շուրջ 90 հազար հայերի վերադարձը Հայրենիք

1947 թ. ապրիլի 30–մայիսի 4 — Հայկական համաշխարհային կոնգրեսի գումարումը Նյու Յորքում

1949 թ. հունիսի 14 — Հայ բնակչության հոծ զանգվածի արտաքսումն Ալթայի երկրամաս

1956 թ. փետրվար — ԽՄԿԿ XX համագումարը Մոսկվայում

1959 թ. — Անցումը ութամյա պարտադիր կրթության

1961 – 1981 թթ. — Արփա–Սևան ջրատար թունելի շինարարությունը

1964 թ. — Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի ստեղծումը

1967 թ. — Երևանի էլեկտրոնային արագացուցչի կառուցման ավարտը

1972 թ. — Ամերիկայի հայկական համագումարի ստեղծումը

1976 թ. — Հայկական ատոմակայանի գործարկումը

1985 թ. մարտ — Վերակառուցման քաղաքականության սկիզբը ԽՍՀՄ–ում

1987 թ. հունիսի 18 — Հայոց ցեղասպանության դատապարտումը Եվրախորհրդարանի կողմից

1988 թ. փետրվարի 20 — ԼՂԻՄ–ի մարզխորհրդի պատմական որոշման ընդունումը

1988 թ. փետրվարի 22 — «Ղարաբաղ» կոմիտեի ստեղծումը

1988 թ. փետրվարի 27–29 — Սումգայիթի հայության կոտորածը

1988 թ. հունիսի 15 — ՀԽՍՀ Գերագույն խորհրդի որոշումը ԼՂԻՄ–ի մարզխորհրդի որոշմանը դրական պատասխան տալու վերաբերյալ

1988 թ. հուլիսի 18 — ԽՍՀՄ Գերագույն խորհրդի կողմից ՀԽՍՀ ԳԽ–ի և ԼՂԻՄ–ի մարզխորհրդի որոշումներումը չճանաչելը

1988 թ. դեկտեմբերի 7 — Սպիտակի աղետալի երկրաշարժը

1989 թ. հունվարի 11 — Կառավարման հատուկ ձև մտցնելը ԼՂԻՄ–ում

1989 թ. օգոստոսի 16 — Ազգային խորհրդի ստեղծումը Լեռնային Ղարաբաղի ազգաբնակչության լիազոր ներկայացուցիչների համագումարում

1989 դեկտեմբերի 1 — «Հայկական ԽՍՀ–ի և Լեռնային Ղարաբաղի վերամիավոր-

ման մասին» համատեղ որոշման ընդունումը

1990 թ. հունվարի 13–20 — Բաքվի հայության կոտորածն ու տեղահանությունը

1990 թ. մայիսի 20 — ՀԽՍՀ Գերագույն խորհրդի այլընտրանքային ընտրությունները

1990 թ. օգոստոսի 4 — ՀՀԾ վարչության նախագահ Լ. Տեր–Պետրոսյանի ընտրվելը Հայաստանի Գերագույն խորհրդի նախագահ

1990 թ. օգոստոսի 23 — «Հռչակագիր Հայաստանի անկախության մասին» փաստաթղթի ընդունումը

1991 թ. ապրի –մայիս — «Կոլցո» (Օղակ) ռազմական գործողության իրականացումը. Գետաշենի հայաթափումը

1991 թ. մայիս–1994 թ. մայիս — Հայ–ադրբեջանական պատերազմը

1991 թ. սեպտեմբերի 2 — Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակման մասին փաստաթղթի ընդունումը

1991 թ. սեպտեմբերի 21 — Անկախության հանրաքվեի անցկացումը Հայաստանում

1991 թ. սեպտեմբերի 23 — Հայաստանի անկախության հռչակումը

1991 թ. հոկտեմբերի 16 — Հայաստանի Գերագույն խորհրդի նախագահ Լ. Տեր–Պետրոսյանի ընտրվելը ՀՀ նախագահ

1991 թ. դեկտեմբերի 8 — Բելովեժյան համաձայնագրի ստորագրումը

1991թ.դեկտեմբերի10—ԼեռնայինՂարաբաղիանկախությանհանրաքվեիանցկացումը

1991 թ. դեկտեմբերի 21 — ԱՊՀ–ի ձևավորումը

1991 թ. դեկտեմբերի 28 — ԼՂՀ Գերագույն խորհրդի պատգամավորների ընտրությունները

1992 թ. հունվարի 7 — Դիվանագիտական հարաբերությունների հաստատումը ԱՄՆ–ի և Հայաստանի միջև

1992 թ. հունվար — Ա. Մկրտչյանի ընտրվելը ԼՂՀ Գերագույն խորհրդի նախագահ

1992 թ. մարտի 2 — ՀՀ–ի դառնալը ՄԱԿ–ի լիիրավ անդամ

1992 թ. մայիսի 9 — Շուշիի ազատագրումը

1992 թ. մայիսի 18 — Լաչինի ազատագրումը. Արցախի շրջափակման օղակի ճեղքումը

1994 թ. փետրվարի 18 — Քելբաջարի շրջանի հյուսիսային մասի և Օմարի լեռնանցքի ազատագրումը

1995 թ. հուլիսի 5 — Հայաստանի Հանրապետության Սահմանադրության ընդունումը

1996 թ. նոյեմբեր — ԼՂՀ առաջին նախագահական ընտրությունները

1997 թ. օգոստոսի 29 — ՀՀ–ի և ՌԴ–ի միջև բարեկամության, համագործակցության և փոխադարձ օգնության մասին պայմանագրի կնքումը

1998 թ. փետրվարի 3 — ՀՀ նախագահ Լ. Տեր–Պետրոսյանի հրաժարականը

1998 թ. մարտ — Արտահերթ նախագահական ընտրությունները ՀՀ–ում

1999 թ. սեպտեմբեր — Հայաստան–Սփյուռք առաջին խորհրդաժողովը Երևանում

1999 թ. հոկտեմբերի 27 — Արյունալի ահաբեկչությունը ՀՀ Ազգային ժողովում

2001 թ. հունվարի 25 — ՀՀ–ի լիիրավ անդամակցությունը Եվրախորհրդին

2003 թ. սեպտեմբեր — Հայագիտական միջազգային առաջին համաժողովը Երևանում

2004 թ. հուլիս — «Ոսկե ծիրան» միջազգային առաջին կինոփառատոնը Երևանում

2005 թ. նոյեմբերի 27 — ՀՀ սահմանադրական փոփոխությունների հաստատումը համաժողովրդական հանրաքվեի արդյունքում

2007 թ. հունվարի 19 — Հրանտ Դինքի սպանությունը

2008 թ. փետրվարի 19 — Նախագահական հինգերորդ ընտրությունները ՀՀ–ում

2008 թ. մարտի 1–2 — Հետընտրական մթնոլորտի շիկացումը և ողբերգական դեպքերը Երևանում

2009 թ. հոկտեմբերի 10 — Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի միջև «Երկկողմ դիվանագիտական հարաբերությունների հաստատման և զարգացման մասին» արձանագրությունների ստորագրումը Ցյուրիխում

2013 թ. փետրվարի 18 — Նախագահական ընտրությունները ՀՀ–ում

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ԲԱԺԻՆ 1. Հայաստանի առաջին հանրապետությունը
(1918 թ. մայիսի 28 – 1920 թ. դեկտեմբերի 2)

ԳԼՈՒԽ 1. Հանրապետության կայացումը
§ 1–2. Հայոց անկախ պետության կայացումը

ԳԼՈՒԽ 2. Սոցիալ–տնտեսական, քաղաքական և մշակութային կյանքը
§ 1–2. Ներքին դրությունը
§ 3. Ներքին կայունությանը սպառնացող վտանգները

ԳԼՈՒԽ 3. Հայաստանի Հանրապետության միջազգային դրությունը:
Հայկական հարցը
§ 1–2. Հանրապետության միջազգային դրությունը:
Հարաբերությունները հարևան պետությունների հետ
§ 3. Հայկական հարցը Փարիզի Խաղաղության խորհրդաժողովում:
Սևրի պայմանագիրը

ԳԼՈՒԽ 4. Հայաստանի Հանրապետության անկումը
§ 1. Հայաստանը Խորհրդային Ռուսաստանի և քեմալական
Թուրքիայի հարաբերությունների ոլորտում
§ 2. 1920 թ. թուրք–հայկական պատերազմը: Հայաստանի
Հանրապետության խորհրդայնացումը

ԲԱԺԻՆ 1. ԱՄՓՈՓՈՒՄ

ԲԱԺԻՆ 2. Խորհրդային Հայաստանը և հայկական սփյուռքը 1920–1922 թթ.
§ 1. Փետրվարյան ապստամբությունը
§ 2. ՀՍԽՀ Սահմանադրությունը: Խորհրդային
Հայաստանը Անդրդաշնության և ԽՍՀՄ–ի կազմում
§ 3–4. ՀՍԽՀ տարածքային հիմնախնդիրները և արտաքին կապերը

ԳԼՈՒԽ 2. Սոցիալ–տնտեսական և հասարակական–քաղաքական
կյանքը Խորհրդային Հայաստանում
§ 1. Անցումը նոր տնտեսական քաղաքականությանը:
ՀՍԽՀ ինդուստրացումը և գյուղատնտեսության կոլեկտիվացումը

§ 2. Քաղաքական բռնությունները և հալածանքները: Խորհրդային Հայաստանը՝ միութենական հանրապետություն

ԳԼՈՒԽ 3. Հայկական սփյուռքի ձևավորումը
§ 1. Հայկական սփյուռքի ձևավորումը

ԳԼՈՒԽ 4. Հայ ժողովուրդը Հայրենական մեծ պատերազմի տարիներին
§ 1. Հայ ժողովրդի մասնակցությունը Հայրենական մեծ պատերազմին
§ 2. Սփյուռքահայերի մասնակցությունը Երկրորդ աշխարհամարտին

ԳԼՈՒԽ 5. Խորհրդահայ մշակույթը 1920–1945 թթ.
§ 1. Կրթությունը և գիտությունը
§ 2–3. Գրականությունը և արվեստը

ԱՄՓՈՓՈՒՄ. ԲԱԺԻՆ 2

ԲԱԺԻՆ 3. Խորհրդային Հայաստանը և հայկական սփյուռքը 1945–1991 թթ.

ԳԼՈՒԽ 1. Հայկական սփյուռքը հետպատերազմյան շրջանում
§ 1. Հայկական հարցի վերաբացումը: Սփյուռքահայերի պայքարը Հայկական հարցի լուծման և ցեղասպանության միջազգային ճանաչման համար
§ 2. «Մեծ հայրենադարձության» կազմակերպումը: Հայրենիք–Սփյուռք կապերի բարելավումը և ամրապնդումը

ԳԼՈՒԽ 2. Տնտեսությունը, հասարակական–քաղաքական կյանքը
§ 1. Տնտեսությունը և սոցիալական կյանքը
§ 2. Խորհրդային Հայաստանի հասարակական–քաղաքական կյանքը

ԳԼՈՒԽ 3. Արցախյան շարժումը և Հայաստանի անկախացման գործընթացը
§ 1. Վերակառուցումն ու Արցախյան շարժման սկիզբը
§ 2. Համազգային շարժման վերելքն ու զինված պայքարի սկիզբը
§ 3. Հայաստանի անկախության գործընթացը

ԳԼՈՒԽ 4. Խորհրդային Հայաստանի և Հայկական սփյուռքի մշակույթը 1945–1991 թթ.
§ 1. Կրթությունը և գիտությունը
§ 2–3. Գրականությունը և արվեստը
ԱՄՓՈՓՈՒՄ. ԲԱԺԻՆ 3

ԲԱԺԻՆ 4. Հայաստանի Հանրապետությունը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը և Հայկական սփյուռքը 1991 թվականից մինչև մեր օրերը

ԳԼՈՒԽ 1. Հայաստանի Հանրապետության ամրապնդման գործընթացը
§ 1. ՀՀ անկախության հռչակումը: Իշխանության մարմինների ձևավորումը. բանկը, խորհրդանիշները, սահմանադրությունը

ԳԼՈՒԽ 2. ՀՀ տնտեսական դրությունը,
հասարակական–քաղաքական կյանքը
§ 1. ՀՀ տնտեսական քաղաքականությունը,
հասարակական–քաղաքական կյանքը
§ 2. Ներքաղաքական զարգացումները: Մշակութային կյանքը

ԳԼՈՒԽ 3. ՀՀ միջազգային դրությունը և արտաքին քաղաքականությունը
§ 1. ՀՀ միջազգային ճանաչումը և դիվանագիտական
կապերի հաստատումը
§ 2. ՀՀ–ն ԱՊՀ–ի, ՄԱԿ–ի և Եվրախորհրդի անդամ:
Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացը

ԳԼՈՒԽ 4. Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը
§ 1. ԼՂՀ անկախության հռչակումը: Իշխանության մարմինների ձևավորումը
§ 2. Արցախյան ազատագրական պատերազմը:
ԼՂ–ի հարցի միւազգայնացումը. լուծման հետևանքները

ԳԼՈՒԽ 5. Հայկական սփյուռքը 1991 թվականից մինչև մեր օրերը
§ 1. Սփյուռքի հիմնական կենտրոնները: Զանգվածային արտագաղթը և Սփյուռքի ստվարացումը
§ 2. Սփյուռքահայ համայնքները և
Հայրենիք–Սփյուռք հարաբերությունները արդի փուլում

ԱՄՓՈՓՈՒՄ. ԲԱԺԻՆ 4